

15675

891.99

F-75



ՍՄԲԱՏ ԲԻՐԱՏ

(Տէր Ղազարեանց)



ՍԱՍՈՒՆԷՆ ԵՏՔԸ

Բ.

ԴԵՊԻ ԵԸԼՏԸԶ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ)

Հայկական արիւնոս սարիւնտու կեանքէն
այս նոր պատճախան վեպը կը յաջորդէ ԴԻԱԿԱ-
ՊՈՒՏՆԵՐԸ վեպիս:

ԴԵՊԻ ԵԸԼՏԸԶ... պատճախան վեպը
կը սկսի Պասր Աշիի Յոյցով, պարունակելով
էն յուզուննաշից ու շահագրգիռ դրուագները հայ
յեղափոխական կեանքին:

ԿԱՐԴԱՅԷՔ վաղուրնէ սկսեալ

ՊՐԱԿԸ 10 ՓԱՐԱ

Փնտնեցէ՛ք ձեր շրագրաւթանաւնտունն իմ:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Տէր Ղազարեց)

ՍԱՍՈՒՆԷՆ ԵՏՔԸ

Բ Ա. Բ. Կ

ԴԵՊԻ ԵՐԼՏԸԶ

(ՊՍՏՄԱՆԱՆ ՎԷՊ)

Տպագրիչ Հրատարակիչ ՎԱՂԻՆԱԿ Ս. ԲԻՒՐԱՏ

Կ. Պոլիս. Սուրբան Համբաժ Մօլա Քաղաք

ՀԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՀՐԱՏԱՐՈՒՄԻ ՀՐԱՏԱՐՈՒՄԻ ԳՐԱՆՈՒՄ

ՍՄԲԱՅ ԲԻՆ

	ՎՐԱՄԵ
Բուրգեբեկ (Հայրենի Բերրուածներ)	3
Աւարայրի Արծիւք (Թատերգութիւն 5 Արար)	3
Վեղարուտ Հերար (Կենսագրական)	1
Զեբունցի Վարդապետ (»)	1
ԲԱՆՏԷ՛ ԲԱՆՏ (Պատմական Վեպ)	30
ԵՂԻՏԵՂԷ՛ ՍԱՍՈՒՆ (»)	30
ԳԻՍՏԱՊՈՒՏՆԵՐԸ (»)	6
ԳԷՊԻ ԵՂԻՏԸՂ (»)	6

ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՒՐԵԱՆ

Հայրենի Զայներ 3

Մ. ՍԷՄԷՐՃԵԱՆ (Զեյթունցի)

Հրացանակիր Բախմար եւ Լեւան Բարոզիչը 4
 Զեբունցի պատմութիւն 20

Բ. ԱՅՎԱԶԵԱՆՑ

Անիի Նախուեցաւ (Պատմական Վեպ) 6


ՄԻՍԱՔ Ա. Մ. ԳՕԶՈՒՆԵԱՆ (Քասիմ)

Կարապետ (Վեպ Ընկերական Կեանք) 4 Հատոր 16

ԱՐՍԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

Թիապարսը (Վեպ Ազգային Յեղ. Կեանք) 10

Աւագակապիւնը » » » » ընդ մազով



1052-2002

Բ.

ԴԷՊԻ ԵԸԼՏԸԶ



ՆԵՐՍԷՍ ՊԱՅՐԻՍԻՐԻ ՎԱՐՑՈՒՓԵՅՆԱՆ

(ՄԵՍ ԿԱՍԳԻՂՑԻՆ)

Դ Է Պ Ի Ե Ը Լ Տ Ը Զ

Ա.



ատիշահներու մայրաքաղաքը տօնի խրախ-
ճանքի մէջ կը լողայ :

1893 Օգոստոս 19 :

Կէս օրուրնէ գողացին թնդանօթները : Պոլսոյ գա-
նազան կէտերէն արձակուած քսանըմէկ հարուածներ
աւետեցին Թուրքիոյ Մեծ Օրը , Վեհ. Ապտիւլ Համիտի
բարեբաստիկ (°) գահակալութեան 19րդ տարեդար-
ձը . . . :

Պաշտօնական արարողութիւնները , պալատական
ընդունելութիւնները վերջացած էին արդէն և մայրա-
քաղաքին բովանդակ բնակչութիւնը , առանց բացառու-
թեան և առանց խտրութեան սեռի , ցեղի , կրօնքի ու
հասակի , կամայ թէ ակամայ պիտի մասնակցէր լուսա-
վառութեան հանդէսներուն , որոնք նոյն գիշերը պիտի
տեղի ունենային մզկիթներուն , եկեղեցիներուն , սինա-
կոսիաներուն մէջ , ինչպէս ջոջերու ապարանքները , նոյն-
պէս թշուառներու խրճիթները :

Մութը պատեց , գիշեր է , Վոսփորի ամառնային
հեշտալի գիշեր մը , որ իր թովանքով ու թափանցիկ
բուրումներով կը գինովցնէ միմնուրաբար :

Սեւ Մովին ու Մարմարային ալիքները կը պագ-

տուէին պաշտօն գրկախառնումներով : Եւրոպական թէ
ասիական եզերքներէն հասող լոյսի հեղեղները կ'ողո-
ղէին ծովը :

Վոսփորի երկայնքը շարուած շոգենաւերէն մերթ
ընդ մերթ հրթիռներ կը սլանային, նոյնպէս Ոսկեղջիւ-
րի մէջ, Նաւարանին առջեւ ու մօտակայքը խարսխող
հռչակաւոր (°) զրահաւորներէն :

Մինարէներու շերիֆները համաստեղութիւններու
փոխուած այն գիշեր, կը պլպլային և այդ լոյսերու
խուրճերու մէջէն կը լսուէ : միւեզզիհի յստակ ու թըր-
թառն մեղեգին, սր Իսլամի որդիները կը հրաւիրէր
աղօթքի և գոհաբանութեան վասն արեւշատութեան
ու բարօրութեան տիեզերքի Խալիֆային, որ իր ամբաւ,
համատարած գթութեան ճառագայթները կը սփռէր
յաւերթական կայսրութեան ամենայնտիւն անկիւն-
ները . . . :

Պոլսոյ հեռակ. յ թէ մերձաւոր արուարձաններէն
սկսած էին թափիլ կեդրոնը տօնասէ : ընտանիքներու
խումբեր, իրենց տօնի զգեստներով, դիտելու համար
նոյն գիշերուան հրախաղութիւններն ու լուսավառու-
թիւնները :

Մայրաքաղաքին մեծ հրապարակներուն մէջ՝ մարդ-
կեղէն ալիքներ :

Բերա, մեծ պողոտային երկայնքը, Թագսիմ, Հար-
պիյէ, մինչև Շիշլիի ծայրը, Ստամպոլի կողմը, Սուլ-
թան Պայագլիտ, Սուլթան Ա. մէտ, Սպարապետութեան
Դուռը, Այա Սօֆիա, Բ. Դուռ. Ղալաթիոյ Քարափին
երկայնքը, Պէշիքթաշ, Տօլմա Պահճէ, Թօփանէ, Չրա-
զան. Սկիւտարի կողմէն Չամլրճաններու բարձունքը,
ծովեզերքի Սէլիմիյէ Զօրանոցը, Հայտար բաշա, Գա-
սը գիւղ. աւելի վերերը, դէպի Վոսփորի Սև ծովեայ

ասամանները, Պէյքօզ, Պէյլէրպէյի, Լերոպական եզերքները՝ Թարապիա, Պէօյիւքտէրէ, Էմիրկէն. և այս ամէնուն գլուխը՝ Երլտրզ, իր շրջակայքի հսկայ գօրանոցներով, ինչպէս նաև ի պաշտօնի թէ անպաշտօն, հրաժարեալ թէ հանգստեան կոչուած բոլոր պետական բարձրաստիճան պաշտօնատարներուն ապարանքները, լոյսերէ ողողուած, իրենց միահամուռ սարկաթեան մասնակցութիւնը կը փութային բերել կայսերական երջանկառութիւնը (°) գահակալութեան տարեգարձին տօնախրմբութեանը և իրենց անուն, սրտագին ու խորին երախտագիտութեան խունկը մատուցանել յոսս Գառոյից Աստուծոյ Ստուերին, հաւատացեալներու Վեպագոյն էմիրին...

Մինչդեռ, այսպէս, այս ընդհանուր տօնի, ցնծութեան, արքշաանքի և խրախճանքի մէջ, գոնէ մէկ գիշերուան համար, կը փորձէր գինովնալ կամ գէթ այնպէս կը ձեւանար օսմանցի տարաբաղդ ժողովուրդը, չը հանդիպելու համար անխիղճ ու սինլքօր լրտեսի մը խրտմին և զերծ մնալու համար անոր շատ սուրբնասող հետապնդումէն. մինչդեռ, Լերոպական շատ մը տուններ, պարզապէս Թուրքիոյ մէջ տարիներէ ի վեր իրենց հիմնած առեւտրական հաստատութիւնները կամ կարելուր ձեռնարկները ա՛լ աւելի ամբացնելու կամ քնդարձակելու միակ դիտումով, իրենց պատկանած տէրութեան դրօշակովը կը զարգարէին իրենց ճակատը, մինչդեռ, զանազան ազգերու և հասարակութիւններու կրօնային, պետերն ալ, հետեւելով Եւրոպացիներուն օրինակին, իրարու հետ կը մրցէին աւելի շքեղ ու փառաւոր տօնախմբութիւն մը կատարելու համար, անցին, Բերայի անշուք փողոցներէն մէկուն անկիւնը, մութի մէջ թաղուած, փոքրիկ ու հինգամ, փայտաշէն տան

մը մէջ, գաղտնի, դաւադրական հաւաքոյթ մը տեղի կ'ունենար :

Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ Մասնաճիւղին Վարչութեան անդամները, չորս հինգ օր առաջ արդէն նիստի հրաւիրուած, առջի իրիկուընէ հոն էին, այն փայտէ խրճիթին մէջ : Կեդրոնէն վերջին եւրօպական թղթաբերով հասած հրահանգներու գործադրութեան վրայ խորհրդակցութիւններ պիտի կատարէին և իրենց գործողութեան եղանակը պիտի որոշէին : Այդ հրահանգները շատ կարեւոր էին. ատոնց մէջ նշանակուած էին բոլոր գործնական, և եթէ հարկ ըլլար, բոլոր անարեւելի միջոցները, որոնք ի գործ պիտի դրուէին, ստիպելու համար Սուլթանը, որ ժամ առաջ ստորագրէր Հայկական Վեց Նահանգներու Բարենորոգումներուն մայիսեան Ծրագիրը, որ ծանօթ երեք մեծ տէրութեանց ղեկավարներուն կողմէն ներկայացուած էր Բ. Գրան, և որ ցաւալի ձգձգումներով տակաւին կը մնար մեռած տառ :

Գիշերաժողովը տեւած էր մինչեւ կէս գիշեր և կեդրոնին հրահանգներուն կէտ առ կէտ գործադրութիւնը միաձայնութեամբ որոշուած էր, միայն յարմար նկատուած էր սպասել առ առաւելն մինչեւ մէկ ամիս, հասկնալու համար Բ. Գրան ու երեք մեծ ղեկավարներուն ու անոնց պատկանած տէրութեանց արտաքին գործերու նախարարներուն միջեւ ամիսներէ ի վեր կատարուող քանակցութեանց վերջնական արդիւնքը, մայիսեան Ծրագրին նկատմամբ :

Լոյսերը տակաւ կը մարէին և նուագներու ձայները կը լռէին նեղ ձեռքէ :

Գիշերապահներուն մահակի ընդհատ հարուածներուն արձագանգը միայն կը հասնէր նեղուոր անկիւններէ :

Փա՛նակալութեան տարեդարձի ցայգատօնը վերջա-
նալու վրայ էր :

Փայտաշէն խրճիթի հնչակեան ժողովականները մէ-
կիկ մէկիկ կը մնկնէին ու մութ փողոցներ սողոսկելով
կ'անյայտանային :

Հետաքրքիրներու երկսեռ երամներ, ա՛լ յափրա-
ցած, կը քաշուէին, ամէն մարդ իր տեղը կը վերա-
դառնար :

Փողոցներուն մէջ անցուղարձը դադրած, կ'ամա-
յանային հրապարակները, որոնք կը ծփային քիչ առաջ
ու կը տատանէին մարդկային կո՛նակներու վէտվէտու-
մներէն :

Երբ ամէն կողմ կը տիրէր խօր լռութիւն մը, երբ,
հանրային շէքերուն ու ջոջերու ապարանքներուն ճա-
կասները պլ լացող լապտերները կը մարէին ու ամէնը
կը սկսէր խորասուզուիլ խաւարի մէջ, և երբ Համիտի
չրտեսախումբերը, ա՛լ իրենց որջերը կը քաշուէին, վաղ-
ւան ժուռնալները պատրաստելու համար, անդին, Պա-
րաքէոյի կամուրջին Պոլսոյ կողմը, այն ատենուան Քիւ-
չիւքեսանի դեղարանին անջեւ, կը նշմարուէին երկու
ստուերներ, որոնք, խաւարին մէջէն արագասա՛, կ'ա-
ռաջանային եէնի ճամիի կամարներուն տակ :

Ո՞վ էին այս երկու ստուերները, որոնք, գիշեր-
ուան այս առաջացած պա՛ռն, կը յանդգնէին վրդովել
փողոցներու լուռ ամայութիւնը :

Ջոյգ մըն էին անոնք, սիրող զոյգ մը, երկու նշա-
նածներ, մէկը Պասգիւղէն՝ օրիորդ Էօժ. Փ. և միւսը
Սիւլետարէն՝ պարոն Պ. Թորգոմ, երկուքն ալ Հնչակ-
եան մկրտուած՝ Պում Պարուի Յոյցէն ի վեր, և եր-
կուքն ալ մէկ քանի անգամներ բանտարկուած արձակ-
ուած, և վերջին անգամ՝ ալ, նոյն տարուան յուլիսեան
ընդհանուր ներման արժանացած :

Օրիորդը, հազիւ տասնինը տարու, աղուօր կապոյտ աչուըններով, սև ու թաւ ընքուրներով, կաթի պէս ճերմակ մորթով, յորդ ու սև վառներով, բարակ մէջքով, բարձր հասակով, հաուստկուրժքով ու ձուածեւ դէմքով, Սասգիւղի վաղեմի տոնմիկ ընտանիքի մը զաւակներէն էր, երջանկայիշատակ Վարժապետեան Տ. Ներսէս Պատրիարքէն մկրտուած, նոյն գիւղի Ս. Ներսէսեան վարժարանի յառաջագէմ, ուշիմ սանուհի մը: Իսկ պարսնը, Սկիւտարի Վանքին Պաղի թաղէն, Պէրպէրեան վարժարանի ընթացաւարտ սաներէն, խօսուն, վառվռուն, անկեղծ, յանդուգն նայուածքով, այտղ աչքերով, խարեհաշ մազերով, կլորիկ դէմքով, մրայօն երիտասարդ մը:

Զիրար կը սիրէին երկուքն ալ, և, իրենց ծնողքին հաւանութեամբը, նշանուած էին իրարու:

Թեւ թեւի տուած, անհանդարտ քայլերով, կ'ելլէին հիմա Պայպլ Հասուղի զառիվերը, դէպի Սպարապետութեան Գուռը կ'առաջանային առանց իրենց շուրջը զիտելու:

Կէս ժամէն հասած էին Գուռ Գարուի Պատրիարքարանի փողոցը, որ թաղուած էր խաւարի ու միայնութեան մէջ, հետզհետէ մարած ըլլալով լուսավառութեան բոլոր լապտերները: Պատրիարքարանին դուռը գոց էր: Զոյգը կանգ առաւ դիմացի Մայր Եկեղեցւոյ Սևազ Գուռին առջեւ, որ նոյնպէս գոց էր:

Մէկ հարուած, երկու հարուած, ներսէն ո՛չ մէկ ձայն:

Երբորդ հարուածին վրայ, կէս մը բացուեցաւ դուռը:

Ժամկոչն էր, մալտուքի վերջին վանկը դեռ բերնին մէջ, գրեթէ կիսամերկ, ճերմակ ցայգագտակ մը ճաղատ գլուխը, ականջին ետին քերելով.

— Ի՞նչ կայ, մումուաց, այս ատեն ի՞նչ գործ ունիք հաս :

— Բա՛ց, բա՛ց, ժամկո՛չ աղբար, կրկնեց պարոն Պ. Թորգոմ, այս գիշեր բացառութիւն է :

Ժամկոչը ճանչցաւ երկուքն ալ, ի՞նք ալ հնչակեան էր :

— Ե՛, ընկե՛ր Թորգոմ, բացազանչեց, վայրկենաբար մոռնալով անկողնէն տարածամ դուռս հանուելուն համար կրած դժգոհութիւնը, ի՞նչ կայ, ի՞նչ :

Յետոյ, դառնալով օրիորդին, որ նոյնպէս ծանօթ էր իրեն.

— Օրիո՛րդ էօժէնի, յարեց գոլտրակ շեշտով մը, գո՛ւք ալ հէ՞ . . . :

Ու գաւառացի գեղջուկի մրամիտ ժպիտ մը սահեցուց իր գրեթէ միշտ բաց շրթունքէն :

Զոյգը ներս առաջնորդուեցաւ ընկեր ժամկոչին խուցը :

Յետոյ Պ. Թորգոմ պանանջեց ընկեր ժամկոչէն բանալ ժայր տաճարին դուռը :

Ընկեր ժամկոչ գործադրեց ընկեր Թորգոմի պատւէրը. դուռը բացաւ, ինք հեռացաւ, առանձին ձգելով նշանածները :

Զոյգը տաճարէն ներս մտաւ, գաւթին մէջ քանի մը քայլ առաւ և երկիւղած ու պատկառօտ դիրքի մը մէջ, վեր ելաւ գաւթին աջ կողմը, և կանգ առաւ մարմարէ գերեզմանի մը ոտքը :

Մանարձանը վարժապետեան Ներսէս Պատրիարքին :

Երկու պարմանիները ծունկի եկան հօն, սրբատաշ կիճէ շիրմին առջև, և երկուքը միասին մրմնջեցին աղօթք մը :

Յետոյ, Թորգոմ, դառնալով իր նշանածին, որ կուլար.

— Էօժէնի՛, ըսաւ լուրջ դէմքով սը, մինչեւ ցմահ հաւատարիմ պիտի մնաս ինծի, այնպէս չէ՛ :

— Քանի՞ անգամ կը յայտարարեն, Թորգո՛մս, կըշտամբեց օրիորդը. բայց ինչո՞ւ դարձեալ այս հարցումը... :

— Չն՞ս գիտեր, հոգի՛ս, յարեց Թորգոմ, այս գիշեր ի՛նչ գիշեր է, դեռ նո՛ր աւարտեցին խենէշ հանդէսները, մեր Յեղին Քա՛նճապետին գահակալութեան ի պատի՛ւ... : Ես կասկած մը չունիմ հաւատարմութեանդ վրայ, ո՛չ ալ վայրկեան մը կը խորհիմ այդ կէտին վրայ. բայց, գիտես անշուշտ, հոգի՛ս, մենք իրարու հետ մէկ սիրտ մէկ մարմին ըլլալ ուխտելէ առաջ, ուրիշ ս՛լխտ մը կնքած ենք, Յեղափոխութեան սեղանին առջեւ. Սիրոյ ուխտէն առաջ՝ Արիւնի ս՛լխտը, այնպէս չէ՛... :

— Բայց ինչո՞ւ համար այսպիսի մտածումներ, հառաչեց Էօժէնի, յուզուած ու սրգոզած, ի՛նչու այս տարադէպ կասկածները, արդեօք թունաւորուած է միտքդ չար լեզուներէ, որոնք չեն պակսիր մանաւանդ Սկիւտարի մէջ... :

— Ո՛չ, անուշա, ո՛չ, հոգի՛ս, կրկնեց Թորգոմ, ո՞ր չար լեզուն պիտի յանդգնէր իմ քով ազարտել ահարատ անս՛ենդ, ինչո՞ւ սխալ կ'ըմբռնես խօսքերուս իմաստը. ես քեզի կ'ըսեմ թէ՛ մինչեւ ցմահ հաւատարիմ պիտի մնա՞ս ինծի... :

— Թորգո՛մ, Թորգո՛մ, դոչեց օրիորդը, իր եսին մէջ վիրաւորանք զգացած սիրունիի մը բովանդակ զայրոյթի թափովը, խենթեցա՞ր, ատ ի՛նչ հարցում է. դեռ հարկ մնա՞ց հանդիսաւոր խօստումներու. նա՛,

գի՛ր ձեռքդ կուրծքիս վրայ, ականջ գի՛ր, տե՛ս թէ
 ի՛նչպէս կը արօփէ սիրտս, քեզի, լո՛կ քեզի համար... :
 Եւ դուն ելեր հաւատարմութեան նոր խոստումներ կը
 փորձես խլել շրթունքէս :

Ու Թորգոմի ձեռքը տարաւ դրաւ իր կուրծքին
 վրայ :

Էօթէնի կը դողար, տակաւին չէր կրնար թափան-
 ցել իր նշանածին գաղտնիքը, ու կախուած կը մնար
 անոր շրթունքէն :

Թորգոմ ձեռքը վերցուց իր նշանածին կուրծքին
 վրայէն ու երկու ձեռքերուն մէջ առնելով ճակատը,
 որ կ'այրէր :

— Էօթէնի՛, Էօթէնի՛, ըսաւ խորհրդաւոր շեշտով
 մը, գիտե՞ս ո՛ւր ենք այս պահուս. գիտե՞ս, ո՛վ կը
 պառկի այս մարմարին ներքե... :

— Իրա՛ւ այս գիշեր զարմանալի փոփոխութիւն
 մը կը նշմարեմ վրադ, Թորգոմ, ինծի՞ կը հարցնես
 թէ ո՛վ կը պառկի այս մարմարին տակ, ինծի՞ որ
 Խասգիւղի աղջիկ մըն եմ, հո՛ն ծնած, հո՛ն սնած ու
 հո՛ն զատիարակուած. մեր Վարժապետեան Ներսէս
 Պատրիարքին գերեզմանը քենէ՞ պիտի սովրի Էօթէ-
 նիդ :

— Է՛հ ուրեմն, յարեց Թորգոմ, Էօթէնի՛, կը տես-
 նե՞ս, լաւ նայէ՛, Մայր Եկեղեցի՛ն կը գտնուինք հի-
 մակ, հոս ուրիշ մարդ չը կայ, բացի տաճարին որմերէն
 կախուած սուրբերէն, որոնք կը հսկեն միշտ, բացի ա-
 լագ խորանին առջեւ կախուած կանթեղէն, որ կը
 մարմրի և բացի այս գերեզմանէն, որուն վերեւ կը
 սաւառնի Ներսէս Պատրիարքին վեհափառ ուրուն :
 Հիմա կ'ուզեմ որ այս լուռ վկաներուն ներկայութեան
 կատարես... :

— Ի՞նչը, ի՞նչը, արտնջաց էօժէնի :

— Ո՛ւխտդ, էօժէնի՛, նոր ո՛ւխտդ, յարեց Թորգոմ բոլորովին այլայլած ու յափշտակուած :

Ու տափաթին հտեւի գրպանէն հանեց փոքրիկ բլավովէր մը, զոր դրաւ գերեզմանին վրայ, նաև, մէջքէն քակեց արծաթապատ դաշոյնը, զոր նոյնպէս դրաւ գերեզմանին վրայ, և, աչքերը սեւեռած՝ իր նշանածին .

— էօժէնի՛, ըսաւ, ա՛նա՛՛ զէնքերս, ա՛նա՛՛ ես :

էօժէնի կը դողար ամբողջ մարմնովը, բա՛ն մը չէր հասկնար այս գործողութիւններէն :

— Ընտրէ՛, հողի՛ս, դաշո՛յնը կամ բլավովէրը, յարեց Թորգոմ, ա՛ն մէկը, կա՛մ ձեռքովդ սպաննէ՛ զիս, և կա՛մ . . .

— Եւ կա՛մ . . . բացազանչեց էօժէնի, յանկարծ ոտքի ելլելով, ի՞նչ կ'ընես, Թորգո՛մ, ի՞նչ կ'ընես . . .

— Եւ կա՛մ խոստացի՛ր, շարունակեց Թորգոմ, առանց փոխելու ձայնը,

— Ի՛նչ խոստանամ, հողի՛ս, կը պաղատէր խեղճ աղջիկը, քրտինքի մէջ լողալով ու բոլոր մարմնովը դողալով,

— Խոստացի՛ր երբէք չամուսնանալ ինձի հետ, մինչեւ որ չը փրկուի՛ Հայրենիքը . . . :

էօժէնի սարսռաց. աս ի՛նչ յայտնութիւն էր, չամուսնանա՞լ, երբէ՛ք չամուսնանալ մինչեւ որ չփրկուէր Հայրենի՛քը . . . :

Շանթահարող նայուածքով մը կառչած իր սիրականին, նայեցաւ առանց արտասանելու բառ մը, յետոյ, իր ապագան մեռած, ու անոր գերեզմանի կափարիչին տակ փափուկ կուրծքը ճնշուած, յաւիտենա-

պէս լքուած սիրունիի մը հոգիին բոլոր մաղձը մէկ հարուածով թափել ուզելով, ինքզինք ամփոփեց, և

— Թորգո՛մ, Թորգո՛մ, մինչեց վիրաւոր տատրակի մը պէս, այսպէս յա՛... , մինչեւ որ չը փրկուի Հայրենի՛ քը :

— Այո՛ , այո՛ , Էօթէնի՛ , գոռաց սպառնալի շեշտով մը , վճռուա՛ծ է , վճռուա՛ծ ... :

— Չպիտի՛ ամուսնանանք , շարունակեց Էօթէնի՛ , մինչեւ որ ...

— Չը փրկուի՛ Հայրենի՛քը , ընդմիջեց Թորգո՛մ , դի՛ր ձեռքդ ուրեմն ասոնց վրայ :

Ու ցոյց տուաւ գերեզմանին վրայ դրուած իր սիրական զէնքերը :

— Երգում՛ բրէ՛ , շարունակեց Թորգո՛մ ... :

Էօթէնի՛ դարձեալ ծունկի եկաւ գերեզմանին առջեւ , երկու ձեռքերը դրաւ զէնքերուն վրայ և արտասուանեղձ աչերը սեւեռելով մա՛րարձանին .

— Անմա՛հ հոգի Ս . Ներսէսի , մրմնջեց Չերմեռանդօրէն , դուն որ Ս . Ստեփաննոսի աւազանին մէջ մկրտեցիր զիս , դո՛ւն , Հայրենի՛քին անձնուէ՛ր պաշտպանը , դո՛ւն որ ստեղծեցիր Հայկական Խնդի՛րը , վկա՛յ եղի՛ր երգումիս . — Չպիտի՛ ամուսնանամ , մինչեւ որ ... :

Հեծկլտանքի մէջ խեղդուեցաւ հէք աղջկան ձայնը :

— Քաջութի՛ւն , շարունակեց Թորգո՛մ , շարունակէ՛ , աւարտէ՛ :

— Չպիտի՛ ամուսնանամ մինչեւ որ չը փրկուի ... Հայրենի՛ քը ... , հեծեծեց Էօթէնի՛ :

— Պիտի՛ փրկուի՛ Հայրենի՛քը , մռնչեց Թորգո՛մ , ալո՛ , Էօթէնի՛ , պիտի՛ փրկուի՛ Հայրենի՛քը , և մե՛նք պիտի՛ փրկենք հայ աղջկան , հայ կնոջ , հայ մօր պա՛տիւր ... :

Ոտքի ելաւ Թորգոմ, հաւաքեց զէնքերը, տեղաւորեց ընկալիքը հասեւի գրպանին մէջ և դարձեալ կախեց մէջքէն արծաթապատ դաշոյնը, և բռնելով իր նշանածի ձեռքէն, վերցուց զանի։

— Էօժէնի՛, Էօժէնի՛, ըսաւ խանդաղատանքով մը, մօտեցի՛ր, մօտեցի՛ր։

Երկու երգուեալ սիրահարները գրկապինդ վաթթուեցան իրարու և ընկզմեցան իրարու մէջ։

Մայր տաճարին դամբանային լուսնիւնը, որմերէն կախուած սուրբերու խնկարոյր պատկերները, խաւարի մէջ հասնող Աւագ խորանի պլպլացող կանթեղը, և, Ներսէս Պատրիարքի վեհ Ստուերը, որ կը յածէր ու կը սաւառնէր սրբավայրի խորհրդաւոր իրերուն վերեւ, այն գիշերը, վկայ եղան անձնուրաց Զոյգին հանդիսաւոր երգումին։

Զանգատան բարձունքէն լսուեցաւ առաջին զօղանջը Մայր եկեղեցիի զանգակին, առտուան ժամերգութեան հրաւիրելով Գում Գաբուի հայ ժողովուրդը։

Ժամկոչը ներս մտաւ և քանի մը քայլ առաջանալով, նշմարեց Զոյգը, գերեզմանին ոտքը, գետնամած։

Կ'աղօթէին։

Բ.

Մէկ ամիս անցած էր Ապտիւլ Համրաի գահակալութեան Աճրդ տարեդարձի օրէն ի լեր, և տակաւին Բ. Գուար գոհացուցիչ պատասխան մը չէր տուած երեք

մեծ դեռսպաններուն, մայրսեան ծանօթ Մրազրին նըկատմամբ :

Երլարդ կը յամառէր տակաւին, և չէր ուզեր առնել ո՛չ մէկ վճռական քայլ դէպի լուծում :

Եւրոպական դիւանագիտութիւնը, մասնաւորապէս քրիտանականը, նախ որոտագոչ սպառնալիքներով ճամբայ ելած, նոյնիսկ հայկական ինքնավարութեան մը, հայկական իշխանագետութեան մը մղձաւանջը կասեւորով երլարդի Մենագարին գլխին վերեւ. լոկ իր գձուձ շահերուն երկրպագու, անամօթ դիւանագիտութիւնը, որ պահ մը Հայաստանի իշխան հռչակել փորձեց Տիւգարը Թէքը, և թունդ հանեց բանտերու խաւարին մէջ հիւժած քանի՛ քանի վէրքոտ սիրտեր, ամրոնեցով թուղթեր մրտելէ, հեռագրաթելեր մաշեցնելէ, ունայն երթեւեկներէ, բանակցութիւններէ, պատգամներ առնել տալէ պարտասած դադրած, կ'ընկրկէր, ետ կը քաշուէր, ինքզինք ապիկար յայտարարելով երլարդի յամառութեան առջեւ, խոստովանելով այսպէս իր ամօթալի պարտութիւնը . . . :

Անխի դճ, անամօթ եւրոպան, ա՛յնքան յայտնի ուճիրներու, ա՛յնքան դժոխային բռնութիւններու, ա՛յնքան հակամարդկային վայրագութիւններու, պետական, կայսերական մարդասպանութիւններու ականատես ըլլալէ յետոյ, անմեղ զոներուն աչքերը սրբելու, մարտիրոս ժողովուրդի մը դարաւոր տառապանքներուն վերջակէտը դնելու սին յոյսեր արծարծելէ յետոյ, հիմա, մէկդի կը քաշուէր, թողլով Զո՛ր միս մինակ՝ Դահիճին ձեռքը :

Սակայն Զո՛ր չպիտի ուզէր մեռնիլ առանց մաքսուելու գերագոյն, ճգնաժամային բողբէլին մէջ պիտի

ՍԱՍՈՒՆԷՆ ԵՏՔԸ

20



1652-2002

ուզէր նետուիլ իր Դահլիճին վրայ, պոռալ անոր արիւնոտ երեսին իր վերջին բառը, դրոշմել անոր ճայրատ ճակտին Անէժքի խաւանը . . . :

Միտքերը վերգովի կը սկսէին :

Հայկական Խնդիրը, երկրագունտին բոլոր Հայերը վարդապոյն երազներով օրօրելէ ետքը, կը խաւարէր, կը մտնէր դարձեալ այն սև փուլին մէջ, ուր կը գըտնուէր առաջ, Սանտուի Արհաւիրքին երկրորդ օրը . . . :

Աղետաբե՛ր, շարագուշակ օրեր, Սեպտեմբերի սկիզբները : Ս. Խաչի տօնը կը մօտենար : Գու՛մ Գարուի պատրիարքարանը, գաւառներէն ամէն օր հասած կըսկըծեցուցիչ լուրերէն, սարսափի մատնուած, ընդհանուր ջարդի մը նախընթօրը կը կարծէր ոչմարել : Իզմիրլեան Պատրիարքը տագնապներ կ'անցընէր :

Հնչակեանները չէին կրնար անգործ նստիլ, կեղբունէն հասած վերջին նրահանգներուն գործադրութիւնը վճռուած էր, անխուսափելի կը դառնար յուսահատական փորձ մը, ցոյց մը, կոտորած անիւր քայեցնելու համար կառքին, որ Հայկական Խնդիր կը կոչուէր :

Սերոպայի միջազգային քաղաքականութիւնը կը յռեփոխուէր. Արեւելքի կողմէն, հորիզոնին վրայ սև ամպեր կը գծուէին, մօտալուտ փոթորիկ մը պիտի պայթէր Պալքաններէն և այդ փոթորիկին հակառակածը պիտի կրէր Հայկական Խնդիրը : Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը տխրանուն Լոպանօֆ ուրիտած էր թաղել հայ Գառը հայ Արիւնին մէջ, ուստի, Անգլիոյ և Բ. Գրան մըջեւ, Սասունի Գէպքէն վերջը, Հայկական Վեց Նահանգներու նոր Բարենորոգումներու Մրազրին նկատմամբ կատարուած բանակցութեանց միջոցին, յանկարծ ետ քաշուած էր յայտարարելով թէ՛ ինք Հայաստան մը կ'ուզէր, բայց առանց Հայերու, և

Թէ՛ լաւ չէր կովկասի կշտին անկել Արեւելեան նոր Պուլկարիա մը, որ չը պիտի ուշանար իր ծոցէն յարուցանել նոր Ստամպուլօֆ մը, և ապերախուութեամբ փոխարինել ռուսական պաշտպանութեան երախտի քը... :

Էսպանօֆ յաջողած էր իր ետեւէն ձգել Ֆրանսական Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Հանօթօն, որ բաւաւ ախաղոս մըն ալ առեր էր, Ասպիւլ Համրախի հանդէպ իր տածած համակրանքին համար... :

Այսպէս, Անգլիան մընակ կը մնար, և Ռ. Գուռը, ինքզինք չգօր կը զգար և կը յամառէր մերժել մայրսեան Օրագիրը :

Իզմիրլեան պատրիարքը, այս դժբաղը իրագարձութիւնները կը դիտէր ու կը շուարէր, զո՛ւր կը խորհէր թէ՛ ինչ միջոց պիտի բնտրէր, իր ժողովուրդին ցաւերը գոնէ քիչ մը թեթեւեցնելու համար :

Պատրիարքարանին Մեծ Գուռը կառք մը կանգ առաւ :

Բարպանները վեր վազեցին իմաց տալու Ս. Պատրիարքին :

— Անգլիական մեծ դեսպանը, Սըր Ֆիլիքս Բըրրին է, կը փոփսային բերնէ բերան :

Իզմիրլեան Սրբազան անմիջապէս դուրս ելաւ, առաջացաւ Պատրիարքարանի սրահին մէջ, կեցաւ սանդուխին գլուխը, զխմաւորելու համար մեծ դեսպանը, որ արդէն իր Ա. Թարգմանին հետ վեր կ'ելլեր հանգարտօրէն :

Ընդունելութեան դահլիճին մէջ կ'ողջագուրուին պատրիարք ու դեսպան, և կ'անցնին բազմիկ թիկնաթոռներուն վրայ : Թարգմանի դերը կը կատարէր Սոստիչեան Յարութիւն էֆէնաին, Դալաթիոյ Կեդրոնական վարժարանին անօրէնը, որ երկու ժամ առաջ Պատ-

րիարքարան կանչուած էր Իզմիրլեան Սրբազանէն, կա-
րեւոր խորհրդակցութեան մը համար:

Քաղաքավարութեան սովորական ձեւակերպութիւն-
ներէն ետքը,

— Սրբազան՝ Պատրիարք Հայր, ըսաւ Սըր Յիլիբ
Քըրրի, Նորին Շնորհալի Վեհափառութեան կառավա-
րութիւնը հեռագրով կ'արտօնէ զիս խնդրելու Ձեր Սըր-
բազնութենէն որ հանդարտութեան յորդորէք հայ ժո-
ղովուրդը, զգուշանալու ո՛ր և է Տոյցէ, որ կրնայ Հայ-
կական Խնդիրը վտանգաւոր փուլի մը մէջ նետելու
ընոյթը ունենալ. պիտի խնդրէի մասնաւորապէս որ մայ-
րաքաղաքիս Հնչակեան կուսակցութեան վարիչները հա-
մոզէիք, ժամանակ մըն ալ սպասելու բանակցութեանց
ելքին, որոնք տակաւին կը շարունակուին Բ. Դրան ու
Ռուսական, Ֆրանսական և բրիտանական դեսպաններուն
միջև .

— Իրա՞ւ, հարցուց Իզմիրլեան պատրիարքը, դեռ
կը շարունակուին բանակցութիւնները, մե՛ծ դեսպան,
և կը յուսա՞ք թէ՛ յանգին բաղձացուած ելքի մը...

— Անչո՛ւշտ, անչուշտ, յարեց քմծիծաղով մը Սըր
Յիլիբ Քըրրի, եւրոպական միջազգային քաղաքակա-
նութեան ներած չափին ու աստիճանին մէջ .

— Նո՞յնը կը մնայ այդ միջազգային քաղաքակա-
նութիւնը թէ՛ փոխուեցաւ, շեշտեց Իզմիրլեան նշանա-
կալից նայուածք մը դրկելով դեսպանին, և

— Ի՛նչպէս, Սրբազան՝ Պատրիարք Հայր, ընդմի-
ջեց բրիտանական մեծ դեսպանը, կը կարծէ՞ք թէ՛ փո-
փոխութիւն մը կրած ըլլայ քաղաքականութիւնը...

— Մե՛ծ դեսպան, յարեց Իզմիրլեան, իր ամենա-
լուրջ դէմքովը, կարծե՛լ, ի՛նչ կ'ըսէք, դժբաղդաբար
կը տեսնեմ թէ՛ Արեւելքի մէջ, քաղաքականութեան

երկինքը կը մթադնի և թէ՛ մօտալուտ է պայթուժը մեծ դէպքերու, որոնք թերեւս Եւրոպա՛ն ալ արիւննոտեն... :

Սըր Ֆիլիբ Բըրրի լուեց, Հայոց Պատրիարքին այս սոսկալի յայտնութեան առջեւ: Ինք, իբրեւ մեծ դեսպան մը, ընտանաբար անտեղեակ չէր կրնար եղած ըլլալ դիւանագիտութեան մէջ անցած դարձած իրերուն, մանաւանդ, բրիտանական մեծ դեսպանի հանգամանքովը, է՛ն իրազեկը պէտք է ըլլար մասնաւորապէս Արեւելքի գործերուն, որոնք սերտօրէն կապուած էին Անգլիոյ կենսական շահերուն հետ. Արեւելքի, որ արդէն գրեթէ մէկ դարէ ի վեր կը զբաղեցնէր Արեւմուտքը, մէկէ աւելի անգամներ սպառնացած ըլլալով հրդեհել բովանդակ քաղաքակրթեալ աշխարհը: Սակայն, երբ Հայոց Պատրիարքին բերնէն կը լսէր այնպիսի խօսքեր, որոնք միայն դիւանագիտական շրջանակներուն մէջ կրնային լսուիլ, կը սկսէր մոմտալ.

— Սրբազա՛ն Պատրիարք Հայր, ըսաւ, արդեօք նոր բան մը լսած էք, կրնա՞մ ես ալ իմանալ.

— Մե՛ծ դեսպան, յարեց Իզմիրլեան իր սովորական անժպիտ դէմքի գիծերուն աւելի խրթին արտայայտութիւն մը տալով, ի՞նչ կը կարծէք դուք, ի՞նչ կը հետեւցնէք Բ. Դրան ա՛յսքան յամառ ընթացքէն, այդ յամառութեան տակ չէ՞ք նշմարեր օտար նեցս՛ւկ մը,

— Ի՛նչպէս, ընդմիջեց Սըր Ֆիլիբ Բըրրի, խնդրե՛մ, Սրբազա՛ն Հայր, շօճեցէ՛ք լուսաւորել զիս:

— Այո՛, մե՛ծ դեսպան, շարունակեց Իզմիրլեան, պիտի պարզեմ ձիմակ ամէ՛ն բան, միայն կը խնդրեմ որ շնոր՝ ընէք սպասելու վայրկեան մը:

Ու ելաւ տեղէն, ուղղուեցաւ դէպի դա՛լիճին դուռը, դուրս ելաւ, ու քիչ յետոյ վերադարձաւ, նա՛մակներու տօցակ մը ձեռքին մէջ: Թիկնաթոռին մէջ տեղաւորուելէ յետոյ.

— Մե՛ծ դեսպան, ըսաւ, ձեռքի նամակներէն մէկը ցոյց տալով անոր, ա՛նա՛ւասիկ, դեռ երէկ ստացայ՝ Էջմիածնէն, Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսէ՛ն է :

Սըր Ֆիլիբ Բըրրի երկիւղածութեամբ մտիկ կ'ընէր : Իզմիրիեան սկսաւ կարդալ, մինչդեռ Մոստիշեան բառ առ բառ անգլիերէնի կը թարգմանէր :

Հայրապետական նամակին մէջ, Հայկական Խնդիրին նկատմամբ ուսական քաղաքականութեան յոռեփոխումը դիտել տալէ ետքը, Խրիմեան Հայրիկը կ'անիծէր հայատեաց Լոպանօֆը, որ, վերջերը ելլաքզի Բոնակայէն առ Ամենագործած Վեհ. Ցարը ուղղեալ ինքնագիր նամակի մը պարունակութենէն գրգռուած, պաշտօնական հալածանք մը սկսած էր Հայ Ցեղին դէմ, և նոյնիսկ կը քաջայերէր ամէն շարժում, որ կրնար ծառայել Կովկասի մէջ հայ տարրին ազդեցութիւնը տկարացնելու : Խրիմեան Հայրիկը կը զգուշացնէր պատրիարքը, չը խաբուիլ Պոլսոյ ուսական մեծ դեսպանին, ազուէս Նելիտօֆի օձի լեզուէն, ո՛ր և է գաղտնիք մը չը հաշորդել անոր. Այտիւ Համիտի գոծախալը, մտերիմը, մեղսակիցը կը յորջորջէր զանի հայկական գործերուն մէջ, և կը յորգորէր օգտուիլ միայն բրիտանական մեծ դեսպանին, հայասէր Սըր Ֆիլիբ Բըրրիի փրկարար խորհուրդներէն, կ'օրհնէր Բըրրիին ու իր Տիկիներ, և կը յանձնարարէ, որ պատրիարքը չը դադրեցնէր իր այցելութիւնները մեծ դեսպանին մօտ, եւայլն :

Սըր Ֆիլիբ Բըրրի, նամակին պարանուկութեանը վերահասու ըլլալէ ետքը, դարձաւ ըսաւ.

— Սըրազան պատրիարք Հա՛յր, կը խնդրեմ որ

մեր մէջ գաղտնիք մնայ ինչ որ պիտի յայտնեմ հիմա .
գիտէ՞ք ինչո՛ւ կը ձանձրացնեմ Ձեր Սրբազնութիւնը .

— Բա՛ւ լիցի, մե՛ծ դեսպան, բոլորեց Իզմիր-
լեան, ընդհակառակն, կը պատուէք իմ ազգս, ամէն
անգամ որ պատրիարքարանս կ'այցելէք. սփոփանք մըն
է ձեռներկայութիւնը՝ վշտակիր պատրիարքի մը հա-
մար :

— Ծնորդակալ եմ, Սրբազան Հա՛յր, ձեր անկեղծ
համակրանքի արտայայտութիւններէն, կը հաճո՞ք ու-
րեմն լսել Վեհափառ Թագուհիիս կառավարութեան
փափագը, ձեր ազգը շահագրգռող և վերին տատիճանի
կարեւորութիւն ունեցող ինդիքներուն համար : Կորս
Սօլզպըրի մասնաւորագէտ կը խնդրէ որ դադարին յե-
ղափոխական շարժումները, որպէս զի Բ. Գուռո պա-
տըրէակ չը բռնէ զանոնք, արդարացնելու համար ձրգ-
ձրգումները, որոնք դժբաղդաբար կը ջլատեն եւրոպա-
կան դիւանագիտութեան աշխատութիւնները, կը խոս-
տանայ քիչ ատենուան մէջ լուծել տայ Հայկական
Խնդիրը, իայ ազգին բաղձանքներուն համաձայն, կայ-
սերական իրատէով մը նուիրագործել տալով մայրսեան
Ծրագիրը . . . : Հոգ չէ՛, կը գրէ մեր ազնուական յոր-
տը, թո՛ղ Ռուսիան քակէ համերաշխութիւնը . թո՛ղ
դրժէ Հայկական Խնդիրը լուծելու իւր շանդիսաւոր
խօտաւժը, հոգ չէ, Ֆրանսա՛ն ալ թող ետ քաշուի,
յարգելով իր Բաշնակիցը, սակայն, պէտք է գրտնալ
թէ Անգլիան, ինքը մինակ, պիտի կրնայ գլուխ հանել
սկսուած գործը, և թէ՛ Վեհափառ Թագուհիին կառա-
վարութիւնը վճռած է վերջնականապէս լուծել Հայկա-
Խնդիրը, թէկուզ առանց ո՛ր և է եւրոպական մեծ տէ-
րութեան մը մասնակցութեան ըլլայ ան : Հետեւաբար,
Սրբազան Հա՛յր, պիտի խնդրէի և թախանձելով պիտի

ինդրէի որ այս մտօք ի գործ դնէք պարտ ու պատ-
շաճը, հանդարտեցնէք, միամտեցնէք Հնչակեան կու-
սակցութեան վարիչները, համողէք զիրենք որ ժամա-
նակի մը համար դաշրեցնեն իրենց գործունէութիւնը,
քաղաքական պարագաները նկատի առնելով միշտ և
սպասեն վախճանին, որ, կը յուսամ թէ ազատագրումը
պիտի բերէ այ Յեզին:

Իզմիրլեան ուշի ուշով կը կշռէր Սըր Ֆիլիբ Քըր-
րիի խօսքերը, որոնք կը հովահարէին իր հրաբորբոք
սիրտը:

Մեծ դեպքանը քիչ մըն ալ նստելէ յետոյ, ոտքի
ելաւ և հրաժեշտ տուաւ Հայոց Պատրիարքին:

Իզմիրլեան առանձնացաւ յետոյ իր գրասենեակը,
և սեղանին վրայ հակած, սկսաւ խորհիլ, որոճալ Սըր
Ֆիլիբ Քըրրիի յայտնութիւններուն վրայ:

Յետոյ, սեղանին վրայի զիլը հնչեցուց:

Ներս մտաւ բարապան Կարապետը:

— Կարապետ ազա, հրամայեց Իզմիրլեան, ինձի
կանչէ՛ Բարթող էֆէնտին:

— Ո՞րը, Սրբազան Հայր, հարցուց բարապանը,
Հիւնքեար Պէյէնտեանը թէ...

— Ելեա՛ն էֆէնտին, թէլեան, ըսաւ Իզմիրլեան:

Բարապանը դուրս ելաւ և քանի մը վայրկեան հաքը
Բարթող է. էնտին ներս մտաւ:

— Բարթող էֆէնտի, ըսաւ Իզմիրլեան, այսօր-
ուրնէ՛ լրիցէք հրաւիրագրերը, վազը կէս օրէն առաջ
պէտք է գումարուի արտասովոր խառն ժողով մը,
ինչպէս գրուէք, անհրաժեշտ է որ գումարուի, այնպէս
չէ՞...

— Անտարակոյս, Սրբազան Հայր, յարեց պատ-
րիարքարանի հինաւուրց դիւանապետը, աշխոյժ շեշտով

մը, գիրերը պատրաստ են արդէն, հիմա կը ղըրկենք :

— Այո՛, այո՛, կրկնեց պատրիարքը, գուզո՛ւմ Բարթող էֆէնտի, հիմա՛ ղըրկելու է, վաղուան նիստը կարեւոր է, թո՛ղ հրաւիրագրերուն մէջ շեշտուի այս կէտը. ամէ՛նքն ալ ներկայ թող ըլլան :

Գիւանապետը կը հեռանար, երբ պատրիարքը կանչեց ետեւէն .

— Բարթո՛ղ էֆէնտի, Երէցեան Գէորգ վարդապետը չը մոռցուի, անհրաժեշտ է իր ներկայութիւնը վաղուան նիստին մէջ : Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոսին ալ թո՛ղ գրուի, հետը թո՛ղ առնէ ընդէ հայկական բանորոգումներու մայրսեան ծրագրին Ֆրանսերէնը :

— Հայերէն թարգմանութիւնը կայ, Սրբազան՝ Հայր, ըսաւ գիւանապետը .

— Ո՞րը, Արշարունի եպիսկոպոսի՞ն թարգմանածը թէ Երէցեան Գէորգ վարդապետին, հարցուց պատրիարքը .

— Երէցեանի՛նը, Սրբազան՝ Հայր, պատասխանեց գիւանապետը, լաւագոյն թարգմանութիւնը չէ՞ .

— Այո՛, այո՛, կրկնեց Իզմիրեան Սրբազան, ա՛լ դուք նայեցէ՛ք, հրաւիրագրերը շուտով ղըրկուին :

Գիւանապետը դուրս ելաւ :

Իզմիրեան Սրբազան առանձին մնաց, չէր կրնար հանդարտ նստիլ, գանկը կ'այրէր :

Ոտքի ելաւ ու սկսաւ ման գալ սենեակին մէջ :

Բրիտանական մեծ դեսպանին վերջին խօսքերուն տպաւորութիւնը տակաւին կը տեւէր : Կացութիւնը շատ աճաւոր կը թուէր իրեն, որովհետեւ գիտէր թէ Հնչակեաններուն վարիչները քարգլուխ յամառներ էին և թէ՛ դժուար պիտի ըլլար համոզել ղիրենք որ հրաժարէին ո՛ր և է ցոյցէ : Կը մտածէր իր քով կանչել Պոլսոյ

Հնչակեաններէն Արփիար Արփիարեանը, որուն կը յուսար քիչ մը խօսք հասկցնել, բայց միւս կողմէ, կը խորհէր թէ՛ Պատրիարքարանի շրջանակին մէջ իսկ պակաս չէին Համիաի գործակալներ, վարնոց լրտեսներ, որոնք մէկ արծաթ մէճիտի համար իրենց ծնողքը կը հանէին աճուրդի, և իրենց եզրայրը կը մատնէին... : Սակայն միւս կողմէ, մեծ անխոհմտութիւն մը պիտի ըլլար անտարբեր մնալ կացութեան հանդէպ, որ աւելի քան երբէք քննադատական կը թուէր իրեն. մէկ բուսակի յագագում մը, կամ փոքրիկ անհոգութիւն մը կրնար մեծամեծ չարիքներու դուռ բանալ, ուստի, աճապարել, ժամ առաջ տեսնել պէտք էր այդ տաքգլուխ տղարը, հնչակեան կուսակցութեան գլխաւոր վարիչները, խրատել, համոզել պէտք էր ասոնք, գէթ առեւտրական մը համար դադրեցնելու իրենց սրտանական ընթացքը, և, հայրենիքի փրկութեան համար, փոխելու իրենց գործելակերպը :

Մէկ քառորդ ժամ այսպէս Եսենակին երկայնքը մտածկոտ քայլերով չափելէ յետոյ, Իզմիրլեան Սրբազան դարձեալ նստաւ թիկնաթոռին վրայ և սկսաւ աչքէ անցրնել գրասեղանին վրայ դիզուած գնահատան գրութիւնները, որոնք մեծ մասով գաւառի թղթակցութիւններ էին :

Նոյն միջոցին բարապան մը ներս մտաւ, ձեռքը նամակ մը, և մօտենալով, յանձնեց զայն պատրիարքին :

— Կարապետ էֆէնտին կանչէ՛ իմա, պատուիրեց Պատրիարքը :

Բարապանը դուրս ելաւ :

Նամակը թուրքերէն էր, թուրքերէնի դիւանապետը պէտք է կարդար զայն :

Խաչատուրեան Կարապետ էֆէնտին ներս մտաւ :

Իզմիրլեան Սրբազան, ձեռքի նամակը յանձնելով անոր,

— Նայեցէ՛ք, Կարապետ էֆէնտի, ըսաւ, ուրիշ է,

— Սրբազանն Հայր, պատասխանեց թուրքերէնի դիւանապետը, Ոստիկանութեան նախարար Նազըմ բաշայի հոգմէն է:

Ու, ակնոցը քթին վրայ, արագ արագ կը քաղէր բարձր ձայնով:

Ոստիկանութեան նախարարը փափագ կը յայտնէր քանի որ վայրկեան տեսակցելու Հայոց պատրիարքին հետ և կը խնդրէր որ այս վերջինը հաճէր եկտողով մը պատասխանել:

— Ի՞նչ կ'ուզէ ինէ այս մարդը, արանջաց Իզմիրլեան Սրբազան, բարեգուշակ չեմ գտներ այս այցելութիւնը, ի՞նչ կ'ըսէք Կարապետ էֆէնտի:

Կարապետ էֆէնտին այքերուն սկաւառակը խոշորցրնելով և ձախ ձեռքով ակնոցը խառնելով, խորհրդաւոր ու լուրջ դէմքով մը,

— Սրբազանն Հայր, ըսաւ, երեք անգամ է որ կ'ուզէ տեսնել Ձեր Սրբազնութիւնը, եթէ այս անգամ ալ մերժենք, ազէկ չը փախչիր կարծեմ...

Իզմիրլեան չէր ուզեր տեսնել նախարարին երևօր, ա՛յնքան կ'ատէր զինքը. սակայն, Պաշտօնաւորեան էֆէնտիի թեկադրական խօսքերէն կ'ազդուէր:

— Է՛հ, ըսաւ, գրեցէ՛ք ուրեմն երկտող մը, թո՛ղ գայ նայինք ի՞նչ նորութիւն պիտի հաղորդէ...:

Պաշտօնաւորեան դուրս ելաւ, քիչ յետոյ փերագարձու պատրիարքին գրասենեակը, ձեռքին մէջ բռնած ոստիկանութեան նախարարին զրկուելիք պատասխանը:

Իզմիրլեան այդ պատասխանագրին տակ դրաւ պատրիարքական կնիքը, և դիւանապետին յանձնարաւ

րեց անմիջապէս յանձնել զայն ոստիկանութեան նախարարին, որ դուրսը կ'ըսպասէր:

Իզմիրլեան Սրբազան դարձեալ առանձին մնաց: Կը պատրաստուէր անցնիլ դաշլիճը, ոստիկանութեան նախարարին ընդունելութեան համար:

Նոյն պահուն, Պատրիարքարանին փողոցէն լսուեցաւ կառքի շառաչը: Իզմիրլեան Սրբազան, քովի լուսամուտէն վար նայեցաւ:

Կառքը կանգ կ'առնէր Պատրիարքարանին դրան առջեւ:

Բարապանները վեր վազեցին, Սրբազան Պատրիարքին իմաց տալու այդ կառքին մէջէն դուրս ելլող հիւրը, որ արդէն վեր կ'ելլեր սանդուխներէն:

— Յրանսական ղեսպանատան Ա. Թարգմանը, կը փսփսային իրարու:

Իզմիրլեան Սրբազան շուտով անցաւ դաշլիճը, ընդունելու համար այս անսպասելի հիւրը, որ կուգար անտարակոյս կարեւոր գործի մը համար, կը խորհէր պատրիարքը, որովհետեւ պարզ այցելութիւն մը չէր ասիկա:

Յրանսական ղեսպանատան Ա. Թարգմանը պարզեց իր այցելութեան շարժառիթը, հաղորդելով միեւնոյն ժամանակ մեծ ղեսպան Պ. Բ. Գամպոնի յարգանքները Հայոց պատրիարքին: Գլխից նոյնութեամբ կրկնեց Սըր Յիլլիբ Բըրբիի յորդորները, դադրեցնել տալու Հնչակեաններուն գործունէութիւնը, որ վիրջին օրերը սպառնալից համեմատութիւններ ստացած էր, մեծ ղեսպանին անունով յայտարարելով թէ՛ Մայիսեան Մրագիրը ժողովուրդին պիտի վաւերացուի Սուլթանին իրատէսովը, եթէ յեղափոխականները քիչ մը հանգարտ ձգեն կառավարութիւնը, ևն:

Ա. Թարգմանը դեռ չէր վերջացուցած իր խօսքերը, երբ վարէն, Պատրիարքարանի բակին մէջ աղմուկը շատացաւ :

Ուրիշ կառքեր կանգ առած էին Մեծ Գուռին առջև :

Գործակատար Ֆրէնկեան Աբրահամ էֆէնտին դահլիճը մտաւ և իմաց տուաւ իտալական, աւստրուհոնգարական, գերմանական և ռուսական դեսպանական քարտուղարներուն այցելութիւնը :

Ֆրանսական դեսպանատան Ա. Թարգմանը տեղէն չէր շարժեր : Սրբազան պատրիարքին դառնալով .

— Սրբազան Հայր, ըսաւ, միեւնոյն խնդիրը զիրենք հոս կը բերէ. արդէն երէկ գիշերուընէ որսչուած էր հաւաքաբար դիմել Ձեր Սրբութեան և խնդրել որ յեղափոխական գոմիթէներուն հարկ եղած պատուէրները հաճիք տալ, մայրաքաղաքին անդորրութիւնը խանգարող միջադէպ մը չըստեղծելու, և մեծ տէրութեանց աշխատութիւնները նոր խոչընդոտներով ամլութեան չը դատապարտելու :

Դեսպանական քարտուղարները վեր առաջնորդուեցան, Պատրիարքարանի ընդունելութեան դահլիճը, և կարգով տեղաւորուեցան թիկնաթոռներուն մէջ : Իրենց կողմէն աւստրո-հոնգարական դեսպանատան քարտուղարը խօսեցաւ միեւնոյն իմաստով, կրկնելով ինչ որ արդէն խօսած էին Սըր Ֆիլիք Քըրրին ու Պ. Բ. Գամպոնի առաջին թարգմանը :

Ա. Պատրիարքը խոստացաւ կարելին ի գործ դնել հանդարտութեան յորդորելու Հնչակեանները, խնդրելով միայն որ մեծ տէրութեանց դեսպանները վերջ մը դնէին իր հարստահարուած ժողովուրդին կացութեան, որ երթալով անտանելի կը դառնար :

Կէս ժամուան տեսակցութենէ մը վերջ, ՚իւրերը մեկնեցան: Մակայն ասոնց մեկնումին վրայ չազիւ անցած էր ՚ինդ վայրկեան, երբ ուրիշ կառք մը կանգ առաւ Մեծ Դուռին առջև:

Ոստիկանութեան նախարար Նազըմ՝ բաշան էր, անմիջապէս վեր առաջնորդուեցաւ, Պատրիարքարանին դարձը, ուր կ'ըսպասէր Իզմիրլեան Սրբազան:

Տեսակցութիւնը կարճ տեւեց, չազիւ մէկ քառորդ ժամ:

Ոստիկանութեան նախարարը մասնաւոր բարեւներ բերած էր Մեծ Եպարքոսէն, և թախանձագին կը խընդրէր Իզմիրլեան Պատրիարքէն, խորատելու Հնչակեան գօմիթէի վարիչները, որ զգուշանան յարուցանելէ խռովութիւններ, որոնց շշուկը յասած է, կ'ըսէր, Նորին Վեհափառութեան Սուլթանին ականջը:

— Պատրիարք էֆէնտի, կը կրկնէր Ոստիկանութեան նախարարը, Վեհափառ Տէյս, իր անսահման գրթութեան և վեհանձնութեան մէկ նոր ապացոյցը տուաւ արդէն, բնդնաւոր ներում չնորձելով բոլոր չայ քաղաքական յանցաւորներուն, իսկ ՚իմակ, իմ բերնովս իր կայսերական բարեւները ճաղորդելով Չեզի, կը խոստանայ նորանոր բարիքներով լիացնել Չեր ազգը:

— Շնորհակալ եմ, բաշա՛, մեր Վեհափառ Սուլթանէն, որ ձեր միջոցաւ բարեհաճեր է ճաղորդել իր կայսերական բարեւները, ըսաւ Իզմիրլեան նշանակալից շեշտով մը, ՚նգնոտ նայուածք մը շանթելով ոստիկանութեան նախարարին, սակայն կրնա՞մ արբեօք իմանալ թէ՛ ի՛նչ նոր բարիքներ պիտի չնորձէ Վեհափառ Սուլթանը չայ ազգին,

— Պատրիարք էֆէնտի, յարեց Նազըմ՝ քմծիծաղով մը, ձեզի ծանօթ են այդ բարիքները, չե՞մ կարծեր թէ՛ զանոնք ինէ իմանալու պէտք ունենաք, սրով՛նտեւ մեծ

տէրութեանց դեսպաններուն հետ դո՛ւք էք որ յաճախ
կը տեսակցիք, այնպէս չէ՞ .

— Ներեցէ՛ք, բաշա՛, ի՞նչ ըսել կ'ուզէք, միթէ
պատրիարքներուն արգիլում^{ած} է յարաբերութիւններ
մշակել օտար տէրութեանց դեսպաններուն հետ . . .

— Թողութի՛ւն, ընդմիջեց Նազըմ ժպտելով, պատ-
րիա՛րք էֆէնտի, Նորին վեհափառութիւն Սուլթանը
ձեր վրայ կատարեալ վստահութիւն ունի, հետեւաբար,
Ձեր յարաբերութիւնները միւս օտար տէրութեանց ներ-
կայացուցիչներուն հետ՝ վայրկեա՛ն մը չեն կասկած ներ-
շնչեր Նորին վեհափառութեան ձե, հաւատարմական
զգացումներուն նկատմամբ :

— Ծնորձակա՛լ եմ, յարեց Իզմիրլեան, անտարբեր
չեչաով մը, ինձի ծանօթ է արդէն վեհափառ Սուլթա-
նին բարձր համակրանքը . . . :

Յետոյ, Նազըմ բաշա, իր այցելութեան բուն նպա-
տակը պատրիարքին պարզելու պատեհ րօպէն հասած կար-
ծելով :

— Պատրիա՛րք էֆէնտի, ըսաւ, աղէ կ'միտքս ինկաւ,
իրա՛ւ է թէ մօտերս Հնչակեանները պիտի յարձակին
Նըլտըզի վրայ . . . :

Իզմիրլեան ցնցուեցաւ, սրամտութեան կարմիր բոց
մը ցոլալ սկսաւ իր անսպիտ դէմքին վրայ, տեղէն ե-
լաւ, նորէն նստաւ, շտկուեցաւ ու յօնքերու պոստու-
մով մը .

— Բաշա՛, բաշա՛, որօտաց, ո՞վ, ո՞ր անխիղճ, ա-
նաստուած արարածը յերիւրեր է այդ սուտը . . . :

— Ո՛չ, ներեցէ՛ք, կ'ազերսէր ոստիկանութեան
նախարարը, պատրիա՛րք էֆէնտի, կ'երեւայ թէ լաւ չը
յաջողեցայ բացատրել խնդիրը : Կ'ըսուի թէ՛ Պոլսոյ Հըն-
չակեանները պիտի յարձակում գործեն Նըլտըզի վը-
րայ . . . :

Պատրիարքը բարկութենէն կը խնդար: Դարձաւ ըսաւ նախարարին .

— Բաշա՛, լո՞ւրջ կ'ըսէք, իրա՞ւ, կը հաւատա՞ք այդ շշուկին, Հնչակեանները պիտի յարձակին Երլտըզի վրայ... հէ՛ . ի՛նչ դիւրին բան... :

— Այո՛, ընդմիջեց Նազըմ, գլխի կրեբումով մը, պատրիա՛րք էֆէնտի, դիւրին բան չէ, ե՛ս ալ գիտեմ, մանաւանդ պէտք է գիտնալ թէ Ոստիկանութեան նախարարը չը՛ քնանար .

— Բաշա՛, յարեց Իզմիրլեան, կատակը մէկդի՛, աւտանկ սուտերու հաւատ ընծայելու համար մարդերուն է՛ն ապուշը պէտք է ըլլայ մարդ, ես, իբրեւ հայ ազգին պատրիարքը, կրնամ ձեզ ապահովել թէ՛ հայ ազգին չափ հաւատարիմ տարր մը չպիտի կրնաք գտնել բովանդակ կայտութեան մէջ, եթէ կառավարութիւնը հիմնուած ըլլայ արդարութեան, իրաւունքի, հաւասարութեան և ազատութեան սկզբունքներուն վրայ . վրստան կրնաք ըլլալ, բաշա՛, թէ՛ Հնչակեաններու հասցէին տարածուած այդ շշուկը՝ չարամիտ լրտեսներու թշնամական ու շտնադիտական գծուծ գործունէութեան մէկ նմոյշը կրնայ համարուիլ, որովհետեւ իմ ազգս ուրիշ բան մը չը՛ խնդրեր, բայց միայն արդարութիւն... :

— Շնորհակա՛լ եմ, յանձունս շնորհակալ եմ, պատրիա՛րք էֆէնտի, ձեր ա՛յնքան ազնիւ ու վեհ զգացումներու արտայայտութենէն, ըսաւ Նազըմ, քաղաքավարութեան կեղծ անուշ ձեւերով, և պարտականութիւն կը զգամ նոյնը հաղորդելու յոտս գահոյից Նորին կայսերական Վեհափառութեան :

Յետոյ, Ոստիկանութեան նախարարը օտքի ելլելով .

— Պատրիարք էֆէնտի, ըսաւ ժպտուն շրթունքով մը, ունի՞ք ուրիշ նրաման մը.

— Բարեւենք Մեծ Եպարքոս բաշային, ըսաւ Իզմիրլեան, ցամաք ձայնով մը:

Նազըմ բաշա նրաժեշտ տալով պատրիարքին, վար իջաւ և նետուեցաւ կառքին մէջ, որ կը սպասէր Մեծ Դուռը:

Ոստիկանութեան նախարարին մեկնումէն ետքը, Իզմիրլեան Սրբազան առանձնացաւ դարձեալ իր գրասենեակը և զիւր նշեցուց:

Բարագան մը ներս մտաւ:

— Ինձի նայէ՛, ըսաւ Իզմիրլեան, Երուսաղեմատուն հանդիպէ՛, նայէ՛ հո՞ն է Երէցեան վարդապետը, եթէ հոն է, ըսէ՛ իրեն. թո՛ղ քիչ մը հո՛ս գայ, ըսէ, որ պատրիարքը կ'ուզէ տեսնել զինքը. հա՛, չը մոռնաս ըսել իրեն որ նաը բերէ վերջերս Հնչակեաններուն կողմէն զրկուած սպառնական գիրերը:

Բարագանը գնաց Երուսաղեմատուն, Գէորգ վարդապետ Երէցեանը կանչելու:

Աւելորդ չէ յիշել հոս թէ՛ Իզմիրլեան Սրբազանի միակ վստանելի եկեղեցականը՝ Գէորգ վարդապետ Երէցեանն էր, Երուսաղեմի Պատրիարքական երիտասարդ փոխանորդը, որ իր քով, Երուսաղեմատունը կը պահէր բոլոր վտանգաւոր թղթակցութիւնները, որոնք զանազան կողմերէ կ'ուղղուէին Իզմիրլեան պատրիարքին: Այս երիտասարդ եկեղեցականին խորհուրդն կը դիմէր Իզմիրլեան, ամէն անգամ որ ազգային կամ պետական տագնապ մը ներկայանար:

Բարագանը վերադարձաւ և պատրիարքին յայտնեց որ Երէցեան վարդապետը շացակայ էր:

Հրաւիրուած եկեղեցական թէ աշխարհական ժողովա-
կաններուն մեծ մասը փութացած էր յաջորդ օրը պաա-
րիարքարան, որ, ժամը ճիշտ երեքին գումարուեցաւ
արտասովոր նիստը, Ս. Պատրիարքի նախագահութեան
տակ :

Նախագահ Սրբազանը, նոյն շարժուան մէջ իրարու
յաջորդած զէպքերը համառօտ մը պատմելէ յետոյ, ան-
ցաւ գլխաւոր խնդիրին, ուր նոյն օրուան արտասովոր
նիստին առանցքը կը կազմէր : Մասնաւորապէս ժողովա-
կաններուն լուրջ ուշադրութեանը յանձնեց բրիտանական
մեծ դեսպան Սրբ Ֆիլիբ Քըրրիի, ինչպէս նաև մրւս մեծ
դեսպաններու քարտուղարներուն և ֆրանսական դես-
պանատան Ա. թարգմանին այցելութիւնները, որոնք գը-
րեթէ յաջորդաբար տեղի ունեցած էին մէկ օրուան մէջ :
Ժողովականներէն Օրմանեան եպիսկոպոսը, ընդմի-
ջելով նախագահը .

— Սրբազան՝ եղբայր, ըսաւ, երէկ ուշ ատեն լըս-
ուեցաւ թէ՛ Ռատիկանութեան նախարար Նազըմ բաշան
ալ այցելած է պատրիարքարան, իրա՛ւ է, և . . .

— Եղբայր, դիտել տուաւ Իզմիրլեան Սրբազան,
մի՛ ընդմիջէք զիս, թոյլ տուէք որ աւարտեմ .

Ու շարունակելով իր տեղեկատուութիւնը, գրեթէ
նոյնութեամբ կրկնեց բրիտանական մեծ դեսպանին հա-
զորդած պաշտօնական անդեկութիւնները, յորդորները,
առանց բառ մը չնչելու հայկական կնիքի մասին ներ-
շնչած յոյսերուն վրայ. յետոյ պատմեց ֆրանսական
դեսպանատան Ա. թարգմանին յայտարարութիւնները,
որոնք չէին տարբերեր միւս մեծ տէրութեանց դեսպա-

նական քարաուզարներուն յայտարարութիւններէն և որոնք Սըր Ֆիլիք Բըրրէի թելադրանքները կը հաստատէին : Նախագահ՝ Սրբազանը, պատմելէ յետոյ ուտիկանութեան նախարարին տեսակցութեան արդիւնքը, ամփոփելով, կացութիւնը կ'նձուտ է ըսաւ, և համիտական կառավարութիւնը պատրուակ մը կը փնտռէ վիժեցնելու Մայիսեան Ծրագիրն ալ, ինչպէս որ տարիներէ ի վեր մնում տառի վերածած է Պերլինի ճարտարապետը, հետեւաբար, եզրակացուց Իզմիրեան, այս արտասովոր նիստը գումարել տալով, ազգին ներկայացուցիչներուն հաւաքական կամքին կը դիմեմ, ինչպէս պիտի անցընենք այս քննադատական ճգնաժամային րոպէս . . . :

Ժողովականները նախագահ՝ սրբազանի վերջին խօսքերուն տպաւորութեան տակ ընկճուած, չէին համարձակեր արտասանելու բառ մը :

Խորունկ լուսթիւն մը արեց դաշիճին մէջ : Շուտրած, իրարու կրես կը նայէին ժողովականները :

Վերջապէս, ժողովականներէն Նրէցեան Գէորգ վարդապետ, Իզմիրեան Սրբազանին աջ բազուկը, և տագնապալից րոպէներու մէջ միակ վստահիլի խորրդականը, ռաքի ելաւ և խզեց լուսթիւնը .

— Այո՛, ըսաւ, րոպէն քննադատական է, մեր ազգը ճգնաժամ մը կ'անցընէ այս պահուս, և Մայիսեան Ծրագիրը, որ մեր ազգային ազատադրութեան արշալոյսը կը խոստանար բանալ մեր վշտակոծ աչքերուն առջեւ, մինչև ցայսօր, Բ. Գրան ձգձգումներուն հետեւանքովը, կը մնայ մնում տառ, մեծ դեպքանկունը դիրքը խախտած է կարծեմ, մանաւանդ որ, սա վերջին երկու երեք շաբաթներուս մէջ, միջազգային քաղաքականութեան կողմնացոյցը տարբեր ուղղութիւններ առնել սկսած է. Ռուսիան, դժբաղդաբար, իր նախկին

տաք վերաբերումը ցոյց չի տար հայկական տառապանքին հանդէպ. վեհափառ Յարին միտքը թունաւորած են, թունաւորած. Խրիմեան Հայրիկին Չանքերը չէզոքացնող, հակընդդէմ մութ ո՛ւժ մը կայ, որուն դէմ մենք անզօր ենք, անզօր, քանի որ մինակը չէ. եթէ այս ժողովին մէջ չպիտի կրնանք համարձակ խօսիլ, ըսէ՛ք, կ'աղաչեմ, ո՛ւր պիտի խօսինք և որո՞ւ պիտի բանանք մեր ներքին վէրքը... :

Պահլիճը թնդաց ժողովականներու խանդավառ ձայներէն, որոնք կը գոչէին.

— Խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, վարդապետ, համարձակօրէն պարզեցէ՛ք ձեր միտքը :

Երէցեան վարդապետ իր ձառի նիւթին տիրացած, շարունակեց.

— Այս վէրքը դեռ թա՛րմ է սւ խորունկ, Սասունի վէրքը... : Եւրոպայի վիրաբոյժներուն տեղեկագիրը տեսանք. միակ սպեղանի ցոյց արուած է Մայիսեան Ծրագիրը, և սակայն, գաւառներէն ամէն օր կը հասնին դարձեալ թալանի, բռնաբարումներու, մասնակի ջարդերու տխուր արձագանգները. մեր նախագահ Սրբազանին Չանքերը չենք կրնար ուրանալ, իր սրբազան պարտականութեան գիտակցութենէն մզուած և ազգային Պատին արդարութեամբը հզօր, կ'աշխատի բաղձացուած լուծում մը ձեռք բերել, և ես վստահ եմ թէ՛ իր Չանքերը պիտի պսակուին մօտ օրէն, եթէ մեր յեղափոխականներն ալ համոզուին թէ՛ վայրկեանը փափուկ է, և թէ Եւրոպայի դիւանագիտութիւնը պէտք է ատեն մըն ալ հետապնդէ, իր սեփական միջոցներով, ամիսներէ ի վեր ձեռք առնուած Բարենորոգումներու կենսական խընդիրը, մինչև որ յաջողի այսպէս կամ այնպէս լուծում մը ձեռք բերել, այնպէս չէ՞ .

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, լսուեցան ձայներ զանազան
թիկնաթոռներէ, շատ լաւ կը խօսիք, շարունակեցէ՛ք,
շարունակեցէ՛ք

Եւ երէցեան վարդապետը կը շարունակէր ոգեւոր-
ուած .

— Հա՛րք և տեարք, ինչպէս ըսի, բոպէն փափուկ
է և կացութիւնը՝ քննադատական. մեր յեղափոխական
կուսակցութիւնները պէտք է, գոնէ ժամանակի մը հա-
մար, դադրեցնեն իրենց սպառնալիքները, և—ինչպէս
որ սրբազան նախագա՛նք քիչ առաջ մատնանշեց, հոս
յրշելով մեծ տէրութեանց դեսպանական մարմինն յայ-
տարարութիւնները—, պէտք է վախճանին սպասեն :
Կ'աղաչե՛մ, կը պաղատիմ, այս կէտը լաւ ըմբռնե՛նք,
եթէ յեղափոխականներու կողմէ պզտիկ ցոյց մը տեղի
կ'ունենայ այս օրերուս մէջ, Եւրոպայի մէկ քանի հա-
մակիր տէրութիւններն ալ ձեռք կը քաշեն և մեզ միս
մինակ կը լքեն մեր... Դա՛իճին դէմ... :

Այս վերջին բառերը ծափերու մէջ խեղդուեցան :

— Ուստի, եզրակացնելով, կ'առաջարկեմ որ ժողովիդ
հաւանութեան ենթարկուին հետեւեալ կէտերը .

1. — Այսօր յատուկ պատգամաւորութիւն մը դիմէ
Պոլսոյ Հնչակեան կուսակցութեան, վարիչներուն, կոչում
ընէ իրենց անկեղծ հայրենասիրութեան՝ և յանուն հայ-
րենիքի փրկութեան, խնդրէ որ այս օրերս զգուշանան
ո՛ր և է հակակառավարական ցոյցէ, չը վտանգելու հա-
մար կացութիւնը .

2. — Այսօր իսկ իմազբել խիստ լեղուով քազբիբ
մը, Մեծ Եպարքոսին ազգեալ, ներփակեալ զրկելով
նաև Սասունի և Տարօնոյ Տեղեկազբին թուրքերէն
թարգմանութիւնը, և պահանջել որ վերջ մը դրուի
Հայաստանի հալածանքներուն :

Յ. Նոյն տեղեկագրին ֆրանսերէն թարգմանութեանէն մէյմէկ օրինակ ալ յանձնել Մասունի մէջ գործող երեք մեծ տէրութեանց Պոլսոյ մեծ ղեսպաններուն, խորհրելով որ հաճին անյապաղ ընդունիլ տալ Մայիսեան Մըրազիրը, վերջ մը ղնելու համար Հայաստանի տեական հարստահարութեանց:

Անաւասիկ իմ խոնարհ կարծիքս:

Եւ ընդհանուր խանդավառութեան ու ծափերու մէջ նստաւ իր տեղը:

Նախագահ Սրբազանը քուէի դրաւ Տ. Գէորգ վարդապետի ուռջարկը:

Իզմիրլեան Սրբազանը, գո՛ւ տգաւորութեան մը տակ, փակեց նոյն օրուան արտասովոր նիստը:

Ժողովականները հեազնեալ մեկնեցան:

Նոյն օրը Սաչատուրեան էֆէնտին խմբագրեց Մեծ Եպարքոսին զրկուելիք պատրիարքական քաղրիրը. իսկ արտաքին յարաբերութեանց դիւանին պետը Տիրան էֆ. Բէլէկեան կը պատրաստէր միւս կողմէ քաղրիրին ֆրանսերէնը, որուն պատճէնները պէտք է յանձնուէին մեծ ղեսպաններուն, նաև յարակից պաշտօնական գրութիւնները, Տեղեկագրին ֆրանսերէն թարգմանութիւնը պատրաստուած ըլլալով նախապէս:

Պատրիարքարանի քարտուղարներէն շատերը պարտաւորուեցան գիշերել Պատրիարքարանի շէնքին մէջ, մինչև կէս գիշերէն վերջը զբաղելով ընդօրինակութիւններով:

Կ'արժէ հոս զետեղել ընդարձակ տեղեկագիրը, որուն ամփոփուածը պիտի ներկայացուէր Մեծ-Եպարքոսին ու Մեծ ղեսպաններուն:

Տեղեկագիր Սասունի եւ Տարօնոյ վերջին սպանուածաց
անցեալուն եւ դժոխային կացութեան

Մուտ, 31 Յուլիս 1895

Ընթերցող, եթէ սոյն տեղեկագրին մէջ, ազգիպիս
այնպիսի խորհրդածութեանց կամ մանրամասնութեանց,
որոնք քեզ թերեւ երեւին աւելորդ երկարարանութիւն,
մի՛ զարմանար գիտցիր որ մէկ կողմանէ անուր, դժոխք-
բեր կացութիւնը և ազիտորմ գէպքերը, որ ամէն օր կը
լսուին մեր մէջ կամ տեղի կ'ունենան ու կը պարզուին
մեր աչաց առջեւ, միւս կողմէ, մեր կողմերէն տեղացած
այնքան բողոքագրերուն, գանգատագրերուն և տեղեկա-
գրերուն, գէթ մեր ազգակից եղբարց կարեկցութիւնն իսկ
պէտք եղած սաստիկութեամբ և ուժգնութեամբ չարժե-
լու անկարող գտնուելն և մեր կողմերու գործնական
օրինակին և Սասնոյ ներսական ապստամբութեան
անգամ մեր նեաւոր եղբայրները պէտք երթին չափ
ոգուտրած և արթնցուցած ու զրգած չը լինելն՝ մեզ այն-
պիսի մտային արամաբանութեան մը կը մատեն, որ յի-
րաւի, ինչ ընելեքնիս և ի՛նչ ըսելիքնիս չուտրած ենք.
Եթէ մեր խօսքերը, մեր յանդիմանութիւնները ծանր գան
մեր դիւրագգած ազգակիցներուն, թող աստք չատ չը
վրդովին, զի եթէ այս վիճակը մեր երկրին մէջ գեռ քիչ
ժամանակ ալ շարունակէ, բողոքոյ, յուսատարութեան
այս վերջին ձայներն ալ պիտի լսեն և անտարբեր ճայե-
րը երկար, ձանձրալի տեղեկութիւններ կարգալու ոգէն
ու նեղութենէն ալ պիտի ազատին և պիտի չը լսեն այլ
ևս Սասուն, Տարօն, Մուշ բառերն անգամ... Եւ ար-
դէն մեր երկրի մինչև ցարդ յարուցած բարձր որոտալից
ձայնն ու ազմուկը՝ որ գիտենք թէ մինչև եւրօպայի մէջ
արձագանգ տուաւ, ի՞նչ գործնական ազդեցութիւն, ի՞նչ

ներշնչում, ի՞նչ գրգիռ ու կենդանութիւն առաջ բերաւ հայերու մէջ: Մեր ներկայ տեղեկագրոյն մարմնոյն մէջ մանեղէ առաջ, կ'ուզենք անգամ մը քննել այս կէտը, կ'ուզենք այս պատմական հաշիւը տեսնել մեր ազգակից եղբայրներուն հետ, որոնց պատասխանատուութիւնները եթէ մինչև ցարգ մեծ են արդէն, մեծագոյն և աններելի պիտի լինին մանաւանդ այսուհետև, եթէ սակաւիկ մի ևս շարունակուի մեր երկրէն դուրս տիրող դատապարտելի անտարբերութիւնը: Այդ վերջին պատասխանատուութենէ նախազգուշացնելու համար մեր հայ եղբայրները, կ'ուզենք այդ պատմական հաշիւը տեսնել յաջորդ տողերով: †

Երբ դեռ 1891 թուականէն սկսեալ Մուշէն և Սասունէն գրուած բազմաթիւ իրերայաջորդ տեղեկագրութիւնք մամնատխուր զայններով և ազեկաբար մանրամասնութիւններով կը նկարագրէին և կը պարզէին, կը մերկացնէին ընդհանուր հայութեան առջև մեր երկրի քաղաքական և տնտեսական ամենասոսկալի վիճակն և յայտնի, անխուսափելի կորստեան վտանգն՝ որ կ'ըստ պառնար մեզի շատ մօտէն. երբ մէկ երկու տարիներով առաջ մենք կը նախաձայնէինք, բարձրաձայն կ'աղաղակէինք, կը տարփողէինք ի լուր համայն հայութեան՝ մասնաւորապէս Սասնոյ անդիմադրելի և յուսահատական հանգամանքները, Սասնոյ մօտալուտ, ճակատագրական ապստամբութիւնը և անոր անմիջական շարաշրջուկ հետեւանքը, Սասնոյ անկումն և 49է աւելի շէնշէն գիւղերու և երակ դառնալն, ընդհանուր կոտորած և սովը՝ որ արդէն կանխած էր քան կոտորածն, բայց կոտորածէն վերջ մանաւանդ պիտի մղէր իր խուլ և ներքին պաաերազմն և ցրուէր, սպառէր Սասնոյ քաջերու վերջին մնացորդներն ալ, երբ այս ամէն ճա-

կատագրական, անխուսափելի անցքերը նախատեսելով շարունակ և անդադաւ թեւատարած, օգնութիւն, օգնութիւն կ'աշխատէինք—վկայ են այս մասին «Հնչակի» էջերը— և ամէն կողմեր պատուիրակներ և իրաւէրներ կը զրկէինք զէսք, ռազմամթերք, նիւթական ձեռքնոտութիւն խնդրելով, միաժամանակ գործակցութեան, մյառան խլրտումի, շարժումի կոչում ընելով և յայտարարելով թէ պատուոյ ու փառաց դաշտին մէջ մեռնելէ զատ ուրիշ ելք մը չէր մնացած մեզի,— մեր այդ բոլոր կանխաձայնութիւնքը, մեր այդ բոլոր խնդիրքը, պաշտանքը, մեր այդ բոլոր առաջարկները, կոչումները, իրաւէրները անլսելի մնացին մեր իայ ելբայրներէն կամ սառնասիրտ թերաճառատութեամբ, տարակուսելի ինքնական ժգիտներով ողջունուեցան և կամ շատ շատ պշտոնական յաճակրութեամբ և չը գործադրուած խոստումներով միայն դիմաւորուեցան...

Երբ ճակատագրական դէպքը պատանեցաւ, երբ Սասնոյ վրայ գոռացին իրացաններու պայթիւնը և թրնդանօթներու որոտը, երբ զարկին ու զարկուան Սասնոյ առիւծները, երբ Սասունի արխասիրտ կիները առնական քաջութեամբ կռուեցան՝ յամօթ և ի նաստափնս միլիոնաւոր թուլամորթ, մեղկացած իայ այրերու, երբ թրչնամու աճափին զարթեան, իամրտագաշտ դազաններու միացեալ ուժին և բարբարոս մոլեգնութեան գէմբոյրովին անաւասար ուժերով և գերմարդկային ճիգերով կը մարտնչէր Սասունը, երբ արեամբ կը ներկուէին Անտոքի և Տալուրիկի սարն ու ձուր, Սիմր ռովիտները և Գարակի ապառաժները: Երբ, կ'ըսեմ, կը գործադրուէր սարսափելի դժոխային կտորածը—և այս բոլոր արիւնալից և արձաւրալից անցքերը տեւեցին ամբողջ երկու տարի—, անդին՝ միւս գաւառներու մէջ

ի՞նչ կ'ընէին համարիւն եղբայրները, ի՞նչ կ'ընէին Ռուսաստանտանի, Կ. Պոլսի և արտասահմանի մեր ազգայրնները... չը գիտեմք, բայց մեզ կ'երևի թէ դարձեալ չէին հաւատար, երազ կը կարծէին և կամ, որ աւելի ցաւագին է, լուռ և անշշուկ հանդիսատես կը լինէին Սասունի ախուր իրականութեան... :

Երբ Սասունի անկումէն վերջ՝ դէպքերու արձագանգը ցնցեց քաղաքակիրթ Եւրոպան, սարսեց և շուտեղուց անտարբեր և իր շահերով կուրացած Եւրոպան, տաքնասպեցուց օտար ժողովուրդներու խիղճն և հասարակաց կարծիքը. երբ երեք պետութիւնք Քինիչնեք՝ Վիեննա Մուչ, հետագօտելու դէպքերու պատճառները, քննելու երկրին վիճակը, տեսնելու դեռ ծխացող գրեզերու աւերակները, համրելու նահատակներու, կոյսերու և անմեզ մանուկներու դեռ տաք դիակները... մեր այ եղբայրներն ի՞նչ ըրին. փոխանակ վրէժընդարութեան ձայն բարձրացնելու, փոխանակ մեր արեան զէժ աւել ցասման և զայրոյժի արտայայտութիւններ բնելու ի՞նչ ըրին մեր եղբայրները... կարծեմ բաժակներ տուաճարկեցին Սասունի քաջերու կենացը (!) կարծեմ սոսմէջ, ուռուց. կ ճառեր արտասանեցին, կարծեմ սրտաձայն կեցցէներով և ծափաւարութիւններով ինչպօղուցին սրահներու կամարները և... օղը, և յետայ յետոյ ձեռնաձալ սպասեցին քննութեաց բարեյաջող արլիւնքին, Եւրոպայի առաջարկած բարենորոգմանց ծրագրին ընդունելութեան և գործադրութեամբ, որով յանկարծ՝ առանց իւննց մեր հեռուոր եղբարց քէյֆն ու հանգստութիւնը խանգարելու, յանկարծ Հայկական խնդիրը պրտի հոչակուէր լուծուած, վերջապաճ խնդիր մը որ, կ'երևի, սկսած էր աւելի տարլուել և ձանձրոյթ պատճառել մեր հաճոյասէր, մեղկ

ազգակիրցներուն, քան թէ յուզում, կիրք, գրգիռ և
զայրոյթ . . . :

Բայց մինչ այսպէս մեր մօտաւոր և նոսաբնակ հայ
եկեղեցիները, ըստ մեծի մասին իրենց դատապարտելի
դանդաղութեամբ նստած, սին և երազական յոյսերով
օրօրուելով կ'ըստասեն Հայութեան գեղածիծաղ գար-
նան աւետիսը և կը կարծեն իրենց խիղճը հանգարտե-
ցրնել և ամէն պատասխանատուութենէ արդարանալ՝
Սասունի զոհերուն նպաստելու համար, աստ անդ հան-
գանակութիւններ ընելով — քան մը սրուն մէջ բոլորու-
վին անծանօթ օտարազգիներն ալ իրենցմէ ետ չեն
մնար — մինչ իրենք կը պատրաստուին վայելել Սասուն-
ցիներու նահատակութեան և միեւնոյն սուրբ նպատա-
կին համար Հայաստանի ուրիշ կողմեր հաստատուած
նասրնթաց յուզումներուն և շարժմանց գործնական
պտուղները — «բարենորոգութեանց» այդ օղակառօյց
ղղեակին մէջ, — ասդին Հայաստանի ամէն կողմերը,
մանաւանդ Տարօն և առաւելյապէս Ստանոյ մէջ, Համրաի
կառավարութիւնը բոլորովին անպատկառ և անամօթ
կեպով երեք անգնազօր պետութեանց քթին խնդա-
լտի կը շարունակէ իր հայակործան ամենագործունեայ
ղերը, ամենավայրագ հալածումները, կարծես նշմարե-
լտի վերջապէս մօտալուստ վտանգս, ամեն թագուն և
յարանի մըջոցներ, ամէն դեւական մեքենայութիւններ ի
գործ կը դնէ ըստ կարելւոյն շուտով բնաջինջ ընելու
հայ տարրը մեր երկրէն, որպէս զի առաջարկուած բա-
րենորոգումնք — եթէ երբէք կարելի չըլլայ մեծել զա-
նօնք — գործադրուին Հայաստանի շիմնայատակ աւե-
րակներուն և հայութեան գերնղմանին վրայ . . . : Այո՛,
հաստատապէս այս կառավարութեան միտքը Հայկա-

կան խնդիրը լուծել չէ, այլ լուծել, քայքայել ու ջընջել հայութիւնը... :

Մեր ներկայ վիճակին, մեր յուսահատական դրութեան յրայ մեր ստորեւ հաղորդելիք մանրամասնութիւնները բաւականէն աւելի զօրաւոր ու պերճախօս փաստեր են արդարացնելու մեր ներկայ տագնապը, մեր յուզումը, զայրոյթի ու մեղադրանաց այս անողոք արտայայտութիւնը, զոր յանուն նահատակ Սասունցիներու, կը նետենք մեր անտարբեր ենթարց երեսին, որ զիսիք դեռ բազմաթիւ են դժբաղդաբար, անոնց երեսին՝ որոնք այս օրնասական վայրկենին եւս, կը խօսին ու կը ճամարտակին միայն, առանց գործելու, առանց բարձրացնելու զայրոյթի և վրէժխնդրութեան իրենց բողոքը, առանց գոռացնելու ժողովրդի սուրբ իրաւանց անեղ ձայնը և իրենց անգործութեամբ ու թուլութեամբ կը մատնեն Հայաստանի ժողովուրդը վճռական յուսահատութեան և կորստեան : Ներկայ րոպէն մեր վերջին ժամն է, եթէ թիչ մ'ալ երկարաձգուի այս տարտամ վիճակը, եթէ, ո՛չ երաշխաւորեալ բարեկարգութիւններ ու բարենորոգումներ իրականանան և ոչ ալ յուզում և յեղափոխութիւն ի գործ դրուի Հայոց կողմէ, այս վիճակին վերջին ելք մը տալու, յայնժամ Տարօնոյ ամբողջ հայ ազգաբնակչութիւնը և Սասունցիներու վերջին մնացորդները ցիր ու ցան պիտի ըլլան, գաղթելէ զատ ուրիշ միջոց չունենալով իրենց գոյութիւնը պահպանելու... : Տարօնցին Սասունցիին նման վերջին յուսահատական փորձը, օրնասական և գերմարդկային վերջին ճիգն ալ ընելու անկարող է. ո՛չ իր դիրքը կը ներէ, և ոչ հաց կտրելու դանակ մը ունի, իսկ մեր անտեսական կացութիւնը դժոխք է, թշուառութիւնը վերջին անտիճանին հասած է : Եթէ

հայ հայրենասէրներ կան, ինչպէս կը հաւատանք, եթէ ուրիշ քաղաքներու մէջ կայ յեղափոխական արամադրութիւն, եթէ գործունէութեան ասպարէզէն հեռու քնակով ազգայիններու սիրտը կը տրոփէ իրենց տո՛մին և բնագաւառին համար և կրնան նիւթապէս կամ բարոյապէս բան մը ընել, վերջ մը զենլու այս նախընթաց շունեցող ճգնաժամին, որ ալ չը կրնար շարունակել, եթէ կայ հայոց սրտին մէջ մարդկային արժանապատուութեան զգացում, ինչո՞ւ կըսպասեն, ինչո՞ւ չեն ընեն իրենց բոլոր կրցածը, ինչո՞ւի գործ չեն զներ վերջին վճռական միջոցը, որ պիտի որոշէ հայութեան ճակատագիրը:

Ստասունի անկման ազիտորոմ մանրամասնութիւնը արձագանգ գտնելով՝ պահ մը հայութեան և մարդկութեան ուշադրութիւնը դարձուցին այս մոռցուած քաղմաշարչար կողմերուն վրայ: Մեր տառապանաց մէջ այդ ալ փոքր ինչ մխիթարութիւն մըն էր մեզ համար: Գէթ մեր վէրքերը կը ցուցնէինք, մեր բողոքը կ'ընէինք և ապա կը մեռնէինք: Այսօր Ստասուն և Տարօն աւելի դժբաղդ են, քանի որ այդ վերջին մխիթարութենէն ալ կը զրկուինք, քանի որ այդ մասնաւոր ուշադրութիւնն ալ, այդ արտասովոր հետաքրքրութիւնն ալ, որ մեզմով գրաւուած էր վերջերս, արդէն նուազելու վրայ է, եթէ բոլորովէն վերցած չէ մեր վրայէն, առանց անմիջական գործնական արգասիք մը առաջ բերելու, մինչ մեր տառապանքները կը մնան նոյն և վատթարագոյն:

Հետեւեալ դէպքերն ալ ստոյգ և վաւերական ալ-
բիւրէ առնելով, կը փութանք ՚հաղորդել «Հնչակ»ին Ի
հրատարակութիւն. թող տեսնեն ընթերցողք թէ՛ մեր
վերջին տեղեկագրին մէջ ներկայացած և նկարագրած
յուսահատական վիճակը չափազանցութիւն չէր, այլ
պատկեր տխուր իրականութեան:

1. Սասնոյ ծանօթ կոտորածին մէջ սպանեալ Աղբի
գիւղացի Խամոյի օ տարեկան որդին Պագրանցի Ալիէ
Խընի անունով քիւրաք գերի տարեր է. այս օրերս իմաց-
ւելով՝ Ալբեցի Լ. Բօսեան Մանուկի ձեռամբ իՍՍ զրօշ
ըբբ փրկանք գերի աղային զրկուած է յիշեալ քիւրալին,
որ դրամը Կ՛, կը խօսրս ու՛ զը ճամարտակին և տակա-
ւին քովը կը պահանդ բարձրացնելու դայ:

2. Տաւուորիկի Հարթք գիւղացի Հայտօ անուամբ
այ մը իւր կնոջ և զաւակաց յեա դէպքէն վերջ փա-
խըստական կը բնակէին Ի Ֆարխրն (Մուփարդին կամ
Նփրկերտ). այս օրեր վերադառնալ ուղեւով ճանապար-
հին Պատըքանցի քիւրտերը կը յարձակին խեղճերու
վրայ, քովերնն եղածները կ'առնեն և չարաչար կը
գանակոծեն. Հայտօյի անդրանիկ որդին ժամէ մը վերջ
կը մեռնի. իսկ միւսներն այժմ՝ ծանրապէս ՚իւանդ՝ ան-
կողնոյ կը ծառայեն Սլիվանի Պախչա գիւղը:

3. Մասունի Փսանա գոււառ անուամբ ծանօթ կող-
մերէն՝ ուր է Մատին Առաքելոց վանքը, գրութիւն մը
ստացանք որ կը յայտնէ թէ այն կողմերու ՚այերու վի-
ճակը՝ որ բնաւ մխիթարական չէ եղած՝ այժմ մեծ անա-
պահօլութեան մէջ է. քիւրտեր, գրգռուած մոլեռանդ
չէյխերէ և իւլէմաներէ՝ ամէն կերպ չարութիւններ կը
գործեն, կը կեղեքեն և կը ՚հարստահարեն զ՚այեր, որոնց
կեանքը յարաժամ վտանգի մէջ է: Ի մասնաւորի յիշ-
ուած են ՚հետեւեալ դէպքերը նոյն գրութեան մէջ:

Սասնոյ Պըտըրցի աշիրէթը Մշկատակ գիւղէն (600) գըլուխ ոչխար յափշտակեր է. այս գիւղին քիւրտ ալաներն ալ ի վրէժ՝ 495 գլուխ ոչխար յափշտակեր են. Հուստ հայաքնակ գիւղէն, սրուն աղաներն ալ նոյն Պըտըրցի աշիրէթէն են:

4. Այսպէս՝ քիւրտերը իրարու դէմ թշնամանալով՝ երկու կողմն ալ իրենց զայրոյթը կը թափեն իրենց հակառակորդներուն հարկատու սամանակից հայոց վրայ, կ'աւերեն և կը մնասն անոնց գեղերը: Կարծես ներքին համաձայնութիւն մը գոյացած է քիւրտերու մէջ հայն ը պաշտպանելու ձեւին տակ կողոպտելու. օրինակ՝ խումբ մը քիւրտեր այսինչ հայ գիւղը կ'աւերեն. այս բանը իրենց դէմ՝ նախատինք մը կը համարեն նոյն գիւղին քիւրտ աղաները, որոնք հայերուն իբր թէ պաշտպանն են. ուստի այդ քիւրտերէն վրէժ լուծելու համար՝ կ'երթան ո՛չ թէ հայոց թալանը ետ դարձնելու և տէրերուն յանձնելու (գացածը գացած է), այլ իրենք ալ միւս քիւրտերու հայերը կողոպտելու. կը տեսնէք որ քիւրտերու այդ կարծեցեալ թշնամութիւնը երկուստեք խիստ շահաւէտ համաձայնութիւն մ'է, որմէ կը տուժեն հայերը:

Ա՛լ կրնաք գազափար կազմել մշտական աւառարութեան ենթարկուած այս հայերու տնտեսական վիճակին վրայ: Իսկ այս կողոպտուածները՝ անօթի, ծարաւ և մերկ մնալով, անկարող կը գտնուին կառավարութեան տուրք տալու. աւազակներու յարձակումներէն զիրենք չը պաշտպանող կառավարութիւնը զիրենք ապստամբ կը հռչակէ ու կը կոտորէ: Իսկ երբ այս թըշուառները իրենց ռեպայարիկ հացի վերջին պատառը կամ իրենց կեանք ու պատիւը պաշտպանելու համար դէմ կը դնեն իրենց կեղեքիչ և հարստանորիչներուն, կառավար-

րութիւնը զիրենք խռովարար կը նկատէ ու կը
 Զարդէ: Իսկ երբ, կ'ըսեմ, այս դժոխային դրութենէն
 ազատելու համար ժողովրդեան մի մասը իրօք, գի-
 տակցաբար կ'ընդգրկէ յեղափոխական գաղափարը և կը
 կռուի ազատելու կամ մեռնելու համար, կառավարու-
 թիւնը յանցաւոր, ոճրագործ, աւազակ կը հռչակէ զա-
 նոնք և անխնայ կը փողոտէ: Մեր նպատակն է
 գրութեան մէջ յաջորդաբար հարստահարութեանց շարք
 մը ներկայացնել ընթերցողներուն. բայց մեր նկարագրած
 դէպքերու սրտայոյզ, ցնցող և ըմբոստացուցիչ ու յեղա-
 փոխիչ հանգամանքը յակամայս մեզ նիւթէն շեղեցուց-
 ուստի թող ներուի մեզ մեր այս շեղումը վայրկեան մըն
 ալ շարունակել և քննել մի ընկերախան կէտ, ո-
 րուն լուսաբանութիւնը օգտակար կրնայ ըլլալ շատերու:
 Սասունցիք կ'անիրաւէին երբ կը մերժէին տուրք տալ
 Օսմանեան կառավարութեան: Այս հարցումը տեղի
 կուտայ մի աւելի ընդհանուր հարցումի, որուն պատաս-
 խանը՝ այս հարցումին ալ պատասխանը իր մէջ կը բռ-
 վանդակէ: Կառավարութիւն մը ի՞նչ իրաւամբ տուրք
 կ'առնէ ժողովուրդէն: Յայանի է ասոր պատասխանը.
 կ'ենթադրուի թէ՛ կառավարութիւն մը, ներկայ ժամա-
 նակներուս մէջ, պարտականութիւն ստանձնած է, իր
 իշխանութեան տակ գտնուած ժողովուրդին կենաց,
 ընչից և պատռոյն պաշտպանութիւնը, անոնց նիւթա-
 կան, բարոյական և մտաւոր զարգացումն և յառաջդիմու-
 թիւնը և երկրին թէ՛ ներքին և թէ՛ արտաքին ապահո-
 վութիւնը երաշխաւորել, և այս ամէնը զենք՝ գործա-
 ծելով բազմաթիւ պաշտօնեաներ, դատւորներ, զին-
 ւորներ, ոստիկաններ ևն. ևն. այլ և այլ բալում ծախուց
 կ'ենթարկէ, զորս դժուար չէ երեւակայել: Ի փոխարէն,
 ժողովրդեան բնականաբար կը ստիպէ կառավարութիւնն

իր այս, աղէկ թէ գէշ դերին նամար պէտք եղած ծախ-
քերը վճարել: Այս գաղափարէն ծագում առած է տուր-
քը: Բայց դարաւոր փորձառութիւնը ցոյց կուտայ թէ՛
Համխի կառավարութիւնը չի կատարէր գէթ այն դերը զոր
պարտի կատարել ամէն մի կառավարութիւն. իր գոյու-
թիւնը չի ծառայիր քիչ մը իսկ իւր հպատակաց ապա-
հովութեան, անդորրութեան, բարօրութեան և յառաջդի-
մութեան, այլ անոնց թշուառութեան, նիւթական և
բարոյական անկման, ան կը ծառայէ մը միայն զիրենք
ներկայացնող նարստահարներուն անձնական շահուն.
անոր մեծ ու փոքր պաշտօնեաներուն միակ նպատակն
է իրենց իրենց փորը, իրենց քսակը լեցնել, իրենց
չուայլ ծախսերուն նամար հասոյթի ազբիւր ընել ժո-
ղովուրդը, զոր կը կեղեքեն ու կը կողոպտեն. իրենց
պաշտօնն է, մանաւանդ մայրաքաղաք, աներեւակայելի
անազին գումարներ հասցնել՝ բարձրագոյն պաշտօնէի
բազմազմի պէտքերը գոհացնելու և Սուլթանի նարէ-
մական կեանքի ամենազեղիս և ամենաչուայլ ծախքերը
զիմաւորելու նամար. կը տեսնէք որ հոս ժողովուրդին
օգտակար դեր մը բնաւ գոյութիւն չունի, այսպիսի
կառավարութիւն մը, որ երբ չըմբռնէր իր կառավարած
ժողովուրդին հանդէպ իւր ունեցած պարտական-
ն ու թիւնն երբ, դրականապէս զրկուած է այն
իրաւունքներէն, որոնք այդ պարտականութեանց գի-
տակցութենէն ու գործադրութենէն միայն ծագում կըր-
նան առնել: Տաճկաստանի ժողովուրդը պարտական
չէ տուրք տալու, և նպատակելու այն կառավարու-
թեան որ իր կոչումը և իր պարտականութիւնները չի
ճանաչեր և չի գործադրեր և որ իրօք կառավարութիւն
չէ, այլ կազմակերպեալ աւազակային ընկերութիւն մը:
Եթէ ժողովրդեան ստուար մեծամասնութիւնը կուտայ

իր վրայ դրուած ծանրածանր և անիրաւ տուրքերը, ան ո՛չ թէ իր պարտքը կը կատարէ, այլ գիտակցաբար կամ անգիտակցաբար ըռնութեան առջեւ տեղի կուտայ, ինչպէս որ մարդ սուսերամերկ աւազակի մը կը յանձնէ իւր կեանքը: Եւ ընդհակառակն անոնք, որ կը մերժեն տուրք տալ այս կառավարութեան, ոչ միայն իրաւունք ունին, այլ և պարտք մը կատարած կ'ըլլան և ծառայութիւն մը մատուցած կ'ըլլան տառապեալ մարդկութեան դատին, ձգտելով փութացնել վերջնական սնանկացումը և անկումը այն կառավարութեան, որ կարծես միայն ժողովուրդներու թշուառութեան համար կազմուած և լարուած դժոխային մեքենայ մ'է: Այս անժխտելի պայմաններով Սասունցիները իրաւունք ունէին տուրք չտալու խայտառակ Համիտի կառավարութեան. թո՛ղ թէ միւս կողմէ՝ այս երկաշ պատճառաբանութեանց ալ դիմելու հարկ չկայ, տուրք չը վճարող Սասունցիները արդարացնելու համար, քանի որ անոնք այնպէս սնանկացած ու կողոպտուած են որ ոչինչ չունին՝ տալու: Եթէ քաղաքակրթեալ և քիչ շատ իր ժողովրդին բարօրութեան նպաստող կառավարութիւն մը տուրք հաւաքելու համար դիմէր փոքր ինչ խստութեանց, այդ գէթ ժասամբ և հիմակուան ըմբռնումներով կարելի է արդարանար, բայց ըսինք թէ Համիտի կառավարութիւնը այդ կարգէն չէ, թէ իր ժողովուրդն ալ սնանկացած է, չնայելով այս ամենքն՝ անոր տուրք առնելու համար գործածած միջոցները պարզ խստութիւններ չէին, այլ անտանելի խժողութիւններ և սոսկայի վայրագութիւններ որոնցմէ մէկ մասն ալ ստորեւ Տարօնի լուրերու շարքին մէջ պիտի նկարագրեմ, և երբեմն ալ կոտորած:

Դառնալով մեր նիւթին՝ ի մէջ բերենք Սասունէն մէկ քանի հարստահարութիւններ ալ.

5. Գարձեալ Պըտըրցիք յուլիս 10 և 12-ն Փսանք գիւղի ոչխարաց հօան և Ծուեկանց գիւղէն 113 զաւար յափշտակելէն ետքը հայոց տուներն ևս թալաներ են :

6. Գարձեալ Սասնոյ աշիրէթներէն Մուսեցի Հասէի կէնձօն իր ծառաներով յուլիս 15-ին Խնձորիկ հայ գիւղէն 2 ջորի, 2 կայծան հրացան և 2 ձեռք ընտիր հագուստ յափշտակեր տարեր է :

7. Հոս Փսանաց գաւառի ընդհանուր վիճակը պատկերելու համար յիշենք որ 5-6 տարի է ի վեր քիւրտները ուզելով տիրանալ Փսանկ գիւղին (որ ժամանակաւ մեծ գիւղ էր, իսկ հիմա մի քանի տունէ կը բաղկանայ), քանիցս յարձակած են ՚ոն, մարդ սպաննած, տուն և եկեղեցի այրած, արտերն աւրչարկած և թալան տարած են. բայց չըջակայ Խնձորիկ, Մջգեղ, Գալչոր, Թարուկ, Քաջաէնք և Մկթէնք հայ գիւղերու բնակիչք միարանելով պաշտպանած են Փսանք գիւղի մնացեալ մի քանի տները հայերը : Սակայն քիւրտները ետ չեն կեցած իրենց խորհուրդէն և կ'ուզեն անպատճառ գրաւել այդ գիւղը և անոր պարստ արտերը : Տարիներէ ի վեր քրդական յարձակումի վտանգը ամէնօրեայ է այդ գիւղին համար. այդ գիւղացիք տարւոյն մէջ ինը ամիս գիւղէն դուրս թափառական կը մնան, չը համարձակելով գալ իրենց տուները և տարի կ'ըլլայ որ իրենց ցանած արմտիքը քիւրտները կուգան կը հնձեն ու կ'իւրացընեն : Փսանաց գաւառին հայերը բնաջինջ ընել գերազանցապէս կը յարմարի Համիտի կառավարութեան դիտումներուն. զի այդ փոքրիկ գաւառը թէ՛ իր դիրքով և թէ՛ իր արգաւանդ, այգեւէտ հողերով Սասունի ամէնէն նախանձելի վայրերէն մին է, և պէտք է անկէ ևս վտարել հայերը, ինչպէս որ քսան տարիէ ի վեր, Սասունի, Խարզանի, Խիյանու, Խուլփայ, Կինձի, Տըռ-

նաչէնի և Սուրբի բազմաթիւ գիւղերէն շարունակաբար հայեր կը վտարուին և անոնց տեղերը քիւրտերու կը տրուին . այդ գիւղերը շատերը կը պահեն դեռ իրենց անունը , կարծես անմոռանալի կսկիծ մը թողելու համար իրենց բնագաւառէն զրկուող հայերուն սրտին մէջ : Բայց մենք ձեր վերջին տեղեկագրոյն մէջ ինչ որ արդէն ըսինք Տաւրոսիկի համար՝ պէտք է կրկնենք ամբողջ հայաբնակ Սասնոյ համար . հայերը արթնցած և ոգեւորուած են իրենց իրաւունքը ոգի ի բռնին պաշտպանելու մինչեւ վերջ . անոնք իրենց լեռներէն չը հեռանալով պիտի նախընտրեն մեռնիլ իրենց սիրելի ապառաժներուն վրայ քան ապրիլ հալածական դաշտի ու քաղաքի մէջ : Ընդհանուր կոտորածն իսկ , որ սոսկացուց բոլոր քաղաքակիրթ աշխարհը՝ չը կրցաւ սասանեցնել Սասունցիներէ ողջ մնացողները իրենց տեղերէն և քանի որ կառավարութիւնն ու քիւրտերն ալ ամենաբուռն կերպով կը շարունակեն իրենց աւերիչ և կործանարար քաղաքականութիւնը , Սասնոյ խնդիրը դեռ չէ վերջացած : Գոյուլթեան յուսահատ կռիւր , անգութ հարստահարիչի և տկար այլ անվհատ հերոսի անհաւասար մարտը , օրհասական տագնապը , կենաց և մահու ճգնաժամը՝ տեղւոյն վիճակն է , և օրէ օր կը սպասուին նոր աղէխարչ լուրեր թշնամւոյն անլուր շահատակութեանց և Սասունցիներու հերոսական նահատակութեան : Կը լսէք . . . :

*
**

1. Սասնոյ դէպքէն վերջ , երբ զօրքերը սկսան լեռնէն իջնել , հոս և բուն տեղերնին վերադառնալ , վանէն եկած զօրքերն ալ , վերադարձին օր մը կը գի-

չերեն Աւղուա գիւղի քովը : Նոյն օրէն ի վեր Աւղուացի Մանուկ անունով ազգայնոյն կոյս աղջիկ Համասը կ'աներեւոյթանայ, ծնողք կամ ազգականք, գիտնալով հանդերձ որ զօրքերը տարեր են՝ իրենց երկիւղէն չեն համարձակիր հետապնդել և կը լսեն : Այժմ Վանայ պատրիարքական փոխանօրդ Տ. Սալակ վարդապետի յուլիս 12 ամսաթիւ գրութենէն կ'իմանանք որ յիշեալ աղջիկն տեղւոյն Ալայ էմինիի քով գրանուած է և յանձնուած է Ազգ. առաջնօրդարանին դիրքերու ամբողջ տարի մը վայրագ ծառայելէ վերջ :

2. Պէլէքցի աշիրէթէն Բոնաչէնի կծանք գիւղացի Ազիր անունով քիւրաք, քանի մը օր առաջ Մշոյ Մկրտում գիւղացի Մարտէեան Առաքելի մշակի ձեռքէն յափրշտակեր է անո՛ւ երկու եզները, յուլիս 23ին ալ Ազիրը հօրեղբայր Շապէի Մէմէտը Առաքելի տան վրայ յարձակելով մնացած երկու դաւարներն, մէկ ծնած կով և մէկ եզն, նաև մէկ վերմակ, մէկ գորանտի, և անոր կնոջ անտուկն ևս կոտորելով՝ մէջը ելած հանդերձեղէնքն ու կանացի արծաթեայ զարդերն թալաներ տարեր է :

3. Ս. Յովհաննու վանուց հողային կալուածոց մէջ բռնութեամբ տուն շինող Պատո Յախին և իր եղբայր Հիւսէին անուն քիւրան առ թշնամութեան, ամսոյս 23ին գիշերը կրակի տուին յիշեալ վանուց Փականին տան սրոյ մէջ կը ննջէր Առաքել վարդապետ և կը գանուէին վանքի դաւանները. կրակը դրան կողմէն ճարակած և բաւական տեղ ծաւալած միջոցին՝ Առաքել վարդապետ յանկարծ խելակորոյս արթննալով՝ մեծ դժուարութեամբ դուրս կը ձգէ ինքզինքն և օգնութիւն կ'աղաղակէ, բարեբաղդաբար տեղացիներն և փականին մերձակայ գոմեր գիւղացիները փութով հասնե-

ըով պատը կը քակեն և անասունները դուրս կը թափեն՝ բացի երեք գոմէշի ձագերէ որք ծուխէն խնդրուած են, և կը մարեն ՚րդե՛նը :

Հարկահանաց ապօրինութիւններէն և անկարգութիւններէն յիշենք միայն զանոնք որք եօթնեկիս մէջ ծանուցուած են :

4. Իքինճի գօլ միւտիրին և Նափերաղետ Բաշխաէֆէնտիի Աւրան գիւղ գործածներէն մի քանին յիշատակեցինք մեր վերջին տեղեկագրին մէջ. նոցա արարքներէն ստուգուած են Նտեւեալներն ևս : Տ. Յօ՛ւաննէս քահանան ևս Տ. Կարապետի նման գանակոծուեր ու բանտարկուեր է : Հազրէեան Աղէկ և Բարսել կըբարց և Տուտօյեան Գրիգորի պարանոցներէն ոստիկանք կապ անցունելով, փողոցներու մէջէն քաշկուտելով ջուրի վրայ տարեր և ստիպեր են շան նման ջուրը լափել ու լակել. ասով ալ չգո՛ւանալով, գանակոծեր ու չարչարեր են : Խարախանեան Վարդան, Տ. Գրիգորեան Վարդան, Եղէեան Աղճօ, Մկրտիչեան Աղօ, Աւօյեան Մոսօ, Կիկօյեան Սուսուն, Աւտալեան Գասպար, Գասպարեան Յօ՛ւաննէս, Մուրատեան Յակօ և ընկերք, ընդ ամէնը 33 անձինք Նիւանդանալու աստիճան գանակոծուեր ու չարչարուեր են : Գիշերուան ժամը 4ին միջոցները ՚հինգ ոստիկանք Փիլօյեան Գուլօ անունով կնոջ տան դուռը կոտորելով ներս խուժեր և կինը մերկանդամ անկողնոյ մէջէն հանելով ծաղրեր, վրան պաղ ջուր լեցուցեր, ծեծեր ու խեղճի ամանները ջարգեր են. նմանապէս Լուռօ, Նըսկօ և Ատօ անուն կանանց տուններն ևս կոխելով, զանոնք ծեծեր, ՚այ՛ոյեր և խեցեղէն անօթները կոտորտեր են :

5. Եազուպ անուն ոստիկան մը և ընկերները կը մտնեն Արզերթ Գիւղացի Հաֆսօ, Մարիամ, Խուտօ

Հերքօ և Ազրութ անուն կնիկներու տուներու, մէջ, ջարդ ու փշուր կ'ընեն անոնց խեցեղէնները, կը հայհոյեն ու կը գանահարեն: Ազրութի որդիին կրած չարչարանքէն մահամերձ հիւանդ է:

6. Պակօ Պէկ և Սայիտ էֆէնտի ԱՅ ոստիկաններով յուլիսի 22ին Յրօնք գիւղը գնացեր են, սովորական գէշութիւններէ ետքը, գիւղի երեւելիներէն և իրենց սուրքը պատրաստ վճարող Մանուկեան Մխոյի թեւին և Յակօբեան Պետիկի ծնօտին դաշոյնի կոթով զարնելով, երկու ատամները կոտրել են:

7. Յուլիս 24ին Սուլուխ գիւղ գնացող ոստիկաններէն Իսլամ և Մամէն մասնաւորապէս Մարտիրոս անունով 83 ամեայ ծերուկ մը զուարճութեան համար փայտով և աքացի հարուածներով կը տանջեն գետին կը պակեցնեն, վեր վերցնելով գետին կը զարնեն և շատ մը չարչարանքներ կուտան: Գիւղացիք և Մամէի եղբայր Բասուլ մըջնորդելով և աղաչելով, հաղիւ հաղ կը յաջողին մարած վիճակի մէջ այս վայրենիներու ձեռքէն ազատել խեղճուկ ծերունին, որոյ աջ ոտքի ծունկը կոտրեր և մէջքն ևս ծանրապէս ցաւցեր է, այժմ ծերունին անկողնոյ մէջ չարաչար կը տառապի և անտարակոյս չկարենալով դիմանալ ցաւոց, կը մեռնի:

8. Հարկահան ոստիկանք Ծխաւցի Մարիամ անուն կնոջ մը 4 լիտր (24 օխա) իւղը, 60 դրուչի փոխարէն քաշեր բերեր են՝ զինքը լաւ մը ձեծելէ վերջ:

9. Ո՛չ միայն գիւղերու, այլ նաև քաղաքին մէջ ալ սաստիկ հարկահանութիւն տեղի կ'ունենայ, հոս ևս ձեծ, հայհոյանք, և բանտարկութիւնք պակաս չեն: Յուլիսի 23ին բոլորովին աղքատ և հացի կարօտ Մշեցի աղգայիններէն 35 անձինք բանտարկել տրուեցան ի կեդրոնական բանտի իրբու մահապարտներ՝ 91 աւուր

բանտարկութեան վճռով, պայմանաւ սակայն որ պարտքերնին վճառողները պայմանաժամէն առաջ արձակուին, եթէ ոչ՝ ՅԱ օրէն վերջը անոնց ունեցածներն (եթէ ունին) վաճառելով, գանձուի տէրութեան հարկը: Այս բանտարկելոց մէջ է Բրդի թաղեցի Պետրոսեան Յովհաննէս՝ որ փոքր ի հատէ բարեկեցիկ վիճակ մը ունենալուն՝ իր տուրքը կանխաւ վճարած էր ամբողջովին, սակայն յիսնապետ Սալիլ էֆէնտին ականջ չկախեր նորա յայտարարութեան ու հայհոյելէ և սուրի սպառնալով զայն ծեծելէ զկնի, կը յանձնէ Շիւքրի և Մուսոս անուն ստրկանաց, որք թէ՛ ճանապարհին և թէ՛ բանտին մէջ փոխն ի փոխ հարաշար կը գանակուծեն զՅովհաննէս, հուսկ ուրեմն թաղի մուխթարն իմանալով՝ կ'երթայ կը վկայէ թէ նա պարտք չունի, արձակել կուտայ:

Ա). Հաւատորիկ գիւղի թաղական խոր ուրբը (Իսթիյար մէճրիսի) կը բողոքէ թէ յիսնապետ Մէհմետ էֆէնտին գողացեր Հաւատորիկցիներու վրաններն իրենց ամառանոցէն՝ որ գիւղի սահմանին մէջ է (զի այս գիւղացիք ալ ստրտութիւն ունին իրենց հօտերու ետ ամառը լեռ զօզան ելլալ) բռնութեամբ հաներ և հոն բռակեցուցեր է Բագրանցի Քէօզերներէն մաս մը, որոնց անասունները կտրածին ու կ'աւերեն խեղճերու արտերը, ասոնցմէ Սափո անունով քիւրտը եօթը ձիաւորներով ցերեկ ստեն մըտեր է Հաւատորիկցիներու բանջարանոցներու մէջ և ձիերու ստնակոխ ընել տալով աւերեր ու ապակսներ է:

ԱԱ. Մշոյ սարը պաշարման մէջ դնող այս Քէօզերներու արարքներէն պատմենք նաև հետևեալը:

Պագրանցի աշիտէթէն և Շավալըզցի խուժրէն քանի մը քիւրտեր Առաջ գիւղացի Պէտէեան Յովհաննէսին

Տ հաստ ոչխարը գողցեր են. հովիւ Աւէն անոնց հետքը բռնելով կերթայ քրդաց ոչխարաց մէջ կը տեսնէ ու կը ճանչնայ գողցուած ոչխարները: Սակայն քիւրա հովիւները կը թափին Աւէի վրայ. լաւ մը կը ծեծեն և վըրայի հանդերձները կը մերկացնեն: Աւէն հազիւ կը յաջողի գողցուած ոչխարներէն մէկ հատը ձեռք անցունել և գիւղը հասցունել:

12. Վերջին պահուն իմացանք որ Պուլանրգ գաւառակի Կ ե ա պ ո լ ա ն գիւղի Շէյի Քեամիլի որդի Շաոօ գնդակաւոր սպաններ է նոյն գիւղացի Տ. Յովսէփ քահանայի եղբայրը Կ ա ր ա պ ե տ ր, ոճրագործը ձերբակալուած և բանտարկուած է, գաւառակի կեդրոնը Կ ո ք. տարակոյս չկայ որ պարզ ձեւակերպութիւն մըն է այս բանտարկութիւնը, և առ առաւելն մէկ քանի ամիս պիտի տեսէ:

Ահա այսպէս մենք Սասունցիքս և Տարօնցիքս, շնորհիւ վեհափառ սուլթանին՝ կատարեալ անգասութիւն և անգորրութիւն կը վայելենք, ուրեմն ինչ տէրութիւնը չը յօգնի «բարենորոգումներ» մացնել մեր երկրին մէջ... գէթ այդ ծագածու խաղը չը խաղան մեր գլխուն...:

Մուշ, 3 օգոստ. 1893

*
* *

Նախընթաց յաջորդական նամակներովս և բնդարձակ տեղեկագրովս առատ լուրեր տուած եմ ձեզ արդէն. բայց տեսնելով որ օրըստօրէ պատասած ամէն դէպքերն ալ քիչ շատ կարեւոր են և ուշագրտ. ձեր հրահանգին հարեմատ կը փութամ անոնք ալ տեղեկա-

գրել ձեզի, որպս զի գոնէ այս միջոցաւ ազգը տեղեկանայ մեր կացութեան և մեր ցաւոց գէթ սրտանց մասնակից ըլլայ :

*
* *

Սասունի հայ գիւղերու փլցուած և հրկիզուած շէնքերու վերաշինութիւնը փութոյ պնդութեամբ առաջ կը տարուի. այս մասին հիւսպատոսին և միսիոնարներուն նիւթական օգնութենէն աւելի. իրենց ներկայութիւնը օգտակար եղաւ և մեծ զարկ տուաւ շինութեանց առաջացման : Թէև տուները կը վերաշինուին մաս առ մաս, գործ մը որ դեռ կը քչէ, միւս կողմէ գաւառացիք (Սասունցիք) դեռ ամենախեղճ վիճակի մէջ են և բոլորովին օգնութեան կարօտ. յայտնի է թէ ոչխարաց հօտերը՝ արջառները, ստացուած քները, հանդերձեղէններն և ծածկոյթներն ու կապերտներն անգամ յափշտակուած տարւած իրենք կ'իսամերկ վիճակի մէջ են. ասոնց թէ ամենօրեայ ուտելիք և թէ հագուստ և այլ պիտոյք անմիջական կերպով հարկաւոր են, եղած նպաստները հեռի են լրացնելէ այս անհրաժեշտ պէտքերը և շինմակուրնէ մտատանջութեան մատնուած ենք թէ ի՞նչ պիտի լինի այս խեղճերուն վիճակն՝ եթէ աւելի օգնութիւն չը հասնելով ձմեռն ալ վրայ գայ : . . . :

Անցած տարւոյ Սասնոյ դէպքերէն ի վեր՝ ութը ինն ամիս ամբողջ Մշեցի և դաշտեցի հայերը՝ զովելի անձնութիւնով, լռիկ մնջիկ պահեցին պահպանեցին Սասունի փախտականները՝ հոգալով անոնց ամէն պիտոյքը :

Առ նուազն 2000 հաշուելով այն թշուառները, երեւակայեցէք թէ ինն ամիս այսքան բազմութիւն մը պա-

արսպարելու և կերակրելու համար ս'րքան զո՛ոզութիւն
 հարկաւոր է և թէ այս զո՛ոզութիւնը ս'րքան ծանր է
 նիւթապէս ժողովրդեան մը համար, որուն գլխուն
 վրայ գլշեր ցորեկ կ'ըստասեն հարկահանը, վաշխա-
 ռուն, միւլթէզլմն և այլ աւազակները և որուն արն-
 տեսական անկեալ վիճակն ու թշուառութիւնը վերջին
 աստիճանին հասած են. ասոր վրայ աւելցուցէք նաև
 անցեալ տարույ նունձքերու նուազութիւնն՝ ու արմըտ-
 եաց թանկութիւնը, մնացեալը դուք երեւակայեցէք :
 Այս ամէնը ի մէջ բերելով ըսել կ'ուզենք թէ՛ եթէ անց-
 եալ տարի 8—9 ամիս մեր Մշեցիին ու դաշտեցիին ամե-
 նայն սիրով բաժանեց իր Սասունցի եղկելի եզրարց հետ
 թշուառութեան սև հացը և զանոնք ազատեց սովամահ
 լինելէ, այս տարի, երբ Սասունցիներն արդէն իրենց
 տեղերն են և մեզմէ հեռու և միանգամայն Մշոյ և դաշ-
 տի անտեսական վիճակն աւելի եւս վատթարացած է,
 մեր արտասահմանի և Տաճկաստանի հայ եղբայրները
 թող նկատողութեան առնեն այս ամէն կէտերը և ըստ
 այնմ փութան ժամ առաջ օգնութիւն և նպաստ հաս-
 ցնել Սասունցի քաջերուն՝ որոնք ո՛չ միայն կարեկ-
 ցութեան, այլ ընդհանուր սքանչացման և բոլոր հայու-
 թեան երաստագիտութեան արժանի են : Միեւնոյն ժա-
 մանակ երբ մեր համարիւն եզրարց ուշադրութիւնն
 հրաւիրելով՝ կրկին և կրկին կը յայտարարենք իրենց թէ
 Սասունոյ խնդիրը վերջացած չէ և թէ՛ նոր
 դէպքերէ կը վախցուի օրէ օր և թէ՛ Սասունցիք վճռած
 են ցվերջ աննկուն մնալ. երբ այս ամէնը կը յայտարար-
 ենք և կը պաղկենք իրաց ճշմարիտ կացութիւնը, արդ-
 եօք մտածողներ կա՞ն թէ ի՞նչ պէտքեր ունին այս քա-
 ջերը կարենալ շարունակելու կռուիլ իրենց հարստահա-
 րիչներուն դէմ :

Առաջ շատ խօսուեցաւ ու գրուեցաւ, հայեր չը լսեցին և չհաւատացին, ա՛նա ՚հիմակ ալ կը խօսուի ու կը գրուի, արեւօ՞ք նորէն չեն լսեր և չեն հաւատար: Մը- շոյ միւթէսարըֆ բաշան և անգլիական ՚իւպատոսն և իրեն ընկերացող խորամանկ Թալիպ էֆէնտին որոնք ժա- մանակէ մը ի վեր Սասուն կը գտնուէին չորս օր առաջ ՚ոս վերադարձան: Կէլիէկուզան գեղի աւերեալ եկե- ղեցին վերաշինուած լինելով՝ անցեալ կիրակի տեղւոյն առաջնորդական տեղապա՛ն՝ Վարդան վարդապետ Յա- կոբեան հանդիսաւոր կերպով կատարած է նոյն եկեղեց- ւոյ օծման արարողութիւնը, որուն ներկայ գտնուած են Սասունի ամէն գեղերէն բազմութիւն: Օծման հանդէսէն վերջ կատարուած է Սասնոյ նահատակներու ՚ոգեհան- գըստեան պաշտօն. աննկարագրելի է եղեր ամէնուն սրտայուզութիւնն, լացն ու կոծը, կանանց սրտատուչ ողբասացութիւնքը. ամէն մէկը գէթ սիրելի մը, ՚ոգւոյ հատոր մը ունէր ողբալու և ամէն մարդ կ'ողբար իրենց արեան խառնուրդին մէջ եզբայրացած նահատակները: Աւելի երիտասարդները եկեղեցւոյ շուրջը հաւաքուած հրացանաձգութիւններով կը պատուէին ինկած քաջե- րու յիշատակը, ոչ միայն կսկիծը՝ այլ և ոգեւորութիւնը մեծ է եղեր...: Հինգհարիւր և աւելի տարիներէ ի վեր հայոց կեանքի մէջ չը տեսնուած երեւոյթներ են ասոնք, հայերը միշտ ցաւեր ունեցած են ոլբալու՝ բայց պատերազմի մէջ, պատուոյ և փառքի դաշտին մէջ ինկած քաջերու յիշատակը տօնել, այդ շատ ՚ին ժամանակներու երե- ւոյթ է՝ որ հնգադարեան ընդհատումէ վերջ այսօր կը նորի. այս մարտական աղէտներու փառաւոր ճգնաժա- մին մէջ՝ կարելի չէ չը յիշել անցեալ դարերու փառա- պանծ յիշատակները, ՚ին Սասունցիներու հերոսական գործերը նոցա քաջագործութեանց հետ և նոցա արտա-

սուքն ու թշուառութիւններն : Կեցցեն նոր Սասունցիք , որոնք իրենց քաջարի նախնեաց արժանաւոր որդիքը հանդիսացան և վերակենդանացուցին ի մեզ հին ժամանակներու յուշքը , փառքը , հոգեսարսուռ յուզումներ և մեզ անձանօթ զգացումներ : Միւս գիւղերու եկեղեցիներն ալ շինուելու վրայ են և ի մօտոյ պիտի օծուին : Տ . Վարդան վարդապետ Սասունէն դարձած է Ս . Յովհաննու վանքը և այսօր վաղը տեղս կը սպասուի :

Բաղիշոյ Ալայ Պէկը յիսուն օստիկաններով քաղաքս ժամանեց . նոցա յանկարծակի դալը յայտնի չէ թէ ի՛նչ նպատակաւ է . ոմանք կ'ըսեն թէ Սասուն պիտի երթան Քէօչէք քիւրտերէն ետ առնելու գաւառացիներու կողոպտուած ապրանքները , ոմանք կ'ըսեն թէ ճապաղջուր պիտի երթան քիւրտերու մէջ խաղաղութիւնը վերահաստատելու և ոմանք ալ կ'ըսեն թէ՛ Մուրատ էֆէնտին իր ընկերներով Պոլիս տիտի տանին : Չը գիտենք ո՛րն աւելի հաւանական է : Մինակ գաղտնի կերպով կը խօսուի թէ Մուրատ էֆէնտին մէկ քանի օրէն տեղէս պիտի հանեն , և Պոլիս պիտի բերեն . բայց թէ ինչո՛ւ գաւառացիներն ալ (Տալուորիկցիները) հետը պիտի տանին , յայտնի չէ : Այս մասին յաջորդով աւելի մանրամասն կը գրենք : Սասունի և Բռնաշէնի քիւրտ ցեղերէն Պէլէքցի քիւրտերը իրարու մէջ ներքին թշնամութիւն ունենալով , անոնցմէ Պըտըքցի կոչուած տո՛մն չատոնց ի վեր կուռի մէջ է Շ է կ օ յի տուն կոչուած միւս տո՛մին հետ : Սնցեալները Պըտըքցիները Շէկօյի տան վերաքերոզ երկու քիւրտերու հանդիպելով հայի մը ջրազացքին մէջ՝ գերի կը բռնեն ու կը տանին . այժմ Շէկօյի տունը՝ իր քիւրտերը յիշեալ հայէն կը պահանջէ և անպատմելի նեղութիւններ կուտայ չըջակայից հայ գիւղացիներուն :

Յուլիս ախոյ վերջերը Խութեցի քիւրտերը յարձա-
կած են հայաբնակ Շեհար գիւղի վրայ և գիւղի նախ-
որդը սպաննած են. յաջորդ գիշերը կրկին յարձակե-
լով հովիւները վիրաւորած և գիւղին ոչխարներն ու
արջառները առած տարած են :

Նոյնպէս Խութա Ագրակ՝ գիւղի Ռէն Տօնօյի եղ-
բայրը հրացանով ծանրապէս վիրաւորած են քիւրտերը :

Սասնոյ գայմագամութեան կեդրոն Շ ա զ ղ ո յ գիւ-
ղաքաղաքին մէջ ալ Շ ա զ օ ե ա ն Ջ ո ն ո յ անունով
ազգային մը երկուք ու կէս ամսոյ ի վեր տեղւոյն
չ է յ խ ի ն ազգեցութեամբ և ամբաստանութեամբ բան-
տարկուած է. իրեն վերագրուած յանցանքն յայտնի չէ :
Կըսուի թէ տեղական կառավարութիւնը կատարելապէս
համոզուած է այդ խեղճ հայուն անպարտութեանը, բայց
այդ ազգեցիկ շ է յ խ ի երկիւղէն չը համարձակիր ար-
ձակել :

Յուլիս ամսոյ 25 ին գիշերը, Մշոյ կառավարիչը
գաղտնի և խորհրդաւոր տեսակցութիւն մը ունեցած է
Բաղբանցի և Բաաքանցի քիւրտ վայրագ ցեղապեա-
ներէ ոմանց հետ. կառավարիչներու և աւազակներու
միջեւ տեղի ունեցած այս տեսակցութիւնը խիստ գէշ
տպաւորութիւն թողած է Սասունի և Մշոյ հայոց վրայ :
Միւս կողմէ մինչդեռ հայերուն չը ներուիր նոյնիսկ
ճամբորդութեան առթիւ փայտեայ գաւազան մը ի ձե-
ռին ունենալ, Սասունի կոտորածին գործակից այդ
բարբարոսները Մշոյ քաղաքի փողոցներու մէջ մար-
թինի հրացաններով և թուրերով զինեալ կը շրջին :

*
* *

Քիչ մ'ալ խօսինք Մշոյ և Դաշտի եղելութեանց
վրայ : Շարթուս մէջ տեղիս բարբարոսութիւնք աւելի
եւս խստացեր են և օր ըստ օրէ աւելի կը խստացնեն :

տուրքի առթիւ գործուած չարիքները, այնպէս որ թէեւ շատ գրած ենք այս մասին, կրկին կը ստիպուիմ վերադառնալ նոյն կէտերուն վրայ և յիշել անոր նոր զեղծումներ: Կերեւի թէ Քրիստոսի ներկայութեան միջոցին ինչ չարիքներ որ չը կրցան ընել, տոկոսով հանդերձ կուզեն մեզ հատուցանել: Արդարեւ քրիստոսի քանի որ տեղս էին՝ շատ մեղմօրէն և մարդավայել կերպով տուրք կը հաւաքէին և հաշուէ՝ թէ բնաւ ալ չէին գանձեր, երբ կը տեսնէին աղքատիկ ժողովրդեան անժըխտելի անկարողութիւնը, բայց քանի որ քրիստոսները տեղէս գացած են, ամեն գեղ տաճարական և աւելի վայրագ ստիկանք ցրուած են և չի մնար լուտանք, անարգանք, հայոյանք, և մինչև իսկ անասնական վարմունք, որ չի գործադրեն խեղճ գիւղացուց գլխուն: Անցեալ օր կարծեմ գրեցի ձեզի հարիւրապետ Ռաշիտ էֆէնտի և Իքիմի գօլ միւտիւրի խժոժութիւնները, այս անգամ ալ նշանաւոր հանդիսացած են Ռաշիտ էֆէնտին, որ այս օրերս Չիուրայ կողմը անցած է Չիարէթի և Աւրանայ կողմերը կողոպտելէ վերջ, հարիւրապետ Իսկէնտէր աղան և Չիուրա յմիւտիրը. ահաւասիկ ասոնց ալ վերջին մի քանի արարքները:

Ռաշիտ էֆէնտին ի Խ ա ս գ ի ւ զ Մ ի ր օ Մ օսէ ա նուն հայու բերանը խուշկի (աղբ) կը լեցնէ և ձեռքովը ներս կը սեղմէ: Խեղճին խեղճամահ լինելուն մազ կը մնայ. ոմանց վրայ ալ տաք և պաղ ջուր կը լեցնէ, տուներու ամանները կը ջարպէ, աղքատ այրի կիներ սիւնը կապելով կը ծեծէ ու կանարգէ. անոնց դեռ սարնդեաց մանուկներէն տուրք պահանջելով...:

Չիուրայ միւտիրը Ա ո ու ա ո ի ն ճ գիւղը գալով տուրքի համար Ա զ ր ու թ ի Ա ը թ ի ն ի երկու ականջը կը բռնէ, բերանը բանալ կուտայ ու կը թքնէ, պե-

խերը կը քաշէ կը փետտէ, նաեւ ուրիշ անթիւ չարութեաններ կը գործէ :

Գարձեալ խասգիւղի մէջ Այվազի Արթինի մէկ գոմէշը և մէկ եզը կը ծախեն տասը արծաթի՝ տուրքի փոխարէն, մինչդեռ առնուազն չորս անգամ արժողութիւն ունին : Ամէն հարկահաւաք Մուշէն ելնելուն, երկու մտավաճառ ալ հետը կը տանի, ո՛վ որ փարա չունի իր տուրքը կանխիկ վճարելու, իր լուծքի եզները դաշտէն կը քաշեն կը բերեն և բոլորովին չնչին գնով մը կը ծախեն որ հազիւ կրնայ իր տուրքի հաշիւը գոցել, այսպէս գիւղացին թէ՛ իր տաւարէն կը զրկուի և թէ՛ իր հացէն, որովհետեւ լուծքի եզին տարուելովը իր արտն անմշակ կը մնայ :

Տասնեակ թուով հարկահաւաք օստիկանները՝ որոնք օրերով կը կենան ամէն մէկ գիւղ, ո՛չ միայն գիւղացւոց հաշուոյն ձրի կը կերակրուին, այլ նաև գեղջկական սովորական կերակուրներէն գո՛չ չըլլալով՝ եփլած հաւ, մեղր և այլն կը պահանջեն հայոցանքներով և սպառնալիքներով, չի նայելով որ այդ բաներն հազւագիւտ են այժմ հայ գիւղերու մէջ :

Հարկահանութեան կողմանէ ամէն գիւղեր ալ այդ վիճակին մէջ են :

Մէկ մ'ալ խեղճ գիւղացւոց գիտնալով՝ գիւղեր չի պիտի ծախուէին միւլ թէ զի մ'ներուն, բայց ծախւեցան և ուրիշ տարիներէն աւելի բարբարոսներ առին մանաւանդ պաշտօնական անձեր՝ որ բնաւ իրաւունք չունին գիւղ առնելու առին, ինչպէս Պէլէտիէի ու էյիսի պրահի մէջ քիչէնտին տասը կտորէ աւելի գիւղեր առաւ՝ որոց մէջ է խասգիւղն ալ, նոյնպէս խալիլ էֆէնտին, էյուպ էֆէնտին, և այլն : Ալէքըլբուն հայ գեղը 7,000 զրշ.ի աճուրդի կը ձգեն. գեղացիք ալ բէյ

կը զարնեն. վերջին գինը գեղացւոց վրայ կը մնայ և աճուրդը կը վերջանայ: Յաջորդ օրը թիւ գիւղի Շէյ-խը կ'երթայ Միւֆթին կ'ըսէ՝ «Այդ գիւղը ինձ ա'ն»: Միւֆթին միւս օր կուգայ 7000ի վրայ 80 զրուշ յաւելում կ'առաջարկէ, գիւղացիք ալ կուգան որ գիւղը իրենց մնացած ըլլալուն շաստատագիր մը առնեն, և երբ կը տեսնեն Միւֆթին միջամտութիւնը, կը բողոքեն ըսելով որ աճուրդն արդէն փակուած է: Պաշտօնեայք մտիկ չեն ընեն, գիւղացիք ճարահատեալ 80 զրուշին վրայ 20 զրուշ ալ իրենք նոր բէյ կը զարնեն, բայց Միւֆթին կ'ըսէ թէ 20 զրուշ չըլլար, պէտք է 1-2,000 զրուշ գաք վրայ (յաւելուք):» Այդպիսով, գեղացիք յուսահատելով ետ կը դառնան և գեղը Միւֆթին առնելով՝ կուտայ թիւ Շէյխին:

Միւլթէզլիմները շատ մը գեղերու կալերը առանց չափելու իրենց որոշած քանակութեամբ ցորեն առնել կուզեն գեղացիներէն. գեղացիք կառարկեն ըսելով թէ «կալերը չափեցէք, և ինչ օր տէրութեան օրէնքն է կուտանք», միւլթէզլիմները չեն յաճիր և կալերն ալ չեն չափեր: Շատեր կան որոնց կալերուն մէջ 50—60 քիւէ ցորեն կայ, բայց միւլթէզլիմը չի չափեր, այս պատճառաւ չեն կրնար իրենց ցորենը շտեմարանել, կուգան Մուշ տոկոսով կամ սէլ էֆ ու վ ստակ կը գտնան, կառնեն նաց, կը տանին իրենց ընտանեաց, որ չի մեռնին անօթութենէ:

Այս ամեն բաներուն վրայ շատեր եկան բողոքեցին, բայց լսող չկայ:

Կարգ մը նայ բանտարկեալներու՝ սուլթանին կարծեցեալ ներումով բանտէ ելլելը գրեցինք: Բարէշի բանտէն ելլողներէն Սիրուն անուն աւճը՝ քաղաքէս գիւղը
 ՍԱՍՈՒՆԷՆ ԵՏԲԸ 23

երթալու պահուն, ճամբուն վրայ մի քանի բաղեչցիքիւրտերէ յարձակում կը կրէ, որոնք շատ մը հայտնուած թիւններով կըսեն. «Կեալուրնե՛ր, կը կարծէք թէ բանտէն ազատուելով մեր ձեռքէն ալ ազատեցաք. ձեր մահուան վճիռը ելած է, ձեր դատը չե՛լ չիլալ է. ամենքնիդ ալ պիտի մորթենք» : Այսպէս ըսելով, չարաչար կը ծեծեն եղկելին և կիսամահ կը ձգեն, կը հեռանան, մեռած կարծելով : Այժմ յիշեալը իւր գիւղին մէջ ծանրապէս հիւանդ պառկած է և իր արձակման համար կազօթէ սուլթանին . . . :

Թէև և կան այս կարգի իրողութիւններ, բայց ժամանակս չի ներելով՝ այս անգամ այս չափովս կը բաւականամ :

*
**

Տասնըմէկ ամիս Բաղիշոյ և Մշոյ բանտերը մնալով՝ անհրաժեշտ պարտք կը համարիմ, որչափ կարելի է, ճշդութեամբ մանրամասն գրել Մշոյ բանտի հայ բանտարկելոց վրայ : Աւելորդ է գրել բանտի շէնքի մասին որ իր ամեն կողմերով անյարմար լինելով բանտի մահ և եթ կը բուրէ : Բանտարկեալները գիշեր ցօրեկ աղբի, ժահոնոտութեան, խոնաւութեան ոջիւններու մէջ կ'ապրին ընդհանրապէս. բանտարկելոց թիւը 130 է պակաս չէր և այնչափ մարդիկ ցրուած էին ինը սենեակներու մէջ, որոնք ունէին մի մի լուսամուտ :

130 բանտարկեալներէն 30ը հայ էին, զորս կարգաւ կը գրեմ :

1. Սարգիս Ումրօեան, 2. Աւետիս Գրօեան, 3. Պետրոս Մանուկեան (Մուշեղշէնցի), 4. Վարդան Կըլոյեան, 5. Խաչիկ Ալէկեան, 6. Ղազար Մանուկեան, 8. Յակոբ, 9-10. Երանոս և իր եղբայրը Ասուատուր, 11.

Յարոյ (Վարդենիսցի) : Ասոնք հինգ տարի է որ բան-
տըն են այն յանցանքով որ հինգ տարի առաջ Մառ-
նիկցի (Մուսա պէկի կուսակից) 160 քիւրտեր ուղելով
գիշերանց բռնութեամբ խլել Մուշեղչէնցի Գրօի հարսը
և բռնաբարել ի վրէժխնդրութիւն Մուսա պէկի, վերոյ-
գըրեալ Աւետիս, Խաչիկ և երեք Վարդենիսցի ազայք,
որոնք հարսին հետն են եղեր, կսկսին ազաչել ու պա-
ղատիլ քիւրտերուն, որոնք բուրովին անողոք կը մնան,
և զհարսն առնելու համար կսկսին զարնել հայոց, հայք
եւս կը փոխարինեն, վերջապէս երեք քիւրտի և մէկ
հայու սպանուիլը վերջ կուտայ կուսոյն, և հայք իրենց
հարսը կը տանին Վարդենիս իր օրը տունը. անմիջապէս
քիւրտերը լուր կուտան կառավարութեան, որ զօրքեր
ու աստիկաններ ազդամովերջով կը թափէ ի Վարդենիս.
Թէ ի՛նչքան կանայք կը բռնաբարուին, թէ ո՛րչափ մայ-
րեր կը վիժեն[»] իրենց զաւակները, աւելորդ է գրել,
բաւ է ըսել թէ գիւղը աւերելէ և աւարելէ յետոյ 70 ի-
չափ կապելով կը բերեն Մուշ փողով ու թմբուկով և
անմիջապէս բանտ կը գրուին շղթայակապ : Գատը
կսկսի, ի զուր տեղ հայերն անմեղ են, մննք ենք եղեր
մինակ կուոյ մէջ, ի՞նչու դուք այսօր այդպէս նեղէք
այդպէս կը նեղէք անմեղները, կ'ըսեն, թշնամի քիւր-
տերն իսկ կը վկայեն թէ այս ինչ այն ինչ հայեր չոն
չը տեսանք, ի զուր հայեր ընդ երկար կը պատմեն
դէպքին շարժառիթը և կը ցուցնեն իրենց անմեղու-
թիւնը և ի զուր տեղւոյս առաջնորդ Գեր. հայր Խա-
րախանեան միշտ կը գրէր Աշըգեան ապիկար պատրիար-
քին ի պաշտպանութիւն Վարդենիսցոց. վերջապէս կը
ղատուին 16 մարտիկ և 15 տարի շղթայակապ բան-
տարկութեան կը դատապարտուին. այս եղկելիներէն
հինգ մարդ կը մեռնին բանտի մէջ, չը կարողանալով
տոկալ բանտի նեղութեանց և անօթութեան. կը մտայ

տասնըմէկ մարդ, թէ ի՛նչ է իրենց վիճակն ու կեանքը, իր տեղը կը բացատրուի :

Բացի ասոնցմէ կան Պուլանըսի Կ ո ռ գիւղէն Յակոբ և իր եղբօր որդիք Առաքել ու Աբրօն, վերջինը 12 ամեայ, և երկու տարուայ մօտ է որ բանան են : Պատճառ. Մշեցի Շ իւ շ ր ի անունով կառավարական պաշտօնեայ մը՝ որ յիշեալ Յակոբի տունը կը բնակի եղեր վարձու, կը մեռնի. մեռնողի ազգական ստիկանութեան յիսնապետ Ս ա ա տ ու լ լ ա ՚ է ֆէնտին — որ հիմայ Մշոյ բանան է իսկ այն ատեն ի Կօբ, կը մնար—, զօրքերով ու ստիկաններով այդ հայուն տունը կօխելով կնիկները բւնաբարելէ և տունը աւերելէ յետոյ յիշեալներու հետ Յովհան անունով երիտասարդն եւս իր կնոջմով ու երկամեայ մանկիկով կը ղրկէ ի Մուշ, ուր հիմայ բանան են, և Յովհաննէսին այնքան հարուածներ կուտան հրացաններու կոթերով, մուրճերով ու աքացի՝ որ տարիէ մը մեռաւ, և Մշոյ թաղապետութեան տոբթօրն իսկ վկայեց դրով թէ իր կրած չարչարանքներէն մեռած է : Կառավարութիւնը գիտնալով որ հայերը անմեղ են, անոնց դատին երբէք չը նայիր : Կայ հայ մըն ալ Մնճուտցի Յակոբ անուամբ, որ երբ կը տեսնէ քիւրտ մը, որ իր կնոջ պատիւը կը բռնաբարէ, դաշոյնի արդար հարուածով մը կը մահացնէ և Մշոյ կառավարութիւնը 15 տարի պատիժ կուտայ և որչափ որ Պոլսոյ վճռաբեկ ատեննը անիրաւ տեսնելով այդ վճիռը կը բեկանէ, Մուշ դարձեալ կը հաստատէ :

Կոբեցի Սաչիկ անունով ամենաթշուառ հայ երիտասարդ մը եւս կայ ի բանտի մութ անկիւն մը կծկած տարի ու կէսէ աւելի, մերկ, բոկոտն ու անօթի. քաղցկեղի հիւանդութեամբ իր երեսի մէկ կողմը կորսնցուցեր է, և ցաւը սկսեր է իջնել ցած աստիճանաբար : Պատ-

ճա՞ռ, ի կոր հայու մը 1-2 նուկի իւզը գողցուեր է, տէրը բողոքեր է երկու հայ տղոց վրայ, զայս ալ վկայ ցոյց տալով և այս խեղճը երգում կ'ընէ, որ տեղեակ չէ. հարցաքննիչը կ'ըսէ «քանի որ տեղեակ չես և անմեղ ես, երեք արծաթ տո՛ւր որ արձակեմ»։ Խեղճ իւնանըր ուստի՞ տայ, և անա ատոր համար է որ բոլորովին անտէր բանտին մէջ կը տառապի :

Երկու սարկաւազ, Մովսէս Նորատունկեան և Յարութիւն Սրապեան և հինգ գործակալք, միաբանք Ս. Կարապետի վանուց, վեց անձինք եւս այլ և այլ տեղերէ՝ արդէն քաղաքական յանցանք բանտարկեալ էին և վերջերս արձակուեցան. ասոնց մէջ է Ազոյ անուամբ վաթսուներկինգ ամեայ պատուական ծերունին. ասիկա Սասունի Խուլփի գաւառակի կէլիէ-Մուր գիւղէն է. երեք տարի առաջ կը ձերբակալուի Մընէ Չավուչէն. աւա՛ղ, ձեռքերս կը դողան և չեմ կարող այս ամբարիշտ ստիկանին և Թարիպ էֆէնտիի. Ազոյին տուած անլուր չարչարանքը և անտանելի տանջանքը դրել. բաւական է ըսել թէ ամենափոքրն այս կը լինի որ՝ այսօրուհայոս ոտքերն ու ձեռքերը կապկէյետոյ իր առնանդամը բեռանը կը դնէ, «Ձեր ամենիվիճակ այս պիտի լինի, ցոյց տուր ինձ Տամատեանը, քեաֆ'իր, կեալո՛ւր» ըսելով :

Ազոյի չարչարանքը իր ժամանակին մանրամասն կարագրուած է «Հնչակի» էջերուն մէջ ուղղակի Սասունէն տեղեկագրուած. իսկ վերջերս այդ մանրամասնութեանց ճշգուծիւնը հաստատուած է Տօքդ. Տիլլօնի և քննիչներու տեղեկութիւններով :

Մեր բանտարկութեան ժամանակ քրիստոնեայ և թիւրք քննիչները եկան Մուշ, Մշոյ բանտին մէջ կոյին հարիւրէն աւելի քիւրտեր, որոնք ընդհանրապէս երեք ցեղի կը պատկանէին :

1. Ճիւրպանցիք, 2. Հասնանցիք, 3. Խուժեցիք : Առաջին երկուքը ցեղական կապով մօտ են միմեանց, և զիրենք կը կոչեն Մամգունցի (Մամիկոնեանք) . շատ սիրով կը վարուին ընդհանրապէս հայ բանտարկեացիոց հետ, և երբ տեսան որ Մուսա բէկի քիւրտերը, Մընէ Չավուչը և ոստիկանք միացած են և կ'ուզեն զհայ բանտարկեալս ծեծել, կորսնցնել, սկսան յայտնի պաշտպանել զհայս, մեծ հարուած մըն էր այս ոստիկանաց և Մուսա պէյի քրդաց սրտին, վերջիններս արգէն Վարդենիսցի Մալգեսի Յակոբն անցեալ տարւոյ օգոստոս ամսոյ մէջ թունաւորելով կսպաննեն, ինզճ հայերը կարելի՞ էր ձայն հանէին, այս տարի եւս թոյն գտնուեցաւ քովերնին և տօքթորն առաւ և քանի որ սոյն բանները տօքթորին յայտնողը հայ բանտարկեալ վարժապետ մ'էր, ոստիկանք և Մուսա պէկեանք սկսան յայտնի հայոց պատիւն ու զգացումը վիրաւորող խօսքեր ընել, ատկէ զատ Մուսա պէյի քիւրտերէն մին ուզեց գիշեր մը Մուշեղչէնցի Աւետիսը խեղդել (մէկ սենեակ կը բռնակէին) և այս ալ բաւական չը համարելով իրիկուն մը Մուսա պէյի մարդիկ յարձակեցան վարդենիսցոց վրայ և սկսան ծեծել ու գլուխնին ջարդել . և իսպառ պիտի ջարդէին եթէ միւս քրտերը չի պաշտպանէին զհայն : Բողոք եղաւ բանտապետին, տօքթորն եկաւ, բայց ինչ օգուտ, երբ Մընէ Չավուչը շարունակ կը քաջայերէր զխուժեցիս չի վախնալ : Սպիրութիւն մ'ալ ունէր այս շավուչը, որ վաղենիոցիներուն հող կրել կուտար ժամերով և Մուսա պէյի մարդոցը տեղերը շինել, խիստ երկիւղալի և վտանգաւոր էր հայոց վիճակը : Ինչ կեանք. բանտէն դուրս, սուր ու մա՛ր, բանտէն ներս ա՛յ ու մա՛ր : Միեւնոյն աչքով կը նայուէր ճիւրպանցի և Հասնանցի քրտերուն ալ, որովհետեւ այս քրտերը շատ

բարեկամ էին Հայկական խնդրոյն և աղօթող այդ գործի յաջողութեան. պատիւ կը համարին խօսիլ թէ, մենք ի հնունս հայ էին և նախարարական ցեղ. իրենց ազատութիւնը պահպանելու համար կրօնքնին փոխեցին, և հիմայ երբ Հայկական խնդիրը զլուխ ելնել իրենք նախկին կրօնքին դառնալու պատրաստ են: Այս խօսքերը կուլ կը տրուէին. ես որ հետաքնին աչօք անցած դարձածը կը դիտէի, կը զարմանայի թէ պատճառը ինչ էր որ անցեալ օգոստոսէն մինչև այսօր կառավարութիւնը հալածանք հանած էր ճիւղբանցոց և հասնանցոց դէմ և շարունակ խումբ խումբ կը բերէին կը բանտարկէին, յարմար առիթի մը կսպասէին այդ գազանիքը իմանալ, և ա՛հ այս տարւոյ յունիս ՉԱին բանտի մէջ տեղի սենեցած սարսափելի կռիւր լուծեց այդ անգոյցը: Մեր գրութեան մէջ համառօտիւ հասկցուեցաւ թէ կառավարութիւնը ինչու թշնամաբար կը վարուէր այդ ցեղական քրտաց հետ, և որպէս զի բոլորովին յայտնի ընեն թէ Մուսա պէյի քիւրտերն ինչ որ կընէին իրենց խորհրդովն էր, բանտապետը և Մնէ Չավուշ ազատ կը պահէին Մուսա պէյի քիւրտերը. ասոնք բանտէն դուրս ելնելու մտնելու ազատ էին, իրենց մարդիկ, ամեն ժամանակ ելումուտ կընէին իրենց քով և մինչդեռ միւս քրտերն ու հայեր արդէն կարլի չէր որ փոքրիկ դիտողութիւն մը ընէին, փոխարէն կուտային ծեծ, հայոյանք և թուք: Իսկ ճիւղբանցիք ու Հասնանցիք չի կրցան դիմանալ, բարձրաձայն սկսան բողոքել և պօռայ թէ բանտի օրէնքը պէտք է անխափր ի գործ դրուի. ինչու մենք և հայեր ամեն տեսակ զրկանաց ու բռնութեանց ենթակայ ենք, և Խութեցինք ազատ են: Խութեցիք և ոստիկանք սկսան ատոնց հայոյել ու վերջապէ՞տ սկսան մէկզմէկ զարնել, ինչ սարսափելի տեսարան. Խութեցիք յաթուեցան. լուր գնաց կառավարութեան, տես-

ներու բան էր թէ ի՛նչպէս դատարանի անդամներ, ուշ
 տիկանապետներ, զօրապետներ թափեցան, և սկսան
 զճիպրանցիս և զՀասնացիս սարսափելի կերպով մէկիկ
 մէկիկ տանիլ զգետնել, ծեծել ու շղթայել, և այս-
 պէս 80ի չափ քիւրտերը երկու փոքրիկ սենեկի մէջ յե-
 ցուցին, ցերեկներն ալ տուներնին գոց, բոլորովին
 զուրկ արեւէ ու մարդէ, «հայերը կը պաշտպանէք»
 կըսէր Մընէ Չափուշը: Քիւրտերէն ճիպրանցի Տրպօյի
 տղայ Աղան յայտնեց թէ, անցեալ տարի Սասնոյ կոտո-
 րածին համար կառավարութենէն գիր եկաւ մեզ և
 հասնանցոց թէ պէտք է ձեր բոլոր ձիաւորաց բազմու-
 թեամբ և զէնքով երթաք հայոց վրայ, կոտորէք, որով-
 հետեւ թագաւորէն հրաման ելիր է, և եթէ չի գաք,
 հա մի տի է ու լծ ես է պիտի իյնաք, ձեր աները պիտի
 թալլուի, դուք բանտերու մէջ պիտի մեռնիք: Բայց
 մե՛նք երբէք կարեւորութիւն չտուինք և չը գացինք,
 արդ հիմա հասկցանք թէ ի՛նչ պատճառով անցեալ տար-
 ւոյ հոկտ, ամսուն՝ կարնոյ Ալայ պէյը զօրքերով մեր
 տներն աւերեց, եղած չեղածնիս տարաւ և զմեզ զրկեց
 բանտերը. և հիմայ հասկցանք թէ հոս ալ ինչու հայոց
 հետ աւատար կը զրկուինք: Այս բաները թէ գրով և
 բանիւ բերանոյ հայոց առաջնորդին իմացուցած ենք:

Շատ դիւրին է գուշակել թէ ի՛նչ է հիմա բանտի
 մէջ մնացող վարդենիսցոց կեանքը, սրտնք բոլորովին ա-
 նօթի և մերկ կ'ապրին, զուրկ ու է օգնութիւններէ.
 այդ պատուական հայեր ամէն մասամբ օգնութեան ու
 անգամութեան արժանի չեն, քանի որ պատուոյ և իրա-
 ւանց համար կոտորի և մեռնի իրենց համար սրբազան
 պարտք կը համարէին, «Շատ տատուլին շալէ շապիկ»
 ըսած է հայոց առածը:

Բանտարկեալ Սասունցի հայ եղբարց և Պ. Մու-
 ժաթի-Համբարձում Պոյաճեան և իր ընկերաց համար

չենք կրնար երկար գրել . վասնզի մեր բանտի մէջ չէին այլ ցրուած էին հետեւակ և ձիաւոր զօրաց զօրանոցներու մէջ , անտես ի մարդկանէ , և զարմանալին այն է որ ասոնք քաղաքական յանցաւորներ չը նկատուեցան և չարձակուեցան :

Բանտի մէջն է նաև Շէնըգցի Ընթօն , հսկայ և արի հայր , որ անցեալ տարւոյ կոտորածին զո՞ տուած է իր ընտանեաց անդամներէն շատերը , տեսեր է իր իսկ աչքով շատ մը սիրելեաց դառնաղէտ մահերը , իր գաւակաց կատամար կորուստը , բազմաթիւ փոքրիկ տղոց գահավէժ լինելը զօրաց ձեռքով , տեսած է իր քաջամարտիկ ընկերաց խողխողուիլը Սասնոյ քարերու , ձորերու և ծերպերու մէջ , տեսած է շատ մը յղի և պարկեշտ կանանց ինքնայօժար մահը՝ ամբարիշտ զօրաց ձեռքը չը մատնուելու համար . . . ունի իր գլխու , երեսի և մարմնոյ վրայ շատ մը սրի հարուածներ , որ ընդունած է զօրքերէն ու զօրապետներէն , և կէս տարիէն աւելի է որ բանտն է : Թէ ի՞նչ նեղութիւններ տեսաւ բանտի մէջ , թէ ի՞նչ փառքեր ու պատիւներ կառավարութիւնը խոստացաւ իրեն , որ քննիչներուն առջև ուղիղը չը խօսի , բայց կարելի՞ բան էր այդ արի նախատակի միտքը չըջել ճշմարտութենէ ու արդարութենէ . նա պարզեց քննիչներու առջև ամէն ինչ իր գոյներով՝ ամօթ և ի նախատինս Համիտի կառավարութեան : Կառավարութիւնն ալ վրէժխնդրութեան համար Ընթօն բանտարկեց՝ պատճառելով թէ ասկից վեց տարի առաջ Մշեցի հիւանդ տաճիկ մը Խ ու Ը ր շ ի տ անուամբ ձեր կողմեր եկած կորսուած է , դու ես սպաններ , թէ՛ ասոր և թէ՛ մանաւանդ վարդենիսցոց և թէ՛ կոբեցոց ու Սնձնուացի՝ երիտասարդին համար ո՞ր մարդ և ո՞ր օրէնք կրնայ ըսել ոճրագործ և մարդասպան : Ընթօնն ի դատ

Ստեփոյ անուամբ երիտասարդ մըն ալ ձերբակալած են Շէնրդ գիւղէն, որպէս թէ Ստեփոն իր աւերակ գիւղը երթալու ատեն քիւրտերէն բռնութեամբ խաւրժիլ (*) առած է: Ինչ անամօթութիւն. կառավարութիւնը երբէք չը արցունց թէ՛ խնդճ Ստեփոյ ո՞ւր են արի եղբայրներդ, սիրուն զաւակներդ, բայց քիւրտերու խաւրժիրը կը հարցնէ...: Այսչափով կրնաք հասկնալ թէ ինչ է մեր կողմի հայոց վիճակը բանաէն դուրս և բանտի մէջ — աւասարապէս դժոխային...:

*
* *

Պատմենք հիմա դէպքերն ու իրողութիւնները Սասունէն սկսեալ:

Եւրոպական քննիչներու ներկայութիւնը բաւական երկիւղ ազդած էր տեղւոյս տաճկաց և քուրդաց վրայ, որով եթէ արսառհարութիւնք և անգթութիւնք չէին վերջացած՝ աստիճան մը մեղմացած էին: Կամ թէ ուրիշ կերպով բացատրելով երկրին չորս—հինգ ամսէ ի վեր ունեցած համեմատօրէն հանդարտ կացութիւնը, դիտելի էր որ՝ Սասունի միացող աւերակներու արհաւիրքներէն և քստմենի տեսարաններէն, այդ բարբարոսութեանց հեղինակներն իսկ սարսափած և վրդոված՝ պահ մը թողած հեռացած էին այդ կողմերէն և մինչ Սասունցիներէն կենդանի մնացած յուսահատ թշուառներն ալ՝ հեռի իրենց կործանուած յարկերէն, թափա-

(*) Խաւրժիլ կամ գար տեսակ մը բոյս է, որ կուտ ունի, առատ է Սասնոյ լեռներուն մէջ, մէկ բեռը կամ չալակը 2—3 դրուշ կ'արժէ, բժշկութեան մէջ ծանօթ է shubarbe անուանով:

աական և ռալածական փախուըտի ու թաքուստի մէջ՝
 անօթութեան մահա՛ամբոյր կրծկումներուն դէմ կը մա-
 քառէին և կամ բուքէն ու ցուրտէն անպատասպար՝ կը
 դողային ու կ'ընկճէին, գէթ Սասուն կը հանգչէր իր
 գերեզմանական ամայութեան մէջ և ձիւնէ թանձր ծած-
 կոց մը կը վարագուէ այդ տեղ մերկատարր երեւան
 եկած մարդկային յրէշութեան և վայրենութեան ամօ-
 թալի երեւոյթները, և թնդանօթներու որոտումէն ու
 կուսողներու, վիրաւորներու և օրհասականներու գո-
 սում գոչումէն վերջ, որոնք այլեւս դադարած էին, նաև
 կշտապինդ ագուսներու ուրախական կռինչն և բուերու
 եղերական վայնասունը, սարսռազդեցիկ լուսթիւն մը
 կը տիրէր այդ տեղ խորերու և լեռներու մէջ, — աս-
 դին Մշոյ մէջ և շրջակայս նոյն արհաւրալից և անըս-
 տոյգ հանդարտութիւնը կը տիրէր կարծես, կառավա-
 րութիւնն ու իր մեղսակիցները—քիւրտերը—վիթխարի
 որս մը կլլելէն վերջը յղփացած և մարսողական թրմ-
 րութեան մէջ մտած, սիօս օձին պէս վայրիկ մը ընդ-
 հատած էին իրենց նահատակութիւնները. կ'երեւի թէ
 քննութեանց վերջաւորութեան կըսպասէին, հասկնալու
 համար թէ պիտի կրնան մարսել ըլլըր հայ նահատակաց
 արիւնը՝ զո՛ւ խմած էին... Նոյն սրտատրոփ, կեղակարծ
 հանգարտութիւնը կը տիրէր նաև հայերու մէջ, որոնց
 դէմքերուն վրայ կը նշմարուէր երէկուան սարսափին և
 վաղուան անստուգութեան երկիւղին հետ՝ յուսոյ թեթև
 նշոյլ մըն ալ... Բայց քննիչները ամսոյս եօթին տեղէս
 մեկնեցան և կարծես անմիջապէս պարագաներն ալ փոխ-
 ւեցան: Քանի օրէ ի վեր տեղւոյս թուրքերը կ'ուզեն ի-
 րենց կրած նուաստացման վրէժն հանել, մանաւանդ որ
 իրենք ալ լսած են թէ քննիչներու հաւաքած տեղեկու-
 թիւնները բոլորովին աննպաստ են Համիտի կառավա-

րութեան և իր արքանեակներուն: Ըսենք այս առթիւ թէ՛ կատարուած քննութիւնք ո՛րչափ որ անաչառ ըլլանի որ քննիչներն անձամբ չը կրցան երթալ լան, տարակոյս չը կայ թէ շատ ու շատ թերի են, մինչև Սասնոյ խորերը, զի Սասնոյ ամէնէն հեռաւոր խորչերն ամէնէն քսամնելի խժդժութեան հանդիսավայր եղան, և քանի որ միւս կողմէ, ինչպէս գրած ենք արդէն, կառավարութիւնն ամէն միջոց ձեռք առած էր դէպքերը ծածկելու, աննշան ցուցնելու կամ բոլորովին խեղճութիւրելու, անոր համար մեծ սպառնալիաց և բանտարկութեանց կը մատնուէին ամէն անոնք, որոնք կը յանդրգնէին քննիչներուն ներկայանալ և ճշմարտութիւնը խօսիլ, միւս կողմէ Ս. Կարապետի վանուց միաբաններէն վատանուն Ս ս ա յ ի և Կ ա ր ա պ ե տ վարդապետները անձնական կիրքերով կուրացած, և կառավարութեան կաշառուած՝ ճշմարտութեան հակառակ և հայոց աննպատ վկայութիւններ տուած էին:

Փակագծի մէջ ըսենք թէ՛ Տարօնոյ հայ յեղափոխականները չը պիտի մոռնան արժանակչիւ վարձը տալ սոյն երկու մասնիչ վարդապետներուն...

Սյղպէս սաստիկ ճնշմանց ներքե կատարուած քննութիւնը և այդ թերի հետազօտութիւնը կրնային բոլորովին վրիպիլ նպատակէն և արդարութիւնն ու ճշմարտութիւնը կրնար բոլորովին քողարկուիլ, եթէ չըլլար Սասունցւոց անվեհեր քաջասրտութիւնը, որ ի դերե հաննց կառավարութեան բոլոր զգուշական և խափանարա՛ միջոցները: Ուրեմն պէտք է գիտնալ թէ քննիչներուն ստացած տեղեկութիւնները թէև ստուար հատորներ կը կազմեն, դարձեալ մեր երկրին մէջ պատահած աղէտքներուն հարիւրին մէկը չը ներկայացնեն, և եթէ այդ ալ կը բաւէ դատապարտելու Համիտի կառավարութիւնն և իր արքանեակները, ալ երեւակայեցէ՛ք

թէ ինչ դժոխքներ վիճակի մը ենք մասնուած, վիճակ մը արդարեւ զոր որակելու և պատկերելու համար պէտք եղած զօրաւոր բառերը կը պակսին մարդկային բառարանէն և պէտք է դժոխքէն ու դեւերէն փոխ առնել զանոնք: Արդ, քննիչներուն մեկնելէն ի վեր թուրքերու մեծագոյն մասին համոզմնուքն այն է թէ հայոց խնդիրը բոլորովին մեռաւ, թէ եղած զէպքերը մոռցուեցան և թէ քանի որ Եւրոպա այսչափ խժըժութեանց աչք կը գոցէ, իրենք ազատ են աւելի չարիքներ տեղացնելու հայերու գլխուն, միշտ անպատիժ մնալով, այս պատճառաւ իրենց բարբարոսութիւնը նորէն ձեռք առած են առաջուրնէ չարագոյն դարձած: Ենթադրելով որ նոյն իսկ Եւրոպայէ առաջարկուած բարենորոգմանց ծրագրին վրայ տեղեկութիւն ստացած ըլլան, այդ դարձեալ զիրենք չարագիւր իրենց վայրագութիւնները շարունակելէ, քանի որ իրենք ալ կրնան ըմբռնել այդ բարենորոգմանց անարժէք, սնդործարելի ամէն երաշխաւորութենէ զուրկ բան մը ըլլալն և միանգամայն գիտնն թէ Համիտական կառավարութիւնը իր վերջին ճիգը պիտի թափէ այդ չնչին ծրագրին ամերժելու: Իսկ հայ ժողովուրդը տեսնելով ընդհակառակն իր տածած յոյսերուն մաս առ մաս ոչնչացումը, մեծ յուսախափութեան մէջ է, մանաւանդ յիշելով ամիս մը առաջ իր վայելած փոքր ինչ ազատաբեր օրերը և զանոնք բաղդատելով ներկայ վիճակին հետ, որ անոր հակապատկերն է, բոլորովին վհատած և յուսակտուր եղած է: Տեղւոյս քաղաքական ժողովոյ անդամներն գործունէութեան մեծ պակասութիւն ցուցուցին. իրենք պաշտօնական անձեր լինելով, կրնային աւելի շատ գործեր տեսնալ, և աւելի կրնովի ընթացք մը բռնել, քայց թերացած են իրենց գործոց մէջ առ երկիւղի:

Ինչպէս յայտնի է, անցեալ տարւոյ սոսկալի կոտորածէն ազատուած Սասունցիները թէ՛ բռնութենէ, և թէ՛ սովէ ստիպեալ ցիրուցան եղած էին. ասոնցմէ մէկ մասը ներքին դաշտի և Տիգրանակերտի ճամբով հեռացած էին իրենց հայրենիքէն և անոնցմէ շատերը իրենց սուրէ և գերութենէ ազատուած ընտանիքն և զաւակները թողլով մօտաւոր գաւառներ, իրենք գացած էին մինչեւ Հալէպ և աւելի անդին, Սասունցւոց մէկ ուրիշ մասն ալ Մշոյ քաղաքին ու դաշտին մէջ գաղտնի ապաստանած էին հայոց տուններ և անոնցմէ շատերն ալ աւելի առաջ երթալով, մինչեւ Խնուս և Ռուսաստան գաղտնի էին. շատ քիչերը մնացած էին իրենց սիրելի լեռները՝ յանձն առնելով ամէն վտանգ և տառապանք և շարունակելով առիւծաբար դիմադրել իրենց հարստահարիչներուն: Բայց յետոյ, այս գարնան, քննիչներուն երկայութենէն սիրտ ...ոնելով, Մշոյ և դաշտի մէջ և ուրիշ մօտաւոր տեղեր գտնուող Սասունցիներէն շատերը կամաց կամաց սկսան կեդրոնանալ իրենց բնագաւառները, մանաւանդ երբ վերջերս իմացան թէ՛ հրաման ելա իւր : քանդուած շէնքերը վերաշինելու: Այս քաջ սերունդին համար, որ սնած է լեռան ազատ օդով, սառնորակ աղբիւրներու անմահական ջուրերով, բացարձակապէս անկարելի է դաշտային բնակութիւնը. իրենց սարերէն ու քարերէն ընդ երկար հեռու մնալը կը ծիւրէ, կը հիւժեցնէ անոնց կորովի կազմուածքը: Այս պատճառաւ անոնցմէ շատերը Մշոյ մէջ և դաշտի մէջ հիւանդացան. այս հիւանդներէն օմանք իրենց մեռած ատեն անէժք կարդացեր են իրենց բազդին որ չը կրցան արժանանալ պատերազմի մէջ ինկած իրենց ընկերաց փառքին և հասարակաց փոսէն դուրս պիտի թաղուի: Կառավարութիւնը, ուղելով ցոյց տալ

Քննիչներուն իր «բարեխնամ հողածութիւնը», Աշոյ մէջ Սասունցի հիւանդներուն համար հիւանդանոց մը բացաւ, այժմ քառասուն հիւանդներ կը դարմանուին հոն. իրենց հիւանդութիւնն է տենդ, ժանտատենդ և ծաղկախտ, թէ որ մեծագոյն մասը չը հեռանային՝ կարելի էր հնտախտ ալ ծագէր, բայց բարեբաղդաբար առաջին առնուեցաւ իրենց վերադարձովը: Այսպէս, Մուշէն, Գաշտէն ու ներքին Գաշտէն 2000ի չափ Սասունցիներ իրենց 5-10 օրուան ոգևպահիկ պարէնը հետերնին առած, վերստին ելան լեռ և իրենց քանդուած անձուխ գեղերու փլատակներուն մօտ, և քիչ հեռու իրենց նահատակներու հողակոյտէն, կամ աւելի ճիշտը, քարակոյտերէն,—այստեղ մարդ սպաննուած տեղերը կամ սպանեալներու գերեզմաններուն վրայ սովորութիւն է քարակոյտ բարձրացնել— զետեղեցին իրենց սև վրանները:

Բայց կարծեմ ընթերցողներու մէջ այնչափ միամիտ մէկը չիկայ, որ կարծէ թէ Սասունցիներու դէմ իստութիւնները, հալածանքը և հսկողութիւնը վերջացած են: Իրականութիւնը բոլորովին ասոր հակառակն է:

Այն Սասունցիները, գլխաւորաբար Շէնիք, Սէմալ և Կէլիէկիւզան գեղերէն, որոնք Քննիչներու ներկայանալու քաջութիւնը ունեցան, յետոյ իրենց գիւղերէն փախան, զեռ կը փնտռուին: Սասնոյ լեռներուն մէջ, այս զիտումով ոստիկան-զինուորներու երթևեկութիւնը կը շարունակուի և Սասունը ամէն կողմէ պաշարման վիճակի մէջ է...: Արիւնարբու զահիճները դեռ չեն կշտացած հայու արիւնով. տասը հազար նահատակներու անմեղ արիւնը՝ զեռ չէ անցուցած անոնց արեան ծարաւը. կ'ուզեն խմել Սասունցի հայի արեան մինչև վերջին կաթիլը, կ'ուզեն ջնջել հայ անունը այդ լեռ-

ներու վրայէն, օրինակ տալու համար բոլոր հայերուն, որ չի համարձակին երբէք Սասունցիներուն պէս կառավարութեան դէմ դնել և անոր գլխուն բարդել այսքան պատասխանատուութիւն և դժուարութիւններ: Մերկ, անօթի, և բացօթեայ մնացած Սասունցիները, մանաւանդ այն սակաւաթիւ կտրիճները, որ օձի պէս հող ուտելով և սկիւռի պէս արմատ կրծելով՝ դեռ կառչած կը մնան իրենց ապառաժներուն վրայ, դեռ աննկուն կը մնան առիւծի պէս, կառավարութեան աչքին փուշ են և անոր համար մշտական տագնապ: Մէկ քանի հարիւր անդէն հայերէն կը վախնայ այն կառավարութիւնը, որ տարի մը առաջ թնդանօթներու ռումբերո, այերացաւեր բրաւ Սասունը: Եւ այդ մէկ քանի հարիւրին դէմ պատրաստ վիճակի մէջ գտնուելու և յարմար առիթին անոր ալ հաշիւը մաքրելու համար՝ կառավարութիւնը մինակ ինքզինքը անկարող գտնուելով... կը դիմէ դարձեալ վրայնակ քիւրտերու աջակցութեան, որոնք չի թերացան անցեալ տարի իրեն գործակցելու:

Արդարեւ, դարնան սկիզբէն ի վեր, Խուլը գաւառակի ոստիկանութեան պետ էօմէր Սղան, այդ կողմերունչանաւոր բռնաւորը, բազմիցս Բագրանցի և Բատրգացի քիւրտ աշիրէթներուն մէջ ղրկուեցաւ, զանոնք համոզելու, որ այս տարի ալ Մշոյ լեռը գան: Աշիրէթները զարմանօք դիտեր են թէ՛ ուրիշ տարիներ կաշառք տալով հրաման կը ստանային. հիմայ բան մը կայ կրսն, թերեւս մեր գլխուն խաղ մը խաղան որ կառավարութիւնը ինք կը ստիպէ մեզ լեռ ելլելու: Այս կասկածանքով շատ չեն ուզած շարժիլ իրենց տեղերէն: Կառավարութիւնը, որուն դիտումներուն համաձայն չէր դար Մշոյ լեռը պարապ ձգել, և թողուլ որ

ոգեսպառ Հայերը քիչ քիչ շունչ առնեն, պարտուորե-
 ցաւ ասկէ ամբս մը առաջ քաղաքիս Համիտի արբան-
 եակ Խ օ ճ ա և Ի ւ ւ ւ է մ ա ն ե ր է ն Հ ա ճ Ի Թ ա յ Ի-
 պ ր՝ զինևորներով զրկել Սասուն, Մշոյ մէջ լուր տա-
 րածելով որ ան կերթայ իբր թէ քիւրտերը համոզելու
 որ Հայոց չը վնասեն... : Բայց յետոյ տեսնուեցաւ որ
 անոր երթալուն բուն նպատակն էր ամբողջ քիւրտ
 ք է օ չ է ր ները (վրանաբնակ) բերել և լեցնել Մշոյ սա-
 րը. ասոնք վերջապէս համոզուեցան ու եկան, Հաճի
 Թայրիպն ալ հետերնին : Միևնոյն ժամանակ 300 հետեւ
 ւակ զօրք ալ զր'իււած է Մուշէն ի Սասուն. այս զօրաց
 երթին պատճառը եթէ թուրքերուն հարցնեն, կըսեն թէ
 հայերը ք է օ չ է ր ն ե ր է ն պաշտպանելու համար է.
 Բայց ի՞նչպէս կարելի է հատուտալ այս կարծեցեալ պաշտ-
 պանութեան, քանի որ կառավարութիւնն ինքն է որ
 պատճառապէս կը հրաւիրէ այս պատուհասը հայոց գըլ-
 խուն : Մենք որոշակի չենք գիտեր այս շարժմանց
 գաղտնի պատճառները, լաւ չը հասկցուիր թէ ի՞նչ է
 կառավարութեան բուն նպատակը, բայց յենուելով կա-
 ռավարութեան դիմումներու մասին մեր ունեցած տը-
 խուր փորձառութեան վրայ, մենք կը կասկածինք որ ա-
 շիրէթներ լեռը բերելով մտադիր է յարձակում մը եւս
 ընել տալ անօթի և անզէն հայերու վրայ և օգտուե-
 լով անոնց փոխադարձ թշնամանական դիրքէն, զօրքերն
 ալ հայոց վրայ քչէ և այդպէսով վերստին կոտորել տայ
 հայերը, նախընթաց տարիներու պակասը լրացնէ և ջոյց
 տայնէրօպայի թէ Ք է օ չ է ր ն ու լեռնաբնակ հայերը ա-
 շիրէթներ են որ միշտ կը կուսին, իրենց հալն այդ է
 եղեր ամեն ժամանակ և այսպէսով հաւատացնէ Եւրո-
 պային որ անցեալ տարուոյ ա՛ռելի ազէտներն եւս իրմէ

անկախ և առանց իր զիտութեան ու դրդման գործուած են և զօրքը միջամտած է, ո՛չ թէ հայերը ջարդելու՝ այլ խաղաղութիւնը հաստատելու համար միայն :

Մենք չենք կրնար չը ծանրանալ այս կէտիս վրայ . Քէօզէր ներուն ուղղակի կառավարութեան թելադրութեամբ Մշոյ լեռ բերուելը ո և է լաւատես մեկնութիւն չը վերցնենք, ո և է հաշտարար տրամադրութիւն չենթադրեր կառավարութեան կողմէ . տասը տարիէ ի վեր Գաւառացի և Շատախցի հայերը ամեն տարի ամենաբուն կերպով բողոքած են կառավարութեան քէօզէրի գալէն և անոնց հասուցած չափքներուն դէմ և մինչեւ իսկ քանիցս անոնց գալն արգելելու կայսերական իրատէ ելած է և կառավարութիւնը հին բարի ժամանակներու մէջ երբեմն զօրք ալ հանելով անոնց դէմ, զանոնք եա կը դարձնէր . իսկ քանի տարիէ ի վեր կառավարութիւնը ինք անձամբ կը բերէ . . . կերեւի թէ սուլթանին հրամանն այս է և անոնց ձեռքովը պիտի կատարէ «բարենորոգում»ները . . .

Վա՛յ մեզի . համիտեան կառավարութիւնը, որուն ինքնակալն ալ արդէն խաւարամիտ մի մ ու լ ա է, Սասնոյ գաւառի անդորրութիւնը և ապահովութիւնը պահպանելու քաղաքակրթական մեծ գործը՝ մանաւանդ կիրքերու բնդհանուր գրգռութեան ներկայ ցգնաժամին մէջ՝ կը յանձնէ իր մոլեկրօնութեամբ և անողոք հաշտեցութեամբ պատմական նշանակութիւն ստացած հանրաժանօթ Հ ա ճ ի Թ ա յ ի պին, որ անցեալ տարւոյ կոտորածներուն մէջ Զ ի լ ա ն ու շէյխին չափ մեծ դեր և մեղսակցութիւն ունեցած է և անոր, Հաճի Թայիպին հրամանին ներքեւ կը դնէ Բագրանցի և Բաւրզանցի Քէօզէր քիւրտերը, որոնք թերեւս բոլոր քիւրտ աշխրէթներու ամէնէն վայրագ և բարբարոս ցեղերն են :

Ոչխարաց պահպանութիւնը գայլերուն
յան ձնուած է: Մենք ասոր չենք զարմանար, զի այս
ամէնը համիտեան կառավարութեան դիտումներուն, ըմ-
բռնումներուն կատարելագէս համաձայն է և ցարդ իր բո-
նած քաղաքականութեան շղթայական շարունակութիւնը:
Մենք ասոր չենք կրնար զարմանալ, այլ կը զարմա-
նանք, կ'արգահատինք անոնց, ըլլան մերազնեայք կամ
օտարազգիք, որոնք դեռ կը հաւատան թէ սուլթանը
պիտի բարեհաճի բարենորոգումներ մտցնել Հայաստանի
մէջ, թէ կարելի է երկիրը յաղաղի և զարգանայ՝ ա-
ռանց սուլթանի և համիտեան կառավարութեան հեղի-
նակութիւնն ու զեկաւարութիւնը իսպառ դուրս վանե-
լու անկէ, այսինքն առանց ինքնավարութեան: Բայց
թողունք այս տեսակ խորհրդածութիւնները աւելի հան-
գիստ տեղերու հայերուն, հասուն մտքերուն... և մենք
շարունակենք մեր պատմութիւնը: Հաճի Թայիպի բե-
րած քէօչէրները 20,000 հոգւոյ կը համարին (ընտանեօք),
որոնք Շատախի և Գաւառի լեռները բռնած են և ողո-
ղած են Մշոյ սալը մինչեւ Հաւատորիկ և արդէն սկը-
սած են տեսակ տեսակ անկարգութեանց, գողութեանց
և բարբարոսութեանց: Կը հաւաստեն թէ բռնաւոր Հա-
ճի Թայեարը՝ իր ձեռքը ցանկ մը ունի, յորում նշա-
նակուած են այն Սասունցիներուն անունները, որոնց
դէմ կառավարութիւնը հաշիւ ունի անցեալ տարուան
դէպքերէն. զանոնք ձերբակալելու, սպաննելու, ան-
հետացնելու արտօնութիւն տրուած է իրեն և քիւրտե-
րուն. քիւրտերը յայտնի կը խօսին իրենց հանդիպած
հայերուն և վնասուած անձանց անուններն ալ կը յի-
շեն. բայց մենք յարմար չենք սեպեր ի մէջ բերել:

Այս օրերս 25 Տաւրոսիկցիներ կ'ուզեն գալ Մուշ՝
անմիջական նպաստ ուղելու իրենց անօթի ընտանեաց

համար Հայոց Մասնաժողովէն. հաճի թայիպ զանոնք կը ձերբակալէ, կը հարցաքննէ և Չ օր կը բանտարկէ. վերջը, օրական հինգ մարդ Մուշ երթալու համար անցագիր կուտայ: Այսօր ալ Մուշ եկող Աղբէջի (Մասունի Աղբի գիւղէն) վեց հայերու ձեռք տրուած հրամանագիր մը տեսանք որոյ պատճէնն է հետեւեալը. «Աղբի բնակիչներէն վերագրեալ վեց քրիստոնեայ անձինք արմտիք գնելու համար Մուշ պիտի գնան. կառավարութեան կամքի հակառակ ու է անպատեհութիւն տեղի չունենայ: (Մտոր.) իւր է մաներէն հաճի թայիպը»: Առանց հաճի թայիպի անցագրին Մուշ եկող Մասունցիները անվրէպ կը ձերբակալուին, նոյնպէս Մուշէն Մասուն գացողները: Իսկ Շէնրգ, Սէմալ և Կէլեէկուզան գիւղացիներուն արգիլուած է Մուշ և ուրիշ տեղեր երթալ: Ան այսպէս խիստ պաշարման վիճակը, պատերազմական դրութիւնը կը շարունակուի ի Մասուն. Քէօչէրի զօրաց այս անօրինակ խստութիւնը լեռան վրայ և կառավարութեան ու ոստիկանութեան արգոսեան հսկողութիւնը Մշոյ մէջ՝ բոլորովին խզած են ամէն յարաբերութիւն և հաղորդակցութիւն Մասունի և Մշոյ միջեւ. և արդեօք ի՞նչու այս աստիճան հսկողութիւն... չը կասկածի՞նք թէ Մասնոյ ներսերը խորհրդաւոր անցքեր կը դառնան թերեւս... ու պիտի տեսնէք քիչ վերջ թէ՛ մեր այս կասկածները շատ ալ անտեղի չեն...: Տեղէս Պատրիարքարանին գանգատներ գրուեցան Քէօչէրի գալու մասին, բայց ի՞նչ պիտի կրնայ ընել: Այդ տեսակ գանգատներ շատ անգամ անպատասխանի կը մնան: Տեղւոյս ժողովուրդը, որ արդէն զայրացած է տեղական պաշտօնական մարմինի թուլութեան և վախկոտութեան դէմ, աւելի զայրացած է Պատրիարքարանի դէմ, որ չը կրնար իր ազդեցու-

Թիւնը բռնեցնել յայտնի խնդիրներու մէջ, որոնցմէ միոյն վրայ ալ քիչ մը ստորև պիտի խօսինք :

Կառավարութեան խորամանկութիւններէն մին ալ այն է որ, ինչպէս ամէն ժամանակ և ամէն տեղ, ան իր դիտաւորութիւնները միմիայն յայտնի, անմիջական, ուղղակի միջոցներով ի գործ չը դնեն, այլ շատ անգամ բարի մարդու երեւոյթներ կը զգենու, քաղաքակրթութեան դիմակ կ'անցընէ իր դէմքին, օգտակար անօրինութիւններ, (.) մարդասիրական գործեր (.) կը կատարէ, բայց իրօք այդ ամէնը ձեռքի տակէ, անուղղակի կը ծառայեցնէ միշտ իր գաղտնի նպատակներուն, որոնք կրնան ամփոփուիլ հետեւեալ բառերով. — խեղդել, խափանել ամէն բարիք, դիմել ամէն միջոցի ճնշելու, բնաջինջ ընելու համար հայերը : Ան կառավարութեան այդ կարգի խորամանկ, երկդիմի, հակասական անօրինութիւններէն մին եղաւ «սովալլուկ Սասունցիներուն իբր թէ նպաստ բաշխելու և անոնց փլած ու հրկիզուած տուներու վերաշինութեան հսկելու» պաշտօնով թուրքերէ և մարդամեքենայից դատակարգէն եղող թուլասիրտ հայերէ բաղկացեալ խառն յանձնախումբ մը կազմել և լեռ զրկելը : Սոյն յանձնաժողովը սովելոց նպաստ բաշխելու տեղ, նպաստ բաշխելէ առաջ, ոստիկաններու օգնութեամբ սկսաւ մարդահամար կատարել, պատրուակելով, որ ըստ այնմ արդարութեամբ պիտի ընեն իրենց բաշխումը : Այս բանը շուարեցուց Սասունցիները, զի օսմ. կառավարութիւնը իր տիրապետութենէն ի վեր յաջողած չէր հայոց մարդահամարն ընել Սասնոյ մէջ, և շատեր չվարանեցան իրենց վրանները թողլով անյայտանալ . . . Միեւնոյն ժամանակ նպաստ բաշխելու պաշտօն ունեցող կառավարական այդ յանձնախումբը. անօթի Սասունցիներուն զեռ պատառ մը հաց չը տուած՝ սկսաւ անոնցմէ հպատա-

կութեան և շնորհակալեաց ուղերձ պահանջել : Սասունցիք ասոր ալ դժկամակելով և նախըթրելով անօթի մեռնիլ քան շնորհակալութիւն յայտնել իրենց դահիճին , երբ իրենց մարտիրոսներուն դիակները դեռ տաք էին , մեծաւ մասամբ զրկուեցան կառավարութեան «առատագութ» նպաստներէն : Դարձեալ այդ հոչակաւոր յանձնախումբը , սպառնալիքներով ետէ՞դարձուց շատ մը Դաշտեցի ու Մշեցի հիւաներ և որմնագիրներ , որոնք եկած էին ինքնայօժար իրենց աշխատութիւնը նուիրելու քանդուած տուներու վերաշինութեան , գիտէ՞ք ի՛նչ է այդ արգելքին պատրոնակը . — դեռ կայսերական իրատէ ելած չէ . . . : Տարակոյտ չկայ որ երբ ինչիւրը կոտորածի մը համար ըլլալ , իրատէն ելլելու համար մէկ օրն ալ պիտի բաւէր :

*
**

Խուլփի գայմագամ , որ մէկ ամսէ ի վեր Տալւորիկ նստած՝ անլուր բարբարոսութիւններ ի գործ կը դնէր և հարկեր կը հաւաքէր ու կ'ուզէր Սասունցիներուն մարդա՞համարը կատարել ու շնորհակալութեան ուղերձ մը խըլել անոնցմէ Սուլթանին համար , ամսոյս ԱՅին , Տալւորիկէն տուրք հաւաքելու պահուն , լեռնաշղթայէ մը վար կը գլորուի ձիով ու կը ջախջախուի : Բայց հիմակ Համիտի պաշտօնեաները կը գրգռեն իսլամ ամբօխը Հայերուն դէմ , ըսել ուզելով թէ՛ Հայերը սպաննած են գայմագամը : Տալւորիկցիները , նոր կոտորածի մը վախէն , վերցուցած են իրենց վրանները , և վերստին Ֆրեֆրեքարի անառիկ բարձունքները ապաստանած են մերկ , անօթի , և անզէն :

Այս դէպքերէն երկու օր ետքը , անգլիական հիւ-

պատուը, ընկերակցութեամբ ամերիկեան միսիօնար Մսթըր Բօլի, Տալւորիկ ժամանած է: Հալիւրի չափ Տալւորիկցի կտրիճներ հիւպատուը դիմաւորեր են և հըրացանաձգութիւններով զինւորական պատիւներ ըրեր են իրեն. յետոյ, ամէնքը յարգանքով մօտենալով, այս օտարազգի հիւրերու ձեռքերը համբուրեր են:

Հիւպատուը խոյապէս զգածուեր է այս սրտատլեռնականներու խանդավառ ընդունելութիւնէն: Հիւպատուը խիստ փափուկ, սպառնալից ժամանակ մըն է որ կը հասնի Տալւորիկ և յուսալի է որ անոր ներկայութիւնը թերեւս առաջքն առնէ նոր ազէտներու:

Մշոյ Զորոյ թաղի Շէկ Աւետարան եկեղեցւոյ վարժարանը խուզարկուեցաւ և ուսուցիչը Գրիգոր վարժապետ, որ Թառօ անունով ալ ծանօթ է, ձերբակալուեցաւ: Դպրոցը փակ կը մնայ: Այս ձերբակալման առիթ տուած է վատանուն Բարսեղ քահանայի մը զրպարտութիւնը:

Անցած տարի, քաղաքին յեղափոխականներէն մէկ քանիններ ծանրապէս վիրաւորեցին այս նոր Զանգակերէցը. սակայն, փոխանակ զգաստանալու այդ դասէն, այդ մատնիչը հիմակ անպատկառօրէն կը շարունակէ իր շահատակութիւնները...:

*
**

Մշոյ առաջն. տեղապահ՝ Վարդան վարդապետ, անցեալ շաբաթ լեռը (Սասուն) գնաց, ուր կը գտնուի արդէն Մշոյ միւթէսարը՝ Տուները սկսած են վերաչինել: Անգլիական հիւպատուսն ալ Տալւորիկ կը մնայ տակաւին, ուր զինուած Հայերու կողմէ ջերմ ընդունելութիւն գտեր է, և ուր իր ներկայութիւնը՝ իր օգտա-

կար ազդեցութիւնը ունեցեր է այն պահուն, երբ կը վախցուէր նորանոր խժդժանքներէ և արիւնհեղութիւններէ: Տեղական կառավարութիւնը սկիզբները ամէն ջանք ի գործ դրաւ ջլատելու և չէզոքացնելու հիւպատոսին գործունէութիւնը, առաջարկեց իրեն որ ինքնագլուխ չը գործէ, սակայն հիւպատոսը ականջ չկախեց, ըսելով թէ՛ իր ընդունած հրահանգներուն համաձայն կը գործէ և թէ՛ լո՛կ իր կառավարութեան պատասխանատու է ինքը: Համիտաբարոյ պաշտօնեաները, չկրնալով արգիլել անոր գործունէութիւնը, հիմակ սկսեր են իր քայլերուն վրայ հսկել, միասին գործելու պատրուակով:

Խորամանկ Թայիւպ էֆէնտին՝ Մուշէն, Նաճի Նէճ մէտտին ազուէսը՝ Բազեշէն, Տալուրիկ գացին հիւպատոսին ետեւէն, անոր գործերը լրտեսելու և արգիլելու որ Հայերը ցաւերնին բացայայտօրէն չը պատմեն իրեն: Ոստիկան զինուորները, Տալուրիկի կողմերը կը ձերբակալեն երկու անձանօթ ձիւորներ, որոնք յայտնի չէ՛ թէ ո՛ւր տարած են: Ոմանք կ'ըսեն թէ՛ ձերբակալուածները եւրոպական թերթերու թղթակիցներ են և ձեռքերնին օտար հպատակութեան անցազիր ալ կայ եղեր, բայց ոստիկանները կարեւորութիւն չտալով, բռնած տարած են զանոնք: Հիւպատոսը կ'իմանայ և ստիպողաբար այդ մարդիկը կը պահանջէ, սակայն, ոստիկանները ցոյց չեն տար զանոնք: Խնդիչը մնացած է այս վրձակին մէջ և դեռ ստուգուած չէ այդ մարդիկներու ինքնութիւնը:

Փաւառներուն մէջ (Շէնիք, Սէմալ, Կէլեկուզան) տուներու շինութիւնը զանդաւորէն առաջ կը տարուի: Կառավարութեան պաշտօնեաները կը փորձեն բռնի բանեցնել Հայերը, առանց վարձքի, սակայն, այս վեր-

ջինները կը մերժեն որովհետեւ, եթէ տուներու շինութեան աշխատին անդին, երկրագործութեան, խաշնարածութեան և ուրիշ կենսական գործերը կը մնան երեսի վրայ, և իրենք են որ դարձեալ կը տուժեն: Բաշան կ'ըսէ. — «Ինչո՞ւ չէք աշխատիր, քանի որ ձեր տուներն են»: Հայերը կը պատասխանեն. — «Մեր տուները կանգուն էին, ինչո՞ւ փլցուցիք...»:

Իսկ Մշոյ Գաշտի դրութիւնը վատթարագոյն է. բոլոր գիւղերուն մէջ, տասանորդի տուրքին, վարձակալները միեւնոյն վայրագութիւնները կը գործեն այս տարի ալ: Բոլոր գիւղացիները Մուշ լեցուեցան բողոքելու, բայց ո՛չ Միւթէսարըֆը կայ հոս, ո՛չ Առաջնորդը, ո՛չ ալ հիւպատոսը, մնացեալ կառավարական պաշտօնեաները բնաւ չեն լսեր: Շատ մը գիւղացիներ, յուսահատութենէ մինչեւ լեռ (Սասնոյ վերին գաւառը) գացին բողոքելու: Ամէն գիւղի մէջ հինգ տասը ոստիկան զինուոր դրուած է, որոնք այս տարուան և ուրիշ յեանեալ տուրքերը կը գանձեն, աննկարագրելի նեղութիւններ տալով խեղճ հայ գիւղացիներուն, որոնց վրայ երբեք ազդեցութիւն մը չէ գործած մեր երկրի այս տարուան քաղաքական արտասովոր կացութիւնը...:

*
* *

Տեղւոյս սովատանջ Սասունցիներուն նպաստ բաշխելու պաշտօնով երեք տարբեր մարմիններ կան հոս: Առաջինը կառավարութեան Յանձնաժողովն է, որուն բարեգործութիւնները (?) պատմեցինք արդէն. մինչեւ ցարդ շատ աննշան գումար մը բաշխած է իրեն դիմող Սասունցիներուն, որոնք սովահարներուն փոքրիկ մասը կը կազմեն սակայն:

Երկրորդ մարմինն է Ամերիկացի միսիոնարներու Յանձնախումբը, զոր կը կազմեն Մըստըր Չօրձ, Մըստըր Քօլ և Մըստր Ռէյնօս բժիշկը, որոնք գալով Բաղեչէն ու Վանէն, կառավարութենէն հրաման ուզեր են լեռ ելլելու: Կառավարութիւնը առաջարկեց, որ իր կարգած Յանձնախումբին յանձնեն իրեն, նպաստները, անիկա արդար կը բաշխէ. իսկ անոնք չեն ընդունիր, և վերջապէս կառավարութիւնը ակամայ կը զիջանի արտօնութիւն տալ ասոնց: Ասոնք գովելի անձնուիրութեամբ մը լեռը նստած՝ նպաստ կը բաշխեն և քանդուած տուները շինել կուտան: Ակոնատես մը կը պատմէ թէ՛ ինչ խոր տպաւորութիւն մը թողած է այդ Ամերիկացիներուն վրայ հոն լեռը, սեւ վրաններու տակ բնակող խեղճուկ, տկլոզ ու բոբիկ, անօթի ու գեանախշտի հայերուն ազիոզորմ վիճակը, անոնց սովատանջ դէմքը, անոնց վաղուան վրայ անապահով, տարակուսելի կեդպարանքի արտայայտութիւնը, Սասունցի կանանց երախտագիտութիւնը, որոնք չը կրնալով բառ մը արտասանել այդ օտարականներուն անոնց ձեռքն ու ոտքը կ'ուզեն համբուրել:

Երրորդ նպաստամատոյց յանձնախումբն է հայկականը, որուն պաշտօնը վաւերացած է Ազգ. Պատրիարքարանէն. այս Յանձնախումբին ալ բաւական տեղերէ հասած են և հետզհետէ կը հասնին գումարներ Սասունցի կարօտելոց բաշխելու համար. բայց այս մարմինը՝ հազիւ իր պաշտօնին սկսած՝ կառավարութեան կողմէ անգործութեան դատապարտուած է. եթէ զազտնի կերպով ուսանց օժանդակած է, այդ ալ շատ աննշան բան պէտք է ըլլայ: Անցեալները մէկ քանի Սասունցիներ ներկայանալով հայկական յանձնախումբին, ուզած են ոչ թէ հաց կամ դրամ, այլ իրենց սովամահ ննջեցեալ-

ներու համար պատանքացու . բայց յանձնախումբը վախնալով մերժեր է , ըսելով որ կառավարութիւնը արգելած է նպաստ բաշխել . . . :

Իրօք , կառավարութիւնը պաշտօնապէս , հրամանագրով մը խտաիւ կը պատւիրէ որ եկած դրամները այսուհետեւ իրեն յանձնուին և ինք իր յանձնախումբին միջոցաւ կատարէ բաշխումը . յայտնի է թէ թաքուն նպատակներ կան ասոր մէջ , որոնցմէ ամէնէն դիւրագուշակելին այն է , որ նպաստներուն ուշ բաշխուելովը՝ ըսա կարելոյն աւելի շատ Սասունցիներ սովամահ կը կորնչին : Թէև հայ յանձնախումբը այլ և այլ առարկութիւններով ընդդիմացեր է ստակները կառավարութեան տալ , բայց ժողովին անդամները վախնալով որ իրենց անձնական վտանգ մը պատահի , դադրած են յայտնի և համարձակ գործելէ , չը նայելով որ անդին թշուառ Սասունցիք անմիջական հացի ու նպաստի կը կարօտին . գաղանի բաշխումներ ընելն ալ անկարելի է , քանի որ ո՛չ յանձնախումբին հրաման կը տրուի Սասուն մարդ զրկել , ո՛չ թոյլ կը տրուի Մուշ — թո՛ղ այն կէտը թէ Ք է օ չ է ր ն ե ր ն ալ ճամբաները բռնած են և թռչուն չեն թռցունել :

Յանձնախումբին անդամները ճարհատեալ , Սրբազան Պատրիարքին դիմած են ազաչելով որ որ և է միջոցաւ չեզոքացուի կառավարութեան այդ անտանելի միջամտութիւնը , որ բոլորովին վտանգաւոր և ֆրասակար կը դառնայ , կը խնդրեն անմիջական տնօրինութիւն մը որպէս զի Սասունցի արկածեալները անօթի չը մնան : Առաջնորդարանը Լեւը գտնուող միսիօնարանըուն աջակցելու համար Հայկունի Խաչիկ ազան զրկեց անոնց քով , բայց անոնք պատասխանած ըլլալով թէ պէտք չեն զգար իր ներկայութեան , յիշեալ անձը Մուշ

վերադարձաւ : Տեսնելով որ Ս. Պատրիարք Հօր կողմէ նպատակայարմար տնօրինութիւն մը կ'ուշանայ, տեղս խորհուրդ կայ առ ի չգոյէ լաւագոյն միջոցի, ազգայնոց կողմէ հայ Յանձնախումբին հասած գումարներն ալ բողոքական միօրօնարներուն միջոցաւ բաշխել տալ : Ի հարկէ քաջալերիչ և յարմար կ'ըլլար որ համազգի և համակրօն եղբարց դրամը ուղղակի հայոց կողմէ բաշխուէր, բայց տեսնելով ասոր անկարելութիւնը և գիտնալով որ մեր հայերը անվախ և ապահով չեն այդ օտարազգիներուն չափ, որոնց նպատակն անշուշտ այս պարագայիս մէջ կրօնական գծով միաքերէ շատ բարձր և և զուտ մարդասիրական լինել կ'ենթադրուի, յանձնախումբը վերջ ի վերջոյ պիտի ստիպուի այդ միջոցին դիմել՝ եթէ շարունակէ յապաղիլ Պատրիարքարանի ազդու և բացառիկ տնօրէնութիւնն այդ մասին :

Սակայն հոս ի դէպ է ըսել թէ, այդ արգելքները բարձուին և նպաստները բաշխուին ալ, քանդուած տուները վերաշինուին ալ, դարձեալ այդ բոլորը մեծ նշանակութիւն և իրական օգուտ չունենար, խնդիրը էական յայնմ կը կայանայ որ Սասնոյ մէջ տեղի ունեցած քստմնելի արարքները և սոսկալի բռնութիւնները չը կրկնուին : Բայց այս մասին առ այժմ յոյս չը կայ. կառավարութիւնը մագի չափ չէ շեղած իր աւերիչ ընթացքէն, և իր քաղաքականութեան արտաքին երեւոյթն ի նչ որ ալ ըլլայ, ներքինը միեւնոյն է. այս մասին վկայ են Քէօչէրի բերուելուն և ուրիշ եղելութեանց վրայ մեր մինչև ցարդ պատմածները. բայց աւելի ակներեւ փաստ են այն նոր տագնապեցուցիչ լուրերը, որ կուգան Սասունի ներսերէն և որոնք կը փութանք ստորել ի մէջ բերել :

Անցեալ տարի Սասնոյ դէպքին րամանատարու-

Թիւն ընող կինճի միւթէսարըՖը, ինչպէս կ'իմանանք, Տալւորիկէն հետն առնելով Խուլփայ գայմագաւը, Հազրոյի նշանաւոր բռնակալ Սէպաին պէկը, Սլիվանի Մէմէա Բաշիտ աղան, 30-40 ստիկաններով ու զօրքով և շատ մըն ալ քիւրտերով ամսէ մը ի վեր եկեր Տալւորիկի հարաւի սանձանակից Արդխու և Քառախու հայ գիւղերը նստեր է. անկէ լուր դրկելով Տալւորիկ, որպէս թէ նպաստ բաշխելու համար տեղւոյն մնացեալ ընակչաց մարդահամարը կը պահանջէ. ինչպէս նաեւ շնորհակալեաց գիր: Թէեւ Տալւորիկ համայնքի միայն Դուռալ էնք գիւղի ուրացող քահանան, Տ. Ստեփան, անոնց պահանջումները կատարեր է, սակայն միւս ութը գիւղերու մնացեալ բնակիչները որոնք, ինչպէս յայտնի է, աւելի յամառ և քաջասիրտ մարդիկ են, հասկնալով կառավարութեան խորամանկութիւնը մերժած են անոր պահանջումները: Այն ատեն պաշտօնեաները իրենց դիմակը վար առնելով՝ կը մտնեն Տալւորիկ և անպատկառ կերպով կը սկսին տուրք պահանջել և անհաւատարի նեղութիւններ տալով՝ գիւղացոց ունեցածը տուրքի տեղ յափշտակել. գիւղացիք չը կըրնալով համբերել և դիմադրելու ալ կարողութիւն չունենալով՝ զի — պէտք է կրկնել — ա ն հ ա ց և ա ն զ է ն են, ճարահատեալ կը փախչին գեղէն, թողլով անոնց ձեռքը իրենց ընտանիքն ու զաւակները, որոնք յաջողած էին ճողոպրիլ հերուան ընդհանուր կոտորածէն: Կը վախցուի թէ նորէն ցիրուցան ըլլան քան թէ գոհացնեն կառավարութեան անիրաւ պահանջումները, մաւնաւանդ հիմա որ բանէ մը զրկուելու երկիւղ չունին, բացի իրենց յուսահատ և վհատեալ հոգիներէն: Դիւրին է հասկնալ թէ ինչո՞ւ և ի՞նչ նախատեսութեամբ վայրենի Համիտեան կառավարութիւնը մասնաւորապէս Տալւորիկի վրայ կը կեդրոնացնէ բոլոր իր հալածանք-

ները և միւս կողմէ քիւրտերն ալ — Սասունցի, Խիւսնացի, Բագրանցի — իրենց բոլոր կարողութիւնը կը թափեն նոյն համայնքին վրայ: Անա պատճառները, նախ որ Սասնոյ յեղափոխական — ապստամբական շարժման անդրաւիկ օրօրան և գլխաւոր վառարան թէ՛ Տալւորիկն եղաւ. երկրորդ Տալւորիկ համայնքը անտարակոյս Սասնոյ ամէնէն անառիկ և անմերձենալի դիրքը գրաւած է և դարերէ ի վեր հայերն այդ դիրքէն հեռացնելու համար և թէ՛ ազագային ի նախազգուշութիւն՝ հայերն այդ կէտէն բնաջինջ քնելու համար, ներկայ ժամանակը ամէնէն պատեն առիթը նկատուած է: Բայց միւս կողմէ տարակոյս չկայ որ այդ ամենակարեւոր դիրքը իրենց ձեռքէն չը հանելու համար Սասունի հայերը պիտի կրուէին մինչեւ յետինն իրենց զաւակներուն, բաւական է որ միջոց ունենան... Մէկ խօսքով՝ Սասնոյ խընդիրը վերջացած է:

Միեւնոյն ժամանակ Սասունէն մեզ լուր կը տրուի թէ Սասունցի քիւրտերը յարձակեր են իրենց հայերու գիւղերէն Բըրի գեղը, որ անցեալ տարուան դէպքերուն ժամանակ ալ անգամ մը թալանուած է:

Այսպիսի սրտաճմլիկ նորագոյն դէպքեր նկարագրելէ վերջ, և ո՛վ գիտէ դեռ ի՞նչ տխուր անցքեր տեղի կ'ունենան և մենք չենք իմանար խիստ պաշարման վիճակին պատճառաւ, միթէ իրաւունք չունինք հարցնելու թէ ի՞նչ դիւական կատակերգութիւն էր ուրեմն եւրեք մեծ տէրութեանց միջամտութիւնը, Քննիչներու գալը, երթալը, բարենորոգմանց առաջարկները: Ի՞նչ հեգնութիւն և ի՞նչ հակասութիւն, խայտառակ Եւրոպան չամչնալով որ հիւանդ և ապիկար Մենագարի մը ձեռքը խաղալիք դարձած է, մեծ-մեծ կը ջարդէ, օդին մէջ բարենորոգումներ կ'ընէ և Սասունի արհաւիրքներուն ու

մեասներուն դէմ չոր խօսքով հատուցում, փոխարինութիւն կը պահանջէ Համիտեան կառավարութիւնէն. արդէն Համիտեան կառավարութիւնը Եւրոպային «ինչալլահ, մաչալլահ» կ'ըսէ, և կը շարունակէ իր վայրագ հալածանքը և միանգամայն ամենայն բռնութեամբ անօթիներէ տուրք կը պահանջէ: Անդին, հայ և եւրոպացի բարեմիտ մարդասէրներ նպաստներ կը զրկեն Սասունի սովատանջ, մերկ և անտուն թշուառներուն, ասդին այդ առատ նպաստները կը ծառային ո՛չ թէ անօթիները կշտացնելու, այլ քիւրտերու յափշտակութեան ակործակը գրգռելու, զանոնք մղելու աւարառութեան: Ասդին փոխանակ հայերուն ինքնապաշտպանութեան միջոց և դէնք կրելու իրաւունք տալու, քիւրտերը զինաթափ ընելու, երազական առաջարկներ կ'ընեն մեր կարծեցեալ պաշտպանները՝ անդին, Համիտեան կառավարութիւնը իր հայ հպատակներուն պաշտպանութիւնը կը յանձնէ անոնց դարաւոր ցեղական թշնամի կառավարական դէնքերով սպառազինեալ, արիւնառուչտ և բարբարոս քիւրտերուն... Ասդին, հայերը օրհասական ճգնաժամ մը կ'անցընեն որուն ամէն մէկ ժամը նոր աղէտ մը կը դուժէ, ամէն մէկ վայրկեանը տագնապ մը, ասդին արիւն և արտասուք իրարու հետ կը մրցին, կրկնավտակ գետեր կը կազմեն... իսկ անդին, ո՛հ անդին, հայերը կը խօսին, կը վիճին, փառքի դափնիներ կը քաշքշեն իրարու ձեռքէ կամ սուտ, անարի ոգեւորութեամբ չորս անկիւններու մէջ թերեւս մեզ կը գովեն, մեր անուան վրայ ճառեր ու դամբանականներ կը կարդան, յոյսերով, երազներով, մազթանքներով, աղաչանքով ու խնդիրքով, ազօթքով ժամանակ կ'անցընէին ու մեզ կը թողուն նոյն վիճակին ու նոյն տառապանքներուն մէջ:

Մեր ցաւը, մեր յուսահատութիւնը ո՛չ թէ մեր կրած անհնարին տառապանքներուն համար է, այլ մեր համալիւն եղբայրներուն անտարբերութեան և անգործութեան համար: Եթէ մեր կորուստը հայ ժողովուրդին փրկութեան ծառայէ, մենք երջանիկ ենք մեր կորուստին . . . :

Թո՛ղ Սասուն կործանի, թո՛ղ Մուշ փլատակաց տակ թաղուի, թո՛ղ մենք կորսուինք տունով ու տեղով. բայց թող հայ ժողովուրդին ամէն մէկ անհատը արժանաւոր ըլլայ Սասունցիներուն եղբայր կոչուելու. թո՛ղ հայոց ազգը ցնցուի, յուզուի, ոգեւորուի, ելեկտրանայ, Սասունի վրէժը լուծէ և ձեռք բերէ հայութեան ազատութիւնն ու անկախութիւնը, մեր արեան մինչեւ վերջին կաթիլը մենք կը նսւիրենք Հայաստանի ազատութեան և խաղաղութեան համար: Իսկ եթէ մեր արիւնը այդ կերպով չը ներշնչէ մեր հայ եղբայրները, յայնժամ մեր արեան, մեր բնաջինջ ըլլալուն պարտական պիտի մնամ ամբողջ հայութիւնը և այն ատեն մեր ինկած եղբայրներուն ոսկորները անէ՞ծք պիտի կարդան յանցաւոր հայութեան, և նահատակուած կոյսերու և կանանց օձախուիւ ուրուականները՝ իրենց ցասման և վրէժխընդրութեան ահեղ տեսիլքով՝ ընդոտա պիտի խռովեն այն հայերուն քունը, որ չը գիտցան այրաբար կռուիլ ժողովուրդային իրաւունքներուն համար, բայց որոնք գիտեն ննջել կանացաբար փետրալից կակուղիկ բարձրու վրայ . . . :

Մերօրայի քննիչները այս տեղէն չը մեկնած՝ արդէն հասած էր հոս անգլիական դեր հիւպատոսը: Պիթչիսի վիլայէթին մէջ մինչեւ հիմա երբեք հիւպատոսութիւն հաստատուած չէր. ընդհանրապէս Վանայ փոխ

հիւպատոսները (ռուսական և անգլիական) և երբեմն ալ Կարնոյ Անգլիական հիւպատոսը տարուէ տարի Բաղէշ և Մուշ քննական հարեւանցի պտոյտ մը ընելով կը բաւականանային և կը դառնային իրենց տեղերը: Բայց Սասնոյ դէպքերէն վերջ Մուշ ստացաւ այնպիսի քաղաքական կարեւորութիւն որ, Անգլիա փութաց իսկ ալ փոխ հիւպատոսութիւն մը հաստատել, իսկ Բաղէշ, որ կուսակալութեան կեդրոնն է, այդ մասին Մուշէն ետ մնաց:

Նորեկ հիւպատոսը Ձորոյ թաղը Փոթիկեաններու տունը կը բնակի, որուն պարտէզին մէջ զարկած է իր վրանը, ինն նստած՝ լռիկ ականատես է անցած դարձածին: Հայերէն ոչ ոք յայտնի կրնայ երթալ իր քով և տեսնուիլ հետը. գացողները կը բանտարկուին և մէկ քանի ոսկի տուգանք կամ կաշառք տալով կ'արձակուին: Հակառակ այս դժուարութեանց, տեղս ծագած ամբողջ գործերը մաս առ մաս կը հաղորդուին իրեն:

Վերջերս յիշեալ հիւպատոսը հրաման ուղեց կառավարութենէն մինչեւ Տալւորիկ երթալու (Քննիչները կելիեկուղանէն անդին չեն գացած) և տուներու շինութիւնն և այլն աչքէ անցունելու: Կառավարութիւնը կարգ մը դժուարութիւններ մէջ բերելով, դժկամակեցաւ. հիւպատոսը երկրորդ անգամ դիմում ըրաւ ըսելով որ անպատճառ պիտի երթայ և ոստիկան ուղեց, չը արուեցաւ և ինք ստիպուեցաւ առանձին երթալ մինչեւ Կէլիեկուղան, ուսկից կրկին Մուշ վերադարձաւ: Իսկ մէկ քանի օր տուաջ, անգամ մը ևս յայտնելով իր հաստատ միտքը մինչև Տալւորիկ երթալու, յաջողած է կառավարիչին հաճութիւնը ստանալ և ոստիկանով մեկնեցաւ Մուշէն: Կ'երևի թէ այս օրերս Տալւորիկ հասած

տագնապալից լուրերուն առթիւ տեղւոյն վրայ քննութիւններ կատարելու դիտմամբ է որ կ'երթայ :

Անցեալները տեղւոյս ժողովուրդին կողմէ գանգատագիր մը պատրաստուեցաւ որով կը քննադատուի երեք Պետութեանց առաջարկած բարենորոգման նախագիծը, որուն անբաւական և անգործադրելի ըլլալն յայտնի է. ատոր մէկ օրինակը տրուեցաւ Անգլ. դեր իւպատոսին, իսկ միւս օրինակն ալ ուղղակի ճամբով զբրկուեցաւ Ազգ. Պատրիարքարան : Մեր տեղեկագրին չափազանց երկարութեան պատճառաւ զանց, կ'ընենք անոր օրինակը ՚նո :

Մշոյ ժողովուրդը բերկրութեամբ լսեց Պատրիարքարանէն հասած հեռագրով թէ՛ ՚այ բանտարկեալները ներման արժանացած են. այս լուրին վրայ թէ՛և ուրախացանք, բայց յետոյ մտածելով որ թերեւս Համիտի կառավարութիւնը կ'ուզէ ասով մեզ քնսցնել, անվրասահութիւնը դարձեալ գրաւեց զմեզ : Բաղէչէն և Աքեայէն հասած հեռագիրները կ'աւետեն թէ այդ տեղերը բանտարկուած մեր հայրենակիցներն ալ ազատ արձակուած են : Գալով Մշոյ բանտի մէջ գտնուող բանտարկեալներուն, որոնք երեսունէ աւելի էին, ասոնցմէ միայն տասներեքը ազատուեցան, իսկ մնացածները՝ որոնք իբրև ո ճ ր ա գ ո թ ղ ա տ ա պ ա ր ա տ ա ծ կը նկատուին այժմ (թէ՛և քնաւ այնպիսի արարք ըրած չեն), տակաւին կը մնան բանտի մէջ : Բանտէ ելլողներուն մէջն է, ի միջի այլոց, Սարկաւադ Մովսէս Զիարէթցի և ընկերները : Մնացողներուն մէջն են Հնչակեան Մ ու ը ր ա տ ը ի ր ը ն կ ե ր ն ե ր ո Վ, ձ Ե ր ք ա կ ա լ ու ա ծ Տ ա լ ւ օ ր ի կ ց ի ն ե ր ր և Վ ար զ Ե ն ի ս ց ի ն ե ր ր . այս ամէնքը դեռ ծանր շրջութաներու բեռաւ տակ կը հեծնն : Վարդենիսցիները անոնք են, որ քանի մը տարի առաջ իրենց գիւղէն հարս

մը Մուշեղէն գիւղէն վերադարձնելու ժամանակ իրենց վրայ յարձակող Մառնիկցի քիւրտերէն, պաշտպանած էին այդ կնիան պատիւը և այդ առթիւ ծագած կուռյն մէջ քանի մը քիւրտ սպաննուած ըլլալով՝ կառավարութիւնը սրով ու թնդանօթներով յարձակած էր իրենց գիւղին վրայ և զիրենք ձերբակալած էր և յետոյ ալ խնդրոյն քաղաքական գոյն տալով, զանոնք դատապարտած էր. իսկ հիմա կառավարութիւնը, զանոնք չարձակելու համար ոճրագործ կը նկատէ. արդէն յայտնի է որ միւս յիշուած բանտարկեալներն ալ ամէնքը քաղաքական յանցաւորներ են և ո՛չ մին ոճրագործ: Ո՞վ է որ պիտի պաշտպանէ այդ իսկզբունս արդար իրաւունքը՝ իրատարակուած ներումէն օգտուելու:

Բանտէ ելողներու պատմածին նայելով՝ անցեալները Մշոյ բանտին մէջ բաւական ծանր կուիւ մը պատահեր է և բազմաթիւ բանտարկեալներ և քանի մը բանտապահներ վիճաւորուած են: Կուիւր տեղի ունեցեր է Ճիպրանցի և Հասնանցի ու Խուլթեցի քիւրտ բանտարկեալներու միջև. առաջինները կուռած են Խուլթեցիներու հետ (Մուսա պէյի արբանեակները) աղքատ ու խեղճ հայ բանտարկելոց իրաւունքը և բանտի օրէնքի անխախտ գործադրութիւնը պաշտպանելու համար. զի Խուլթեցիք՝ ներշնչուելով սոսիկաններէն և Մընէ չավուշէն՝ շատ անգամներ ուղեցին հայ բանտարկեալները չարչարելու կողմուտի՝ անոնց կեանքը լողորովին վտանգի ենթարկելով: Կ'ըսուի թէ քիւրտերուն այդ կուիւր շատ աղմկալի եղեր է. Հասնանցի և Ճիպրանցի քրդաց հետ միացեր են հայ բանտարկեալներն ալ, իսկ Խուլթեցոց օգնութեան հասեր են իրենց թեւազրիչք՝ բանտապահներն և սոսիկանները, բանտարկեալները. զէնք չունե-

նալով ձեռքերնին՝ փայտի կոճերով հարուածեր են գիւրար: Այս միջադէպէն ի վեր բանաին մէջ նոր խստութիւններ ձեռք առնուած են:

Քննիչներու հոս եղած ժամանակ յոյս կար որ գիւղերու տասանորդական տուրքը աճուրդի չը արուիր այս տարի, բայց այդ յոյսն ալ ի դերեւ ելաւ, 5—10 օրէ ի վեր սկսած են գիւղերու տասանորդը վաճառելըստ առաջնոյն. թուրքերը այս տեսնելով աւելի եւս սիրտ առած են ըսելով թէ՛ հայոց նպաստաւոր բան մը չկա որ գիւղերը դարձեալ մեզի կը ծախեն: Կը գուշակուի թէ միւլ թէ զի մնեան, այսպէս ի նորոյ քաջալերուած, ինչ շահատակութիւններ, ինչ կողոպուտներ պիտի ընեն քիչ ատենէն:

Մշեցի մսագործ Մ ա ճ ա ի ս Ա ՚ ՚ մ է տ ի որդի Մ է ՚ մ է տ անուն թուրքը՝ ասկից քանի մը օր առաջ Հ ա լ ա տ ո Ր ի կ գիւղացի վեց տարեկան մանչ և 8 տարեկան քոյրը խաբէութեամբ իր տունը շտացնելով, պարանով կը կապէ սիւնի, առաւօտէն մինչեւ իրիկուն. երբ խեղճ տղոց լալու ձայները դրացի Հայերէն լսուելով Առաջնորդաբանին լուր կը տրուի, անկէ ևս կառավարութեան և խեղճ տղաքները հազիւ հաղ կ'ազատուին, իսկ այդ վատութիւնը գործող Մէ՛մէտը միայն մէկ գիշեր կը բանտարկուի և հետեւեալ օրը կ'արձակուի:

Հարկահանութիւնը խիստ բռնութեամբ կը շարունակուի. տուրքերը շատ ծանր են, ժողովուրդը բոլորովին աղքատացած ու սնանկացած է, խստապահանջ հարկահանք ամէն կերպ բռնութիւններ, անիրաւութիւններ ու զեղծումներ գործելու և ժողովուրդը իբրև անհաւատարիմ, կեղեքելու առիթներ ձեռքէ չեն փախցըներ. ամէն օր բազմաթիւ կիներ և աղքատներ խմբովին Առաջնորդարան կը դիմեն և յուսահատական բու-

զոքներ կ'ընեն: Ի մասնաւորի այսպէս կը բողոքուի
 տեղւոյս ոստիկանութեան պաշտօնեաներէն հարիւրապետ
 Ռէչիտ էֆէնտիի դէմ: Հայատեցութեամբ և կաշառա-
 կերութեամբ անուանի այս վատը, այս օրերը Զրարէթ
 հայաբնակ գիւղը երթալով, գիւղացիները արտերէն հա-
 ւաքել կուտայ և հայնոյելով ու զանակոծելով, ի հաշիւ
 տուրքերուն չորս հազար զրուչ կը պահանջէ: Այլքատ-
 ները այդ գումարը մէկ անգամէն վճարելու իրենք զի-
 րենք անկարող և անհարին ցուցնելով՝ կը խնդրեն որ
 ժամանակ և միջոց տայ իրենց պատրաստելու. սակայն
 Ռէչիտ էֆէնտի անողոք կը մնայ և երեսունի չափ
 կթան կովեր և լուծքի հզներ հաւաքելով, կէօլ գիւ-
 ղացի Մէհմէտ, էլէ և Օղօ և Ապուլէյլ գիւ-
 ղացի Շիւքրի անուն քիւրտերուն կը վաճառէ խիտ
 պակաս գիներով, այն է քառասունական զրուչի, մինչ
 ամէն մէկ կովը կամ եզը հարիւր, հարիւր յիսուն, եր-
 կու հարիւրական զրուչ կ'արժէին: Հարկահաւաքութեան
 խստութիւնն այն աստիճանին է հասեր որ՝ շատ մը գիւ-
 ղացիներ ճարտաւտ մնացած գացեր, քիւրտերէն սալա-
 ֆօլ դրամ առեր բերի են, Պալտոյ չորս քիլէ ցօրենը
 որ հիմա 140-160 շրուչ է, 40 զրուչի, կօրեկը 25 զրուչի
 և կիկիլը 20 զրուչի հաշուով՝ վճարելի այս կայուկու-
 րին: Գարձեալ նոյն Ռէչիտ էֆէնտի և Մշոյ գաշտի ի-
 քինճի գօլ միւտիրին՝ որոնց ընթացքին դէմ շարունակ
 բողոքուած է վերջերս, տուրքի համար չարաչար ծեծեր
 են Աւրան գիւղի ծերունի Տ. Կարապետ քահանան և
 ուշակօրոյս վիճակի մէջ բանտարկեր են. բերնէն արիւն
 հոսելու չափ ծեծեր ու բանտարկեր են Կիրակոսի եղ-
 բայր Յօրութիւն անուն անձը: Աւրանցիք Մշոյ Առաջ-
 նորդարան գիմելով կը բողոքեն որ ոստիկանները ու-
 ըրիչ շատ մը գիւղացիներ և կնիկներ եւս ծեծեր ու ձիու

աղբ լեցուցեր են անոնց բերանը, թէ գիշերանց կը կտխնն հայ գիւղացոց տուները, կը ջարդեն անոնց կահ կարասիքն և անօթները ու սարսափա՛ար կ'ընեն տան բնակիչները, կրօնքի, խաչի, հաւատքի և պատարագի կը հայտոյեն և իրենց ու իրենց ձիոց կերակուրը, խտար, գարին և այլն ձրիաբար կ'առնեն խեղճ սովալլուկ գիւղացիներէն :

Կը լսենք թէ այսօր Ս. Առաքելոց վանքի վանահայր Տ. Յովհաննէս վարդապետէն գրութիւն մը հասած է առաջնորդարան, որ կը ծանուցանէ թէ վանքի շրջակայ գիւղերու (Մոկունք, Տէրքեւանք, Աւազ, Բերդակ, Հաւատօրիկ, Առուառիչ, Հա-Մառնիկ և Խասգրւղ) ժողովուրդը տուրքերու ծանրութենէն, հարկահանաց բռնութենէն ու զեղծումներէն վերջին ծայր աղքատութեան ու չքաւորութեան մէջ ինկած, միւս կողմէ ալ կենաց, ընչից, պատուոյ և կրօնքի անապահովութենէն ու բռնաբարութիւններէն իսպառ յուսահատած՝ որոշած են թողուլ իրենց տուները, կալուածները, և մինչև իսկ ի հունձքս հասած արտերու բերքերը, ու գալթել այլուր. և կ'աւելցնէ ըսել թէ՛ ժողովուրդը այս որոշումէն ետ կեցնելու շատ աշխատելէ վերջ՝ տեսնելով որ ա՛լ յուսահատ և ճարահատ ժողովուրդը իրեն լսելու տրամադիր չէ և թէ ժողովուրդի գաղթելէն վերջ իրեն եւս անհարին է մնալ վանքը, չէն պահել, ինքն եւս որոշած է ժողովուրդին հետեւիլ. ուստի կը խնդրէ գրել Պատրիարք իօր և հրահանգ խնդրել թէ որո՛ւ պէտք է յանձնել վանքը — մեր անմահ թարգմանիչներուն այդ փառաւոր պատմական յիշատակավայրը — և վանքին գոյքերը : Առաջնորդարանը և ժողովականները շուարած իրար անցած են այս ամենածանր լուրին վրայ և պիտի ջանան այդ կորստարբեր գաղթականութեան առաջքը առնել, բայց դժուար թէ յաջողին :

Իսկ գալով պանդխտութեան — գաղթականութեան այդ խուլ, աչքի չը դարնող կերպին որ սակայն թերեւս անկէ աւելի սպառիչ և կորստաբեր է երկրին ազգաբնակչութեան համար — այդ արդէն մեր երկրին մընայուն և շարունակական աղէտներէն մին է. պանդխտութեան հոսանքը երթալով աւելի կը ստուարանայ, պանդխտողք իննսուն առ հարիւր համամատութեամբ չեն վերադառնար, հազարաւոր, քիւրաւոր արամբի կիներ կ'այրիանան, անտէր անպաշտպան կը մնան, ոչ թէ մահուան հարուածով՝ այլ պանդխտութեան, որդիծընութիւնը, սերունդը հետզհետէ աւելի և աւելի կը նըլազի այս կերպով: Վայրկիան մը խորհելով կրնայ ամէն մարդ ըմբռնել թէ այս երկրին ժողովուրդին պանդխտութեան երեսէն կրած կորուստը՝ մարգասպանութիւններէ և նոյն իսկ Սասնոյ կոտորածին նման կոտորածներէ յառաջ եկած կորուստէն անհամեմատ մեծ է: Պանդխտութիւնը, Հերովդէսի նման, մեր սերունդին վրայ կը կատարէ ամէն տարի Բեթլեհէմի մանկանց կոտորածը. սրով չը կոտորեր, այլ հազարներու ծնունդը կը խափանէ. Սասնոյ կոտորածը իր աղիողորմ մանրամասնութեամբ կը յուզէ հայութիւնը և քաղաքակիրթ աշխարհը. պանդխտութեան լռիկ մնջիկ, թաքուն կերպով կատարած կոտորածին վրայ ո՛վ կը մտածէ. բայց անտարակոյս այս կոտորածը անհամեմատ մեծ է և պարբերաբար կը կրկնուի տարուէ տարի:

Հոս կանգ կ'առնենք մեր հաղորդած դէպքերը, իրականութիւնները հեռի են մեր ցաւերուն ամբողջութիւնը լինելէ. այլ սակայն, այս սոսկալի տեղեկագիրը հազիւ թէ մանրանկարն է մեր երկրին ամենասոսկալի, դժոխըմբեր կացութեան. և ի՞նչ հարկ աւելի երկարել, ի՞նչ հարկ դէպքերու աւելի երկայն շարք մը արձանա-

գրել, նաև ի՛նչ հարկ աւելի ծանրանալ ընթերցողներու խղճին վրայ և աւելի կոչում ընել անոնց զգացմանց: Հասկացողին այսչափը բաւական է, իսկ չը հասկցողին այսչափն իսկ խիստ ձանձրալի:

Պ.

ԳէՊԻ ԵԼԼՏԸԶի ընթերցողները պէտք է յիշեն թէ Իզմիրլեան Սրբազան հրաւիրած էր Հնչակեան կուսակցութեան Մասնաճիւղի վարիչներէն Արփիար Արփիարեանը, մտերմական տեսակցութեան մը մէջ համոզելու համար զինքը, որ դաշրեցնել տար յեղափոխական ո՛ր և է ցոյց, ինչպէս յանձնարարած էին, ո՛չ միայն բրիտանական մեծ զեապանը Սըր Ֆիլիբ Քըրրի, ո՛չ միայն միւս մեծ աէրութեանց զեապանական քարտուղարները, այլ նոյնիսկ Ռատիկանութեան նախարար Նազըմ բաշան:

Գաղտնի տեսակցութիւնը տեւած էր գրեթէ ամբողջ գիշերը, և հազիւ առտուան դէմ կրցած էր Արփիարեան հրաժեշտ տալ Իզմիրլեան Սրբազանին:

Արփիար Արփիարեան, ի բնէ խաղաղասէր մարդ, իր համամտութիւնը յայտնած էր Իզմիրլեան Սրբազանի հանդարտութեան յորդորներուն, սակայն, կը զգուշանար իր տաքզլուխ ընկերներէն, որոնք, ժամանակէ մը ի վեր սկսած էին կասկածով դիտել իր մէն մի քայլը, և չէր համարձակած պատրիարքին հաստատ իրատում մը տալ:

Ամբողջ ցերեկը մինչեւ իրիկուն առի վրայ, կարգով հանդիպած էր իր Հնչակեան ընկերակիցներուն, խնդրելու համար որ նոյն գիշերը գաղտնի նիստ մը

գումարէին, վերջնական կարգադրութեան մը մասին խիստ կարեւոր ու կենսական խորհրդակցութիւններ ընելու համար:

Մինարէներուն գազաթէն միւլէզդիններու մելամաղձոտ երաժշտութիւնը կը լսուէր, իրիկուան ազօթքի հրաւիրելով իսլամի հաւատացեալ ժողովուրդը, երբ Բերայի ծանօթ փողոցի անկիւնը, փայտաշէն տնակի մը մէջ հաւաքուած, գաղտնի խորհրդակցութեան կը մըտնէին Պոլսոյ Հնչակեան մասնաճիւղի վարիչները:

Ներկայ էին Արփիար Արփիարեան, Միւրան Տամատեան, Օհանջանեան, և ուրիշ յեղափոխական յայտնի դէմքեր:

Սննեակը պարզ ու փոքր, մէջտեղը հին ուղղանկիւնի սեղան մը դրուած առանց ծածկոցի շուրջը շարուած կը նստէին բոլոր ժողովականները, որոնց դէմքը կը լուսաւորուէր պատին անկիւնը դրուած լամպի մը մարմրուն լոյսովը:

Սեղանին վրայ կը տեսնուէին ցանուցիւր թերթերու դէզեր, ամէնքն ալ եւրոպական վերջին թղթաբերով հասած: Տամատեան այդ դէզերուն մէջէն քանի մը թերթեր կը դատէր ու կը պատրաստուէր իր ընկերներուն կարդալու շահեկան յօդուած մը, հայկական վերջին գործերուն վրայ: Գտած էր փնտռուած յօդուածը, Տէյլի Նիուս մէկ թղթակցութիւնը: Ժողովականները կը կախուէին ամէնքն ալ Տամատեանի շրթունքէն, իսկ այս վերջինը, հաւատացեալի մը Չերմեռանդութեամբը փարած յօդուածին, բարձր ձայնով կը կարդար: Կ. Պոլսէն թղթակցութիւն մըն էր, որուն մէջ, շատ մը կարեւոր տեղեկութիւններէ զատ, կը յիշուէր թէ՛ Հայաստանի այլ և այլ գաւառներէն մայրաքաղաք եկած հայ յեղափոխականներ, Պոլսոյ իրենց գաղափարի ընկերա-

կիցներուն հետ միացած, մտադիր են մօտերս կազմակերպել անկ ցոյց մը Երլարզի դէմ, ստիպելու համար Սուլթանը ժամ առաջ ստորագրելու մայիսեան ծրագիրը, և թէ՛ Հնչակեան Կուսակցութիւնը սկսած է այդ մտօք մեծ պատրաստութիւններ ընել, ևն, :

Տամատեան կանգ առաւ հոս, թերթը վար դրաւ և ընկերներուն դառնալով.

— Ընկերներ, ըսաւ, գիտէ՞ք ինչ ըսել կ'ուզէ Անդրլիոյ ազատական այս մեծ թերթը,

— Ի՞նչ ըսել կ'ուզէ, հարցուց Օ՛անջանեան, մինչդեռ միւսները լուռ, կը սպասէին որ Տամատեան աւարտէր իր խօսքը.

— Ըսել կ'ուզէ թէ, պատասխանեց Տամատեան, աջ ձեռքը թերթին վրայ, և ձախ ձեռքի ցուցամատը սեւեռած՝ կէտի մը վրայ, ըսել կ'ուզէ թէ՛ Հնչակեան կուսակցութիւնը պէ՛տք է ընէ այդ ցոյցը, ստիպելու համար Երլարզի Բանակալը՝ ժամ առաջ ստորագրելու և իրատեով հրատարակելու հայկական բարենորոգումներու մայիսեան ծրագիրը, կը հասկնա՞ք, ընկերներ, վայրկեանը հոգեբանական է, հոգեբանական, և մեր հայրենի բին ճակատագիրը կախուած է մեր այս գիշերւան որոշումէն. . . :

— Ի՞նչ կ'ըսէք, ընկերներ, ընդմիջեց Արփիարեան, ընկեր Տամատեանի յայտնած կարծիքներուն համար, դուք ի՞նչ կը խորհիք :

Ժողովականները լուռ էին, ամէնքն ալ համակարծիք կը թուէին ընկեր Տամատեանի, որ, իրենցմէ աւելի զարգացած, աւելի փորձառու և մանաւանդ, տառապանքներու և տանջանքներու բովէն անցած, բնականաբար կը յարգուէր ամէնէ՛ն ալ և ամէնուն համակրանքը կը վայելէր : Միայն Արփիարեան, Իզմիրլեան

Սրբազանի համոզիչ յորդորներուն տպաւորութեան տակ, չպիտի ուզէր Տէյլի Նիուսի այդ յօդուածը մեկնաբանել Տամատեանի ձեռով, որովհետեւ, կը զգար ու կը հախատեսէր յեղափոխական ցոյցի մը ծանր ու վտանգաւոր շեղանկանքները: Ուստի, թէև քիչ մը վարանոտ, փորձեց պաշտպանել իր տեսակէտները:

— Ընկերներ՛ր, ըսաւ, ընկեր Տամատեանի կարդացած յօդուածին եւ չեմ տար ա՛յնքան մեծ կարեւորութիւն, որքան պաշտօնական յայտարարութիւններու, որոնք երէկ իսկ մեր Պատրիարքին հաղորդուեցան, գրեթէ միեւնոյն ժամանակ:

— Ի՛նչպէս, ի՛նչպէս ըսիք, ընդմիջեցին ընկերները, շշնջելով ամէն կողմէ...

— Համբերեցէ՛ք, ընկերներ՛ր, շարունակեց Արփիարեան ոգեւորուած և բոլորովին վստահ՝ համոզելու, պիտի կարգով և մանրամասնօրէն պատմեմ Իզմիրեան Պատրիարքին և իմ միջեւ տեղի ունեցած անսակցութիւնը, կը խնդրեմ միայն, ուշադրութեամբ շեղանկեցէ՛ք առանց ընդմիջումներու:

— Սակայն, յարեց Տամատեան, մենք այս գիշեր ինչո՞ւ հաւաքուած ենք հոս, Իզմիրեան Պատրիարքի խօսքն՝ ըր մտիկ ընելու, թէ կեդրոնէն հասած իրա՛նանքներու գործադրութեան եղանակին ու միջոցներուն վրայ մեր վերջնական վճիռը տալու.

— Ներեցէ՛ք, ընկեր՛ր Մի՛րան, դիտել տուաւ Արփիարեան, նպատակը նոյն է, մի՛ կարծէք թէ ես պիտի շեղիմ բուն խնդիրէն, այս գիշեր պէտք է ամէ՛ն բան վերջանայ, սակայն, վճռական քայլէն առաջ, օգտակար չէ՞ք գտնեիր անգամ մը տեղեկանալ կացութեան. չպիտի ուզէիք գիտնալ թէ՛ Իզմիրեան Պատրիարքը զիս ինչո՞ւ իրաւիրած է, և թէ ի՛նչ եղաւ մեր գիշերա-

յին ա՛յնքան երկար տեւող տեսակցութեան ար-
դիւնքը :

Տամատեան, դէմքի ծամածռուով ու չարածճի
քովիծաղով մը ,

— Այդքան կարեւոր էր արդիւնքը... :

— Կարեւոր թէ անկարեւոր, շարունակեց Ար-
փիարեան, ինքզինքս պարտաւոր կը զգամ յայտնելու
դայն, քանի որ անձնական, անհատական հանգամանք
մը չունէր մեր տեսակցութիւնը... :

— Թո՛ղ պատմէ ընկեր Արփիար, թո՛ղ պատմէ
տեսնենք, ի՛նչ արդիւնք ունեցեր է պատրիարքական
տեսակցութիւնը, փափագ յայտնուեցաւ քանի մը ժո-
ղովականներու կողմէ :

Եւ Արփիարեան սկսաւ պատմել թէ ի՛նչպէս Իզմիրլեան
Սրբազան հաղորդած էր իրեն մեծ տէրութեանց ներկա-
յացուցիչներուն, մասնաւորապէս Սըր Ֆիլիբ Քըրրիի այ-
ցելութեան բոլոր պարագաները, ծանրանալով մանա-
ւանդ մեծ դեսպանին այն յայտարարութեան վրայ թէ՛
Հայերը՝ պէտք է ժամանակ մըն ալ սպասեն համբերու-
թեամբ և զգուշանան ո՛ր և է յեղափոխական ցոյցէ,
չը վիժեցնելու համար եւրոպական մեծ տէրութեանց հա-
ւաքական ձեռնարկը, Հայկական խնդիրին լուծումը յա-
ջողապէս գլուխ հանելու նպատակով... պատմեց նաև
թէ՛ Իզմիրլեան Սրբազան սրբան կը թախանձէր ու կը
պաղատէր որ Հնչակեան կուսակցութեան վարիչները,
գոնէ ատեն մըն ալ հանդարտ կենան և թոյլ տան որ
երեք պաշտպան մեծ տէրութեանց դեսպանները—անգ-
լիական, Ֆրանսական և ռուսական— իրենց դա՛լիճնե-
րէն հաղորդուած նոր հրահանգներու համաձայն, խըս-
տիւ պահանջեն Սուլթանէն և ձեռք բերեն մայիսեան

ծրագրին ամբողջական ու կէտ առ կէտ գործադրութեան իրատէն, ևն. :

— Սո՛ւտ ևն, սո՛ւտ, սո՛ւտ կը խօսին մեծ դեպանները, գոռաց Տամատեան, ա՛յսքան յուսախաբութիւններէ, ա՛յսքան կեղծիքներէ վերջ, կը ցաւիմ որ մեր մէջ տակաւին կը գտնուին միամիտներ, որոնք դեռ հաւատ կ'ընծայեն այդ կարգի դիւանագիտական խաղերու . . . :

— Եւրոպական դիւանագիտութենէ խաբուելու միամտութիւնը թո՛ղ ունենանք, առարկեց Արփիարեան, բաւական է թէ՛ եւրոպական մամուլին—ըլլա՛յ նոյնիսկ ազատական—վտանգաւոր և թերեւս դիտումնաւոր թեւադրանքներէն չը տարուինք, ընկե՛ր Միհրան : Անգլիոյ ազատական թերթի մը մէկ յօդուածը հիմ բռնել, այն ալ թիւր ու սխալ մեկնելով, ելլել ցոյց մը կազմակերպել, կ'աղաչե՛մ, ընկերնե՛ր, ըսէ՛ք, յիմարութիւն չէ, ի՞նչ է . . . : Ես ազգային ինքնապանութիւն պիտի որակեմ այսպիսի ցոյց մը, քանի որ համոզուած եմ թէ՛ անով պիտի գլխիվար շրջի, պիտի փլչի Հայկական Բարենորոգումներու շէնքը : Ընկերնե՛ր, եկէ՛ք ինծի մտիկ ըրէք, անսացէ՛ք խորհուրդիս, մինակ ես չե՛մ որ այդպէս կը խորհիմ, այսօր բովանդակ Եւրոպան, բարեկամ տէրութիւններու ներկայացուցիչնե՛րը կը յանձնարարեն մեր ազգին, մտքի հանդարտութեամբ սպասել բանակցութեանց ելքին :

— Մինչեւ ե՛րբ, մինչեւ երբ, մուտաց Օհանջանեան, մինչեւ ե՛րբ պիտի սպասենք. խաբեբայ Եւրոպայի խոստումները չե՛ն հատնիր, այնքան առատ են որ մենք, Հնչակեան հերոսներ, չպէտք է յոյս դնենք անոնց վրայ. մեր իրաւունքը մեր բազուկներով պէտք է պաշտպանենք և պէտք է ցոյց տանք աշխարհի թէ՛

հայ ազգը կենդանի է, թէ Հնչակեան դրօշակին տակ համախմբուած հազարաւոր անձնուրաց ուխտեալ զինուորներ պատրաստ են իրենց արիւնը թափելու Հայրենիքին ազատութեանը համար... :

Ամէն բերաններէ թռան .

— Կեցցէ՛ , կեցցէ՛ յեղափոխութիւնը .

— Կեցցէ՛ Հնչակեան կուսակցութիւնը .

— Կեցցէ՛ , ազատագրուած ժողով՝ ո՛ւրբը... :

Խօլ ծափերու , կատաղի գոռուգոյի յորձանքին մէջ խեղդուեցաւ Արփիարի տկար ձայնը : Հնչակեան տրիբունը , կամաց կամաց կը համոզուէր թէ՛ կորսուած դատի մը պաշտպանութիւնը ստոնծնած էր ինք և թէ՛ մտքերու այս յուզումին ու գրգռումին մէջ՝ իրեն համար անկարելի պիտի ըլլար համոզել ընկերները . հետեւաբար տեղի տուաւ :

Տամատեան յաղթանակը տարած էր Օհանջանեանի ուսումնաշունչ շեփորովը :

Փայտաշէն անակին ուրբաթ գիշերուան գազանի ժողովը տուաւ իր վերջնական վճիռը :

Այնչա՛մի օրերէ ի վեր զբուցուած Յոյցը տեղի պիտի ունենար սեպտեմբեր 18ին , երկուշաբթի , Խաչվերացի Մեռելոց օրը :

Ուստի շուտով խմբագրուեցաւ հետեւեալ յայտարարութիւնը , քառասուն օրինակ հայերէն , տասը ֆրանսերէն և տասը՝ թուրքերէն :

Այս յայտարարութեան օրինակները մայրաքաղաքի բոլոր հրապարակները , պատերու վրայ պիտի փակցուէր Յոյցին օրը :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ տեղացի և ասիական ամէն նահանգէ պանդուխտ հայերս՝ միաձայն հաւանութեամբ կազմակերպեցինք այս ցոյցը, հանդիսաւոր կերպով բողոքելու համար մեր երկրին մէջ տիրող արդի կացութեան դէմ՝ և Բ. Գրան ու Եւրոպային ներկայացնելու համար հայ ժողովուրդին պահանջումները:

Մենք կ'ուզենք այսօր անգամ մը եւս մեր կացութեան վրայ հրաւիրելով քաղաքակիրթ աշխարհին ու շաղրութիւնը, յայտարարել թէ՛ անխախտելի որոշում տուած ենք այլ եւս համակերպութեամբ չի տանիլ արդի ժահարեր և անիրաւ վիճակներս:

Մենե՛ք ԿԸ ԲՈՂՈՒՔԵՆԵ՛ք այն սիստէմաթիկ հալածանքին դէմ, որուն ենթակայ եղած է մեր ժողովուրդը, նա՛ մանաւանդ այս վերջին քանի մը տարիներս. հալածանք՝ որ Բ. Գրան կողմէ ընդունուած է իբր կառավարական սկզբունք, միակ նպատակ ունենալով բնաջինջ ընել հայերը իրենց բնիկ երկրէն, այս իրողութիւնը լիուրի կը հաստատեն մէկ կողմէն հիւպատոսներու տեղեկագիրները ու եւրոպական թերթերու թղթակցութիւնները և միւս կողմէն՝ պաշտօնական տեղեկագիրները և շարունակական դանդառները որոնք կը տեղան ազգային Պատրիարքարանը:

Մենե՛ք ԿԸ ԲՈՂՈՒՔԵՆԵ՛ք այն պաշարման վիճակին դէմ, որուն մասնուած է մեր բնիկ երկիրը մասնաւորապէս քանի մը տարիէ ի վեր, պաշարման վիճակ՝ որ աղբիւրն է վարչութեան մէջ տիրող բոլոր կամայակաւութեան և որ գլխաւոր պատճառն է մեր ժողովրդին աղքատացման:

ՄԵՆՔ ԿԸ ԲՈՂՈՒՔԵՆՔ քաղաքական անթիւ ձեր-
բակալութեանց դէմ, բանաարկեայներուն վրայ գոր-
ծադրուած բարբարոսական և հակամարդկային տան-
ջանքներուն դէմ, քիւրտերու վայրագ խժգժութեանց
դէմ, ինչպէս նաև պաշտօնեաներուն և հարկահաննե-
րուն անիրաւ կեղքումներուն դէմ:

ՄԵՆՔ ԿԸ ԲՈՂՈՒՔԵՆՔ Սասունի կոտորածին դէմ,
յորում, ինչպէս հաստատուած իրողութիւն մըն է այս
օր, մեր հազարաւոյ եղբայրներն ու քոյրերը, որոնք
համարձակած էին խնդրել ապահովական երաշխաւո-
րութիւն իրենց կեանքին, ինչքին, իրենց պատւոյն
պաշտպանութեանը և իրենց կրօնքին ազատ պաշտա-
մունքին համար, նկատուեցան իբր ապստամբներ, ուս-
տի և զինուորներէն ջարդուեցան և իրենց արիւնին մէջ
լողացին:

ՄԵՆՔ ԿԸ ԲՈՂՈՒՔԵՆՔ նաև քիւրտերուն և թիւրք
կանոնաւոր զօրքերուն կողմէ ամէն օր գործադրուած
յարձակումներուն դէմ, յարձակում՝ որուն վերանորո-
գումը արգիլելու համար՝ մինչև այսօր դեռ մեզի ո և է
երաշխաւորութիւն չէ տրուած, հակառակ Սասունի դէպ-
քերէն յետոյ տրուած բոլոր խոստումներուն:

Մեր ժողովուրդը անհրաժեշտ պէտք ունի անդոր-
րութեան և ապահովութեան, որպէսզի կարենայ, ինչ-
պէս իր արդար իրաւունքն է, համեմատաբար բարեկե-
ցութիւն ձեռք բերել ու հասնիլ այն յառաջադիմու-
թեան և քաղաքակրթութեան, դէպի ուր կը դիմեն ու-
րիշ ժողովուրդներ:

Յանուն մեր այդ արդար ձգտումներուն—

ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ օրինական իրաւունքներ
որոնք բացարձակօրէն մեզի երաշխաւորեն մեր կեանքին
և ինչքին բացարձակ ապահովութիւն, մեր պատւոյն
պահպանութիւն և յարգանք:

Մենք կ'ը ՊԱՀԱՆՁԵՆՔ ազատութիւն իւղճի, խօսքի, մամուլի և հանրային գումարումներու, օրէնքին առջեւ ամենուն բացարձակ հաւասարութիւն :

Մենք կ'ը ՊԱՀԱՆՁԵՆՔ, որ ո և է ձերբակալութիւն անմիջապէս իր արդարացումը ունենայ դատարաններու առջեւ, որով կարելի է նախնական բանտարկութիւնը և կամայական ձերբակալութիւնները արգելել : Որ մեզի արտօնութիւն տրուի զէնք կրել քանի որ անկարելիութիւն կայ քիւրսերը զինաթափ ընելու :

Մենք կ'ը ՊԱՀԱՆՁԵՆՔ, որ վարչական բաժանումներուն թիւը զեղջուրի հայկական վեց նահանգներուն մէջ որոնք են. Էրզրում, Պիթլիս, Վան, Սվսոյ, Մամուրէթ-իւլ-Ազիզ և Տիարպէքեր : Այս զեղջումը պէտք է կատարուի այնպէս, որ վերոյիշեալ կուսակալութեանց ժողովուրդները ազգագրական սահմանագծերով որոշուին :

Մենք կ'ը ՊԱՀԱՆՁԵՆՔ այդ վեց նահանգներու համար ընդհանուր կառավարիչի մը հաստատումը, ամէն պարագայի մէջ այդ պաշտօնը պիտի յանձնուի եւրոպացիի մը որ պիտի նշանակուի Պետութիւններէն : Այդ պաշտօնեան պիտի կառավարէ իր վարչութեան յանձնուած երկիրը աջակցութեամբ տեղական ժողովի մը որուն անդամները պիտի ընտրուին ընդհանուր քուէարթեամբ առանց խտրութեան ցեղի, կրօնքի և դասակարգի :

Մենք կ'ը ՊԱՀԱՆՁԵՆՔ, որ Ատանայի և Հալէպի կուսակալութեանց մէջ ալ, ուր հայերը կուրեւոր թիւ մը կը կազմեն, մտցուին մասնաւոր բարենորոգումներ որոնք համապատասխան են այս ներկայ յայտարարութեանս իմաստին և ընդհանուր ոգիին :

ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆՔ ոստիկանական և ժանտարմայի դրուժեան մէջ բարեկարգութիւններ, այնպիսի միջոցներ որոնք բաւական ըլլան անհնարին ընելու Սասունի դէպքերուն կրկնութիւնը. նոյնպէս կը պահանջենք որ բանակը չի միջամտէ հանրային բարեկարգութիւնը պահպանելու գործին:

ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆՔ տնտեսական բարենորոգումներ տեղական դէպքերուն համաձայն, ինչպէս են, հարկերու թեթեւացում, տարապարհակ աշխատութեանց, քիւրտ պէյերու և աղաներու համար ձրի աշխատութեանց ջնջում, տասանորդի վարձակալութեան ջնջում, ինչպէս նաև ջնջում քիւրտերու դրած ապօրէն հարկերուն և այլն. ամբողջ երկրին համար միաձեւ տուրքերու միատեսակ դրութիւն. երկրագործութիւնը և արդիւնագործութիւնը վերականգնանելու յատուկ բարենորոգումներ, վերջ տրուի այն դրութեան որով հայոց հողերը բռնութեամբ անոնց ձեռքէն յափշտակելով քիւրտերուն կը բաշխուի, ինչ որ տեղի կ'ունենայ նա մանաւանդ լեռնային տեղեր. ընդհակառակը կ'ուզենք որ հող տրուի չունեցող գիւղացիներուն, և այլն:

ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆՔ, որ թափառաշրջիկ քիւրտերուն արգիլուի իրենց պարբերական լեռնագնացութիւնները և թէ նստողական ըլլալով պարտաւորուին հնազանդիլ օրէնքներուն և կնխարկուին երկրին միւս բոլոր բնակիչներուն վճարած տուրքերուն: Պէտք է ջնջուի ցեղապետական (աշիրէթ) դրութիւնը: Ստեղծուած անկանոն հեծելազօրքերը (համիտիէ) պէտք է արձակուին և քիւրտերը պարտաւորուին զօրք տալ օսմանեան միւս հպատակներուն նման:

ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆՔ, որ երկրին հասոյթները գլխաւորաբար ու նախ և առաջ յատկացուի տեղական պէտքերուն:

ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆՔ ՎԵՐՋԱԿԷՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌՈՒԱԳՈՒՄ, առանց ու և է բացառութեան, բոլոր հայ քաղաքական բանտարկեալներուն, աքսորեալներուն և փախստականներուն համար:

*
* *

Հաստատ համոզուած ենք որ վերոյիշեալ պահանջներուն իրականացումը անհրաժեշտ է թէ հայերուն ընդհանուր ապահովութեանն ու բարեկեցութեանը համար և թէ այն տարբեր ժողովուրդներուն, որոնք մեր երկիրը կը բնակին և որոնց հետ մեր շահերը միեւնոյնն են:

Հաստատ համոզուած ենք ընդհակառակն որ իրացնելոյ անկանոն վիճակին շարունակութիւնը անխուսափելի կերպով ամենամեծ չարիքներու պատճառ պիտի ըլլայ թէ մեր երկրի, թէ մեր դժբաղդ ժողովրդի և թէ ամբողջ Օսմանեան Կայսրութեան համար:

Սասունի ըմբոստեցուցիչ դէպքերէն ի վեր ամբողջ տարի մը անցաւ, այս ժամանակամիջոցին մէջ համբերութեամբ սպասեցինք որ շուտափոյթ և արգիւնաւոր լուծում մը պիտի լինի դաշնագիրը ստորագրող Պետութեանց կողմէն, այս սպասումը լաւագոյն ապացոյցն է մեր խաղաղասիրական դիտումներուն:

Սակայն հայկական ձմեռը՝ քաղաքատնտեսական շատ մը խտութեանց և դժուարութեանց հետ միատեղ, կը մօտենայ, այնպէս որ կորովալիբ և անմիջական գործողութեան մը հարկը անհրաժեշտ է:

Այս պատճառաւ որոշեցինք վճռական և ապացուցական կերպով յիշեցնել Սուլթանին և Պետութեանց հայկական խնդրոյն նպաստաւոր և անմիջական լուծումի մը անհրաժեշտ հարկը:

Ուստի, ընդհանուր կերպով մը անոնց կը ներկայացնենք մեր օրինաւոր պահանջումներն բոքենորոգումներու, որոնց գործադրութիւնը միայն կրնայ երաշխաւորել խաղաղութիւնը և ապահովութիւնը մեր երկրին, որ այնքան երկար ատենէ ի վեր մատնուած է անիրաւ հալածանքի և արիւնալից խռովութեանց :

1893 Սեպտեմբեր 18, Կ. Պոլիս

Այս բուն սպառնական ու ապստամբութեան շունչով ուռուցիկ յայտարարութիւնը խմբագրուելէ վերջ, կը մնար որոշել Յոյցին սկզբնաւորութեան ժամը, տեղը, միջոցները, նաև գլխաւոր պարագաները :

Արփիար ա՛լ չէր խօսեր, շատ մտածկոտ կը թուէր, ա՛յնքան ընկճուած էր խուժող կիրքերու կոհակներուն տակ, կը զգար իր միայնութիւնը՝ սպառնացող թեւին դէմ, և իր որակին աննշան ու անարժէք ըլլալը՝ Սասունէն նոր վերադարձած Տամատեանի պէս հերոսի մը քով. անդին Օհանջանեան մը կար, «Որ մեճ և երոս եճ»ը, որ իր յամառ ու կոյր տգիտութիւնը կը ցցէր ամէն տրամաբանութեան դէմ, պարզ զինուոր, քաղաքագէտի, դիւանագէտի հովեր կ'առնէր ամէն անգամ որ պէտքը զգար անխոհեմ գործողութեան մը ծրագիրը քշելու առաջ : Իսկ միւս ընկերները, Ս. Գործին նուիրուած անկեղծ հաւատացեալներ, իբրև պատգամ կ'ընդունէին Տամատեանի խօսքը : Այսպէս, Արփիար Արփիարեան, հետզհետէ կը համոզուէր թէ՛ իր մուտքը Յեղափոխութեան Տաճարին մէջ՝ վտանգաւոր շեղում մըն էր իր խաղաղասէր կեանքի շաւիղէն. Սկեպտիկ, երբ առանձին կը մնար ինք իր ներքին մարդուն հետ, կը հեգէր ինքզինք, կը ծաղրէր իր նոր ասպարէզը, բոլորովին օտար և անհամապատասխան՝ իր խառնուած-

քին : Ախ , երանի՛ թէ ազգային քրօնիկներու արձակա-
գիրը մնայի միշտ , կ'ըսէր ինքնիրեն :

Նոյն գիշերուան գազանի նիստը փակուեցաւ :

Ժողովականները , ամէնքն ալ զուարթ , մէկիկ մէ-
կիկ սկսան մեկնիլ : Սաշվերացի երկուշարթին , Մեռե-
լոցի օ՛րը , դաւադիր յեղափոխականները Յոյցին գլու-
խը պիտի գտնուէին :

Արփիար մնաց մինակ , փայտաշէն տնակին մէջ , որ
պարպուած էր գիշերուան ՚իւրերէն : Հնչակեան պետը
դրդուժ էր , չէր կրնար երբէք հաշտուիլ կատարուած
իրողութեան հետ : Կը մտածեր , յաջորդ օրը առտուն
կանուխ երթալ գտնել Իզմիրլեան Պատրիարքը , և անոր
հազորդել գիշերաժողովին սրօշումը , յուսալով թէ՛ տա-
կաւին ուշ չէր ժամանակը , վերջին ճիգ մըն ալ փոր-
ձելու , տարհամոզելու համար իր կրակոտ ընկերակից-
ները , գոնէ շարաթ մըն ալ յետաձգել տալու համար
Յոյցը :

Ե.

Բ. Դուռը կը դրդար կառքերէն , ուրկէ յաջորգա-
բար դուրս կ'ելլէին ու դէպի կառավարական պալատը
կը դիմէին մեծ զեսպանները , որոնք նոյն օրը , Սեպտ.
16ի շարաթ օրը , ստացած էին Հնչակեան Կուսակցու-
թեան Զեկոյցը , որ ահաւասիկ .

«Վսեմառո՛ւք Տեր ,

Կ. Պոլսոյ հայ ժողովուրդը ցոյց մը ընել , պահան-
ջելու համար որ բարեօրոգումները մեցուին անյապաղ

իրենց երկրին մեջ: Այս Յոյցը զուս իսաղաղասիրական հանգամանք մը պիտի ունենայ, հետեւաբար ուսիկանուրբեան կամ զինուորական իշխանութեան կողմէ ո՛ր եւ է միջամտութիւն՝ զայն արգիլելու համար, կրնայ ունենայ ծանրակշիռ հետեւանցներ, որոնց պատասխանատուութիւնը կը ձգենք այժմէն օսմանեան կառավարութեան վրայ:

Այս զեկոյցը պարունակող Քրանսերէն նամակները Վոսփօր զրկուած էին առտուն կանուխ, մեծ դեսպաններուն յանձնուելու համար իրենց ամարանոցին մէջ: Նոյնպէս, Թուրքերէնի Թարգմանուած, քանի մը փոփոխութիւններով և աւելի ծանր լեզուով, Համլիտի կառավարութեան զրկուելու համար, երկու օրինակներ գրուած էին. մէկը՝ ընդհանուր դատախազ Լէպիպ էֆէնտիի, միւսը՝ Եղեռնադատ Ատեանի նախագահ Էտիպ էֆէնտիի: Այս երկու բարձր պաշտօնեաներուն միջոցաւ դիւրութիւն կար լուրը կառավարութեան հաղորդելու: Երկու յեղափոխական երիտասարդներ տարած էին նամակները, դատական գործերու պաշտօնատունը, և յաջողած էին իրենց հասցէին յանձնել զանոնք առանց բռնուելու: Եղեռնադատ Ատեանի նախագահը նոյն պահուն ժողովի նստած էր. կը կարգայ նամակը բարձր ձայնով իր ընկերներուն, որոնք գունատած՝ մտիկ կ'ընեն: Նախագահը անմիջապէս կը տանի այդ նամակը կը յանձնէ դատական գործերու նախարար Րիզա բաշային. իսկ սա՝ կը զրկէ զայն Ոստիկանութեան նախարարին:

Մինչդեռ վեց մեծ դեսպանները, Բ. Դուռը, կը շարունակէին Մեծ Եպարքոսին և Արտաքին գործերու նախարարին հետ իրենց բաւական բռնոն բանավէճը, կանխաւ զգացնելով ծանրակշիռ հետեւանքները, որոնք անխուսափելիօրէն պիտի առաջ գային այդ Հայկական

Յոյցէն, անդին, Ոստիկանութեան նախարար Նազըմ բաշան, իր կողմէն, ոստիկանութեան տնօրէն Հիւանի պէյը կը ղրկէր Գուժ Գարու :

Հիւանի պէյ կը ներկայանայ Իզմիրլեան պատրիարքին և ոստիկանութեան նախարարին կողմէ կը խնդրէ որ անմիջապէս իր քով հրաւիրէ յեղափոխականներուն պարագլուխները, և ասոնց պատուիրէ որ Յոյցը չընեն :

— Տնօրէն պէյ, կ'ըսէ Իզմիրլեան, զայրացած, ի՞նչ կ'ըսէք, ես յեղափոխական եմ, որ անոնց պարագլուխները պիտի հրաւիրեմ, ես ո՛չ մեծ, ո՛չ փոքր յեղափոխական կը ճանչնամ,

— Սակայն, պատրիարք էֆէնտի, յարեց Հիւանի պէյ չարամիտ ժպիտով մը, Նախարար բաշան այսպէս պատուիրեց ինծի, հիմակ ի՞նչ պատասխան պիտի տանիմ Նորին Վսեմութեան :

— Տնօրէն պէյ, ըսաւ Իզմիրլեան, կրնաք մեկնել և ըսել ձեր նախարար բաշային թէ՛ ինչ որ կրնայի ըսել յուսանատ ժողովուրդիս, ըսի. աւելի ոչինչ կրնամ ընել. կ'երթաք այսպէս կը խօսիք Նազըմ բաշային :

Հիւանի պէյ կը մեկնի :

Նազըմ բաշա, Իզմիրլեան պատրիարքին պատասխանը շուտով կը հաղորդէ Բ. Դուռը, ուր, վեց մեծ տէրութեանց դեսպաններուն հետ, տակաւին կը սպասէին Մեծ Եպարքոս Սայիտ բաշան, Դատական գործերու նախարար Թուրքսան բաշան, խորհրդական Յարութիւն բաշա Տատեանի հետ :

Մեծ դեսպանները որոնք նոյն օրը Բ. Դուռ եկած էին հաւաքաբար պահանջելու համար որ կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարէ թէ՛ խռովութիւններու պարագային՝ իրենց հպատակներուն ինչքերն ու կեանքերը պիտի պահպանուին— ,երբ Մեծ Եպարքոսէն իմա-

ցան Իզմիրլեան պատրիարքին պատասխանը, շուարած իրարու երես սկսան նայիլ .

— Մեծ Վեզիր, կ'ըսէր Պ. Նէլիտօֆ, սպառնական արտայայտութիւն մը տալով իր սուլորարար ժպտուն դէմքին, եթէ խռովութիւններ ծագին և եթէ ո՛ր և է քրիստոնեայ մը կեանքը վրայ տայ այդ միջոցին, պէտք է այժմէն զիտնալ թէ Նորին Ամենուզորմածութիւն Վեհափառ Տարիս կառավարութիւնը չպիտի կրնայ մնալ անտարբեր .

— Անտարակո՛յս, կը յարէր Ֆրանսական մեծ դեսպան Պ. Բօլ Գամպօն, ո՛չ մէկ տէրութիւն պիտի հանդուրժէ: անդգայ աչքերով դիտել քրիստոնեայ տարրին, մասնաւորապէս իր հպատակներուն մորթոտումը, այնպէս չէ՞, մե՛ծ վեզիր:

Նոյն իմաստով սպառնայիքներ կրկնեցին միւս մեծ դեսպաններն ալ, և կը պատրաստուէին մեկնիլ, երբ, հառագրատան պաշտօնեայ մը ներս մտաւ և Սայիտ բաշային յանձնեց հեռագիր մը:

Մեծ Եպարքօսը բացաւ զայն ու սկսաւ կարդալ:

Չեռքերը կը դողդողային և իր դիմադծերը տարօրինակօրէն խրթին արտայայտութիւն մը կը հագնէին, քանի՛ առաջ կը տանէր հեռագրին ընթերցումը:

Հեռագիրը գրպանը դնելէ յետոյ, Սայիտ բաշան դարձաւ ըսաւ իր օտար շիւրերուն .

— Մեծ դեսպաննե՛ր, զիտէ՞ք այս պահուն Երւտըզ կը կանչէ զիս Վեհափառ Տէրս, ամէն բան իմացած ըլլալ կը թուի, որովհետեւ հրամայած է անմիջապէս արտասովոր նիստի մը հրաւիրել բոլոր նախարարները . . . :

— Կրնա՛յ ըլլալ, ըսին մեծ դեսպանները .

— Ուստի, յարեց բրիտանական ս.ժ դեսպան Սըր Ֆիլիբ Քըրրի, աւելորդ է կրկնել մեր պահանջումները,

յիշեցնելու Ձեր վսեմութեան թէ՛ անհրաժեշտ է քրիստոնեաներուն և մեր հպատակներուն ինչքի սև կեանքի պահպանումը, և թէ, հակառակ պարագային, Վեհափառ Սուլթանին կառավարութիւնը ծանր պատասխանատուութեան տակ ինկած կ'ըլլայ հանդէպ Եւրոպայի... :

Մեծ դեսպանները միասին ոտքի ելան և հրաժեշտ առին Մեծ Եպարքոսէն :

Զ.

Արտասովոր նիստը գումարուեցաւ Երլտըզ, Հիւնքեարին նախագահութեան տակ :

Ներկայ էին, բաց ի Նազըմ բաշայէն, գրեթէ բոլոր նախարարները :

Ոստիկանութեան նախարարը կանխաւ գացած էր պալատ և Սուլթանին հաղորդած էր յեղափոխականներուն մտադրութիւնները, շատ մը խեղաթիւրումներով : Ապտիւլ Համիտ, Նազըմէն թեւադրուած, կը գումարէր այդ արտասովոր նիստը :

Ապտիւլ Համիտ շատ յուզուած կ'երեւար, չէր կրնար հանդարտ նստիլ գահին վրայ, յաճախ ոտքի կ'ելլէր ու նախարարներուն մէջտեղը ման կուգար Երլտըզի կայսերական դահլիճին երկայնքը :

— Մեծ-վեզիր, յանկարծ պուչտաց Համիտ, ի՛նչ է այս, ինչե՛ր յի՛մտնամ, պատմեցէք նայինք, այս ի՛նչ լուրեր են որ կը հասնին ականջիս :

— Չափազանցութիւններ են, Վեհափա՛ռ տէր, կարեւոր բան մը չը կա՛յ դեռ, պատասխանեց Սայիտ բաշա, Թիրական շեշտով մը, պարզ տարածայնութիւններ են, պարզ գրոյցներ :

— Զրոյց, գոցաց Համիտ, ի՛նչ կ'ընէք, Սայիտ բաշա, կը քնանա՞ք, չէ՞ք իմանար, ինչն'ը կը կատարուին Բ. Դրան քիթին տակ, և տակաւին կը պնդէք թէ՛ զրոյցներ են...: Ո՛չ, Սայիտ բաշա, ասիկա ներելի չէ՛ երբէք...:

Սայիտ բաշա, լուիկ մնջիկ, մօրուքը ձեռքին մէջ կը մարսէր իր վեհափառ Տիրոջ կշտամբանքները, որոնք իրենց ներքեւ կը պահէին սպառնալիքի սլաքներ:

Միւս նախարարները նոյնպէս, չէին համարձակեր բերաննին բանալ, ա՛յնքան կը սարսափէին Աղաիւլ Համիտի շանթերէն:

Վերջապէս, ոտքի ելաւ Արտաքին գործերու նախարար Թուրխան բաշան.

— Վեհափա՛ռ տէր, ըսաւ, դօմրթէն սպառնացեր է, Բ. Դրան առջեւ ճոյց մը պիտի ընէ, և պիտի պահանջէ անյապաղ գործադրութիւնը երեք մեծ դեսպաններուն կողմէն ներկայացուած բարենորոգումներու ծրագրին: Այս իմաստով զեկոյցներ ալ ուղղուած են վեց մեծ տէրութեանց մայրաքաղաքին դեսպաններուն: Այս վերջինները Բ. Դուռ գալով հաւաքաբար պահանջեցին:

— Եթէ երբէք խռովութիւններ առաջ գան յիշեալ ցոյցին հետեւանքով—, իրենց հպատակներուն և կայսրութեան քրիստոնէականներուն ինչքի և կանքի ապահովութեան երաշխաւորութիւնը...: Այս է բոլոր ինդիրը, ուրիշ ծանրակշիռ իրողութիւն մը չըկայ,

— Տեսա՞ք, յարեց Համիտ հեգնելով և լուսանի աչուրները սեւեւելով Սայիտ բաշայի վրայ, տեսա՞ք հիմա, տարածայնութիւնները, զրոյցները...: Ի՞նչ պիտի ընենք հիմա, ի՞նչ կը խորհիք, նախարարներ. խօսեցէ՛ք նայիմ:

Նախարարները բերաննին չէին համարձակեր բա-

յոց պատրիարքը հաճեր է իր ներկայութեան ընդունիլ մեր պատուիրակը...

— Սխալ է, վեհափա՛ռ տէր, հիմնովին սխալ, բացազանչեց Արտաքին գործոց նախարարի խորհրդականը, Տատեան Յարութիւն բաշա, չկրնալով ինքզինք զսպել, Հայոց պատրիարքը չեմ կարծեր թէ ա՛յնչափ անքաղաքավար ըլլայ որ մերժէ Բ. Գրան մէկ պատուիրակը, այն ալ ոստիկանութեան տնօրէն մը, որ կայսերական կառավարութեան կողմէն մասնաւոր պաշտօնով մը կը ղրկուի Հայոց Պատրիարքարանը.

— Ուրեմն ես սո՛ւտ կը խօսիմ, հա՞... բողոքեց մեծ եպարքոսը, ազերսող նայուածք մը սեւեռելով Հիւնքեարին վրայ, Վեհափա՛ռ տէր, ես սո՛ւտ կը խօսիմ, ուրեմն, ե՛րբ բռնուեր է սուտս, կը խնդրեմ որ սանձ մը դրուի այս մարդուն բերնին...: Առաջին անգամը չէ՛ ասիկա, ո՛չ ալ վերջինը՝ որ յանիրաւի կը հարուածուիմ... Տատ Օղլուէ՛ մը. կ'աղաչեմ, վե՛րջ մը թող տրուի ասոր...:

— Վեհափա՛ռ տէր, յարեց Տատեան, ներեցէ՛ք, թո՛ղ մեծ եպարքոս բաշան բարեհաճի քիչ մը յարգանքով վերաբերուի իր պաշտօնակիցներուն հանդէպ, այո՛, ես Տատ Օղլու մըն եմ և ո՛չ թէ իրեն պէս...

— Լո՛ւս, Արթի՛ն, կշտամբեց Համիտ մտերմական շեշտով մը, մինչդեռ Տատեան զուր կը փորձէր շարունակել, ներկայութեանս չեմ ուզեր որ անձնականութիւններ շօշափուին:

Յետոյ, դառնալով Մեծ Եպարքոսին.

— Սայի՛տ բաշա, ըսաւ, խնդիրը շատ մի՛ ծեծէք, շարունակեցէք:

Մեծ եպարքոսը շարունակելով.

— Վեհափա՛ռ տէր, ըսաւ, Հայոց պատրիարքը թէև

ընդուններ է յետոյ Հիւսնի պէյը, բայց մեր առաջարկը մերժեր է,

— Ո՞ր առաջարկը, հարցուց Համիտ.

— Դատական ու Ներքին գործերու նախարարներուն հետ համախորհուրդ, և ոստիկանութեան նախարարին գիտութեամբ և տնօրէն Հիւսնի պէյին միջոցաւ առաջարկեցինք Իզմիրեան պատրիարքին որ փութայ իր քով կանչել գոմիթէին պետերը, խրատել, յորդորել և համոզել որ կենան այս պիսի վտանգաւոր ընթացքէ մը.

— Է՛, ընդմիջեց Համիտ, ի՞նչ է պատասխանէր.

— Ի՛նչ պիտի պատասխաներ, Վեհափառ, յարեց Սայիտ բաշա, բացարձակապէս մերժեր է, յայտարարելով թէ՛ ինքը չի՛ ճանչնար ո՛չ մեծ, ո՛չ պզտիկ յեղափոխականներ ևն... :

— Արդէն, մուտաց Համիտ, ի՛նք է թելադրիչը, ի՛նք է բուն աղբիւրը, ի՛նք է որ երես կուտայ խոռվարարներուն... :

Ու դարձեալ ոտքի ելաւ և սկսաւ չափչփել դահլիճը, երկու ձեռքերը շփշփելով :

Սյց միջոցին Նազըմ բաշան ներս մտաւ, յատկապէս կանչուած էր հիւնքեարէն, լուսաբանելու համար Հայոց Պատրիարքին ու Հիւսնի պէյին պարագան :

— Նա՛զըմ բաշա, ըսաւ Համիտ, դո՛ւք պատմեցէք նայիմ, ի՛նչ է պատահեր Հայոց պատրիարքին և ոստիկանութեան տնօրէն Հիւսնի պէյին միջեւ :

— Ոչի՛նչ, Վեհափառ տէր, պատասխանեց Նազըմ վարանոտ շեշտով մը, Հիւսնի պէյը զրկած էինք խընդրելու համար Հայոց պատրիարքէն որ գոմիթէի պետերը խրատէ և համոզէ որ ետ կենան ո՛, և է Յոյցէ. պատրիարքը պատասխաներ է թէ ինքը չի՛ ճանչնար ո՛չ մեծ, ո՛չ պզտիկ յեղափոխականներ :

— Ուրի՞շ... ընդմիջեց Համիտ, ուրիշ ի՞նչ է ըսեր Հայոց պատրիարքը.

— Ոչի՛նչ, Վեհափա՛ռ տէր, պատասխանեց Նազըմ, կասկածոտ նայուածքներ պտտցնելով բոլորափքը:

— Հասկցուեցա՛ւ, հասկցուեցա՛ւ, ըսաւ Համիտ, ի՛նք ալ հետերնին է, ի՛նք է արդէն ապօստամբապե՛տը, դաւաճա՛ն, ապերա՛խտ...:

Ու գլուխը կ'երերցնէր հազար ու մէկ մթին խորհուրդներ յղանալով ոճիրներով հարուստ իր ըզնզին մէջ:

Գիշերը մինչեւ ուշ առնն տեւեց Երլտըզի արտասուլոր նիստը:

Որոշուեցաւ կանխարգել միջոցներ ձեռք առնել և զգուշութեան համար, զինւորներով շրջապատել Բ. Դըրան պողոտան:

Կէս գիրերուան մօտ էր, երբ նիստը փակուեցաւ:

Մայիտ բաշա, այն օրերուն Մեծ եպարքոսը, հետեւալ կերպով կը պատմէ իր Յուլեֆերուն մէջ այն անցքերը, որոնք նախատեցին Սալվերացի Մեռելոցի կուշարթի օրուան Յոյցին. —

Երլտըզ կանչուեցայ Թուրխան բաշային հետ, 1895 սեպտ. 18ի շաբաթ օրը: Ժամը 11ին միջոցները, երբ մենք պալատ կ'երթայինք, ոստիկանութեան նախարար Նազըմ բաշան անկից դուրս կ'ելլէր: Այն գիշեր, Թուրխան բաշային հետ, Սուլթանին ներկայութեան ընդունւեցանք ժամը հինգին միջոցները տունս վերադարձայ: Քիչ մը վերջ, կայսերական առաջին քարտուղարութեան կողմէն ստացայ գրութիւն մը, որ հետեւեալ իմաստը կը պարունակէր. —

«Ոստիկանութեան նախարարութեան կողմէն պալատ հասած է ժուռնալ մը, որուն մէջ ըսուած է թէ՛ կիրաւ կի կամ երկուշարթի օրը, հինգ հարիւր հայեր, զինւած, Բ. Դուռ պիտի գան և եթէ զէնքով ետ մղուին,

իրենք ալ զէնքով պիտի դէմ դնեն. յայտնի է թէ՛ անցեալները Պէրլինի մէջ ի՛նչ խիստ միջոցներ տնօրինւեցան Գիւլիսպներուն նկատմամբ. Վե՛հ. Սուլթանը կը մտածէ դիմել մեծ տէրութեանց դեսպաններուն, «քատուղարին գրութեան մէջ այս ամէնը պատմելէ յետոյ, կը հրաւիրուէի այս մասին իմ կարծիքներս գրել ու հաղորդել հետեւեալ կիրակի օրը: Հազիւ այս գրութեան ընթերցումը վերջացուցած, Ոստիկանութեան նախարարութեան կողմէն՝ ալ ստացած քեզիքէ մը, սակայն, ասոր մէջ կ'ըսուէր թէ՛՝ անունն ու վիճակը անձանօթ հայու՞մը կողմէն՝ Վերաքննիչ Ատեանի նախագահին տրւած գրութեան մը վրայ հիմնուած էր այս տեղեկութիւնը: Դարձեալ նոյն քեզիքէով կը ծանուցանէր թէ՛ մէկ քանի օր առաջ ալ եղած էր ասանկ զեկոյց մը. ինչ որ գործին կարեւորութիւնը կը տկարացնէր:

Հետեւաբար, այս իրողութեան և տեղեկատուութեան նայելով, յիշեալ լուրին ստուգութեան մասին կասկածեցայ: Ոստիկանութեան նախարարին պատասխան մը գրեցի, պատուիրելով որ հարցախուզէ լրատուին ինքնութիւնն ու վիճակը և ժխտելի կարծեցեալ կէտերը մանրակրկիտ քննութեան մը բովէն անցընէ: Ոստիկանութեան նախարարի թէզքէրէին մէջ այս հատւածն ալ կար. «Եթէ Հայերը կիրակի օրը եկեղեցի մըտնելէ արգիլուին, երկուշաբթի Մեռելոցի օրը պիտի խռովութիւններ հանեն, պատրուակելով թէ՛ իրենց թոյլ չի տրուիր այցելութեան երթալ իրենց ննջեցեալներուն, բան մը որ կարելի է եզրակացնել նախընթացներէն. հետեւաբար, անկարելի է արգիլել Հայերը: Սակայն, եթէ անոնք իրօք համախմբուած գան, զիրենք ցրուելու համար հեծեալ պահակազօրքեր պատրաստուած են փողոցներու անկիւնները:

Պատասխանադրիս մէջ համամտութիւն յայտնեցի

ոստիկանութեան ձեռք առած այս կանխազգուշու-
 թեան. միւս կողմէ՛ յիշելով բնակարանս հրաւիրեցի
 ներքին գործերու նախարար Րիֆաթ քաչան և իրեն
 հետ ալ գործին վրայ խորհրդակցելէ յետոյ, գրաւոր
 հրահանգ ղրկեցի ոստիկանութեան նախարարութեան,
 յանձնարարելով որ, եթէ երբէք Հայերը եկեղեցին հա-
 ւաքուելով, աւելի առաջ գալ ուզեն, արգիլէ զանոնք :
 Պատրիարքին խիստ ազդարարութիւններ ուղղուելու
 համար՝ թէ՛ Դատական նախարարութեան քեզեքէ գրեցի
 և թէ՛ Կրօնքներու տեսուչը կանուխէն քովս բերել
 տուի :

«Կիրակի ո՛ր և է դէսք չը պատահեցաւ :

«Իրիկուադ դէմ Ոստիկանութեան նախարարութենէն
 եկած պատասխանը՝ դարձեալ չէր երաշխաւորէր նոյն
 լուրին ստուգութիւնը :

է՞

Մայրաքաղաքը սարսափի մէջ էր :

Վայրկենէ վայրկեան կը սպասուէր անկ պայթու-
 մին, որ ազդարարուած էր արդէն :

Հնչակեաններուն Յայտարարութեան օրինակները,
 հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, կարևոր հրապարակ-
 ներու իրայ և գլխաւոր պողոտաներու անկիւնները կը
 տեսնուէին :

Շարաթ օրը կանուխ, սովորական ժամանակէն շատ
 կանուխ գոցուեցան խանութները :

Ժողովուրդը խուժը խուժը կը վերադառնար, իւ-
 րաքա՛նչիւրը իր թաղը :

Հրապարակը կ'ամայանար, և բերնէ բերան կը պատմուէր թէ՛ Հայերուն Յոյցը, որ, ա՛լ յայտնուած էր, տեղի պիտի ունենար Խաչվերացի Մեռելոցի օրը, Սեպտեմբեր 18ին :

Մեծ դեսպաններուն զրկուած զեկոյցները կարեւորութենէ զուրկ չէին :

Յոյցը կազմակերպող յեղափոխական Մարմինը շատ լաւ գիտէր թէ՛ Համիտեան կառավարութիւնը բիրտ ու ժին պիտի զիմէր և ժողովուրդին դէմ պիտի դարձնէր զէնքը, Յոյցի պարագային, եթէ նոյնիսկ խաղաղասիրական բնոյթ ունեցած ըլլար ան. հետեւաբար, կազմակերպիչները խոնեմութիւն համարած էին կանխաւ ազդարարել այդ պարագան մեծ դեսպաններուն և պատասխանատու բռնել Բ. Իրան Ոստիկանութիւնը. իսկ եթէ —ինչ որ հրաշք մը պիտի ըլլար—, Համիտի բռնապետական կառավարութիւնը հանդուրժէր որ Հայերը կատարեն իրենց խաղաղ Յոյցը, կազմակերպիչներուն համար քաջալերիչ պարագայ մը պիտի ըլլա՛ր ատիկա, որովհետեւ ուրիշ հարստահարուած աղգետի ալ իրախոյս առած պիտի ըլլային, իրե՛նք ալ սարքելու նմանօրինակ ցոյցեր ու իրենց զայրոյթը պոսթիկալս Բռնակալին դէմ... :

Ը.

Կիրակի էր, Խաչվերացի կիրակին :

Ոստիկանութեան նախարարը գործի վրայ էր, առջի իրիկուընէ արդէն խումբ խումբ լրտեսներ, զանազան տարազներու տակ, սկսած էին չրջան ընել մայրաքաղաքին հայաշատ կեդրոններուն մէջ :

Ամէն մարդ սպասումի մէջ էր, խոհեմները քաշ-
 ւած էին իրենց բնակարանը, վախկոտները, զանազան
 թաղերէ, փութացած էին արդէն չուել կղզիները, յա-
 ջորդ օրուան համար ազդարարուած Յոյցը չը տեսնե-
 լու, կամ աւելի ճիշտը, իրենց փափուկ ու թանկ մոր-
 թը փրկելու մտահոգութենէն մղուած :

Շարաթ օրուան թերթերէն մէկ քանիները ծանու-
 ցած էին թէ՛ Խաչվերացի կիրակին, Սկիւտար, Ս. Խաչի
 մէջ հանդերձեալ է պատարագ մատուցանել Կիլիկիոյ
 նորընտիր կաթողիկոսը՝ Տ. Գրիգորիս Ալէաթճեան Սըր-
 բազան : Ուստի, կիրակի առտուն կանուխ, կամուրջին
 վրայ, Սկիւտարի նաւամատոյցը կը դիմէին գունդա-
 գունդ Հայեր, շատերը՝ գաւառացի պանդուխտներ,
 որոնք երկրորդ Խրիմեան Հայրիկ մը կը դաւանէին պա-
 տարագիչը, վաղուց վարժուած ըլլալով զայն ճանչնա-
 լու, սիրելու և պաշտելու շուշնիկ անունով :

— Թուչնիկ Սրբազանը պիտի պատարագէ, կը
 փսփսային իրարու ականջին, երթա՛նք, լսենք իր քա-
 րոզը :

Ս. Խաչ եկեղեցին, այն օրը, մայրաքաղաքի բոլոր
 միւս եկեղեցիներէն, նոյնիսկ Պատրիարքարանի Մայր
 եկեղեցիէ՛ն ալ աւելի հանդիսաւոր տեսք մը առած էր :
 Տաճարին մէջ ասեղ ձգելու տեղ չէր մնացեր, ինչպէս
 կ'ըսէ ռամիկը, և գաւթը, դուրսի շրջափակին մէջ,
 երկսեռ բազմութիւն մը խոնուած, ալեկոծ ծովի մը
 նման կը տատանէր :

Ներսը ժամերգութիւնը կը կատարուէր աւուր
 պատշաճի շքեղութեամբ մը :

Գուրսը, շրջափակին մէջ, խուճը խուճը հաւաք-
 ւած, տաքգլուխ երիտասարդի մը բոլորափքը, գաւա-
 ռացի պանդուխտներ՝ մտիկ կ'ընէին անոր մարտագոռ
 ու շանթօրոտ ճառը : Անդին, ուրիշ պատանիներ, թե-

րեւս մէկ քանի օր առաջ յեղափոխական մկրտուած , կը նախատէին , կ'անարգէին ու կը սպառնային ծեծել մարդուկ մը , որ կ'ամբաստանուէր իբր մատնիչ և պատճառ՝ քանի մը յեղափոխական երիտասարդներու ձերբակալման :

Յանկարծ իւրարանցում մը տեղի ունեցաւ Ս. Խաչի շրջափակին մէջ :

Քարո՞ղբ քարո՞ղբ մտիկ ընենք , կըսէին ու կը խուժէին տաճարէն ներս :

Թռչնիկ Սրբազան ժողովուրդին դարձուցած իր երեսը , կը պատրաստուէր սկսելու քարոզը :

— Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ , ամէն :

Յետոյ , մականը մէկ ձեռքին մէջ , միւսը բարձրացուցած , գոռաց :

— Խաչը պիտի յաղթէ աշխարհի .

Այս էր քարոզին ընթացքը :

Տաճարին ամբոխը , վայրկենապէս ելեկտրացած , աղաղակեց .

— Կեցցէ՛ Հայաստան , կեցցէ՛ Յեղափոխութիւն :

Քարոզիչը , քովէն կախուած թաշկինակո՞վ սկսաւ սրբել ճակտին քրտինքը , որ ուղիւսբէն կը հոսէր :

— Այո՛ , խաչը պիտի յաղթէ՛ աշխարհի , շարունակեց քարոզիչ Սրբազանը , այն աշխարհին , որ այսօր յանձնուած է բռնաւորներու , դանիճներու ձեռքը . . . :

Դարձեալ խուլ մոռնննչը՝ տաճարին բազմութեան ծոցէն :

— Խաչը , մահապարհներու սահմանուած պատիժի այն անարգ գործիքը , որուն վրայ իր աստուածային հոգին աւանդեց աշխարհի Փրկիչը Տէրն մեր Յիսուս Քրիստոս , Տանջանքի Փայտը , որուն վրայ գամուեցաւ Աստուածամարդը , գիտէ՞ք , սիրելի՛ ժողովուրդ , ի՞նչ

վսեմ, ի՛նչ վե՛ն նշանակութիւն ունի...: Խորհրդանշա-
նը չէ՞ Փրկութեան, Ազատութեան նշանաբանը չեղա՞ւ
ան...:

— Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռ-
նաւորք եւ ես հանգուցից զձեզ, ըսաւ երկնային Վար-
դապետը, իսկ ես կ'ըսեմ ձեզի, Հայաստանի՛ զաւակ-
ներ, կեղեքուածներ, աքսորուածներ, որդեղո՛ւրկ մայ-
րեր, բռնաբարուած քոյրեր, տիրակորոյս այրիներ,
եկէ՛ք ինձի, խաչի՛ն պլլուեցէ՛ք, խա՛չը շակեցէ՛ք,
քալեցէ՛ք արիւնին ու մոխիրին մէջէն, մի՛ վախնաք,
անվախ, աներկմիտ, առաջ անցէ՛ք, ձեզի՛ կ'ըսեմ,
խաչը պիտի յաղթէ աշխարհի և դուք, ո՛վ Քրիստոսի
ուխտեալ զինւորներ, յեղափոխութեան սուրբ սեղանին
առջեւ եկէ՛ք, պատրաստուեցէ՛ք Մեծ Զոհին:

Ժողովուրդը խանդավառութեան գերագոյն թա-
փով մը կը մոնչէր.

— Կեցցէ՛ Հայրենիքը, կեցցէ՛ Յեղափոխութիւնը:
Քարոզիչ Սրբազանը, խորհրդաւոր և այլաբանա-
կան ոճով մը պատրաստեց ժողովուրդը Վաղուան Մեծ
Տօնին ու վերջացուց իր քարօզը:

Նոյն օրը, մայրաքաղաքի գրեթէ բոլոր Եկեղեցի-
ներուն մէջ, Հայաստանցիները հաղորդուեցան, պատ-
րաստուելու Վաղուան... Ճակատամարտին:

Ու ժողովուրդը կը յիշէր այն օրը, երբ Մամիկոն-
եան Սպարապետին հրամանատարութեան տակ, վաթ-
սունը վեց հազար սպառազէն Հայերը հաղորդուեցան
Աւարայրի ճակատամարտին պատրաստուելու համար:

Եւ կըսէին իրարու.

— Այն ատեն՝ Յազկերտ Բ. մը կար, իսկ հիմակ
Համիտ Բ. մը, այն ատեն՝ մեր պանծալի նախնիքները
կուուեցան Խղճի Ազատութեան համար՝ մոլեռանդ Մազ-
գէութեան դէմ. իսկ հիմակ մենք, իրենց արժանաւոր

ժառանգները, պիտի կռուինք՝ մեր ինչքին, մեր պատիւին ու մեր կեանքին, մէկ խօսքով՝ մեր անբռնաբարելի իրաւունքին, Ս. Ազատութեան համար՝ Համատական Բռնապետութեան վր դէմ, որ նրբախած, կատարելագործուած ձե՛ւն է բովանդակ տիեզերքի բռնապետական կազերուն . . . :

Աւարտած էր պատարագը, ժողովուրդը դուրս կը խուժէր Ս. Խաչի տաճարէն :

Պատարագիչ Սրբազանը, զգեստաւորուած, հանգիսաւօր թափօրով մը կ'առաջնորդուէր Ս. Խաչի խորհրդարանը, աջ ու ձախ օրհնութիւն սփռելով համախմբուած երկսեռ հաւատացեալներու բազմութեան :

Շրջափակը կամաց կամաց կը պարպուէր ժողովուրդէն, Սրբազանը քարոզին տպաւորութիւնը կը տանէր իրեն հետ :

Շրջափակէն դուրս, փողոցներուն մէջ, յանկարծ ոստիկան զինւորներ երեցան :

Ժամերգութեան միջոցին, ամբարտաւան մէջ սողոսկած մէկ քանի ծպտուն ոստիկաններ ու լրտեսներ, մասնաշնչած էին մէկ քանի յեղափոխական երիտասարդներ, որոնք նոյն օրը, փողոցներու մէջ, ձերբակալուեցան ոստիկան զինւորներէն :

Այդ կարգի ձերբակալումներ անդի ունեցան տեղ տեղ, մայրաքաղաքի միւս թաղերուն մէջ ալ, ընդհանրապէս ժամերգութեան աւարտումէն ետքը, ժողովուրդի վերագարծի միջոցին :

Կիրքերը գերազրգուած, գրեթէ բոլոր թաղերուն մէջ, ուր Հնչակեան մասնաճիւղ մը կար, տենդոտ ու ջլաչին կ'երեւային Հայերը, ամենքն ալ սպասելով Վաղսրդային, որ կը խոստանար բերել . . . Մահ կամ Ազատութիւն :

Հակառակ սակայն ձերբակալումներուն, Խաչվե-
րացի կիրակին հանդարտ անցաւ, առանց ո՛ր և է կա-
րեւոր միջադէպի :

Պ՞՞

Կիրակի ցերեկ ու ամբողջ գիշերը, Հնչակեանները
գաղտնապէս առաջ տարած էին նախապատրաստու-
թիւնները, բոլոր մասնաճիւղերուն հաղորդուած էր
միեւնոյն հրահանգը, որուն մէջ յիշուած էին Յոյցի
կազմակերպութեան մանրամասնութիւնները, սկիզբէն
մինչեւ վերջը :

Լուսցաւ վերջապէս երկուշաբթին, Խաչվերացի
Մեռելոցի օրը . . .

Երկինքը կապոյտ, անամպ, աշնանային անուշ ա-
րեւ մը կը ժպտի :

Մօվը, Վասփորի թէ Ոսկեղջիւրի մէջ, կը ծիծաղի .
նաւակներու, մակոյկներու խաչածեւումներ, շոգինա-
ւեր իտարու ետեւէ, կ'երթեւեկեն : Մայրաքաղաքի բը-
նակչութեան երեսը կը խնդայ :

Ամէն մարդ առտուն կանուխ արթնցած, ոտքի
վրայ է, Դէպքին կը սպասէ :

Օդին մէջ խաղաղ անուշութիւն մը կը զգաս :
Կեանքը շատ քաղցր կը թուի, աւելի քան երբէք ապ-
րիկ կ'ուզէ մարդ :

Եւ ա՛նա՛ ժողովուրդը կը դիմէ Գուժ Գարու, մայ-
րաքաղաքի բոլոր թաղերէն, բացի խոհեմներէն, ապ-
րողներէն, ազգասերներէն եւ յեղափոխական պետերէն,
որոնք ծակամուտ եղած են, քաշուած իրենց որջը :

Թերևս անկից, հեռադիտակով ըմբռնանելու համար Յոյցին... հեշտա՛նքը :

Եւ սակայն, ստուար ամբոխը, որուն մէջ պատկառելի թիւ մը կը կազմեն կիները, կ'առաջանայ, առանց աջ ու ձախ դիտելու և Գուժ Գաբու կը հասնի, Պատրիարքարանի փողոցը, ուր անցքը կը խափանուի, հետզհետէ հասնող ահագին ամբոխէն :

Հո՛ն են ամէնքը, Բազէշէն, Մուշէն, Վանէն, Կարինէն, Խարբերդէն, Տիգրանակերտէն, Սեբաստիայէն, Տրապիզոնէն, Արաբկիրէն, Կիլիկիայէն թէ Փոքր Հայքէն, Հայաստանէն ու Պոլիսէն, Զրկուածներու բանակը, ո՛ր հիմայ կը ծառանայ Զրկողին դէմ... :

Մէկ կողմէ նոր խուճբեր կը հասնին ու կը խուճնուին փողոցը, միւս կողմէ, արդէն հասածները կը խուճեն Պատրիարքարանէն ու Մայր եկեղեցիէն ներս :

Բազմութեան սիրտը լեցուեր է :

Բարապանները վեր վազեցին :

Պատրիարքարանէն ներս խուճող երկսեւ ամբոխին մոլեգին ազազակը կը լսուէր վարէն :

— Կեցցէ՛ Իզմիրլեան Սրբազան, պատրիարքը կ'ուզենք, Իզմիրլեան պատրիարքը :

Իզմիրլեան Սրբազան, Խաչվերացէն երեք օր առաջ Վոսփոր ելած էր, քիչ մը ժամանակ առողջ օդով մը կազդուրուելու փափագով, սակայն, տարածուած լուրերը հասած ըլլալով իր ականջին, մանաւանդ, վերջին պա՛ռն, Արփիար Արփիարեանէն իմացած ըլլալով Բերայի փայտէ տնակի արտասովոր նիստին մէջ արուած Յոյցի վերջնական որոշումը, շտապած էր իջնել Գուժգաբու և պատրիարքարանը մնալ իր ժողովուրդին մէջ :

Ս. Պատրիարքը վերէն կը դիտէր փողոցին ալե-

ծուփ ամբոխը, և կը զգար թէ վարը բան մը կը դառնար :

Վար իջաւ վերջապէս, ճեղքեց անցաւ ամբոխին մէջէն — որ անդադար ու մէ'կ ձայն կ'աղաղակէր տակաւին — , և մտաւ տաճարը :

Ժողովուրդը կը ստուարանար տակաւ և մայր եւ կեղեցին նեղ կուգար :

Արարողութիւնը կատարեալ հանդարտութեամբ կը վերջանայ :

«Լցաք ի բարութեանց բոց»ը կ'երգէին դպիրները, և պատրիարքը կը պատրաստուէր, ըստ սովորութեան, դուրս ելլել եկեղեցիէն :

Նոյն պահուն, սևերու մէջ իրենց սուգը ծրարած չորս օրիորդներ, կը մօտենան Ս. Պատրիարքին և կը խնդրեն որ հաճի մտիկ ընել իրենց խնդիրքը :

Իզմիրլեան Սրբազան կանգ կ'առնէ դասին մէջ, մինչ ամբոխին աչքերը կը յառէին իրեն, անձկստ նայւածքով մը :

Ամբիոնը կը բարձրանայ չորս սև հագուած աղջիկներէն մէկը, օրիորդ Մառի, և կ'արտասանէ հետեւայլը .

«Սրբազա՛ն հայր, ձմեռը կը հասնի, և Հայաստանի մէջ, անգութ կոտորածէն զերծ մնացած մեր քոյրերուն, մեր եղբայրներուն ու մեր ամուսիններուն վիճակը, որ արդէն անտանելի է, հետզհետէ աւելի կը դառնանայ : Ամէն օր լուրեր կը հասնին մեզի թէ՛ առաջուան կաջութիւնը չէ՛ թեթեւցած երբէք, այլ, ընդ ափառակն, ա՛յն աստիճան ծանրացած է որ՝ վերահաս ձմեռուան հետ մեկտեղ՝ մա՛հր պիտի իջնէ մեր սիրեցեալ հայրենիքին վրայ . . . :

«Ա՛լ չենք դիմանար, Սրբազա՛ն : Տարի մըն է որ եւրոպան, Սասունի աննախընթաց Զարդէն յուզուած, մեր դատը ձեռք առաւ, ամբողջ տարի մը, որուն մէն

մի օրը՝ մէկ տարի է մեզի համար, տենդագին անձկութեամբ մը սպասեցինք որ արդարութիւնն ու խաղաղութիւնը վերջապէս իջնեն մեր հարստահարուած ու խաչեցեալ Հայսննիքին վրայ, և թէ՛ այնքան հառաչանքներէ վերջ՝ կարենանք վայելել հանգիստ ու ապահով կեանք մը, որուն իրաւունք ունինք իբրև մարդ։ Վատահուժիւն մը կը տածէինք Եւրոպայի արդարութեան վրայ թէ՛ ա՛լ այս անգամ վերջակէտը պիտի դնէր մեր ցաւերուն, թէ՛ ա՛լ պիտի ցամքեցնէր մեր արցունքները... գիտէինք նաև թէ՛ ձեր հայրագորով, հոգաժողութեամբ՝ ամէն բան եւրոպական տէրութեանց աչքին առջև կը դնէիք, արիւնտ տեսարանը բոլոր այն խրժղեժանքներուն ու կեղեքումներուն, որոնց կարծես թէ յաւիտենապէս ենթարկուած ըլլար հայ ժողովուրդը, սակայն, ահաոստիկ տակաւին բա՛ն մը չեղաւ և ահաւոր ճգնաժամը կը մօտենայ։

Տաճարին մէջ խորունկ լուսթիւն մը կը տիրէր, մերթ ընդ մերթ ընդհատուած՝ երկսեռ ամբօխին կուրծքէն փրթած զայրոյթի ու վրէժխնդրութեան ուժգին հրաւէրներու խուլ ձեռութիւններէն։

Օրիորդը կը շարունակէ.

«Սրբազա՛ն Հայր, ձեզի՛ կը դիմենք ա՛նա՛, և կը խնդրենք որ եւրոպական տէրութեանց ներկայացնէք մեր յուսահատութեան ու վրէժխնդրութեան բողոքը։ Դիմեցէ՛ք անոնց ներկայացուցիչներուն և ըսէ՛ք թէ՛ ա՛լ չմնաց համբերելու կարողութիւննիս, ա՛լ գիմանալու ոյժ չե՛նք զգար մեր մէջ...»

Ժողովուրդը կը կրկնէ։ Օրիորդ Մառիի վերջին բառերը.

— Այո՛, Սրբազա՛ն, ա՛լ ոյժ չմնաց որ համբերենք, մա՛ր շատ անուշ է մեզի համար...

Եւ օրիորդը կը շարունակէ.

«Ըսէ՛ք, Սրբազա՛ն Հայր, ըսէ՛ք այդ անկարեկիր Եւրոպայի որ՝ եթէ մօտ օրերս քան մը չընէ մեզի համար, շատ շանցած, ամօթէն պիտի կարմրի— եթէ ունի այդ երեսի սուրբ ջուրը—, իմանալով որ ամբողջ քրիստոնեայ ժողովուրդ մը բնաջինջ եղած է...» :

«Ըսէ՛ք մեծ դեսպաններուն, պէտք չէ՛ թողուն զմեզ իբր խաղալիք՝ աշխարհիս բռնաւորներուն ամենէ՛ն զարնուրելիին ձե՛ռքը... : Ըսէ՛ք այս ամէնը, Սրբազա՛ն Հայր, և եթէ, Եւրոպան դեռ շարունակէ պահել իր ամօթալի՛ լուսթիւնը, գոնէ մենք կը դիտանանք թէ ի՛նչպէս պէտք է մեռնինք...» :

Օրիորդը վար իջաւ ամբիօնէն :

Պատրիարքը շատ յուզուած էր, արդէ՛ն անժպիտ դէմքը՝ զարնուրելի արտայայտութիւն մը հագաւ. աչքերը թաց էին, սիրտը կոտրուած, քանի՛ կը տեսնէր կիներու ողորմուկ վիճակը, քանի՛ կը լսէր ասոնց լացուկոծը. մանաւանդ պանդուխտ գաւառացիներուն աղերսող աչքերը կը ծակծկէին իր սիրտը :

Դարձաւ ամբօխին ու հագագրն մէջ խեղդուած կերկեր ձայնով մը.

— Սիրելի՛ ժողովուրդս, ըսաւ, ի՞նչ... կը կարծէ՞ք թէ անտարբեր կը գտնուի ձեր հովիւը... : Կը վստահացնեմ ձեզ թէ՛ դուք ինչ որ կը զգաք, նոյնը և թերեւս աւելի՛ն կը զգայ ան : Եւ անփոյթ չեմ գրտնուած պաշտօնիս կիրառութեանը մէջ, զի կը զգամ թէ խիղճս քիչ թէ շատ կը վկայէ այդ մասին : Սրբեօք կը կասկածի՞ք, խօսեցէ՛ք... :

— Ո՛չ, ո՛չ, գոռաց ամբօխը, կը հաւատա՛նք ձեզի, Սրբազա՛ն :

— Ուրեմն, շարունակեց Իզմիրլեան, իմ մտածումս՝ ձեր արցունքը սրբե՛լ է... :

— Կեցցէ՛ Իզմիրլեան Սրբազան, գոչեց երկսեռ բազմութիւնը, և թնդաց մայր տաճարը:

— Պատրիարքը պիտի երթայ, շարունակեց Իզմիրլեան, պիտի դարնէ կառավարութեան դուռը, պիտի երթայ մեծ դեպարտններուն ներկայացնէ՛ ձեր խնդիրները, սակայն, զաւակնե՛րս, գիտէ՛ք թէ՛ քրիստոնէութիւնը համբերութեան սլարտք մը կը դնէ հաւատացեալ ժողովուրդին վրայ. շտապով չենք կրնար ընել այս ամենը:

Գացէ՛ք, սիրելի՛ ժողովուրդս, ցրուեցէ՛ք հիմակ, ես ամէն բան պիտի կարգադրեմ: Փոքր ինչ հանգիստ ձգեցէ՛ք ձեր պատրիարքը, ազատ թողէ՛ք զիս որ պարտականութիւնս կատարեմ: »

Պատրիարքը հազիւ վերջացուցած էր իր խօսքը, երբ ամբոխին մէջէն զատուած չորս օրիորդներէն մէկը, օրիորդ Քրիստինէ գոչեց.

— Ժողովուրդը մա՛հ կամ ազատութիւն կ'ուզէ, Սրբազա՛ն Հայր:

Ամբոխին խանդավառ ծափերէն ողջունուած, Իզմիրլեան պատրիարքը դուրս կ'ելլէր տաճարէն, Պատրիարքարանը վերադառնալու համար, երբ յանկարծ, ձայն կը արուի թէ՛ յեղափոխականները ներս կը մտնեն:

Պատրիարքը կը մարի կ'իյնայ գետին:

Յուզումը մեծ է:

Պատրիարքին նուազման լուրը փայլակի թիւով շրջան կ'ընէ ամբոխին մէջ:

Ամբոխը կ'երերայ և տաճարէն դուրս կը խուժէ:

Շուտով կը հասնին բարապանները, նոյնպէս Պատրիարքարանի պաշտօնեաներ:

Երևսապեմի Պատրիարքական փոխանորդի օգնական, Տ. Գէորգ Երէցեան վարդապետ կը հասնի իս-

կոյն, և բարապաններուն օգնութեամբը Ս. Պատրիարքը փոխադրել կուտայ Պատրիարքարանը:

Յեկափոխականները զանազան թաղերէն հոն հաւաքուած, ամբոխին գլուխը կ'անցնին:

Ու թափօրը կը շարժի:

«Չայնը հնչեց էրզրումի Հայոց Լեոնեռէն»ը կը հընչեցնեն հազարաւոր բերաններ ու թափօրը ճամբայ կ'ելլէ Գում-Դարուէն դէպի Բ. Դուռը, ուր արդէն մայրաքաղաքի ամէն կողմերէն սկսած է դիմել հայ ժողովուրդը:

ժամը տասնուկէսէն տասնըմէկ, Յոյցը մեծ հասնամատութիւններ կը սկսէր առնել և շարժոււմը կը տարածուէր Բ. Դրան չրջակայքը: Ընդհարումը վայկենական հզաւ, այնքան արագօրէն, որ դիտողը կը շուարի նկարագրել: Գարաքէօյի կամուրջին Ստամպոյլի կողմը, զօրքերն ու ոստիկանները կը կտրեն ճամբաները, բայց ցուցարարները, հարիւրներով, հազարներով Հայեր, խմբովին կը կտրեն շղթան ու կ'առաջանան դէպի Բ. Դրան պողոտան, ուր երբ կը հասնին, կը տեսնեն թէ՛ աւելի առաջ անցնելու բացարձակ տրգելք դրուած էր: Ցուցարարներուն պարագլուխներէն Հայաստանցի մը, որ կ'առաջնորդէր խումբի մը, յանկարծ կը ցցուի սպայի մը դէմ և կը հարցնէ թէ՛ ի՞նչ իրաւունքով թոյլ շարուիր իրենց առաջ երթալու. անդիէն պարզ զինուոր մը մերկ սուրնովը կը պատասխանէ Հայուն, որ, իր կարգին, դաշոյնը կը քաշէ: Այս միջոցին ուրիշ Հայ մը, տեսնելով թէ՛ զինուորները սուրններու հարուածներով կըսպաննեն իր ընկերները, օգնութեան կը վազէ և դաշոյնի հարուած մը կ'իջեցնէ զինուորի մը գլխուն. սա վայրկենապէս գետին կը փռուի անշունչացած:

Ճակատամարտին նշանը կ'ըլլայ ասիկա, և ընդհարուժը կը սաստկանայ :

Մէկ կողմէ՝ զօրքերն ու ոստիկան զինւորները, միւս կողմէ՝ հայ ժողովուրդը, կը սկսին կրակել իրարու վրայ :

Արիւնը կը ներկէ Բ. Գրան պողոտան :

Բազուկներ, օդին մէջ բարձրացած և յետոյ անջատուած՝ ուսերէն, քանի՛ քանի՛ գլուխներ, վիզերնուն զատուած, կը թաւալին պողոտային մէջ ու կը կոխկրատուին :

Ընդհարուժը կը տեւէր, հետզհետէ աւելի բուռն թափով մը :

Եւ ահա՛ Չաթալ խանէն կը հասնի հիւզ հարիւր հօգիներու խուժը մը, որ կ'ուզէ ճեղքել ամբոխը, և առաջանալ դէպի Բ. Գուռը :

Զինւորներուն կողմէն կատազլի ընդդիմութիւն մը տեղի կունենայ և երկու թշնամի խուժերը կը խառնուին իրարու :

Այս միջոցին սօճքաները կ'իջնեն հրապարակ և ժողովուրդին ժողբանդութիւնը գրգռելով կը հրաւիրեն զանոնք մղկիթները, սւր ձմեռուան կտրուած զիզուած վառելափայտը տալով ամբոխին ձեռքը, կը հրամայեն որ զարնեն ճամբան հանդիպած Հայերուն : Այսպէս, խեղճ, անմեղ Հայեր, որոնք հանդարտօրէն կ'երթային, ճամբան յանկարծ կոճղ մը կ'ուտեն գլուխնուն ու գետին կ'իյնան : Իսկ զինուած փոքրաթիւ Հայերը բէվօլվէրով կը պատասխանեն իրենց կրած հարուածներուն :

Ալ հայ ու թուրք ժողովուրդը խառնուած են իրարու, Բ. Գրան շրջափակը, ուր ոստիկան զինւորները կ'օգնեն իրենց համիտեան կռուողներուն :

Ընդդէմ այս պահուն է որ վերէն կը հասի Գուժգա-

բուհի բազմութիւնը, բայց կը տեսնէ որ վարի կողմէն գործը մեծ ծաւալ ստացած է և հայ ժողովուրդը, բազմաթիւ վիրաւորներ ու մեռածներ թողած ճակատամարտին գետինը, կամաց կամաց ետ կը քաշուի:

Յուսահատական րոպէի մը մէջ, այդ բազմութիւնը կը սկսի բէվովէրի գնդակներ տեղացնել Բ. Գրան շէնքի պատուհաններուն վրայ:

Մայրաքաղաքը սարսափի մէջ է: Կէս ժամուան մէջ ամբողջ Պոլիսը, Ղալաթիան ու Բերան իրարանցումի կը մատնուին:

Տօնին առիթովը գոցուած են արդէն հայ վաճառատունները, որոնցմէ բաց մնացած փոքրաթիւ խանութներն ալ կը գոցուին անմիջապէս ու տէրերը կը փախչին:

Հրապարակը կը մնար Յոյներուն ու Հրեաներուն:

Նախարարները, զինւորական հրամանատարները հեազհետէ կը հասնին Յոյցին վայրերը, և հազիւ կը համարձակին մտնել իրենց պաշտօնատեղիները. սակայն, շատ չը տեւեր, այս դրանիկ էֆէնտիները շուտով կը ձգեն գործերնին ու կծիկնին կը դնեն: Ընդհանուր խուճապին մէջ դիտել պէտք էր թէ ի՞նչպէս այդ վէս ու խրոխտ... էֆէնտիները մէկ մէկ կառք մտած, դողալով կամուրջ կը հասնէին ու կը նետուէին շոգենաւր:

Սուլթանը, Երլարզի Որջէն պատգամներ կ'որոտայ, վայրկեանէ վայրկեան թիկնապահներ կը դրկէ լուր առնելու և հրահանգներ բերելու:

Իսկ անդին, Գուժ գարուի պատրիարքարանին մէջ, Իզմիրեան Պատրիարքը հիւանդ պառկած, ջիւղերը դրգռուած, տենդոտ վիճակի մը մէջ, նոպաներ կ'անցընէ: Եւ ան' Մեծ Եպարքոսի թիկնապահներէն մէկը կուգայ և իր տիրոջ կողմէն պատրիարքը կը հրաւիրէ

տեսակցութեան երթալու իրեն քով, սակայն պատ-
րիարքը հիւանդ է և չկրնար տեսակցիլ ո՛չ մէկու հետ :

Թիկնապահը կը մեկնի և քիչ յետոյ կը վերադառ-
նայ, հետը բերելով պաշտօնագիր մը որ ստորագրուած
էր Սատրաղամէն, Շէյխ-իւլ-Իսլամէն և Արտաքին ու
Ներքին գործերու նախարարներէն :

Այդ պաշտօնագրով պատրիարքը կը հրաւիրուէր
խօսք հասկցնելու ժողովուրդին, ցրուելու և հանդար-
աութեան յորդորներ տալու իրենց : Պատրիարքին քար-
տուղարը պատշաճ պատասխանները տալով կը ճամբէ
Թիկնապահը : Շատ չանցնիլ, Սուլթանին Թիկնապահը
կը հասնի և չկրնալով ներկայանալ հիւանդ պատրիար-
քին, կը ստիպուի քարտուղարին հետ տեսակցիլ և ա-
նոր հաղորդել իր տիրոջ հրամանները, ժողովուրդը
հանդարտեցնելու և ցրուելու :

Կայսերական Թիկնապահը կը մեկնի, և ա՛ն՝ ոս-
տիկանութեան նախարարութեան անօրէն Հիւանի պէյը
կը հասնի Գուժ գաբուի պահականօցը, ուր պատրիար-
քին քարտուղարը հրաւիրելով բանակցութիւն կը կա-
տարէ անոր հետ : Հիւանի պէյին ալ փափագն էր որ
պատրիարքը հրահանգ տար հանդարտեցնելու և ցըր-
ուելու ժողովուրդը :

Ոստիկանութեան նախարարը նոյն գիշերը պատրի-
արքին քով կուգայ երկու անգամ և կայսերական առատ
խոստումներով կ'աշխատի համոզել Իզմիրլեան Սրբա-
ղանը, որ դուրս հանել տայ Մայր եկեղեցին ապաս-
տանած հարիւրաւօր հայերը, սակայն ասոնք կը մեր-
ժեն, չեն ուզեր դուրս ելլել շրջափակէն, վախնալով
որ չըլլայ թէ զօրքերէն յօշոտուին դուրսը :

Դէ՞՞՞ ԵԼԼՏԸԶի ընթերցողներուն շահեկան պիտի
ըլլար տալ քանի մը հատուածներ, նոյն թուականի

Մեծ Եպարքոսի յիշատակարանին մէջէն, որոնք պաշտօնական ու վաւերական կը համարուին աստիճան մը, օսմանեան կայսրութեան մեծագոյն պետական մարդերէն մէկուն ակնոցովը դիտուած և նկարագրուած ըլլալով Բ. Դրան այս Հայկական Յոյցը, որ գըրգեցուց ամբողջ քաղաքակրթեալ աշխարհը:

Անաւասիկ թէ ի՛նչպէս կը պատմէ Սայիտ բաշա.—

Բշ. առտու, Բ. Դուռ երթալու համար երբ ճամբայ ելած էի, նախ Յընտըզլըի առջեւ և քիչ ետքը կամուրջին վրայ երկու ժուռնալ ստանցայ ոստիկանութենէն, որոնք կը ծանուցատէին թէ՛ Հայերը խմբովին զինուած՝ դէպ ի Բ. Դուռ կ'առաջանային: Կառքս անմիջապէս փութացնելով, ժամը ՚ինգ ու կէսին Բ. Դուռ հասայ: Իսկոյն ներքին գործոց նախարար Բիֆաթ փաշայի հետ գրաւորապէս խորհրդակցելու համար, խոսորդական թէլֆիք փաշան և Թմէտճի ու Մէքթուզճի պէյերը կանչեցի: Նոյն միջոցին ոստիկանութեան նախարարն ալ Բ. Դուռ եկաւ, և գանգատեցաւ թէ ոստիկան զինւորներուն թիւն անբաւական է և թէ ոստիկան զինւորներու հրամատարը սպարապետին զրկելով, զինւոր ուզած է, բայց այս վերջինը մերժած է զինւոր տալ:

Քիչ ետքը երկու յայտարարութիւններ հրատարակեցինք: Մէկը՝ Հայոց Պատրիարքին և Կրօն. ու Քաղաք. ժողովի անդամներուն և միւսն ալ՝ Բ. Դրան վրայ եկող խուռնեւամ ամբոխին: Առաջինով կը հրաւիրուէր Պատրիարքը, Քաղաքական ու Կրօնական ժողովի անդամներէն մէկ մէկ անձի հետ Բ. Դուռ գալ ու իրենց պահանջուով ի՛նչ որ է բերանացի հազորդել: Իսկ միւս յայտարարութիւնը՝ հաւաքուած ժողովուրդին կը ծանուցանէր թէ՛ օրէնքի անուսով կը հրաւիր-

ուին անմիջապէս ցրուիլ, հակառակ պարագային, օրէնքին տրամադրութիւնները պիտի գործադրուին իրենց նկատմամբ:

Բ. Դրան մէջ գտնուող թիկնապարներէն նէշէթէֆ. զինուած ժողովուրդին դէմ՝ այս յայտարարութիւնը կարգալու անկարողութիւն ցոյց տուաւ, իսկ միւս թիկնապարը Խալիտ պէյ սիրայօժար ընդունեց այս պաշտօնն և զայն կատարեց կէտ առ կէտ: Բ. Դրան մէջ աւագ թիկնապարէն զատ ոչ ոք մնացած ըլլալով, թէև Սպարապետութենէն քանի մը թիկնապարներ պահանջուեցաւ, սակայն պատասխան եկաւ թէ՛ և ո՛չ մէկ թիկնապար կայ ներկայ, Սպարապետութեան Դրան մէջ: Ոստիկանութեան նախարարը քանի մ'անգամ Բ. Դուռ գալով յայտարարեց թէ՛ Հայ ժողովուրդը հասած է Պարսկական դեսպանատան առջև և ցուցարարներուն մէկ մասն ալ արդէն իսկ Բ. Դրան մօտեցած է, մինչդեռ անոնց մեծագոյն մասն ալ փոզոցներուն մէջ ցրուած էր, ուր կուրը սկսած է շարունակուիլ ռասիկաններուն և զինուած Հայերուն միջև: Ոստիկանական պատրաստ ուժն անբաւական է ցոյցին առաջին առնելու: Ուստի պէտք է անմիջական կերպով զինուոր տրուի Սպարապետութենէն: Եւ սակայն ասոնց ամէնքն ալ անլսելի մնացին Սպարապետութեան կողմէ:

Բ. Դրան մէջ 60—70ի չափ պահակ զինուորներ կային և սակայն ռազմամթերք ընաւ չկար: Արդ, եթէ Հայերն յարձակէին, ի՞նչ պիտի ընենք, կ'ըսէր պահականոցին հրամատարը: Պատասխան տրուեցաւ թէ յարձակումի մը միջոցին սուինով պէտք է դիմադրէին: Կ'երևայ թէ այս հրահանգը բերնէ բերան տարածուած և իրարու յաջորդող պաշտօնական յայտարարութիւններն ու արուած ազդու հրամաններն իրենց արագ ազդեցութիւնն ունեցած էին: Եւ սակայն ի՞նչ օգուտ որ

զինւորական ոյժին բացակայութիւնը տեսնող տգէտ ժողովուրդն սկսած էր այլևս իրարու վրայ յարձակիլ ու լուր տարածուած էր թէ յարձակողներուն մէջ, զինւորներ ու սօֆիստներ ալ կ'գտնուէին: Ուստի անմիջապէս յայտարարութիւն մը հանեցինք թէ յանցապարտները պատժելու իրաւունքը կառավարութեան կը վերաբերի և թէ ժողովուրդին մէկ մասը իրաւունք չունի ուրիշ դասակարգի մը և ուրիշ անձի վրայ յարձակելու: Հետեւեալ ասանկ յարձակում գործողներ անմիջական կերպով պիտի պատժուին: Ասկէ զատ գրաւորապէս ծանուցինք նաև Շէյխ—իւլ—Իսլամութեան, Սպարապետութեան, Ծովային նախարարութեան, Քաղաքապետութեան և Ոստիկանական նախարարութեան որպէս զի ուսանողները, զինւորներն և ժողովուրդը արգիլեն յարձակում գործելէ, հակառակ պարագային, պատասխանատուութիւնը պիտի ծանրանայ իւրաքանչիւրին վրայ: Այս հրահաններն երկու ժամ ետք անգամ մ'ալ կրկնուեցան գրաւորապէս:

Կրօնից Տեսուչ Րիզա բաշան և արտաքին գործոց նախարար Թուխան բաշան ալ հրաւիրուելով, մինչև իրիկուն խորհրդակցեցանք դէպքն արգիլելու և Կայս. պալատէն զրկուած անվերջ գրութիւններուն պատասխանելու, որոնց մանրամասնութիւնը ստորև պիտի հրատարակենք: Վերջապէս դէպքը հանդարտեցաւ և ժողովուրդը ցրուեցաւ, Գում գաբուլի Պատրիարքանիստ Մայր եկեղեցիին մէջ գիշերուան ժամը երկուքէն ետք 40—50 հոգիէն զատ մարդ մնացած չըլլալը ստուգուեցաւ: Անոնք ալ պանդուխտ ու անպատասպար ըլլալով մնացած էին հոն, որոնց համար երաշխաւորուեցաւ թէ հետեւեալ օրը դուրս պիտի ելլան: Նոյն օրը ցերեկին թէև նախ Ոստիկանութեան նախարարը և յետոյ երկու թիկնապահներ զրկուեցան Պատրիարքը Բ. Դուռ հրա-

ւերելու, սակայն բոլոր զրկուածներն ալ վերադառ-
նալով պատասխանեցին թէ՛ Պատրիարքը յուզումէն
հիւանդացած՝ արիւն կը փսխէ և հետեւեալ երեքշաբթի
օրը Բ. Դուռ պիտի գայ: Նոյն պահուն պալատէն հը-
րակրուած ըլլալով հոն գտցի: Եւ հետեւեալ օրը երեք-
շաբթի, ևս երբ պալատ կը գտնուէր, Պատրիարքը
մարդ զրկեր է Բ. Դուռ իմ հոն գտնուելու հասկնալու
համար, որպէս զի ինձ այցելէ: Այս պարագան ներքին
գործոց նախարար Բրիֆաթ բաշան պալատ գալուն ըսած
էր ինձ:

Ինչ որ է, երեքշաբթի օրն ու գիշերը Պալատը մը-
նացի, առանց դուրս ելլալու: Հետեւեալ օրը չորեք-
շաբթի, Նախարարաց ժողովին մէջ գտնուելու և եր-
կու ժամէն Պալատ վերադառնալու պայմանաւ, կէս
օրէն ետք Բ. Դուռ երթալու համար հրաման ստա-
ցայ: Քանի որ ստիպողական գործ մը կար որ Պալա-
տին մէջ պիտի կարգադրէինք, կարելի չէ՞ որ այսօր Բ.
Դուռ չերթամ, ըսի սենեկապետ Արիֆ պէյին և խնդրե-
ցի որ այս առթիւ Սուլթանին հրամանն առնէ: Արիֆ
պէյ կայսեր ներկայացաւ և վերադարձին պատասխա-
նեց թէ կայսրը կ'ըսէ թէ այսօր Նախարարաց Խորհուր-
դի օրն է. Եպարքոսի բացակայութիւնը պատշաճ չէ,
մինակ թէ պէտք չէ ուշանաք, երթալնիդ ու գալեր-
նիդ երկու ժամ միայն տեւելու է: Այս հրամանին պատ-
ճառն հետեւեալ մանրամասնութիւններէն պիտի հաս-
կըցուի:

Հայկական Խնդիրն ուսումնասիրելու համար թըն-
դանօթարանի վերատեսուչը Պալատ հրակրուած էր, որ
այս Իրատէին ինձ հաղորդուելու պահուն, Նախարա-
րաց սենեակը կը գտնուէր: Հոն էին նաև դատական,
ներքին ու արտաքին գործոց նախարարները, որոնց
հետ Բ. Դուռ երթալով ժողով գումարեցինք: Ես կը

Կարծէի որ ներկաները ժողովին մէջ նոյն օրուան հայ-
 կական դէպքին առթիւ բաներ մը պիտի ըսեն կամ
 պիտի հարցնեն : Մինչդեռ ոչ ոք խօսք բացաւ այդ
 խնդրոյն վրայ : Առանց ուրիշ խնդիրներու վրայ խոր-
 հըրդակցութեան ժամանակ ձգելու, նախ Թնդանօթա-
 րանի վերատեսուչ Զէքի բաշա, յետոյ Սպարապետ Ռի-
 դա բաշա և յետոյ Մովսյիւն նախարար Հիւսնի բաշա,
 երեքը մէկ բերան յայտարարեցին թէ զինւորական
 պաշտօնատանց մէջ դրամական խիստ մեծ անձկութիւն
 կը տիրէ և պէտք է անմիջական, անյապաղ կերպով
 փութացնել նախապէս ծրագրուած մաքսային փոխա-
 ռութիւնը : Պատասխանեցի թէ հարիւրը 75 հաշուով
 այս փոխառութեան գործողութիւնը կատարել ընդու-
 նելի առաջարկ մը չէ : Թուրխան փաշան ալ ըսաւ թէ
 հիմա Բարիզի դեսպան Զիա բաշայէն հեռագիր մը առի
 որ կ'ըսէ թէ Բարիզի դրամատէրներէն մէկ քանի պատ-
 ւաւոր անձինք դեսպանատուն գալով յայտարարած են
 որ այս փոխառութեան համար ամենանպաստաւոր պայ-
 մաններ կ'առաջարկեն, դեսպանին հեռագիրը հոս է :
 Պատասխանեցի թէ հեռագիրը թարգմանել և ձեւակեր-
 պութիւններովը Խորհուրդին ներկայացնելը երկար կը
 տեւէ, քանի որ երկու ժամէն պալատ պիտի դառ-
 նանք, ուստի աւելի աղէկ է որ հեռագիրը բերուի :
 Հեռագիրը կարգացինք, ուր դրամատէրները կ'ըսէին
 թէ Մեծ Եպարքոսութեան ուղղուած իրենց առաջարկ-
 ները առաջին թղթատարով պիտի զրկեն : Հետեւաբար
 առաջարկեցի որ մինչեւ այդ առաջարկներուն գալը
 պէտք է սպասել և փոխառութեան գործողութիւնը յե-
 տաձգել : Նախարարներէն ոմանք լուռ կեցան : Մեծա-
 մասնութիւնը իմ կողմս ըլլալուն, և պալատ վերա-
 դառնալու ժամը հասած ըլլալուն, ժողովը ցրուեցաւ :
 Ես ալ պալատ վերադարձայ : Պաշտօնանկութենէս քա-

նի մը օր ետք, դարձեալ այս փոխառութեան խնդիրը յաջորդիս Դեամբլի բաշայի նախագահութեամբ, պալատան մէջ գումարուած Նախարարաց Խորհուրդին ենթարկուեցաւ, բայց կարելի չեղաւ գլուխ հանել: Երեքշաբթի իրիկուն գերման իշխաններէն մէկուն ի պատիւ տրուած կայսերական հացկերոյթին ներկայ գլուխը ետք, հայկական դէպքին յատուկ թուղթերու քննութեան և խորհրդակցութեան համար մինչև կէս գիշեր պալատ մնացի, ուրկէ ետք հրատարեցուցուեցայ, հետեւեալ պատճառներով.

Նախ, Հայկական Խնդիրին սկզբնաւորութենէն ի վեր Սուլթանին հետ համակարծիք չէի: Երկրորդ՝ մաքսային փոխառութիւնը այնչափ աննպաստ պայմաններով կատարել չյօժարեցայ: Երրորդ՝ որոշուած բարենորոգումներու տեղեկագիրը վերադարձնել հրամայող իրատէն չգործադրեցի: Ամիս մը վերջ սակայն, Սուլթանը երկու անգամ ինձ յայտարարեց թէ՛ Բ. Գրան Հայկական Դէպքին երեքշաբթի իրիկունը սենեկասիտ Արիֆ պէյ երբ ձեռքը թուղթ մը բռնած իրեն ներկայացաւ, իբր թէ պահ մը մարելիք եկաւ Արիֆ պէյի վրայ, ուրկէ յուզուելով Սուլթանը զիս հրատարեցուցած էր: Թէ ի՞նչ էր Արիֆ պէյի ձեռքի թուղթը: Այս մարդը ոստիկանական նախարարութենէն պալատ եկած մէկ հեռագիրը կայս. հրամանով էնճիւմէնին բերած էր: Հեռագրին մէկ պատճէնն ալ ոստիկանութենէն Մեծ Եպարքոսութեան տրուած էր: Եպարքոսութեան եկած հեռագրին պատասխան մը գրուած էր էնճիւմէնին որոշումովը, որ կայսեր մատուցանելու համար տրուած էր Արիֆ պէյին: Ահաւասիկ այս էր թուղթը: Քալով պատասխանագրին պարունակութեանը, Ոստիկանական նախարարութիւնը կը ծանուցանէր թէ երեքշաբթի գիշեր Բերայի եկեղեցիին մէջ բաւական թիւով հայեր հա-

ւաքուած եւ և կ'ենթադրուի որ ասոնք յարձակում
 պիտի ընեն կայս . պալատան վրայ : Իսկ էնճիւմէնը կը
 պատասխանէր թէ պալատան վրայ յարձակիլ և ո՛չ մէ-
 կուն բերնին է ինկեր : Քաղաքին անդորրութեանը հա-
 մար ոստիկանութիւնը ամէն միջոց պէտք է գոր-
 ծադրէ :

ԱրիՖ պէյի ձեռքով կայսեր ներկայացուած այս
 պատասխանին մէջի «Եւ՞ ոչ մեկուն բերնին է ինկեր
 պալատին վրայ յարձակիլ» պարբերութիւնը ջիղերուն
 դպած էր Սուլթանին , որ սենեկապետ պէյը էնճիւմէ-
 նին զրկելով իրամայած էր որ այդ խօսքը վերցնեն : Եւ
 սակայն պատասխանը գացած էր արդէն : Հակառակ ա-
 սոր , Քատական նախարար Րիզա բաշա պատասխանեց
 որ եթէ ոստիկանութեան նախարարը իր հեռագրին մէ-
 ջէն հանէ «Հայերը կայս . պալատին վրայ պիտի յարձա-
 կիլն» պարբերութիւնը , մենք ալ անոր տրուած պա-
 տասխան պարբերութիւնը կը հանենք : Եւ սակայն չէի
 կրնար խելք հասցնել թէ իր հասցէին արդէն իսկ ուղ-
 զըւած հեռագրին մէջէն ինչո՛ւ կ'ուզուէր պարբերու-
 թիւն մը յարգուել : Ոստիկանութեան նախարարը Բե-
 րայի կառավարիչին տեղեկատուութեան վրայ ուղղած
 էր այս հեռագիրը , ուստի փափագ յայտնեցի որ կա-
 ռավարիչին ոստիկանութեան ուղղած թէղքերէն տես-
 նենք անգամ մը : Սուլթանը այն գիշեր բերել տուած
 էր թէղքէրէն ու սենեկապետ Ֆայիգ պէյի միջոցաւ էն-
 ճիւմէնին զրկած : Երբ կարդացինք , տեսանք որ պա-
 լատին վրայ յարձակում գործելու պարագան յայտնող
 ո՛ր և է բառ մը իսկ չկար Բերայի կառավարիչին գրու-
 թեան մէջ :

Վերը իրաժարեցուցուելուս պատճառներուն մէջ ի-
 րատէի մը չգործադրուիլն ալ յիշած էի : Այս առասիկ ա-
 սոր բացատրութիւնը : Այն գիշեր պահանջուեցաւ որ

քարենսրոգումներու համար նախապէս տրուած իրատէլի մը պաշտօնաթուղթերը պալատ վերադարձուին, որպէս զի անոնց թուականներուն նայունն : Պատասխանած էի թէ այդ իրատէներուն թուականները կայսեր քով պահուած բնագիրներուն և Ա. քարտուղարութեան պաշտօնատան տոմարներուն մէջ արձանագրուած են : Պահանջը կրկնուեցաւ, և այս անգամ ալ Արտաքին գործաց նախարարութեան քով դտնուած օրինակներուն թուականին նայեցաւ Արիֆ պէյ և սակայն դարձեալ Սուլթանը իրատէով բնագիրները պահանջեց ինձմէ : Ստիպուեցայ պատասխանել թէ պետական դիւանատան մէջ պահուած կայս. իրատէներուն վերադարձուիլը հակառակ է երկրին օրէնքներուն : Իմ այս պատասխանս Սուլթանը իր նկատմամբ անվստահութիւն մեկնեց ու սենեկապետ Արիֆ պէյի ձեռքով իրատէ բրաւ թէ քանի որ վստահութիւն չունի իմ վրաս՝ իրատէներս անձամբ թող բերէ տեսնեմ, ու տեսնելէս ետքը թող առնէ տանի : Բնականաբար ցաւեցայ որ Սուլթանին անձը անխտանի և կասկածելի կը նկատուէր եւ անանկ կասկած մը կը ծնէր Վեհապետին միտքին մէջ : Երբ Պետական դիւանատունը բանալ տալով պահանջուած իրատէները բերելու հրաման տուի Ամէտի պէյին, զոր կէս դիշերին Բ. Դուռ զրկեցի, Ամէտի պէյը չեկած արդէն ես րաժարեցուցուեցայ : Ամէտի պէյը երբ պալատ դարձաւ, Քեամիլ փաշան Մեծ Եպարքոսութեան պաշտօնին բարձրացած տեսնելով, իրատէի թուղթերը անոր յանձնեց :

Դալով այլակական դէպքին, Ունձեան Աբիլ և Նուրեան Յովհաննէս էֆ.ները յայտարարեցին թէ այս դէպքը Ռուսիայէն եկած տասներէնգի չափ Հայեր կազմակերպեցին, ժողովուրդը գրգռողներն անոնք էին, Պատրիարքը (Իզմիրեան) մասնակցութիւն չունի բնան : Ու-

աիկանութիւնը Ռուսիայէն եկած Հայերուն նկատմամբ շատ անտարբեր դտնուեցաւ : Չեմ գիտեր թէ առանց Պատրիարքին հաւանութեան ասանկ բան մը կրնա՞ր տեղի ունենալ : Բայց Պատրիարքին անցիալը խիստ ծանօթ ըլլալով, ի՞նչպէս եղած է որ անհասկանալի ընտրութեամբ մը անիկա Պատրիարք ընտրուած և կառավարութեան կողմէ ալ վաւերացուած է : Ասոր չկրցայ խելք հասցնել : Բացատրութեան կը կարօտի կառավարութեան համակերպութիւնը և վաւերացումն իզմիրլեանի Պատրիարքութեան, որովհետեւ դէպքին սկզբնաւորութեան կապն այս է : Փալով ոստիկանութեան, խռովարարներն արեւին ծագելէն առաջ հաւաքուեր են եկեղեցիին մէջ, որոնց նպատակն և ընթացքն երբ ա՛լ աւելի կանուխ պէտք էր հաղորդուէր իշխանութեան, ատիկա զանց առնուած է և թոյլ տրուած է որ ամբօխին մէկ մասը Սուլթան Մահմուտի առջև և մէկ մասն ալ Բ. Գրան շրջակայքը հասնի :

Մնաց որ, իմ Եպարքոսութենէս ետք, երկու ամիս մայրաքաղաքիս ամբողջ փողոցներն ու հրապարակները լեցուած էին զինուորներով : Մինչդեռ ո՛չ դէպքին օրն և ոչ ալ հետեւեալ Երեքշաբթի ու Չորեքշաբթի օրերն որչափ ո՛ր զինուոր պահանջեցի, ո՛ր և է կարեւորութիւն չտրուեցաւ այս պահանջումիս : Ոստիկանական նախարարութիւնն ալ թէև ոստիկան զինուորներուն անբաւականութիւնն առաջ բերելով դէպքին օրը, խստիւ զինուորական ուժ պահանջած էր և սակայն անոր դիմումներուն ալ կարեւորութիւն չէր տրուած Սպարապետութեան կողմէ : Գործն ասանկ ըլլալով հանգերձ, Պատրիարքին ու Պատրիարքարանին չարունակ զրկուած խիստ հրամաններն և հաւաքուող բազմութեան ուղղուած խրատներն ու սպառնալիքներն անզօր չմնացին ու ժողովուրդը ցրուեցաւ : Առանց կրօնքի ու ազգի

խտրութեան, բաւական թուով զինուած տնձինք և յարձակում գործողներ բռնուելով բանտարկուեցան :

Քանի մը հազար Հայերու իրենց ընտանիքովն և կեղեցիներուն մէջ համախոնուելին և ծանօթ ընթացքին մէջ գտնուելն և դեսպանական միջամտութեամբ միայն իրենց հաւաքատեղիներէն դուրս ելլելն և ուրիշ պաւրաքաներ նկատողութեան առնելով՝ երբ բաղդատութեան դնենք դէպքին առջի օրուան ու վերջին օրուան անցուդարձը, անշուշտ պիտի տեսնուի որ իմ բռնած ընթացքս ա՛լ աւելի ուզիղ էր և օգտակար :

Ճընտրզլրի առջև երբ ոստիկանութեան առաջին ժուռնալն առի, ինծի հետեւող թիկնապահիս հետեւեալ հրահանգը տուի. — շուտով ոստիկանական պաշտօնատուներ գնա՛, նախարարը տե՛ս և ըսէ՛ որ Հայերը Բ. Գրան վրայ յարձակելէ արգիլելու և առանց արիւնսակողութեան զանոնք ցրուելու համար անհրաժեշտ եղած կարգադրութիւնները թող ընէ, և Բ. Գուռ թո՛ղ գայ : Բ. Գուռ հասնելուս, եպարքոսական մէքթուպճին գտայ և հետեւալ հեռագիրը տուի պալատ. — «Ոստիկանութեան նախարարութենէն հիմա առնուած թէղքերէի մը վրայ, Հայերուն համախոնումը արգիլելու համար պէտք եղած միջոցներուն ձեռնարկուեցաւ : Մանրամասնութիւնը առանձին պիտի ներկայացնեմ :» Աւասիկ Պապը Ալիի դէպքին առթիւ փոխանակուած գրութեանց պատճէնները. —

Պատրիարքարանին հետեւալը ուղղուեցաւ.

«Հայոց պատրիարքին և հայ երեւելիներուն : — Կը հրամայեմ որ ձեր ժողովուրդը հիմա ցրուէք : Ըսելիք ի՛նչ որ սնիք, Բաթրիք էֆ.ն, Կրօն, ու Քաղաք. ժողովներէն մէկ մէկ անձի հետ Բ. Գուռ գալով թող հաղորդէ : Կրկին կը հրամայեմ որ ժողովուրդը ցրուի :

«Վերոյիշեալ յայտարարութիւնը ֆէխամէթլու,

տէօվլէթլու Սատազամ բաշային և Գատական ու
Կրօնից նախարար տէօվլէթլու բաշաներուն հետ համա-
խորհուրդ տուած ըլլալնիս կը ծանուցանեմ:»

ՍՏՐ. ՆԵՐԲԻՆ ԳՈՐԾ. ԵՄԻՆ.

ԲԻՅԱԹ

18 Սեպտ. 1311

Այս զեկուցագիրն ոստիկանական նախարարին հետ
զրկուեցաւ Պատրիարքարան, երբ Հայերուն մէկ մասը
արգէն իսկ Պարսից դեսպանատան առջև հասած էր, և
մէկ մասը Սուլթան Ահմէտի և Գատրիկայի իրապարակ-
ներուն մէջ ցրուած: Նոյն պահուն ոստիկանութենէն
Բ. Գուռ եկած թիկնապահներ ստիպողաբար զինուոր
կը պահանջէին, ուստի հետեւեալ հեռագիրը տուի
սպարապետութեան.

«Ոստիկանական նախարարութենէն հիմա ծանուց-
ուեցաւ թէ Հայերուն հաւաքուիլ հեռզնեմէ կը ստուա-
րանայ: Նախազգուշութեան համար վաշտ մը զինուոր
պատրաստ պահեցէ՛ք:»

Ստոր. ՍԱՅԻՏ

Այս միջոցին պալատէն հեռագրով շարքուեցաւ թէ
գործերն ի՛նչ վիճակի մէջ են և թէ Հայերը յարձակած
են Բ. Գրան վրայ թէ ոչ: Հետեւեալ պատասխանը
տուի:

«Հայերուն Բ. Գուռ եկած ըլլալը շիտակ չէ: Եկե-
զեցույ իրապարակին և Գատրիկայի մէջ հաւաքուած
ժողովուրդը ցրուելու համար, Պատրիարքին և Հայ
երեւելիներուն ուղղուած ազդարարագիր մը զրկուեցաւ,
ոստիկանութեան նախարարութեան ձեռքով: Յանձնա-
րարուեցաւ որ Պատրիարքը Բ. Գուռ գայ: Սպարապե-
տութեան ծանուցուեցաւ որ Բ. Գուռը պաշտպանելու
համար վաշտ մը զօրք սպասեցնէ պաշտօնատան շրջա-
կայքը:»

Ստոր. ՍԱՅԻՏ

Ոստիկանական նախարարն երբ դարձաւ Պատրիարքարանէն, ըսաւ թէ Պատրիարքն յայտարարեք է որ զինքը չի կրնար տեսնել, հետեւաբար նախարարը տեսնուեր է մէկ քանի ժողովականներու հետ, որ ըսեք են թէ պիտի աշխատուի ժողովուրդը ցրուելու, բայց առաջարկուեր է զէնք չգործածել հաւաքուած ժողովուրդին դէմ: Նախարարը դարձած միջոցին, չատ տեսնելով քաղմութիւնը, անդորրութեան պահպանման համար պնդեց որ զինուոր պէտք է զրկել (10 Քէպր-իւլ-էլ-վէլ, 343) որով յանձնաժողովը խորհրդակցեցաւ և հետագայ զեկոյցը Պատրիարքարանին, իսկ հեռագիրն սպարապետութեան զրկուեցաւ: —

ՊԱՏՃԷՆ ԶԵԿՈՒՑԱԳՐԻՆ

Հայոց Պատրիարքութեան եւ Կոնստանդուպոլսի Գաղափական Ժողովներուն ներկայ անդամներուն.

Հաւաքուած ժողովուրդը ցրուելու պէտքը յանուն Կայս. Կառավարութեան հաղորդելու համար ոստիկանական նախարարը զրկուած էր Պատրիարքարան: Ս. Պատրիարքը չուզեց տեսնել նախարար, որուն վրայ եպարքոսական թիկնապահ Սալիտ պէյը զրկուած էր այս պաշտօնը կատարելու համար, բայց ժողովուրդը դարձեալ չցրուեցաւ: Միայն ժողովականի մը առած պատասխանով ետ դարձաւ Սալիտ պէյ, և տուած պատասխանին մէջ ըսուած էր թէ պիտի աշխատի ժողովուրդը ցրուել, և սակայն ըսուած է թէ պէտք է ընդունուի ոստիկանական նախարարութեան միջոցաւ Բ. Դանէն ելած խնդրանքը: Բայց նախարարին ալ ըսած խօսքէն այնպէս կ'երևի թէ՛ յանձնարարուեր է որ զէնք չգործածուի հաւաքուած ժողովուրդին դէմ: Կայ-

սերական կառավարութիւնը մեզմ ընթացք բռնեց ըստ օրինի արգիլեալ հաւաքումներու պատճառ եղող անձանց հանդէպ, անոնց նկատմամբ գործեց Պատրիարքարանին միջոցաւ, և հաւաքումն ալ տարբեր կերպով չցրուեց, ինչ որ արդիւնք էր իր գործովալիւր զխտումներուն, զի գլխէր թէ այս հաւաքումը գործն էր սահմանափակ թուով կարգ մը մարդոց, որոնց զխտումները ո՛չ կառավարութեան շահուն և ոչ ալ հասարակութեան օրինաւոր և օրինական շահերուն կը համապատասխանեն: Հետեւաբար, մինչև մէկ ժամ, հաւաքուած ժողովուրդը յանուն օրինաց ցրուելու որոշում տրուած է միաձայնութեամբ:»

10 Րէպի-իւլ-Ախրը, 1313

Արտաքին գործոց նախարար՝ ԹՈՒՐԽԱՆ

Ներքին գործոց նախարար՝ ՐԻՖԱԹ

Գատական և կրօնից նախարար՝ ՐԻՉԱ

Մեծ-Եպարքոս՝ ՍԱՅԻՏ

Այս որոշմնագիրը ցերեկը ժամը 8.15ին յանձնեցիւ եպարքոսական թիկնապա: Սալիտ պէյի, պատկանելոյն հաղորդելու համար զայն:

Ներքին գործոց նախարար
ՐԻՖԱԹ

10 Րէպի-իւլ-Ախրը, 1313

Հեռագիր առ Սպարապետութիւն.

Ոստիկանական նախարարը եկաւ և ըսաւ թէ՛ Հայոց բազմութիւնը շատ է. ներքին գործոց նախարարին հետ խորհրդակցութեամբ կ'ազդարարուի ձեզ թէ՛ մի միայն առ ի կանխազգուշութիւն վաշտ մը զինուոր յարմար սպայի մը հրամանին ներքեւ պատրաստ պահէք Բ. Գրան շուրջը:

10 Րէպի-իւլ-Ախրը, 313:

Հեռագիր առ Սպարապետութիւն.

Հայոց հաւաքումին հետեւանօք միմիայն Բ. Գուռը

պաշտպանելու համար թիկնապահի միջոցաւ խնդրուած և յետոյ հեռագրով դարձեալ ուզուած մէկ վաշտ զօրքը զրկեցէք, և երկու գունդ հեծելազօրք առ ի կանխազգուշութիւն պանեցէք Սպարապետութեան Դրան մէջ, սպասելով հրահանգի թէ զանոնք պէտք է զրկել թէ ոչ հաւաքման վայրը :

10 Բէպի-իւլ-Ախրը, 313 :

Այս հեռագիրն ալ Սպարապետութեան զրկուելէ վերջը, Սպարապետին կողմէ գիր մը եկաւ Բ. Դուռ : Այս գիրին մէջ ըսուած էր թէ առտուն ոստիկանական նախարարը իր մօտ զրկեր է ոստիկան-զօրաց հրամանատարը՝ զօրք տրուելու համար : Սպարապետը իր գիրին մէջ խօսելով մեր կողմէ եղած դիմումին վրայ, կ'ըսէր թէ զօրք զրկելը յարմար չէ, և պէտք է կորովի ընթացք ցոյց տալ : Այս գիրէն ետքը հեռագիր եկաւ պալատան Ա. քարտուղարութենէն, ուր ըսուած էր թէ պէտք չէ Բ. Դրան շուրջը Նիզամիյէ զօրք բերել, այլ պէտք է բաւականանալ փողոցներուն մէջ պահակախումբեր չրջեցնելով և այսպէս կը հրամայէ իրատէ մը : Ահաւասիկ պատճէնները Սպարապետին և Ա. քարտուղարին հեռագիրներուն :

«Ոստիկանական նախարարին կողմէ հիմա քովս զրկուեցաւ ոստիկան-զօրաց հրամանատարը, և ծանոյց թէ Հայերը հաւաքուած են Բ. Դրան առջեւ, զէնք գործածած են, և Ոստիկանութեան Դունէն Սէրվէթ անուն մէկը սպաննած են, ժողովուրդին նեղութիւն կը պատճառեն և մէկ կողմէ ալ խուռն բազմութեամբ կը խուժեն Բ. Դուռ : Հետեւաբար խնդրեց զինւորական օգնութիւն : Բայց ես պատասխանեցի թէ անդորրութեան պահպանման գործը անկ է ոստիկաններուն և ոստիկան-զինւորներուն, և խորհելով որ գուցէ քաղաքականապէս դժուարութիւն կ'ելլէ զինւորական խըս-

տութիւն բանեցնելով՝ առանց կանխաւ հասկնալու թէ ի՛նչ է Հայերուն նպատակը, և թէ իրենց շարժումը կանխապատրաստութեան արդի՞ւնք է թէ ոչ, յանձնարարեցի հոգ տանելու անդորրութիւնը պահպանելու ուստիկաններով և ոստիկան-զինւորներով, և սակայն, ըստ սովորութեան, ոստիկաններու և ոստիկան-զինւորներու հետ պատին պահակախումբեր, և այսպէս կորով ցոյց տրուի: Բաց աստի, ըսի ոստիկան զօրաց հրամանատարին թէ՛ եր դժուարութիւն մը յառաջ գայ կամ տարբեր պահանջում մը ունենայ, յայտնէ ինծի: Զայս զեկուցանելով ձեզ, մնամ...

Սպարապետ՝ ՐԻԶԱ.

18 Սեպտեմբեր, 1311

* * * Ձեր երկրորդ հեռագիրը կարդաց ն. վեհափառութիւնը: Ըստ սրում արդէն վաշտ մը զինւոր կը գտնուի Բ. Գրան առջև, և տեղի չտալու համար այնպիսի զրոյցներու թէ կոխուեր է Բ. Գուռը, պէտք չէ դարձեալ զօրք բերել Բ. Գուռ, այլ ոստիկաններու և ոստիկան-զինւորներու հետ բաւականաչափ զինւորական պահակախումբեր կազմելով պէտք է դրուին պէտք է առանց արիւնահեղութեան ցրուին հաւաքումները, այս կերպով պէտք է հաստատել անդորրութիւնը, ու պէտք է ձեռքակալել ձեռքերնին գէնք ունեցողները իբր կառավարութեան անհնազանդ, և այս մասին պէտք է հետզհետէ տեղեկութիւն հաղորդել, ինչպէս կը հրամայէ կայս. Իրատէ մը, և այսպէս ալ զեկոյց եղած է Սպարապետութեան:

18 Սեպտ. 311.

* * * Ոստիկանականական նախորարը ծանուցած ըլլալով թէ Հայոց բազմութիւնը մեծ է, Ձեր Բարձրապատուութիւնն ալ սպարապետութեան ծանուցեր է թէ միմիայն առ ի նախազգուշութիւն վաշտ մը զինւոր

զրկուի Բ. Դուռ: Այս մասին Ձեր զրկած հեռագիրը տեսաւ Ն. Վեհափառութիւնը: Բ. Դրան մէջ արդէն շատ զինւոր գտնուելուն համար, և յետնագոյն տեղեկութիւններէ հասկցուած ըլլալով թէ Բ. Դրան շուրջ համախմբում չկայ, պէտք չէ վաշտ մը զինւոր բերել Բ. Դուռ, տեղի շտաբու համար այլ ընդայլոյ զրոյցներու թէ՛ Բ. Դուռը կոխուած է: Կառավարութիւնը թող կատարէ իր պարտքը հարկ եղած տեղերն ըստ սովորութեան պահակախումբեր զրկելով. համախմբումները պէտք է բարւոք կերպով ցրուին առանց թոյլ տալու որ եպերեկի անձինք գան Բ. Դուռ, և առանց արիւնհանգութիւն ըլլալու, զրդիչները ըստ օրինի ձերբակալուին ու հարցաքննուին, և ճշմարտութիւնն երեւան ելլէ, պէտք չէ թոյլ տրուի որ խնդիրն Եւրոպական գոյն ստանայ: Ձայս պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ ըստ կայս. իրատէի, և զեկոյց ալ եղած է Սպարապետութեան:

Կայս. Ա. քարտուղար՝ ԹԱՀԱԻՆ

18 Սեպտ. 311

Նոյն միջոցներուն մէկ կողմէ կարգադրութիւններ կ'ընէինք դէպքին առաջին առնելու և միւս կողմէ հետեւալ թղթակցութիւններով կը զբաղէինք:

Պալատան Ա. ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒՔԵԱՆ.

Շարունակութիւն քիչ մը առաջուան հեռագիրներուս:— Դատական և ներքին գործոց նախարարներուն հետ ենք և կը զբաղինք Հայոց հաւաքման անթիւ ձեռք առնուելիք միջոցներուն վրայ: Ինձօալլան փորձանքը լաւ լուծում մը կը ստանայ:

10 Րէպի—Իւլ—Սեպր, 30«

* * Շարունակութիւն երեք հեռագիրներուս:— Թէև քիչ մը բազմութիւն տեսնուեցաւ Սուլթան Ա. մէտի հը-

բապարակին վրայ և Բ. Դրան շուրջը, բայց ցրուեցաւ : Պատրիարքարանին և Գատըրկայի կողմն ալ մեծ բազմութիւն գտնուելուն պատճառաւ զայն ալ ցրուելու մասին յանուն կառավարութեան զեկոյց ընելու և իրենց ըսելիքները յայտնելու համար քալաքական ու կրօն, ժողովներէն մէյ մէկ անդամի հետ Պատրիարքը Բ. Դուռ հրաւիրելու և զեկոյցը ամէնուն կարդալու համար նախ ոտիկանական նախարարը, և յետոյ եզարքոսական թիկնապահներէն մէկը զրկուեցան Պատրիարքարան : Դատական և Ներքին գործոց նախարարներուն հետ զբաղած ենք ուշադրութեամբ ձեռք առնելու հարկ եղած միջոցները՝ անդորրութեան պահպանման և խընդոտն բարուք կարգադրմանը համար : Պատրիարքը գալէն վերջը ի գործ պիտի դրուի պէտք եղածը ըստ պահանջելոյ հարկին :

10) Բէպի-Իւլ-Ախրըր, 313.

Ժամը 10ին ուղղակի եկաւ ուրիշ իրատէ մըն ալ, որով կը հրամայուէր դարձեալ Պապը Ալի զինուոր չի բերել, հաւաքուած մարդոց թիւը ծանուցանել, և սկիզբէն ի վեր տեղի ունեցած անցքերուն մասին մանրամասն տեղեկութիւն հաղորդել : Վերոյիշեալ զեկոյցին վրայ լուր եկած էր թէ բազմութիւնը պիտի ցրուի մինչեւ մէկ ժամ : Այս լուրը հասաւ երկրորդ իրատէէն առաջ : Առաջին յանձնաժողովը հետեւեալ տեղեկագիրը զրկեց .

* * Հիմա պալատան Ա. քարտուղարութեան կողմէ զրկուած մասնաւոր գրոյն մէջ ըսուած էր թէ Բ. Դրան մէջ արդէն վաշտ մը զինուոր գտնուելուն և վերջին լուրերէն ալ իմացած ըլլալուն համար որ Բ. Դրան շուրջը բազմութիւն չկայ, հարկ չի մնար վաշտ մը զինուոր բերելու Բ. Դուռ, այլ պէտք է պահակախումբեր դրուին

ըստ կանոնի, պէտք եղած տեղը, բազմութիւնները պէտք է բարւոք կերպով ցրուին առանց թոյլ տալու որ եպերեկի անձինք գան Բ. Գուռ, և առանց արիւն թափելու. ըստ օրինի ձերբակալուին դրդիչները, ճշմարտութիւնը երեւան հանուի, և տեղի չարուի խընդրոյն եւրօպական գոյն ստանալուն, և ձեռք առնուած միջոցները զեկուցուին, ինչպէս կը հրամայէ կայս. իրատէ մը: Գրուած էր նաև թէ այս մասին զեկոյց եղած էր Սպարապետութեան: Ինչպէս կանխաւ յայտնուեցաւ հեռագրով, Պապը Ալիի և Սուլթան Ահմէտի կողմերն և ի Գաթրիկա համախմբումներ ետջին, բայց Բ. Գրան և Սուլթան Ահմէտի կողմերը տեղի ունեցած համախմբումները ցրուեցան, և լոկ առ ի կանխազգշութիւն Բ. Գրան շուրջը վաշտ մը զինուոր ըբրել հարկ դատեցինք, դատական, ներքին և օստիկանական նախարարներուն հետ համախորհուրդ, հետեեալ նկատումներով. —

— «Նախ և առաջ, եթէ չցրուէր Պապը Ալիի շուրջը տեղի ունեցած համախմբումը, հաւանական է որ դժուարութիւններ ծագէին և կամ յարձակումներ տեղի ունենային: Երկրորդ, երբ Բ. Գրան մէջ իբր պատրաստ ցոյց արուած գումարաակ մը զօրաց թիւն հարցուեցաւ սպայէն, ասիկա նախ ըսաւ թէ 85 հոգի են և յետոյ յայտնեց թէ 65 հոգի են ու անկարող են յարձակում մը վանելու: Երրորդ, օստիկանական նախարարն յայտնեց թէ ձեռքն ունեցած օստիկան զօրաց խումբը բաւական չէր, և պէտք զգացուց նախարարութեան տրամադրութեան ներքև գնելու Բ. Գրան շուրջը գտնուող օստիկաններն ու օստիկան-զինւորները, քաղաքին մէջ ուրիշ տեղուանք պաշտպանելու, և Գաթրիկայի ու Պատրիարքարանին կողմերը գտնուած բազ-
 ՍԱՍՈՒԵԷՆ ԵՏՔԸ 29

մութեան յառաջխաղացութիւնն արգլիելու համար : Չորրորդ, հարկ դատուած է վաշտ մը զինուոր տրամադրելի ունենալ, զի թէև կ'աշխատուի խնդիրը վերջացնել առանց արիւնահեղութեան, բայց այսպիսի ոյժ մը պէտք էր զինուորական ցոյց մը ընել հարկ եղած պարագային : Սակայն, ինչպէս յայտնեցինք նախորդ հեռագրով մը, նախ և առաջ, երբ ոստիկանական նախարարը զրկուեցաւ Պատրիարքարան, Պատրիարքն ըսելով թէ հիւանդ է, իր վրայ չէ առեր բազմութեան ցրուումը : Ոստիկանական նախարարը դառնալէն ետքն զրկուեցաւ եպարքոսական թիկնապահ Նալիտ պէյ, որուն եւս նոյնն ըսել տուեր է Պատրիարքը, և ըսուեր է նաև թէ ընդունուի նախարարին միջոցաւ կատարուած խնդիրքը բազմութեան ցրուումին համար : Եղած խընդիրքն ալ այն էր որ բազմութեան ձեռք չըպցուի : Վերստին խորհրդակցութիւն կատարուեցաւ այս մասին, և բազմութիւնը ցրուելու համար յանուն կառավարութեան զեկոյց ընելու մասին զրկուեցաւ յիշեալ թիկնապահը Զեկուցադրին հետ : Թիկնապահը հիմա դարձաւ և լուր բերաւ թէ մնացեալ բազմութիւնը մինչևե մէկ ժամ պիտի ցրուուի : Բնական է թէ, ինչպէս կը հրամայէ կայս. իրատէն, ըստ օրինի պիտի ձերբակալւին դրդապատճառները, պիտի հարցաքննուին և մնացեալ բազմութիւնն ալ պիտի ցրուուի :» — Ստորագրութիւն եպարքոսին, դատական և կրօնից, ներքին ու արտաքին գործոց և ոստիկանական նախարարներուն :

Այսու հանգերձ, Բ. Գուռը ազատած չըլլալով Հայերուն յարձակման վտանգէն, առաջարկուեցաւ պահականոցի սպային որ պահակը կենայ Տիվանհանէին ասջիւ, և երբ յարձակում գործուի, յարձակողներուն ազդարարելիտ քաշուիլ, իսկ եթէ տսոնք չանսան, զինեալ ոյժով կատարուի վանումը : Սպան առ այս

պատասխանեց որ զինւորները 50—60 հոգի են, թէեւ
 հրացան ունին բայց ոչ փամփուշտ : Ասոր վրայ իրեն
 հրահանգ տրուեցաւ որ Հայերուն կողմէ յարձակում
 գործուած պարագային սուինով պատասխանուի : Այս
 միջոցին էր որ ցամաքային ու ծովային զինւորներէ,
 կրօնական ուսանողներէ և էսնաֆ զասակարգէ ոմանք,
 սկսեր էին Հայոց դէմ յարձակողական գրոյցներ տա-
 րածայնել : Քաղաքապետութեան կողմէ գրով մը հաս-
 տատուած ըլլալով այս վիճակը, անմիջապէս և արագ
 միջոցով մը գիրը զրկեցինք Շէյխ-իւլ-Իսլամութեան,
 Սպարապետութեան, ծովային և ստիկանական նա-
 խարարութիւններուն որ եթէ այս անհաճոյ վիճակը
 չարգիլուի, խստիւ պատասխանատու պիտի մնան :
 Զինւորական կանխազգուշական միջոցի համար իսկ
 Նիզամիյէ ոյժ գործածելու թոյլտուութիւն չտալով
 հանդերձ, իրատէի մը համաձայն, փողոցները շրջելիք
 պահակախումբերը այն օրը սպարապետութեան կողմէ
 չզրկուեցան պէտք եղած տեղերը, ժողովրդական այլ և
 այլ դասակարգերու յարձակումները շարունակուեցան,
 Հայերը բոլորովին չցրուեցան, որով անդարբութիւնը
 ապահով վիճակի մէջ չէր : Պապը Ալիի ձեռքը ուրիշ
 միջոց մնացած չէր, բայց եթէ խաղաղարար և յորդո-
 րիչ միջոցներով միայն վերջ տալ խնդրոյն : Վերոյիշեալ
 պաշտօնատանց պեանրուն հրամաններ տրուած ըլլալով
 հանդերձ, Քաղաքիւղէն ուղուած էին կրօնական ժո-
 ղովին նախագահ Տ. Քարբիէլ(?) (Այստեղ սխալ մը
 կայ : Սաիտ բաշա ապա կը ճշդէ թէ ուղած անձն է
 Քարբիէլ էֆ. Նորատունկեան, Արիկ էֆ. Ունճեան և
 Նուրեան էֆ. ներուն հետ), և Հայ երեւելիներէն Նուր-
 եան էֆ., որպէս զի երթային պատրիարքին մօտ և
 յորդորներ կարգային : Հաղորդակցութեանց համար ե-
 պարքոսական պաշտօնատան մէջ թիկնապահ չգտնուե-

լուն, դիմում եղաւ Սպարապետութեան մօտ հետեւեալ հեռագրով :

«Յպարքոսական պաշտօնատան մէջ կը գտնուին միայն երեք թիկնապահ, որոնցմէ երկուքը պաշտօնով հեռացած են : Երկու երեք թիկնապահ զրկեցէք, որպէս զի հայոց հաւաքման առթիւ պէտք եղած հրամանները կատարուին :»

10 Րէպի-իւլ-ախրը, 313 :

Սպարապետէն եկած պատասխանը կ'ըսէր թէ Սպարապետական դրան մէջ ալ թիկնապահ չի գտնուիր, որով, ինչպէս կը տեսնուի յետագայ գրութիւններէն, ստիպուեցանք դիմել պալատ : Յետոյ ելաւ այն իրատէն որ արդիւնք էր ի կանխազգուշութիւն վաշտ մը զինուոր ուղեւնուս : Անոր ի պատասխան, յանձնաժողովը ժամը 10.10ին հետեւեալ հեռագիրը զրկեց պալատան Ա. քարտուղարութեան .

«Ի կանխազգուշութիւն Բ. Դրան մօտ վաշտ մը զինուոր ուղեւելուն պատճառն էր վանել հաւանական յարձակում մը : Բայց ինչպէս կանխաւ յայտնեցինք, Սուլթան Ա.մէտի, Գատրկայի և Բ. Դրան շրջակայ համախմբումները ցրուած ըլլալով, հիմա զբաղած ենք ցրուելու պատրիարքարանին շուրջը գտնուող բազմութիւնը : Հոգ կը տարուի որ խնդիրը եւրոպական հանգամանք չստանայ : Դեսպանատուններուն ալ գրուեցաւ որ անդորրութիւնը կը շարունակէ : Մանրամասնութիւնք պիտի տրուին տեղեկագրով :»

Ստորագրութիւն՝ Վարչապետին, Դատական նախարարին, Արտաքին ու Ներքին գործոց նախարարներուն :

* * հաւաքուած մարդոց թիւը և դէպքին ծագումէն ի վեր ցարդ տեղի սենեցած իրաց մանրամասնութիւնները պիտի յայտնուին պատկանեալ պաշտօնա-

տան, ոստիկանական նախարարութեան տեղեկագրով :
Հիմա Պատրիարքարան ղրկուած զեկուցագրին վրայ
լուր ելաւ թէ բազմութիւնը պիտի պիտի ցրուի մինչեւ
մէկ ժամ : Կը խնդրենք քիչ մը միջոց տրուի, որպէս զի
իրերը բարւոք կերպով ընթանան :

18 Սեպտ. 311

Յիշեալ գրութիւններէն ետքը դարձեալ կարգ մը
թղթակցութիւններ տեղի ունեցան պալատան հետ, ո-
րոնց պատճէնները ա՛նուասիկ .

* * Յաւելուած նախորդ վեց հեռագիրներուս :— Ե-
պարքոսական պաշտօնատան մէջ երեք թիկնապահ կը
գտնուի, որոնք կը գործածուին ոստիկանական նախա-
բարութեան հետ հաղորդակցութեան համար որով խընդ-
րեցիւք Սպարապետութենէն՝ երկու երեք թիկնապահ
զրկել՝ Պատրիարքարանին շուրջը տեղի ունեցած դէպ-
քերը լուր տալու համար, բայց չզրկուեցաւ՝ թիկնա-
պահ չկայ ըսելով : Կը խնդրենք որ այս մասին Սպա-
րապետին հրաման ըլլայ իրատէով մը :

18 Սեպտ. 311

Յաւելուած առաջին հեռագրին :— Սուլթան Ահմէտի
շուրջը կրօնական ուսանողներէ, բեռնակիրներէ և էս-
նաֆ դասակարգէն բազկացեալ աւելի քան 5000 հոգի
հաւաքուելով, բիրերով Հայոց վրայ յարձակում գոր-
ծըւած ըլլալուն լուրը հիմա հերքեց ոստիկանական նա-
խարարը, որ այստեղ կը գտնուի : Նախարարը յայտնեց
նաև թէ եզած բազմութիւնն ալ որ մեծ չէ, սկսեր է
ցրուիլ Իսլամ ժողովուրդին յորդորներովը : Այսու հան-
դերձ, հարկ եզած հրամանները տրուեցան որ Հայերը
պաշտպանուին յարձակումի դէմ :

18 Սեպտ. 311

* * Յաւելուած ութերորդ հեռագրիս : Ժամը 11էն
ետքը դարձաւ թիկնապահը և հաղորդեց թէ Պատրիար-

քարան մնացող մարդոցմէն 50—60) հոգի մինչեւ կէս
 փամ պիտի ցրուին : Իսկ մնացեալ 40ի չափ մարդիկ
 քիչ մը խօսք մտիկ չընենլուն համար ուզեր են այնտեղ
 անցընել գիշերը : Ոստիկանական նախարարը Պատրիար-
 քարան զրկուեցաւ , առաջարկելու և զեկուցանելու որ
 անոնք ալ ցրուին : Նախարարը տակաւին չդարձաւ և
 ըստ որում յարմար չտեսնուեցաւ երկար ատեն մնալ
 Բ. Դուռ , արտօնութիւն կը խնդրենք թէ բանակցու-
 թեանց չարունակութիւնը ո՞ւր պէտք է կատարել :

18 Սեպտ. 311

* * Յաւելուած ութը հեռագիրներուն : — Ոստիկա-
 նականական նախարարութեան կողմէ զեկուցուեցաւ
 թէ բազմութիւնը սկսած է ցրուիլ : Առինք նաեւ ձեր
 այն հեռագիրը որ կը հաղորդէ կայս. իրատէն , որպէս
 զի լուր տրուի թէ ամէն ոք իր տեղերը գացած է : Ինչ-
 պէս յայտնուած է քիչ մը առաջուան հեռագրէն , Ոս-
 տիկանական նախարարը զրկուած էր , որպէս զի ցըր-
 ւին եկեղեցւոյն չըջափակը մնացած սակաւաթիւ մար-
 դիկը : Նախարարը տակաւին չդարձաւ : Բայց ըստ ու-
 ըում զանազան մեկնութեանց տեղի կրնայ տալ գիշե-
 րը մեր Բ. Դուռ մնալը , արտօնութիւն կը խնդրենք
 կամ գալու պալատ , կամ երթալ Եպարքոսին տունը ,
 որպէս զի Ոստիկանական նախարարութեան կողմէ զե-
 կույց մը եղած պարագային , հարկ եղած խորհրդակցու-
 թիւնները կատարենք , և կամ դառնալու մեր տուները :

18 Սեպտ. 311

Հ Ա Յ Ո Յ Բ Ո Ղ Ո Ք Ը

* * Հաստատուեցաւ որ Պատրիարքարանի եկեղեց-
 ւոյն մէջ կը գտնուին 80—90 հոգի : Ազգարարուեցաւ
 որ պէտք է հիմա ցրուին , և պատասխան առնուեցաւ

Թէ պիտի ցրուին : Ո՛չ մէկ կողմ բաղմուտիւն մնացած է : Պատրիարքն ըսաւ որ իբր թէ հաւաքման նպատակն էր գաւառներուն մէջ գործուած հարստահարութեանց հետեւանօք Հայերուն վնասուած ըլլալը , և մասնաւորապէս գանդատեցու Ամասիոյ կառավարիչ Պէքիր փաշային դէմ : Պատրիարքին առաջարկեցինք որ Բ. Գուռ գայ , և անիկա ալ խոստացաւ գալ :

Ոստիկանական նախարար

ՆԱԶԼՄ

10 Րէպի-իւլ-Ախրըր 313

ԶԱՐԴՆ ԻՆՉՊԷՍ ՍԿՍԱԻ

* * Յաւելուած միւս ինը հեռագիրներուն :— Հիմա , այսինքն ժամը երկուքին քսան մնացած՝ Բ. Գուռ դարձաւ ոստիկանական նախարարը : Իր յայտարարութիւնք կը գանուին վերև , 10 Րէպի-իւլ-Ախրըր 313 թուակիր Զրդ. հեռագրով :» Ա. Քարտուղարութենէն եղած զեկոյցին վրայ թէ Իրատէ եղած է որ դատական , ներքին ու արտաքին գործոց նախարարներուն հետ պալատ երթամ , գացի այնանդ , անոնց հետ միասին կայսեր ներկայացայ , ու դէպքին մասին բերանացի ևս բացատրութիւն տուի : Բացատրութիւնը սալէ ետքը , պալատան մէջ նախարարաց Խորհրդոյ յատուկ սենեակը գացինք ու սկսանք խորհրդակցութեան , դէպքին կրկնութիւնն արգիլելու վրայ : Իրատէ ելաւ որ դէպքին վրայ պատրաստուելիք տեղեկագիրը նոյն գիշերը տըրուի : Այս իրատէին համաձայն , երբ ընկերներուս հետ խորհրդակցութիւնք վերջացան , ես սկսայ թելադրել ու դատական նախարար Բիզա բաշան ալ կը գրէր տեղեկագիրը : Հաջիւ թէ կէսը եկեր էինք , երբ սենեկապետ Արիֆ պէյ եկաւ , և ըստ իրպատէի հազորդեց թէ մեր

տուները պէտք է դառնանք, և ես յաջորդ օրը կանուխ պէտք է դառնամ պալատ: Կէս դիշերուան մօտ դարձայ տունս, հետո անհելով Ամէտի Մէմէտ Ալի պէյը: Բայց ոստիկանական նախարարութենէն հասած գիրերն այնքան շատ էին որ մինչև առտու զբաղեցայ անոնց պատասխանները տալով: Ոստիկանութենէն եկած գիրերը կ'ըսէին թէ Պոլիս, Ղալաթիա, Թօփրանէ, Թէրսանէին կողմերը և ի Գատըզիւղ, Հայերը խումբ խումբ կը պտտին, կը յարձակին իսլամներուն վրայ և անոնք ալ կը յարձակէին Հայերուն վրայ: Կը ծանուցուէր նաև թէ Հայերը յարձակեր են մէկ քանի պահականոցներու վրայ: Շարունակ հրահանգ տուի որ ոստիկանութիւնը պահպանէ անդորրութիւնը, երկու ժողովուրդներուն իրարու դէմ յարձակումն արգիլուի, և զէպքին տարածման առաջքն առնուի: Ոստիկանական նախարարն առտուան մօտ հեռագիր մը զրկեց որով կը ծանուցանէր թէ ցերեկը սպաննուած Հայերուն թիւը 50ի չափ է, և արտօնութիւն կ'ուզէր անոնց թաղման: Գրեցի թէ պէտք է սպաննալներուն ինքնութիւնն հաստատուի, թաղումէն առաջ պէտք է Պատրիարքարան զիմելով կրօնական գործողութիւնները կատարել, բայց ասոնք, ըսի, յաջորդ օրը կատարուելիք գործեր են: Նախապէս ելած իրատէին համաձայն, յաջորդ օրը միայնակ դացի պալատ:

Գիշ մը ետքը Արիֆ պէյ քովն գալով ըսաւ թէ իրատէի մը համաձայն, պէտք էի ըսել թէ իրան է որ Անգլ. նաւատորմը Պոլիս գալու համար անցնելու վրայ է՝ Տարտանիէն: Պատասխանեցի թէ չեմ կարծեր որ այս լուրը ճիշտ ըլլայ, զի ո՛չ դեսպանատունէն Բ. Դրան և ոչ ալ Տարտանիլի կառավարչութենէն այս մասին ո և է զեկոյց եղած է: Նոյն պատու լսեցի ձայնը թնդանօթարանի վերատեսու, Զէքի բաշայի՝ նախա-

բարներուն յատուկ սենեակին յարակից Ա. Սենեկապետին յատուկ սենեակէն, և ըսի Արիֆ պէյին. «Ձէքի բաշան այստեղ է, ահա՛ ձայնը կուգայ, եթէ նաւատորմը նեղուցէն անցնելու վրայ է, ամենէն առաջ ինքը պէտք է գիտնայ: Այս մասին, թէև շատ անհաւանական է, եթէ նաւատորմն անցած իսկ է, — կրնաք իրարմէ տեղեկութիւն առնել և հասկնալ թէ ամբողջութեն ի՞նչպէս կը փոխադարձուի այս ընթացքը:» Արիֆ պէյ քովէս մեկնեցաւ այս պատասխանը հաղորդելու համար Կայսեր: Մինչև ամբողջ մէկ ժամ ու է իրատէ չեկաւ, բայց ժամ մը անցնելէն ետքը, Արիֆ պէյ եկաւ և ըսաւ թէ Պոլիս զրկուած «հրացանակիրները» հիմա ձեռքս գտնուած այս հեռագիրները զրկեր են: Գործի համար դատական պաշտօնատուն գացող երկու Հայեր սպաննուեր են Իսլամնետուն կողմէ, Հայերը դարձեալ սկսեր են համահմարուիլ, Վե՛հ. Կայսրը կը հրամայէ որ դուք այստեղ դտնուած ատեննիդ պէտք է ցրուի այն բազմութիւնը: Պատասխանեցի որ եթէ իրօք այսպիսի բազմութիւն մը կայ, պէտք է կա՛մ ցրուուի և կամ թէ գլխաւոր նախարարները պալատ կանչելով պէտք է խորհրդակցութիւն կատարուի, և կամ թէ ես Բ. Գուս երթալով երէկուան նման պէտք է յանձնաժողով մը կազմուի ու միջոցներ ձեռք առնուին: Եթէ Հայերը դարձեալ հաւաքուած են, ի՞նչպէս կրնամ ես միայնակ ու անհատական միջոցներով ցրուել զանոնք: Այս խօսքիս վրայ Արիֆ պէյ Կայսեր մօտ գնաց և վերադարձին կրկնեց Կայս. նախորդ իրատէն, այսինքն թէ ես միայնակ պէտք էի միջոցներ ձեռք առնելի: Ես կրկնեցի նախորդ գաղափարս: Ասոր վրայ իրատէ ելաւ, որուն հետեւանօք արտաքին, ներքին գործոց և դատական նախարարները, Թուրքսան, Բիֆալթ և Բիզա բաշաները, Ամէտի և Մէքթուպի էֆ.ները կանչուեցան և գործի

ձեռնարկուեցաւ : Միւս կողմէ, շարունակ լուր կուգար թէ ամէն տեղ Հայերն ոտք ելած են ու իսլաւներուն հետ կռիւ և ջարդ տեղի կ'ունենայ : Առաջարկեցի նախ և առաջ յետագայ ծանուցումը հրատարակել անցու-
ղարձ եղած հրապարակներուն և թաղերուն մէջ : Յանձ-
նաժողովն ընդունեց և տեղեկագիր ժողովարարատուե-
ցաւ : Իրիկունը կայս. իրատէն ելլելէն ետքը, ծանու-
ցումը բազմաթիւ օրինակներով տպագրուեցաւ և հեծ-
եալ ոստիկաններու միջոցաւ բաշխուեցաւ և հրատա-
րարակուեցաւ երկրին ամէն ժամերուն մէջ, սկսեալ
բանուկ վայրերէ :

ՊԱՏՃԷՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԻՆ

Երէկ, մար մը Հայերու համախմբման ու անոնց
ցրուումին մասին այսօրուան լրագիրները տեղեկութիւն
հրատարակած են : Բնական է թէ այս հաւաքման մէջ
ոստիկաններու և ոստիկան ղինւորներուն դէմ զինեալ
կեցած անձինք ձերբակալուեցան և դատի քաշուելով
օրինական տրամադրութիւնները պիտի գումադրուին
անոնք հանդէպ : Կը ծանուցուի և կը յանձնարարուի որ
իսլամ և ոչ-իսլամ կայս. հպատակներու ամէն դասա-
կարգեր ու անհատներ պէտք է շարժին ըստ հպատա-
կութեան օրինաւոր պարտաւորութեանց, և ո՛վ որ
օրէնքի հակառակ շարժի, իստիւ պատասխանատու
պիտի ըլլայ, ու այնպիսիներուն հանդէպ պիտի գոր-
ծադրուին օրինաց տրամադրութիւնները :

11 Րէպի-իւլ-Ախրը, 313.

Պ°

Մինչդեռ Երլտըզի մէջ արտասովոր նիստեր կը
գումարուէին և Բ. Դրան ու Գււմ գարուի Պատրիար-

քարանին միջեւ անընդհատ բանակցութիւններ կը կատարուէին, մայր եկեղեցի ապաստանած Հայերը ցրուել տալու մտօք, անդին, Լոնտոնի մէջ, Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնը, թիւ 16ի Հնչակի Յաւելուածին մէջ յայտարարութիւն մը հրատարակ կը նետէր հետեւեալ իմաստով .

Երէկ, Աեպտեմբեր 18ին, մեծ ու պատմական դէպք մը տեղի ունեցաւ Կ. Պոլսոյ մէջ, արիւնահեղ Մեծ Յոյց մը, Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան նախաձեռնութեամբ, առաջնորդութեամբ և գործադրութեամբ :

Ահա՛ երկրորդ անգամ, Բիւզանդիոնի երկինքին տակ, Վստփորի օփերը, համրտական Բռնակալութեան գլխուն, ահաւոր գզրողիւնով մը կը պայթի յեղափոխական շարժումը, և հայ արիւնը կրկին անգամ կը հոսի սուլթանանիսա մայրաքաղաքին մէջ :

Ահա՛ երկրորդ անգամ, հնչակեան դրօշին տակ, Կ. Պոլսոյ հնչակեան խումբերը, իրենց հետ ունենալով հայ ժողովուրդը, ինչպէս նաև աչքի առաջ ունենալով ամէն վտանգ ու սարսափ, կը դիմեն դէպի յեղափոխական ընդհանուր Յոյցը, և բովանդակ աշխարհի երեսին կ'արձակեն հայ ժողովուրդի թշուառութեան ազաղակը կը թնդացնեն անոր իրաւունքին ու պահանջումներուն խրոխտ ձայնը :

Ահա՛ երկրորդ անգամ, հնչակեան կարմիր դրօշակին տակ համախմբուած, հայ ժողովուրդը Կ. Պոլսոյ մէջ, լիաթօք կ'ազաղակէ .— Կեցցե՛ք Յեղափոխութիւնը, կեցցե՛ք Ազատութիւնը . . . :

Տ մէն ժամանակներէ աւելի, հիմա՛կ է որ հայ յեղափոխականներս, Հնչակեաններս, և մեզի հետ հայ ժողովուրդը, աւելի ուժգին կերպով բարձրացնենք մեր ձայնը Եւրոպայի առջև, ժողովրդային մեծ ու

վճռական Յոյցով մը, նոյն իսկ Հայութեան դահճապետի մայրաքաղաքին մէջ :

Հիմակ է ժամանակը բռնի կերպով հասկցնելու Եւրոպայի թէ՛ այսքան երկար տարիներու ընթացքում ո՛րքան իրաւունք ունի Հնչակեան յեղափոխական կուսակցութիւնը, և իրեն նեա նայ ժողովուրդը, երբ ամէն կերպով, ամէն եռանդով, չը խնայելով մինչև իսկ իրենց արիւնն ու կեանքը, ջանք թափեր են, կը թափեն միշտ և կը շարունակեն թափել ազատուելու համար հայկական իրականութեան դժոխքէն, որուն, Անգլիոյ թագուհիէն և լորտ Սօլդպըրիէն, Կլատսթունէն ու Լորտ Բօզպըրիէն սկսեալ մինչև Եւրոպայի պարզ հրապարակագիրն ու թղթակիցը, մէ՛կ անուն միայն կրնան տալ, Սարսա՛փ . . . :

Ըիչդ ժամանակը նիմա՛ էր, որ Հնչակեան կուսակցութիւնը, իբրև Հայ ժողովուրդի ներկայացուցիչ և անոր ձգտումներուն արտայայտիչ, իբրև Հայ յեղափոխական կազմակերպուած մարմին, պէտք է և երկայ ծանր աագնապին մէջ, յեղափոխական ցոյցով մը, նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ ու Սուլթանին զիմացը, բարձրացնէր իր ձայնը, Եւրոպայէն պահանջէր շուտափոյթ ու բաւարար լուծում տալու հայկական խնդիրին և ներկայացնէր նայ ժողովուրդին տնտեսական պէտքերն ու քաղաքական անմիջական նուազագոյն պահանջումները : Ազատագրուած Հայաստան ու Կիլիկիա, ժողովրդային ընդարձակ ինքնավարութեամբ մը, ընդհանուր և ուղղակի քուէարկութեան իրաւունքով և քաղաքական կատարեալ ազատութիւններով :

Ըիչդ նիմա՛ էր ժամանակը, որ Հնչակեան կուսակցութիւնը, նայ ժողովուրդին նեա միասին, յեղափոխական Յոյցով մը յայտարարէր թէ՛ ինքը մղած է, կը մղէ և պատրաստ է մինչև վերջին շունչը՝ աւելի խըն-

տութեամբ մղել սուրբ Կոիւր համբալի վանդալ տէ-
րութեան դէմ, անհաշտ, ըմբոստ և ապստամբ, ինչ-
պէս նաև արդաւ Կոիւր, մինչև որ հասնի իր մեծ
նպատակին :

Հնչակեան Կուսակցութիւնը, ինչպէս մինչև այսօր,
այսուհետև ալ պատրաստ ու կազմ կ'ըլլայ միշտ իր
կուռի տեղը : Բիրտ Ոյժը պէ՛տք է վերջապէս խոնարհի
Իրաւունքին առջև :

Յառա՛ջ, Հայ եղբայրնե՛ր, բարբարոսները մեզ կը
ջարդեն, աւազակնե՛րը մեզ կը կառավարեն, բայց մենք
ալ վճռականօրէն գործե՛նք զանոնք աւելի սրբելու
համար մեր կեանքի ասպարէզէն, ոչ անոնք մեր գլխուն
վրայ նստեր են կուռքի մը պէս և կը ստիպեն ուր լի-
զենք իրենց շարքիսները... : Յառա՛ջ, նոր ժամանակ-
նե՛ր հասած են, և Հայը ա՛լ ստրուկ չէ՛ : Մեր ձեռքին
մէ՛ջ է այսօր մեր ճակատագիրը, և վաղը մե՛նք կ'ըլ-
լանք անոյր տէրը, մեր ձեռքին մէջ է այսօր մեր ապա-
գան, և մենք զայն կ'ընենք բարեբաղդ : Մեր ձեռքն է
այսօր պարտադրել Եւրոպան՝ բաւարար լուծում մը
տալու Հայկական Խնդիրին, և մենք կ'ընենք զայն :
Մենք պատրաստ ենք և ի գործ կը դնենք աւելի ըն-
դարձակ շարժումներ : Ապստամբութեան հեղեղները կը
վազեն, և թշուառութիւնը կը լուան Հայաստանի ու
Կիլիկիոյ երեսէն, և իրենց կատաղի յորձանքներուն
մէջ կը խեղդեն մեր թշնամիները և Ար՛աւիրքի միջոցին
վեր կը բարձրացնեն Ազատութեան Դրօշը, աւետելով
Հայութեան փրկութիւնը :

Հայ ժողովուրդը, այս հօթ-ութ տարիներէ ի վեր
ծանրածանր չորհարանքի ու թշուառութեան, և արեան
ու յեղափոխական տազնապի մէջէն մարտնչուածով մը
քալելով անցնելով, վերջապէս հրեզէն տառերով կ'ար-
ձանագրէ պատմութեան էջերուն մէջ իր ազատութիւնը :

Հա՛յն է միայն Հայուն փրկիչը, իր սեփական ազատարարը և ի՛նքը պէտք է ըլլայ իր տէրը: Հիմա մենք կը գտնուինք մեր յաղթութեան նախընթաց օրը:

Սրեւելքը հրդեհի մէջ է, կը վառի:

Ազատութեան հնչա՛կը կը հնչէ:

Ա՛լ դադար չը կայ մեր կռուին մէջ, ո՛չ ալ սպասում:

Կամ այսօր, կամ երբէ՛ք. . . :

Կեցցե՛ 18 Սեպտեմբերի Յոյցը.

Կեցցեն Հայ ժողովուրդն ու Հայաստանը.

Կեցցե՛ն Յեղափոխութիւնն ու Ազատութիւնը.

Կեցցե՛ Հնչակեան Կուսակցութիւնը:

Անկցի՛ Բռնապետութիւնը . . . : »

Այս ցնցող ու մարտաշունչ յայտարարութեան թարգմանուած պատճէնը նոյնութեամբ երլարզ հեռագրուած որ Լոնտոնի օսմանեան դեսպանատան կողմէն:

Նախարարները պալատ կանչուեցան և մինչև կէս գիշեր ժողովք ըրին:

Միւս կողմէ, մեծ դեսպանները ժողովք կ'ընէին թարապիս, օրուան կացութեան վրայ խորհրդակցելու և իրենց ընթացքը ճշդելու համար:

Պատրիարքարանի մէջ կը գումարուէին Կրօն . և Քաղաք . ժողովները, երլարզի և Բ . Դրան կողմէն հաղորդուած հրամաններուն վրայ:

Հազարաւոր Հայեր Բերայի, Ղալաթիոյ ու Գումգաբուի եկեղեցիները կը մնան տակաւին:

Թէ՛ Պօլիս և թէ՛ Ղալաթիա, խանութները փակուած էին մեծ մասով:

Հայ ժողովուրդը, մահուան պատրաստութիւններու մէջ, խուժը խուժը կը հաղորդուէր:

Սարսափը կը սաւառնէր մայրաքաղաքին բնակչու-
թեան գլխուն վերեւ առ հասարակ :

Երբէք չէ՛ր տեսնուած ա՛յսքան տագնապալի կա-
ցութիւն :

Եւ սակայն հայ ժողովուրդը, հակառակ իր տուած
հարիւրաւոր գոհերուն, ցնծումի մէջ էր :

Մայրաքաղաքի բնակչութեան միւս տարրերը, հըր-
եայ, յոյն, եւրոպացի, ամէնքն ալ արտակարգ համա-
կրանքով մը կը զիտէին Հայերուն մարտիրոսութիւնը .



ԺԱ .

Յոյցին յաջորդող շաբթուան մէջ Եւրոպայէն տե-
ղալ սկսան պոլսական թղթակցութիւնները, հրատա-
րակուած՝ աշխարհի կարեւորագոյն թերթերուն մէջ,
որոնք նկարագրեր էին արիւնոտ օրերուն քստմնելի
մանրամասնութիւնները, ականատեսներու կողմէն պատ-
մուած :

Հայկական մարտիրոսութեան պատմիչ մը չի՛ կրնար
առանց յուզուելու գիրի առնել մորմոքիչ իրականու-
թիւնը, որ ուրիշ երջանիկ աղգերու աչքին՝ պիտի թը-
ւէր առասպել մը, վէպ մը, դիւցարանութենէն փոխ
առնուած պատկեր մը : Առասպել՝, վէպ, պատկե՞ր... :
Անզգայ սիրտեր, նիւթապաշտ դարու մը զաւակներուն,
որոնք չեն վարժուած տրոփել, բայց միայն սուփոտ
նայուածքի մը, հրաւիրող ժպիտի մը կամ վաւաչոտ
շարժուածի մը դէմ՝ անձանօթ Եւայի մը . սիրտե՛ր,
որոնք սառած են, մեռած են Յեղին Յաւին համար... :
Միթէ, իրական դժոխքի մը մէջ, որ էր Համիտի Աուր-
քիան, իր գարերու մարտնչող կեանքովը պատկառելի

ու պաշտելի հայ ժողովուրդին հաշուին չէ՞ որ գործուեցան ներոնեան, ալարիկեան, գենսերիկեան, ատախլասեան, լէնկիթիմուրեան, ճենկիզխանեան, շահապասեան և վերջապէս . . . համիտեան հրէշութիւնները . . . : Միթէ Հայ ժամանակակից Պատմութիւնը՝ անվերջանալի շղթայաւորուած չէ՞ հակամարդկային ոճիրներուն, Մարդուն Իրաւունքին, Ազատութեան, Պատիւին ու կեանքին դէմ գործուած՝ ս'յնքան շնականօրէն . . . :

Այս վերջին արիւնոտ շրջանի պատմագիր ժը, հետեւաբար, պիտի ստիպուէր, յաճախ զեղելով պատմագրութեան հասարակ շաւիղներէն, թափառկոտիլ ոճիրներու տեսարաններէն տանջուող ու վրէժի լափլիզող բոցերովը սնանոց երեւակայութեան ժը ստեղծած սփիւններուն, մտայլ հորիզոններուն մէջ . . . :

ԴԷՊԻ ԵԼԼՏԸՉ, ԴԷՊԻ ԵԼԼՏԸՉ, 18 Սեպտեմբերի, Պաշտօնագրի Մեռելոցին օրը լսուած այդ մտիեզին աղաղակը չէ՞ր որ կը փրթէր վէրքերու մէջ արիւնթաթախ, մերկ, ուռած կուրծքերէն բոլոր կողպատուածներուն, կեղեքուածներուն ու ջարդուածներուն . . . : Յետոյ, Երևանը Մեծ Մարդասպանին Որջը չէ՞ր, ուր կը դարձնուէին Մարդկութիւնը քստմնեցնող բոլոր ոճիրները . . . :

Հայը, կայսրութեան մէջ բնակող այլազան եղբրուն մէջ թերեւս ազնուագոյնը, Արեւելքի մէջ Արեւմուտքին ներկայացուցիչը, որ դարերով կռուած ու իր արեան գնովը կրցած էր պահել իր գոյութիւնը, համիտեան դժօխային շրջանին, երկրին զանազան կէտերուն վրայ, իր կրօնքն, իր պատիւին, իր ինչքին ու կեանքին դէմ գործուած պաշտօնական թէ ոչ-պաշտօնական հայածանքներուն, մասնաւորապէս Սասունի Արհաւիրքին դէմ՝ ընդվզած, ուզած էր խաղաղ ցոյցի փորձով ժը պահանջել իր բռնաբարութեամբ, յափշտակուած, առաթուր կ'ուռուած մարդկային սարբական իրաւունքը-

ներուն յարգանքը, ուրիշ ոչինչ...: Եւ սակայն, Բ. Դուռը, Երլտըզէն լարուած, ապստամբութեան գոյն մը տուած էր այդ Յոյցին, պարզապէս հայ ցեղին դէմ գրգռելու համար ուրիշ ցեղի մը մոլեռանդութիւնը, թունաւորելով ըզեզներ, որոնք լճացած, անզգայացած էին բռնապետութեան ճախճախուտքին մէջ...:

Յոյցին դատապարտութիւնը կամ արդարացումը՝ ներկուռ ու նուրբ քաղաքագէտներու ձեռնհասութեան վերաբերող բաւական փափուկ խնդիր մըն է... , հետեւաբար, այդ կէտը թողլով անոնց, ընթերցողներուն ուշադրութեանը պիտի յանձնենք միայն եւրոպական մամուլի զանազան կարեւոր օւկաններուն կարծիքներն ու դատաստանները Բ. Դրան Հայկական Յոյցի մասին, ինչպէս նաև այն շրջանին կարեւոր հեռագիրներն ու թղթակցութիւնները, որոնք հրատարակուեցան ժամը ժամին և օրը օրին:

ԹԲ.

Րիւթէրի գործակալութիւնը հետեւեալ հեռագիրները տեղացուց երկրագնդիս ամէն կարեւոր կեդրոնները.

30 Սեպտեմբեր 1895

Այսօր Հայերու ստուար բազմութիւն մը դէպի Բ. Դուռ առաջացաւ, նպատակ ունենալով պահանջազիր մը ներկայել Մեծ-Եպարքոսին, իբրև բողոքազիր մը կառավարութեան դէմ: Կառավարութիւնը կանխաւ իմացած էր անոնց դիտաւորութիւնը և ոստիկաններ կե-

ՍԱՍՈՒՆԷՆ ԵՏՔԸ

ցուցած էր դէպի Գուռը տանող բոլոր փողոցներուն մէջ : Երբ բազմութիւնը հասաւ Ներքին Գործերու Մինիստրին դուռը, զանազան արգելուած փողոցներէ առաջխաղացումներ տեղի ունեցան : Սակայն Հայերուն առաջացումը դիմադրութեան բազմուցեալ ոստիկանութեան կողմէն : Հարուածներ փոխանակուեցան և վերջապէս զէնքեր արձակուեցան : Ոստիկանութիւնը, իրեն օգնական ունենալով հեծելազօրքը, ցրուեց ամբոխը, միեւնոյն ժամանակ ընելով բազմաթիւ ձերբակալումներ : Բաւական թիւով անձեր, թէ՛ հայ, թէ՛ թուրք, սպանուեցան և շատերը վիրաւորուեցան :

Ձրոյց կը չըջի թէ՛ խառնիճազանճ բազմութիւն մը առաջացաւ ոստիկանութեան նախարարի բնակարանին վրայ, կոտորեց պատուհաններուն ապակիները և տունէն ներս կրակ ըրաւ, և նախարարը թեթեւ մը վիրաւորուեցաւ կ'ըսուի : Յուզումը մեծ է Ստամպուլի մէջ :

Վ Հոկտեմբեր 1895

Երէկ հաղորդուած ընդհանրումներէն զատ, կոիւներ տեղի ունեցան նաև Բ. Դրան չըջակայքը, և ուրիշ կէտերու վրայ : Ծուրջ հիւնգ հարիւր ձերբակալումներ եղած են : Հայերը ձերբակալելով, գետին կը փռէին, զինաթափ կ'ընէին, կը ծեծէին, յետոյ կը կապէին : Հայ մը ձերբակալելէ յետոյ, բիրերու հարուածներով գետին զարկին և յետոյ ժանտարմաներուն ձեռքով գնդակահար սպաննեցին : Հայ մը, Բ. Դրան մօտ, երկու հեծեալ պաշտօնեաներու կողմէ ձերբակալուելու վրայ էր, երբ, երիտասարդ ուսանողներէ բազկացած ամբոխի մը մէջէն քանի մը զէնքեր պարպուեցան, հետեւանքն այն եղաւ որ՝ յիշեալ երկու պաշտօնեաները մեռած ինկան և ուրիշ ժանտարմաներ վիրաւորուեցան : կ'ըսուի թէ՛ ութ Հայեր սպաննուեցան Ոստիկանութեան պաշտօնատան չըջակաները : Պաղաղութիւնը չը վերահաստատ-

ուեցաւ մինչև դեռ իրիկուն : Իրիկուն դէմ , սօֆրա-
ներու ստուար ամբօս մը , բիրերով զինուած , Աք Մէյ-
սանի հրապարակը հաւաքուեցան և ցոյց բրին Հայերուն
դէմ , սպառնալով ջարդել ասոնք : Ոստիկանութիւնը
բաւական դժուարութիւններէ ետքը ցրուեց զանոնք :

Երլարզն ու Բ . Գուռը սաստիկ վախցան այս
խառնակութիւններէն և Նախարարներու խորհուրդը
գումարուեցաւ , կացութեան վրայ խորհրդակցելու :
Քաղաքապահ զօրքը պատրաստութեան մէջ դրուեցաւ
պատճականութեան դէմ : Իրերու այս ծանրակշիռ կա-
ցութեան պատճառաւ , ի պատիւ Շլէզվիկ Հօլշտայնի բրէնս
Ալպէրտի տրույլիք պալատական հացկերոյթը յետաձգուե-
ցաւ և ֆրանսական թղթատար Բէլզրէլ շոգենաւը , որ
այսօր Թուլօն պիտի մեկնէր , հրաման ստացաւ յետաձգե-
լու իր մեկնումը :

Բ . Գուռը հեռագիր-չըջաբերական մը հաղորդեց
իր արտասահմանի ներկայացուցիչներուն հետեւեալ ի-
մաստով .— Մէկ քանի խռովարարներու գրգռումովը՝
Հայերու խումբեր հաւաքուեցան այսօր Պատրիարքա-
րանին շուրջը , բայց ոստիկանութեան ձեռք առած մի-
ջոցներուն շնորհիւ ցրուեցան և կարգը վերահաստատու-
ուեցաւ :»

Այն առտու Հայոց Պատրիարքարանը զօրքերով
չըջապատուեցաւ և Գումագաբուի մասը գրեթէ պաշար-
ման վիճակի մէջ է : Բազմաթիւ Հայեր գիշերը պատ-
րիարքարանի մէջ անցուցին և շատերը դեռ հոն են :
Գալով Մէրվէթ պէյի մահուան— խառնակութեան միջո-
ցին սպաննուած պաշտօնեան— , տեղեկութիւնները հա-
կասական են : Զրոյցի մը նայելով , այդ պաշտօնեան ,
ազերսագիրը Մեծ-Եպարքոսին տանող Հայուն հետ
խօսքի բռնուած միջոցին՝ նախատական լեզու է գոր-
ծածեր և կեալուր անուաներ է զայն . ասոր վրայ Հայը

պատասխաններ է նախատական լեզուով և վերջը քանի մը զէնքեր պարպուներ են :

Սոսուլութեան միջոցին ոստիկանները շատ մը հայ տուններու դռները փակեցին և արգելեցին Հայերը ցոյցին մասնակցելէ : Պոլսոյ մաքսատունն ալ, ուր բաւական թիւով հայ բեռնակիրներ կան, փակուեցաւ :

Տարակոյս չը կայ թէ՛ այս ցոյցերը վաղուց կը պատրաստուէին Հայերուն կողմէն և ասիկա կ'ապացուցուի անով որ՝ օտար տէրութիւններու դեսպանները մօտերն անանուն նամակներ ստացած էին, ազդարարւելով թէ՛ հայ ժողովուրդը մտադրած է խաղաղ ցոյցով մը բողոքել Ապտիւլ Համիտի կառավարութեան դէմ : Պաշտօնական բողոքագիրն օրինակները, մեղմ ու ոչ-յարձակողական ոճով, զրկուած էին դեսպաններուն ծանուցանելով թէ անոնց վաւերական պատճէնը Մեծ Նպարքոսին ալ ուղղուած էր : Ոստիկանութիւնը տեղեակ էր Հայերուն այդ դիտաւորութեան և անմիջապէս միջոցներ ձեռք առաւ արգելելու այդ ազդարարուած ցոյցը :

Հայերը սակայն, Գում Գարուի Մայր եկեղեցիին շրջափակը հաւաքուեցան գրեթէ երեք չորս հազար թիւով, Սացվերացի տօնին արարողութեանը ներկայ գտնուելու նպատակով : Սրարողութիւնը վերջանալէն յետոյ, որ կը կատարուէր պատրիարքի նախադահութեան տակ, շուրջ քսան Հայուհիներ, Վանեցի, Պիթլիպցի և էրզրումցի, առաջացան դէպի պատրիարքը, և իրեն ներկայացուցին աղերսագիր մը, պարզելով կայսրութեան զաւառներուն մէջ հայ բնակչութեան անտանելի դրութիւնը և յայտարարելով որ կարելի չէր երկար ատեն հանդուրժել իրերու ներկայ վիճակին : Գրուածքը կը վերջանար խնդրելով պատրիարքէն կաշսւմ ընել անկեղծօրէն ու խմբովին երթալ Բ. Գաւառը,

պահանջագիրը մատուցանել, առաջարկուած Բարենուրոգումները շուտով գարծաղրելու համար Հայաստանի մէջ :

Պատրիարքը, բողոքագիրը կարդալէ յետոյ, դարձաւ ժողովուրդին և յորդորեց որ ցոյցէ ետ կենան, որովհետև, կ'ըսէր, այսպէս ընելով, երկրին օրէնքին դէմ գործած կ'ըլլային : Խնդրեց որ հանդարտ և լուռ կենան ու իրեն վստահին, ապահովելով թէ՛ իր ջանքերը միշտ հայ ազգին բարօրութեանը կը նկրտին : Պատրիարքը սակայն, հազիւ խօսքը վերջացուցած էր, երբ յանկարծ, ամբօխը սկսաւ աղաղակել. — «Հերիք դիմացանք, մենք մտադրած ենք ընել և մենք կ'ուզենք ազատութիւն կամ մահ...» :

Պատրիարքը հեռացաւ և Հայերը փորձեցին թափօր մը կազմել դէպի Բ. Դուռը դիմելու նպատակով : Ոստիկանութեան արգելքին հանդիպելով, ցրուեցան անոնք զանազան փողոցներ, նորէն հաւաքուելու համար իրենց որոշած վայրը : Հոն, ոստիկանութեան նախարարի թիկնապահը Սէրվէթ պէյ, որ ոստիկաններու խումբի մը գլուխը կեցեր էր, խօսեցաւ անոնց հետ և հրամայեց ցուցարարներուն ցրուիլ և իրենց ազերսագիրը յանձնել իրեն :

Ս.յս բանը շարժառիթ եղաւ աւելի գրգռելու Հայերը, բողոքի ձայներ բարձրացան և շատ զէնքեր պարպուեցան ոստիկաններուն դէմ. թիկնապահը մեռած ինկաւ գետին և իր մարդիկներէն շատերը վիրաւորուեցան : Զէնք պարպուելուն յաջորդեց խառնակութեան ու շփոթութեան տեսարան մը, ամբօխ ու ոստիկանութիւն իրարու խառնուեցան և սկսաւ ձեռք ձեռքի կռիւ մը : Առաջիները կը ջանային բռնի առաջանալ ոստիկաններուն մէջէն, իսկ անոնք ետ կը մղէին զանոնք և շատ մը ձերբակալումներ կ'ընէին :

Սոսովութիւնը սաստիկ յուզում յառաջ բերաւ և ժողովուրդին մեծ մասը սկսաւ խմբովին փախչիլ խռովութեան վայրէն : Բոլոր խանութները փակուած էին , ուրիշ նոր օստիկաններ ղրկուեցան զէպքին վայրերը , և Հայերը սկսան ցլուիլ : Վերջապէս բաժնուեցան պարտիկ դեսպանատան մօտերը :

Ուաշիկըրն, 2 Հոկտ. 95

Պ. Թըրէլ, Կ. Պոլսոյ ամերիկեան ներկայացուցիչը, Միացեալ Նահանգներու քարտուղարին հետեւեալը կը հաղորդէ հեռագրով. — Երկուշաբթի օր, քանի մը հարիւր Հայեր Բ. Դուռը դիմեցին, հասաատ մտադրութեամբ պահանջելու ոչնչացնել իրենց ցաւերուն պատճառները : Պատրիարքը կը ջանար այս բաներուն առջեւն առնել : Տեղի ունեցաւ ընդհարում Հայերուն և օստիկանութեան միջև, և հաւանական է թէ սպանուեցան վարսուկ թուրք ու հայ, հաշուելով նաև սպայ մը, օստիկանութեան նախարարի թիկնապահը : Բազմաթիւ վիրաւորուածներ : Հայերը բեւօլվերներով զինուած էին : Երէկ գարձեալ մէկ քանի հոգիներ սպաննուած են : Վերջին գիշերը սպաննուած են ութսո ն հոգի և քանի մը հարիւրներ ձերբակալուած են : Դուռը կանխադուշակած էր ցոյցը որ, իր խօսքով, կազմակերպուած ու առաջնորդուած է Հնչակեան յեղափոխականներէն, որոնք ձերբակալուած են : Ընդհանուր է սարսափը : Կը կարծեմ թէ Դուռը պիտի յաջողի խեղդել Ֆանատիկութիւնը :

Կ. Պոլիս 2 Հոկտ. 95

Այսօր հայկական խռովութիւններու նոր զէպքեր երեւան եկան : Երբ օստիկանները կ'աշխատէին ձերբակալել մէկ քանի փողսցի բեռնակիրներ, ասոնց երկուքը զէմ դրին և սպաննուեցան : Պոլսոյ կողմը Հայոց թաղի խանութները փակուած էին և զանազան կէտերու վրայ

խոռվութիւնները տարածուեցան . տակաւին մանրամասնութիւնները չենք ստացած : Փողոցները զինւորական պահակներ կը շրջապային և Բ . Գրան պահպանի գործը աւելցուեցաւ : Երէկուան խոռվութեան միջոցին՝ Ներքին գործերու , Արտաքին գործերու և Ոստիկանութեան նախարարները փոխադրող կառքերը բազմաթիւ գնտակներով ծահծկուեցան :

Նախարարները դարձեալ պալատ հրաւիրուեցան այսօր կէս օրէ ետքը , ուր ժողով մը տեղի ունեցաւ կացութեան վրայ խորհրդակցելու համար :

Վերջին հաշիւներու համեմատ , երէկուան սպաննուածներուն թիւը կը հասնի ութսունի :

Լուր կայ թէ՛ Հայերը բունի Ստամպուլի դատարանը մտան այսօր և երկու դատաւորներ սպաննեցին : Սպաննողները յաջողեցան դատարանէն դուրս ելլել , բայց յետոյ ձերբակալուեցան :

Մաքսատան մէջ աշխատող հայ արկղակալ մը սպաննուած է : Կարծիք մը կայ թէ՛ այս սպաննութիւնը քաղաքական վրիժառութեան դրդումի մը արդիւնքն է :

Կ. Պոլիս , 3 Հոկտ. 93

Անցեալ իրիկուն խուզարկութիւններն ու արիւնահեղութիւնները նորէն կրկնուեցան Պոլսոյ զանազան մասերուն մէջ . խառնակութիւններու գլխաւոր տեսարանը կը պարզուէր Ստամպուլ , ուր սօֆիաները — իսլամ աստուածաբանական ուսանողները — և ժողովուրդը , հալածեցին ու բիրերով հարուածեցին բոլոր այն Հայերը որոնց կը հանդիպէին փողոցներուն մէջ :

Լուր կայ թէ՛ այդ կերպով յիսուն հոգի սպաննուած են :

Գիշերուան մէջ սօֆիաներու և հասարակ ժողովուրդի խուժան մը Գասըմ Բաշայի մէջ յարձակեցան Հայու մը տան վրայ , յետոյ սրճարանի մը վրայ , ուր

քսանի չափ Հայեր հաւաքուած էին : Լուր կայ թէ ամէնքն ալ սպաննուեր են ըրերու հարուածներուն տակ : Ոստիկանութիւնը չերեւաց այդ վայրերուն մէջ :

Կ. Պոլսոյ հայ ընտելիներուն մէջ կը տիրէ սարսափը : Ստուարաթիւ բազմութիւններ ապաստանած են եկեղեցիները, ուր կղերականները կը խօսին իրենց և կը յորդորեն որ հանդարտին և կ'աշխատին ապահովութիւններ ներշնչել անոնց : Միեւնոյն ժամանակ, եկեղեցիները մօտէն ու խստիւ կը հսկուին ոստիկանութեան կողմէն :

Հոս դիտելի մտահոգութիւն մը կը տիրէ նաև ուրիշ կրօնքներու պատկանող հասարակութիւններու մէջ, վախ կայ թէ՛ սօֆիստներուն մոլեռանդ բարկութիւնը կրնայ համաճարակի երեւոյթ ստանալ և տարածուիլ ուրիշ կողմեր ալ :

Հայերուն՝ զինեալ Յոյց մը կազմակերպելու ընթացքը — որ, իրենց նախապէս յայտարարութեան համեմատ, խաղաղական պիտի ըլլար — կը դատապարտուի ամէնուն կողմէն : Իրենց կողմնակիցները սակայն կը պատասխանեն թէ՛ ցուցարարները յայտարարած էին արդէն որ իրենց դիտաւորութիւնը կը կայանար ինքնազաշտպանութեան մէջ, եթէ յարձակում գործուէր իրենց դէմ :

Գալով խռովութեան հիմնական պատճառներուն, ընդհանուր կարծիք մը կայ, այն է թէ՛ Յոյցը կազմակերպուած էր Հայ Յեղափոխական Ընկերութեան կողմէն : Միեւնոյն կաղապարէ բէվոլվէրներ ու դանակներ բռնուեցան ոստիկանութեան կողմէն : Թէ միւս կողմէն ալ լուռ պատրաստութիւններ կը տեսնուէին, սակայն երեւ է այն փաստերով որ՝ սօֆիստներն ու Ինլամները զինուած էին միաձեւ ըրերով :

Կը կարծուի թէ սօֆիստները, ինչպէս իրենց յարող-

ները՝ կանխաւ աղէկ բիրեր ստացած էին : Իսլամ կրօնական տարրին միջամտութիւնը խնդիրի մը մէջ, որ որ մեծ մասը քաղաքական է, ժամանակորայէս կը ծանրացնէ ներկայ դրութիւնը : Իսկ անւարդակի պատճառները, որոնց կը վերագրուի այս հայկական պայթումը, բանակցութիւններու ընթացքում որոշակի յայտնուած ձգձգումներն էին, բանակցողութիւնները, որոնք տեղի ունեցան տէրութեանց ու Բ. Դրան միջև որոնք անելցուցին զբազումն ու յուսահատութիւնը : Միև կողմէ, կառավարութեան պաշտօնական շրջանակներուն մէջ այն կարծիքը կը տիրէ թէ՛ ներկայ խռովութիւնները՝ Եւրոպայի, ժամանակորայէս Մեծն Բրիտանիոյ մէջ ի նպաստ քրիստոնեաներու եղած զբազումներէն առաջ եկած են :

Ներկայ իրերու քննադատական վիճակը՝ դեսպաններուն ուշադրութիւնը գրաւեց, որոնք հաւաքուեցան Աւստր և հունգարական դեսպանատան մէջ, իրարու հետ խորհրդակցելու :

Փերմանական յաժանաւակը Լօպէլի, որ կանոնաւորապէս հոս կը սպասէ, և որ պտոյտի պիտի երթար, հրաման ստացաւ դեսպանատան տրամադրութեան տակ մնալու :

Երկուշաբթի հինգ Հեյեր, ձերբակալուելէ յետոյ, սպաննուեցան բանտի դրան առջև, բիրերու և սուխներու հարուածներով : Այս բանը մեծ զայրոյթ առաջ բերած է :

Փարով թիկնապահ Սէրվէթ պէյի մահուան, ակաւնատեսները կը պնդեն թէ՛ Հայերը չը գործածեցին իրենց բէլօլվէրները, մինչև որ այդ պաշտօնեան չհրաժայեց ոստիկաններուն կրակ ընել իրենց վրայ : Երբ ինկաւ Սէրվէթ աննկարագրելի էր աղմուկը : Ոստիկան-

ները յարձակոււմ կը գործէին ամբողջին վրայ, մէկ ձեռքերնին ըէվօլվէրը, և միւսին մէջ մերկ սուրը բռնած :
 Ոստիկանութեան լուրերուն նայելով, երկուշարթիօրը, երկու կողմերէն քսան մարդ սպաննուած և ութսուն վիրաւորուած են :

Ահաւասիկ Սքանսուրսի սեփական թղթակցին հեռագիրները ,

Կ. ՊՈԼԻՍ, 2 Հոկտ. 1895

Նոր խռովութիւններ պայթեցան այսօր Պոլսոյ Հայերուն մէջ . սոսկալի ընդհարումներ՝ ոստիկաններու հետ, բազմաթիւ կեանքերու կորուստովը վերջացան : Այդ խռովութիւններու հետեւանքով՝ խանութներուն մեծ մասը փակուեցաւ . փողոցները ոստիկանութեան հսկողութեան տակ առնուեցան, մէկ խօսքով, ամբողջ մայրաքաղաքը պաշարման վիճակի մէջ է :

Աւելի ծանրակշիւ դէպքեր տեղի ունեցան երէկ Ղալաթիա, որուն ամենաքիչ հաշիւն է մէկ Հայու սպաննութիւն, շատերու վիրաւորումներով : Ականատես մը կը պատմէ թէ ի՛նչպէս պատկառելի տեսքով Հայ մը, փողոցը քալելու միջոցին, յանկարծ ձերբակալուեցաւ երկու ոստիկաներէ և երբ դիտողութիւն ըրաւ ասոնց դէմ, իր մարմինը երկուքի ճեղքեցին անմիջապէս :

Իրիկունը, ուշ առնն, Գասըմ Բաշա, խանի մը մէջ հաւաքուած բաւական թիւով Հայեր պաշարուեցան սօֆիստներէ, և զրոյցներուն նայելով, յաջորդեց մեծ կոտորած մը, մեռածներուն թիւը կը հաշուեն մինչեւ յիսուն : Այս դէպքերու միջոցին կ'երեւար թէ՛ ոստի-

կանները թոյլ կուտային ու խլամ ու քրիստոնեայ, իրենք իրենց մէջ վերջացնէին ծեծը :

Ասոնց վրայ աւելցնել պէտք է մասնաւոր դէպքեր, որոնցմէ մէկը կը յիշեմ, լսելով Առեւտրական Դատարանի անդամէ մը, որ քաղքէն իջնելու միջոցին կը տեսնէ Հայ մը, որուն ըզեզը դուրս թափեցին սօֆիթաները : Բոլորովին անկարելի է կորսուած կեանքերուն հաշիւը գիտնալ. յիսուն մեռած ու երկու հարիւր վերաւորուած ըսելը՝ թերեւս իրականութեան մօտ ըլլայ :

Հայոց պատրիարքը նամակ մը ստացաւ երէկ, որով զինքը կը հրաւիրէին Բ. Դուռը ներկայանալ, բայց կը յայտարարէին որ իր հետեւորդներէն ո՛չ ոք պիտի կըրնար ներկայանալ իրեն : Պատրիարքը որոշեց որ՝ այդ պայմաններու տակ ինք չի կրնար հնազանդիլ այդ հրաւերին և հետեւապէս, մինչեւ ցարդ կը մնայ պատրիարքարանը, ուր փակուած է քանի մը հարիւր Հայերով : Կառավարութիւնը հրաւիրեց ասոնք անձնատուր ըլլալու մինչեւ ժամը 3, որմէ ետքը, եկեղեցիին շէնքը, ուր Հայերը հաւաքուած են, պիտի բուռն յարձակման ենթարկուի : Հիմա՝ ոստիկանութեան կողմէն պաշարուած է ան :

Խժդժանքներուն վատթարագոյն պատկերը կը նրկատուի՝ ութ Հայերու մորթոտուած բանտի շրջափակին մէջ, ոստիկաններուն ձեռքով :

Այս բացառութենէն զատ, Հայերու վրայ ի գործ դրուած ամենամեծ բարբարոսութիւնները սօֆիթաներուն ու տգէտ խուժանին կողմէն էին, որոնք սակայն ո՛չ կը ձերբակալուէին ոստիկանութեան կողմէն, և ո՛չ ալ միջամտութեան ենթակայ ըլլային :

Բնականաբար սարսափը կը տիրէ պալատին մէջ, ուր երէկ Նախարարներու Խորհուրդը գումարուած էր, որ երէկ ուշ ատեն վերջացաւ :

Սուլթանը, երկու շաբաթ կայ որ անկողին չէ՛ մտած :

Այ համոզուժը կայ թէ՛ հաստժ է ճգնաժամը և մեժ տագնապ մը կը տիրէ, որ չըլլայ թէ օտար յեղափոխական կազմակեպուլթիւններ միանան Հայերուն և գործակցին ասոնց յուսահատ և վտանգաւոր ձեւնարկներուն մէջ :

Յունական յեափոխութենէն ի վեր երբէք այսպիսի սարսափի մը չէր ենթարկուած կ. Պոլիս, ինչպէս է այս պահուս,

Յ հոկտեմբեր, իրիկուն

Հայերը պատրիարքարանէն և իր շրջափակէն դուրս հանելու ձեւնարկը մինչեւ այժ վայրկանը չը գործադրուեցաւ :

Ճիշդ հիմա վերադարձայ Գումգաբու ըրած այցելութենէս, ուր խիստ շատ մեժ ամբոխ մը գտայ խրոնըւած՝ պատրիարքարանին մէջ : Եկեղեցւոյ պաշտօնեաները յայտնեցին իրենց ապիկարութիւնը՝ ապաստանածները շրջափակէն դուրս հանելու գործին մէջ, իսկ ասոնք, բացարձակապէս կը մերժեն թողուլ այդպիսի ապաստանարան մը, որ իրենց տրուած է եկեղեցական իշխանութեան կողմէն :

Կը վախցուի որ, եթէ ոստիկանութիւնը չը դիմէ աւելի զօրաւոր միջոցներու, աւելի մեժ և սոսկալի կոտորած մը տնխուսափելի է : Հայերը խռնուած են մերկ սենեակներու մէջ և իրենց կերակուրը կը բաղկանայ լոկ հացի փշրանքներէ, որոնք իրենց կը բերուին :

Մինչեւ ցարդ-եօթը դիակներ միայն յանձնուեցան պատրիարքարանին, թաղուելու համար, բայց յայտնի է թէ, անցած իրիկուն, միայն Չուգուր խանի մէջ, Պասըմ Բաշա, յիսուն հոգի ապաննուեցան և հարիւրի չափ վիրաւորուեցան, իսկ պատրիարքարանի հաշիւներուն

նայելով՝ երկու հարիւր սպաննուածներ կան, չը հաշուելով վիրաւորուածները :

Սոսկալի վախ կը տիրէ թէ՛ ի՛նչ պիտի պատահի գիշերը. բայց փողոցները խիստ հսկողութեան տակ առնուած են թէ՛ ոստիկաններով, թէ՛ հեծելազօրքով և թէ՛ հետեւակներով, և իսկական կոտորածի մը վայրկեանը կը յուսացուի թէ անցած է :

ԺԳ.

Անցան օրեր, շաբաթներ և տակաւին գոց կը մնալին խանութները :

Հրապարակը տրտում ամայութիւն մը տիրէր, հոս ու հոն, մերթ քնդ մերթ կ'երեւէր թափօր մը, հերարձակ կիներու, որոնք կուրծքերնին կը ձեծէին, իրենց մեռելները կը կոծէին ու Երլաըզի Բռնաւորը կ'անիծէին :

Շոգենաւները, Վոսփօրի թէ Ոսկեղջիւրի մէջ, գրեթէ թափուր կ'երթեւեկէին, ամէն մարդ վախէն քաշուած էր իր բնակարանը, վազորդայնի սոսկումովը համակուած :

Նախարարները միայն, և օտար տէրութեանց դեսպանները, տենդոտ գործունէութեան մը մէջ էին :

Երլաըզի մէջ ամէն օր, երկու երեք անգամ գազտնի նիստեր կը գումարուէին :

Ապտիւլ Համիտ, քանի՛ քանի գիշերներէ ի վեր քունը փախած, կը զառանցէր. երկու ժամը մէկ, իր քէօշկի պատուհանն կը նայէր զիտակով Մարմարայի հեռաւոր, մթին հօրիզոնին, վայրկենէ վայրկեան սպասելով անգլիական նաւատորմի մուտքին, որ ա՛լ սկսած էր լոսուել իր շրջապատին մէջ,

Յոյցին հակահարուածը պայթեցաւ Մեծ Եպարքոս Սայիտ բաշայի գլխուն, որ երկու օր յետոյ պաշտօնանկ եղաւ :

Կիպրոսցի՝ Քեամիլ բաշան յաջորդեց Սայիտի :

Այս փոփոխութիւնը կատարուեցաւ հետեւեալ պարագաներու տակ :

Յոյցէն երկու օր ետքը, չորեքշաբթի գիշեր, նախարարները ժողովք ըրին Բերա, Արտաքին Դործերու նախարար Թուրխան բաշային ապարանքը, և որոշեցին ընդունիլ Մայիսեան Ծրագիրը : Այս մտօք իրենց պատրաստած տեղեկագիրը ղրկեցին Երլաըզի պալատը, ուր արդէն գացած էր Մեծ Եպարքոս Սայիտ բաշան, որ Սուլթանին ներկայեց նախարարներուն սրոշումը :

Սուլթանը քիչ յետոյ պաշտօնանկ ըրաւ Սայիտ բաշան :

Անտարակոյս, յիմարութիւն մը պիտի ըլլար ենթադրել թէ Սայիտ բաշա յօժարած ըլլար այդ ծրագրի ընդունելութեանը : Երբէ՛ք. ինք կը փափագէր, որպէս թէ այնպէս, հրաժարիլ. վերջին Յոյցը շատ անարկուերեցաւ իրեն և սառեցուց իր ըզեղը : Երեք օրէ ի վեր շարուակ տասնըչորս հոգիներէ շրջապատել կուտար իր կառքը, և շատեր լսած են որ կառքին մէջէն կ'ըսէր իր թիկնապահներոնն.— «Բովէ՛ս եկէք, քովէ՛ս :»

Ծրագրին ընդունելութիւնը ընականաբար անվրէպ միջոց մըն էր իր անկումին :

Աղատ շունչ մը քաշեց :

Քեամիլ բաշա երկրորդ անգամ ըլլալով կուգար յաջորդել Սայիտ բաշային :

1883ին, երբ Արեւելեան Ռումէլիի Խնդիրը ծագեցաւ, Ֆիլիպպէի գրաւումովը Սայիտ բաշան տապալեա-

ցաւ և իրեն յաջորդեց Քեամիլ բաշա, որ պաշտօնաւ
վարեց մինչև Սեպտ. 1891: Այդ միջոցին, Բ. Դուռը
փորձեց գործելու քիչ մը աւելի ազատութիւն վայելել:
Սուլթանը, իմանալով այս լուրը, անմիջապէս
պաշտօնանկ ըրաւ Քեամիլը և տեղը դրաւ Ճէվատ բաշան,
զինւորական մը:

Քեամիլ բաշա, 1891ին արդէն հակառակ էր Նազըմի քաղաքականութեան, զոր երկրին համար մահաբեր կը կարծէր, ինչպէս որ ալ եղաւ, բայց անկարող էր բան մը ընելու, մաքառելու իր տիրոջ յամառ ընդդիմութեանը դէմ:

Յոյցի շրջանին, Հնչակի պոլսական թղթակիցը կը գրէր.— «Քեամիլ բաշան անգլիասէր ճանչցուած է, բայց մենք խարուելու չենք. Սուլթանին նպատակն է մէկ քանի ամիսներ ալ շահիլ ասով. բայց, «Խորհուրդ Սուլթանին կալի «Հնչակ»ին Է»: Սուլթանը կը կարծէր թէ իր ճարպիկութեամբ պիտի քնացնէր հայկական խընդիրը, բայց սեպտեմբեր 18ին առտուն, Հնչակը անախորժ գարթնում մը տոռաւ իրեն: Մենք պէտք է մեր ուղղութիւնը ունենանք: Մատրազամին փոփոխութիւնը թուրքերուն վրայ մեծ տպաւորութիւն մը պիտի առաջ բերէ: Յոյցին հետեւանքը պիտի համարեն այս տապալումը: Դիւանադիտութիւնը երկու օրէ ի վեր գործի վրայ է. վեց տէրութեանց դեսպանատան թարգմանները Բ. Դուռ երթալով, ամենախիստ լեզուով մը խօսեցան կատարուածներու մասին. բանտերու մէջ գործուած ջարդերու նկատմամբ իրենց որոշումը հազորդեցին և յայտարարեցին թէ՛ իրենց կառավարութեանէն հրահանգ կըսպասեն: Կ'ըսուի թէ այսօր վերջնագիր մը պիտի տան և պիտի յայտարարուի միանգամայն թէ՛ նաև տորմիլը պիտի առաջանայ մինչև Տարտանելի բերանը:»

Աւելորդ չէ հոս զետեղել նախ հետեւեալ վաւերա-
կան տեղեկութիւնները, որոնք քաղուած են զանազան
Թերթերու թղթակցութիւններէն :

Երեքշաբթի գիշեր հետեւեալ ոճիրները գործուե-
ցան :

Քերայի կողմը, Գասրմ Բաշա, հարիւրաւոր հայ պան-
դուխտներ կը գտնուին, որոնցմէ մաս մը կը պառկին
սրճարաններու երկրորդ յարկի սենեակները : Նոյն գի-
շերը՝ համիտեան մուսուանդ խուժանը հաւաքուելով,
հազարներով, կը քալեն սրճարանի մը վրայ, դուռը
կը խորտակեն ու ներս կը խուժեն. կը մտնեն սենեակ-
ները, որ չորս հինգ հոգի մէկտեղ կը քնանային հայ
պանդուխտները : Կը յարձակին ասոնց անկողիններուն
վրայ և քսաներեուն մէջ ամէնքն ալ կը սպաննեն,
Երեսունը հիկնգ հայեր : Գոռում գոչումները փողոցներէն
կը լսուէր : Ուշիչ Հայեր, իրենց բնակարաններու պա-
տուհաններէն կը նշմարեն գիշերը շրջող ոստիկան զին-
ւորներ, որոնք ամբողջին խրատ կուտային որ փողոցին
մէջ բան մը չ'ընեն, այլ ներս մտնեն ու հոն գործեն
ոճիրնին :

Սուժանը, կոտորածի գործը լրացնելէ յետոյ կը
քաշուի :

Ոստիկանները կը բերեն աղբի սայլեր ու կառքեր,
գիւակները մէջը կը լեցնեն, չը նայելով որ մէկ քանի-
ները կիսամեռ են, և կը տաննն ծովը կը թափին, յե-
տոյ կուգան սենեակները կը սրբեն՝ արխնի հեաքերը
ջնջելու համար :

Նոյն գիշերը, կոտորած մըն ալ Չուգուր Խանը,

հոն են Բալուցի պանդուխտները: Ասոնք ալ, երբ յոգնած ինկած կը քնանային, ահա՛ քանի մը հազար հոգիներ, ոստիկաններէն առաջնորդուած, խանը կը խուժեն, դուռը կը կոտրեն, կը ջարդեն քառսուն Հայեր ու կը փախչին:

Ասոնց ալ վայնասունը կը լսուի շրջակաները. ասոնց դիակներն ալ կը քաշկուտեն ու կը տանին ազբի կառքերով ծովը կը թափեն:

Նոյն պահուն, Գարակէօմրիւքի թաղը, մոլեռանդներու խուժան մը կը յարձակին տուներուն վրայ և քանի մը հայ ընտանիքներ կը ջարդեն, Հայ ձուլիչ մը փողոցին մէջ կտոր կտոր կ'ընեն:

Խասգիւղի ներսեւը, Քեազըտ Հանէի եզերքները բանող հայ գործաւորներէն ալ ջարդուածներ կան:

Չորեքշաբթի գիշեր, Թօփհանէի կողմը, խուժանը կը ջարդէ տասնը հինգ հայեր:

Այսօր, Դալաթիա Մոմհանէ, ուր շոգենաւային ընկերութիւններու սենեակները կը գտնուին, հայ մը բռնելով՝ քիթն ու ականջները կը կտրեն: Մարդը պատրիարքարան տարին:

Իսկ բանտերուն մէջ, աննկարագրելի են խժողութութիւնները: Ձերբակալուածները կը կապկպեն և ծեծի տակ կը սպաննեն:

Ատոյգ ազբիւրէ գիտենք թէ՛ ոստիկանութեան տնօրէն Հիւսնի պէյը երկու հարիւր հայեր սպաննել տուած է այդ կերպով:

Ճրանսական դեսպանատան առաջին թարգմանը Պ. Ռուէ՛ աչքովը տեսած է որ՝ ձերբակալուածներէն եօթը հոգի, տեղնիտեղը սպաննուեր են ոստիկաններու ձեռքով: — «Մոսկալի՛ է, ոսկալի՛ է» կը բացագոնչէ մարդը:

Դատական պաշտօնատան մէջ, հայ մը, որ առեւտրական գոյծով հօն գացած էր, երբ սանդուխներէն վար կիջնէր, սպաննեցին զինքը :

Քաղաքապետութեան պաշտօնատան մէջ ալ ութ հայ սպաններ են :

Ոստիկանները փողոցներուն մէջ քսան երեսուն հալիտ սպաննեցին :

Երկու Հայեր բանտի կառքը դրած կը տանէին ոստիկանատուն, խուժանը կառքին վրայ յարձակելով, սպաննեց երկուքն ալ :

Ոստիկանները, Պայազիտէն ոստիկանատուն կը փոխադրէին վեց եօթը ձերբակալուած Հայեր, խանութէն փաթթոցաւոր մը դուրս խոյանալով ըսաւ. «Աստուծոյ սիրոյն, թոյլ տուէ՛ք որ մէկ մէկ հատ իջեցնեմ.» Եւ ձեռքի կոճղովը մէկիկ մէկիկ պատուեց անոնց գլուխը : Խեղճերը ողջ ողջ չը հասան Ոստիկանութեան Դուռը :

Զարհուրելի՛ վիճակ... :

*
* *

Երեք օր է, ամբողջ շուկան, վաճառատունները, ամէնքն ալ դոց են : Հայերուն այս վախը մեծ ցոյց մըն է :

Ժողովուրդը խռնուած է ամէն թաղ իր եկեղեցիներուն մէջ. Մայր եկեղեցին, Խառզիւղի եկեղեցին, Գասըմ Բաշա, Բերա, Ղալաթիա լեցուն են ապաստանեալներով : Կառավարութիւնը կ'ուզէ սր պարպուին, նախ՝ ձերբակալումներ ընելու համար, և երկրորդ եւրօպայի ըսելու թէ՛ անդորրութիւնը կատարեալ է... : Հիւսնի պէյը մէկ քանի անգամ պատրիարքարան եկաւ, պատուիրելու համար որ Պատրիարքը յորդոր կարգայ

ցրուելու Մայր եկեղեցին հաւաքուած ապաստանեալ-
ները :

Պատրիարքը մերժողական պատասխան տուաւ :

Երէկ, չորեքշաբթի, երբ Հիւանի պէյը նորէն եկաւ,
նոր խոստումներ բերելով, պատրիարքը զարկաւ անոր
երեսին. — Առջի օր ալ այդ խոստումները տուիր,
բայց նոյն գիշերը կստորածներ եղան :

Հիւանի պէյը պոչին վրայ նայելով մեկնեցաւ :

Յետոյ, Նազըմ բաշան եկաւ Ոստիկանութեան
Դուռը, և այդ կարգի խոստումներ շուայելով, պատ-
րիարքարանէն մարդ կանչեց, բայց լսելի չեղաւ :

Սուլթանը, երեքշաբթի գիշեր, Նուրեան Յովհան-
նէս և Ունճեան Աբիկ էֆէնտիները պալատ կանչել
տուաւ և հրամայեց որ յորդորեն ցրուելու Մայր եկե-
ղեցիին ժողովուրդը : Աբիկ էֆէնտին կէս գիշերը երկու
ժամ անցած, փութաց գնաց մայր եկեղեցին, ուր
սկսաւ յորդորել ժողովուրդը, որ ցրուի, ո՛չ ոք լսեց :
Երէկ ալ կանչուեցաւ Երլտըզ, իրիկանը վերադարձաւ :
Գասըմ բաշայի եկեղեցին կ'երթայ, աթոռի մը վրայ
կ'ելլէ և ժողովուրդը կը յորդորէ հանդարտօրէն տու-
ներնին վերադառնալու, ամէն կերպով ապառով ըլլա-
լով : Ժողովուրդը «մատնիչ, վատ, դաւաճան» մակ-
դիրները կը պոռայ երեսին ու դուրս կը վանտէ հայ
պետական մարդը :

Յուզումը դեռ կը շարունակուի :

*
* *

Եկեղեցիները լեիլեցուն են, մեծ մասը Հայաստան-
ցիներ, գունատ, հիւանդ, զայրացած : Բերայի եկեղե-
ցին հաւաքուած բազմութիւնը կ'ուզէ դուրս խուժել,
ցոյց մ'ընել, կը նմանի բերդի մը մէջ պաշարուած զօր-

քին, որ կա՛մ մահ, կա՛մ ազատութիւն ձեռք բերելու համար կը յարձակի պաշարող թշնամիին վրայ: Սակայն, կարելի եղաւ համոզել ժողովուրդը, որ հանգարտ տեղը կենայ:

Մոլեռանդ խուժանին, ոստիկանութեան, զինուորներու ու բաշաներու ոճրագործութեանց պատմութիւնները կը լսուին ամէն օր: Ինչպէս որ համաճարակի ժամանակ, ժողովուրդը, ամէն առտու աչքը բանալուն, կ'ուզէ նախ հետաքրքրութեամբ իմանալ գիշերուան մահերուն թիւը, այնպէս ալ մենք, ամէն առտու կը հարցնենք. — Ռժքան ջարդուածներ կան այս գիշեր:

Սեպտեմբեր 20էն 22, հինգշաբթիէն շաբաթ լուսնալու գիշերները, Կազհանէի գործարանին մէջ, քանդակահարձակի հայ կաթողիկէներ ջարդուեցան: Գանուողները քսանըփնդ էին, մէկը միայն կրցեր է ճողոպրիլ և երթալ իրողութիւնը պատմել Ազարեան պատրիարքին, Ֆրանսական դեսպանատունն ալ իմացաւ իրողութիւնը:

Չորեքշաբթիէն հինգշաբթի լուսնալու գիշերը, նախկին մեծ եպարքոս Ճէվատ բաշային բնակարանին մէջ երկու հայ սպասաւորներ սպաննուեցան, նոյնպէս երկու հայ սպասաւորներ ալ՝ նախորդ մեծ եպարքոս Թայիտ բաշային տունը:

Երէկ, Ռիթէրի գործակալութեան ներկայացուցիչը, Բերայի երրորդութիւն եկեղեցին երթալով, անձամբ հարցաքննեց Պոլսոյ զանազան կողմերը գործուած խժդժանքներն ու կոտորածները: Ականատես վկաներ հետեւեալը կը պատմեն. — Խուժանը, Գարակէօմրիւքի մէջ, Աղաւնի անուն յղի կնոջ մը փորը ձենքելով, արգանդի երախան դուրս կը քաշեն կը հանեն, և «ի՛նչ պարսէս է» ըսելով՝ թուրերնուն ծայրը կ'անցընեն:

Գազըմ բաշայի զոհերուն թիւը կ'աւելնայ օրէ օր, Կարիւր յիսուց հայեր անյայտացած են:

Շէկզվիկ-Հօլշտայնի Ալպէրտ իշխանը, որ հոս կը գանուի, չորեքշաբթի երբ Ստամպոլի կողմը կ'անցնէր կառքով, կը տեսնէ կրկու ոստիկաններ, որոնք երկու հայեր ձերբակալած կը տանէին. քանի մը մարդիկ անոնց վրայ կը յարձակին ու կը սկսին ծեծել, մինչև որ կը սպաննեն. Հայերուն ձեռքերը կապուած են: Երբ անոնք կը մեռնին, ժանտարմաները, իրենց հրացաններու կոթովը կը ճգժեն անոնց գլուխները: — «Մի, պօգալի՛ ե, պօգալի՛», կը գոչէ իշխանը, և անմիջապէս ետ դարձնել կուտայ կառքը: Կ'ուզէ նո՛յն օրն իսկ մեկնիլ այս զգուելի քաղաքէն, բայց նոյն գիշերը, Աուլթանը հացկերոյթ մը կուտայ և իշխանը չը կրնար մերժել հրաւերը:

Փրանսացի զօրական մը, որ Պոլիս կը գանուի, անցած չորեքշաբթի օրը Ստամպոլի կողմը գացած էր, զինուորները կը յարձակին վրան և կը սկսին ծեծել, բայց գլուխը նայելով՝ քիչ մը կը զգուշանան. ուրիշ թուրքեր, դէպքին վայրէն անցնելու ատեննին կը համոզեն զանոնք ու կ'ազատեն մարդը: Հիմա խնդիրը մեծ համեմատութիւններ ստացած է Բ. Դրան ու դեսպանատան միջև:

Հայ կիները, քառասուն հոգի, երէկ՝ Թարապիա գացին, անգլիական դեսպանատունը, և լալով ողբալով պահանջեցին իրենց էրիկները, եղբայրները, զաւակները, որոնք անյայտացած են: Դեսպանատան կողմէն յոյս տրուեցաւ թէ ամէն կարելի միջոցներ ի գործ պիտի դրուին փնտուել ու գտնելու զանոնք, եթէ ողջ մնացած են:

Ա՛լ կարելի չըլլալով ջարդուածները ծովը թափել, ոստիկանութիւնը սկսած է անոնց գիակները պատրիարքարան ղրկել, նախապէս գիակներուն երեսները

խնամով խաթարելով, որպէս զի իրենց ինքնութիւնը չը յայտնուի: Երէկ ուրսուն մեռածներ յանձնուեցան: Իսկ վիրաւորեալները այսօր պիտի յանձնուին: Մեռնողներուն շատերը բանախն մէջ սպաննուած են, Նազըմի և Հիւսնիի աչքերուն աակ և անոնց հրամանով:

Սուլթանը հրամայեց որ թուրքերը տուներնին հայ մը չը պահեն: Այս իրատէն երկդիմի ըլլալով, բաշաները, պէյերը, էֆէնախները, և իսսարակութիւնը զայն մեկներ են հայերը սպաննելու իմաստով...:

Վաճառատուն ու Շուկայ տակաւին գոց կը մնան: Հայ փաստարանները դատարան չեն երթար, և հայ բժիշկները չեն իմարձակիր երթալ թուրք հիւանդներու տունը:

Կեդրոնական վարժարանը գոց կը մնայ: Միւս վարժարանները աշակերտ չիկայ: Եկեղեցական արարողութիւնները դադրած են այն եկեղեցիներուն մէջ, ուր ապաստանեալներ կան: Դեսպանները, որոնք տակաւին իրենց ամբարանոցները կը գտնուին, Բերայի դեսպանատան պաշտօնէութեանց հրամայած են հայ ապաստանեալներ ընդունիլ:

Այսօր պատրիարքարանին մէջ ահագին բազմութիւն մը խոնուած էր:

*
* *

Կ. Պոլիս, 23 Սեպտեմբեր 95

Սնգլիական դեսպանատունէն Պ. Շիրլի, ան որ Սասուն գացած էր քննութեան, երէկ պատրիարքարան գնաց ու երկու ժամ տեսակցեցաւ: Քննելով Պոլսոյ ջարդին մանրամասնութիւնները, Պ. Շիրլի յայտարարած է թէ՛ Սասունի մէկ մանրանկարն է:

Այսօր ժամը Չին, երեսուն քառսուն Հայաստանցի կիներ, Բերայի անգլիական դեսպանատունը գացին փոքրիկ ցոյց մ'ընելու: Ոստիկանութիւնը չատ ուշ վրայ հասաւ: Անագին բաղձութիւն մը խոնուած է դեսպանատան շուրջը:

Բանտի մէջ սպաննուած Հայերէն ութուըմեկ դիակներ, պատանքի մէջ, հինգշաբթի օրը Հիւանդանոցը գրկուեցան: Ոստիկանութեան կողմէն մասնաւորապէս պատուիրուած էր չը քակել պատանքները, բայց Պատրիարքարանէն տարբեր հրամաններ տրուեցան, և հետեւաբար, քակուեցան պատանքները: Բժիշկներ, որոնց մէջ էր նաև Տոգթ. Տոնճէրի, քննեցին սպաննուածներուն դիակները. ոմանք սուինով, ոմանք դաշոյնով և ոմանք՝ փայտով, մէկ մասն ալ՝ ծննդական գործարանները ճզմուելով մեռած են: Ասոնց իւրաքանչիւրին սպաննութեան պարագաները տեղեկագրուած ըլլալով, Պատրիարքարանէն հազորդուեցան մեծ դեսպաններուն:

Պատրիարքը պաշտօնագրով մը բողոքեց կոտորածներուն դէմ. յայտարարեց թէ՛ ոստիկանութիւնը հասարակ ժողովուրդին սօփթայի հագուստ բաժնելով, այդ տարազի՛ տակ արձակեց հայ ժողովուրդին վրայ, երբ սա խաղաղասիրական ցոյց մը կ'ընէր:

Այսօր, մայր եկեղեցիի զանգակատունը սև շղարշով կէս մը ծածկուեցաւ մերիններէն:

Հոս մեծ յոյս կայ թէ՛ մայրսեան ծրագիրը պիտի անյապաղ քնդունել տրուի. ժամէ ժամ կը սպասուի:

Շուկաները, վաճառատունները դեռ գոց են, եկեղեցիներուն մէջ դադրած են արարողութիւնները:

Հրահանգ տրուեցաւ որ ժողովուրդը չպիտի պարպէ եկեղեցիները, մինչև որ վեց մեծ դեսպանները ապահովութիւններ չը տան:



Կ. Պոլիս, 24 Սեպտեմբեր 95

Անցած շաբթուան գեղեցիկ օգերուն յանկարծ յաջորդեց փոթորիկ մը, և այսօր, կիրակի, շատ անձրեւոտ կ'անցընենք, անձկոտ սպասումով մը :

Շաբաթ գիշեր, բոլոր ոստիկանները, ժանտարմաները, ոտքի վրայ էին : Վախ կար թէ կիրակի առտունօրէն ցոյց մը պիտի ըլլայ. բայց մենք որ ամէն բանի տեղեակ էինք, հանդարտ մնացինք, գիտնալով որ ցոյց մը չընելու հրահանգը խստիւ պիտի գործադրուի : Գեսպանները մեծ իրարանցումի մը մէջ են . արդէն մեր յատակազիծը պատրաստուած է, գիտենք թէ ի՞նչ պիտի ընենք. հիմակուհիմակ կը սպասենք զո՞րի մը պէս, որ յաղթող է :

Վեց մեծ դեսպանները ժողովք ըրին երէկ թարապիտ և որոշեցին հաւաքական ծանուցագիր մը տալ Սուլթանին : Այսօր պիտի երթային, մինչև կէս օր դեռ չի՛ացանք, գացե՛ր են թէ ո՛չ . միայն այսչափը յայտնի է թէ՛ Անգլիոյ մեծ դեսպանը պահակ շոգենաւովը վար իջած է Վոսփօրէն : Արտաքին գործերու նախարար Սայիտ բաշան եկաւ երէկ գիշեր ու անմիջապէս գնաց ուղղակի թարապիտ ուր անցուց գիշերը . կը կարծուի թէ պիտի խնդրէր դեսպաններէն որ ամէնքը չը գան առանձին առանձին իրենց պահակ շոգենաւերովը . մեծ ցոյց մը պիտի համարուէր :

Երէկ, շաբաթ օրը, պատրիարքարան եկան աւստրոհունգարական, ռուսական և ֆրանսական դեսպաններուն թարգմանները, երկարօրէն տեսակցեցան պարիարքին ևս և յուսադրեցին որ անմտաւոգ ըլլայ, մէկ քանի օրէն ամէն բան պիտի կարգադրուի : Թարգման-

ները, յետոյ այցելեցին մայր եկեղեցին, տեսակցեցան ապաստանեալներուն հետ, շատ արիւնտ դրուագներ լսեցին ու գրի առին: Մայր եկեղեցիին զանգակատունը սև շղարշով ծածկուած է, ու Հայերը, ձեռքերնին կրտրելով, վազած արիւնովը կարմրցուցած էին զանգակատան խաչը:

Քերայի եկեղեցիի զանգակատունն ալ ծածկուեցաւ սև շղարշով:

Պատրիարքը շնորհաւորական այցելութիւն չը տուաւ մեծ եպարքոսին և զրկեց միայն մէկ եկեղեցական ու մէկ աշխարհական: Քեամիլ բաշա շատ սիրալիր ընդունելութեամբ մը բարեւներ զրկած է պատրիարքին և յանձնարարած է որ հոգ չընէ, ժողովուրդը հանդարտ պահէ, քիչ օրէն ամէն բան պիտի կարգադրուի:

Սուլթանին խելքը միտքը՝ եկեղեցիներուն հաւաքումները ցրուել է, բայց իրատէները, ժողովուրդի յամառութեան առջև անզօր մնացին: Իրարու ետեւէ զրկուած պատուիրակներն ալ չը յաջողեցան: Արիկ Ունձեան էֆէնտին, Երլտըզ վերագառնալով, յայտարարեց թէ՛ իրեն յանձնուած պաշտօնը կատարած է, բայց առանց ո՛ր և է յաջողութեան արդիւնքի:

Ոստիկանութիւնը տեսնելով հիմա որ ինք անզօր է ցրուելու եկեղեցիներուն հաւաքումները, ժամանակ չահելու նպատակով, Սուլթանին ըսած է թէ՛ եկեղեցին ապաստանող զինուած մարդիկ եթէ դուրս ելին, շատ գեշութիւններ կ'ընեն, ուստի լաւագոյն է որ հոն մնան փակուած: Աս աղէ՛կ, բայց Սուլթանը չուզեր որ երկիրը, մանաւանդ մայրաքաղաքը, անապահով կացութեան մը մասնուած երեւնայ Եւրոպացիներուն աչքին:

Երէկ, Տատեան Արթին բաշան, Սուլթանին կողմէն պատրիարքին քով եկաւ, յետոյ վերագարձաւ Երլտըզ:

*
**

Այսօր, կիրակի, ժամը կէսօրէն սկսեալ, Բերայի մէջ վտանգաւոր վիճակ մը սկսաւ պատրաստուիլ . եկեղեցիին շուրջը բէվօլվէր մը պարպուեցաւ . ստուգուեցաւ թէ՛ փողոցէն պարպուեր է զէնքը, ինչ որ դաւմըն է, ոստիկանութեան կողմէն յարուած : Հազիւ թէ պայթումը կը լսուի, Կալաթա Սէրայի բոլոր ոստիկանները, ժանտարմաները, թիւով չարիւրէն աւելի, եկեղեցիին կը խուժեն : Դուռը կեցող չայ պահապանները կը փակեն անմիջապէս դռները : Լուրը կը տարածուի ժողովուրդին մէջ, ոմանք կը վազեն եկեղեցիին շուրջի դպրոցներուն սրահները, որոնց պատուհաններէն կարելի է դիտել փողոցը : Հայերը, բէվօլվէրները լեցուցած, կ'ուզուին պատուհաններէն, փողոցի ոստիկաններուն ու ժանտարմաներուն վրայ . ասոնք ալ, հրացանները լեցուցած, կ'ուզուին պատուհաններուն, և այսպէս, կազմ ու պատրաստ կը կենան երկու կողմէն : Առաջին թուած գնտակը ծանրակշիւ ճեղքանքներ կրնար առաջ բերիլ . բարեբաղդաբար, բան մը տեղի չունեցաւ : Առ այժմ, եկեղեցիին շուրջի փողոցները պաշարուած են : Բերայի բոլոր խանութները գոցեցին մեծ մասով :

Հոն ալ վախը կը տիրէ :

*
**

Կ. Պոլիս, 26 Սեպտեմբեր 95

Կիրակի օրը, նամակս բութան ձգելէ յետոյ, ստուգեցիւնք պատահած դէպքերը, որոնց մեծ մասը ճեղքազրոյ չազդողուած է ձեզի անշուշտ : Շարժութ գիշեր, մուրխան բաշան պաշտօնանկ եղաւ, և իրեն յաջորդեց

Մայիս բաշան, իբրև արտաքին գործերու նախարար : Նոյն զիշերը, արտաքին գործերու նոր նախարարը, մեծ դեսպաններուն առաւ տարաւ Մայիսեան Քարենորու գումներու Ծրագիրը, բայց սրբագրուած, գօրնուիլը վերցուած ըլլալով մէջէն :

Կիրակի օրը, վեց դեսպաններուն առաջին թարգմանները պահակ շոգենաւերով Սաամպու իջան և յանձնեցին ծանուցագիր մը, որուն պարունակութիւնն է .

Ա. — Արձակում՝ բանտարկեալներուն .

Բ. — Ապահովութիւն ժողովուրդին .

Գ. — Քննութիւն՝ գէպքերուն և պատիժ՝ Հայերու ջարդարաններուն :

Այս ծանուցագիրը կը պարունակէ մանրամասն նրկարագրութիւն մը գործուած խժդփանքներուն ու ջարդերուն :

Յետոյ, պահակ շոգենաւերը գացին շարուեցան Սալը Քաղարի ծովեզերքը, ուր դեռ կը կենան իբրև նաւախին ցոյց մը :

Սաամպուի կողմը, Հայերուն խանութները, մթերանոցները, խաները, տակաւին գոց կը մնան ամբողջովին . հանդիսաւոր, թէ և բռնի ցոյց մը, որ շատ սուղի կը նստի մայրաքաղաքին : Առեւտրական կեանքը դաւրած է : Հինգ օրուան մէջ, 350000 ոսկիի փոխանագիրներ անվճար մնացին և զրկուեցան բողեադի : Գրէտի Լիօնէն 75000 ոսկիի անվճար փոխգիր ունի ձեռքը :

Եկեղեցիները տակաւին լեցուած կը մնան, ամէն ջանք կը գործուի, այս վիճակը շարունակել տալու . . . : Մինչ մէկ կողմէ ոպառնալիք կը զրկուի վաճառատուն բանալ համարձակողին, միւս կողմէ կը քաջայերուին եկեղեցին ապաստանողները : Սուլթանը մոլեգնած է այս

ապաստանարաններուն դէմ : Արթին բաշան , մէկ քանի անգամներ պատրիարքարան երթալով , տեսակցեցաւ պատրիարքին հետ : Մայր եկեղեցին ապաստանոցներէն պատգամաւորութիւն մը բերել տրուեցաւ , որոնց յայտարարեց Տատեան թէ՛ Սուլթանը կը խոստանայ ամէն ապահովութիւն , ուստի թո՛ղ դուրս ելլին : Պատգամաւորները պատասխանեցին թէ՛ Ներսէս պատրիարքին օրէն ի վեր Սուլթանը շատ խոստումներ տուած է , բայց ո՛չ մէկը կատարած է , վստահութիւն չը կայ :

Տատեան ուղեց որ գոնէ տասը չոգի յանձնուի իրեն , որպէս զի գործ մը տեսած ըլլայ , անոնց ապահովութիւնը գրաւական մը պիտի ըլլայ միւսներուն համար : Սակայն պատասխանը միշտ մերժողական եղաւ :

Այս առտու , եկեղեցիները կէս պաշարման վիճակի մէջ են . ներսէն դուրս ելլելը շատ դժուարացած է , մուտքը նմանապէս , պատսպարեալներուն կը զրկուի հաց և ուրիշ ուտելիքներ : Բայց եթէ պաշարումը սաստկանայ և ուտելիքը կտրուի , ներսէն զէնքով պիտի յարձակում գործուի :

Կացութեան ծանրակշիռ հանգամանքը ցոյց տրուեցաւ հիւպատոսներուն , որոնք անմիջապէս հազորդեցին իրենց ղեսպաններուն : Վաղը առտու կարգադրութիւններ պիտի ըլլան :

Այս վիճակին շարունակութիւնը նպաստաւոր կը դատուի և լաւ հետեւանքներ պիտի ունենայ :

ԺԺ .

Ապտիւլ Համիտ , Սայիտ բաշան պաշտօնանկ ընելով ու տեղը Գեամիլ բաշան դնելով , կը կարծէր թէ աստիճան մը թեթեւեցուցած կ'ըլլար կացութիւնը , որ

ժակայն աւելի ծանրակշիռ հանգամանք կ'ըստանար :

Մեծ դեսպանները, մասնաւորապէս Փրանսական ու քրիտանականը, զայրացած էին, Բ. Դրան Յոյցէն ետքը հրատարակուած կայսերական նոր իրատէին դէմ, որ վերջնականակապէս կը ջնջէր եւրոպական վերահսկողութեան գլուխը՝ մայիսեան ծրագրին մէջէն :

Միւս կողմէ, եւրոպական մամուլին քննադատութիւնները, գրեթէ ամենքն ալ Յըլտըզի ու Բ. Դրան վայրագութիւնները դատաւիետող, կ'ահաբեկէին իր որջը քաշուած Բորենի, որ Սասունի Դիակն վրայ իր հրէչային ախորժակը յագեցնելէ ետքը, կը խորէր քաղաքակրթութեան ի պատիւ պատրաստել ուրիշ Մարգաղոյի Սեղան մը, հայ արիւնով ու միտով շաղախուած համադամներէ . . . :

Հայակեր Հրէչը թողո՛ւնք իր ոճրագործի նոր նախճիրներու պատրաստութեան մէջ, և մենք հարեւանցի ակնարկ մը նետենք եւրոպական մամուլին վրայ, Եւրոպայի հանրային կարծիքը հասկնալու համար, Բ. Դրան Հայկական Յոյցին նկատմամբ :

Երկար, շատ երկար պիտի ըլլար արտագրել հոս բոլոր ազգերու Մամուլի քննադատութիւնները, որոնք հազարաւոր սիւնակներ լեցուցին ու էջեր սեւցուցին : Ուստի կը բաւականանանք կարեւորագոյն թերթերէն քաղելով շահեկան ու հրահանգիչ հատուածներ, որոնք կը ճշդնն պատասխանատուութիւնները, ի վեր հանելով միեւնոյն ժամանակ, Յոյցին իսկական նշանակութիւնն ու դրական արդիւնքը :

Ահաւասիկ թէ ի՛նչ կը գրէ Standard, լոնտոնեան այս մեծ օրաթերթը, իր 31) սեպտեմբերի առաջնորդող յօդուածին մէջ. —

«Պէտք է ընդունիլ որ Հայկական Յուզումը կատարեալ վարպետութեամբ առաջ կը տարուի : Հազիւ թէ

տեղ մը հանդարտութիւնը կը տիրէ, ահա յանկարծ, ծպտեալ մարդերու խումբեր, Հայաստանի զանազան մասերուն մէջ, խորհրդաւոր կերպով մը կ'եկլեն երեւան . . . : Կ. Պօլսոյ Հայերը պատե՛ր առիթ մ'ընտրեցին ընելու ժողովրդային գումարում մը, որ յայտնի է թէ՛ պիտի արգելուէր ստիկանութեան կողմէն և այդ կերպով առաջ պիտի բերէր կռիւ մը, որ պիտի զայրացնէր Բ. Գուռը և աւելցնէր անոր յամառութիւնը, մինչդեռ միւս կողմէ, նոր նիւթ պիտի հայթայթէր Եւրոպայի մէջ ազմուկ բարձրացնելու և անհրաժեշտ դարձած բարենորոգումներու պահանջումը զօրացնելու . . . : Բարենորոգումները պէտք է առաջ տարուին ամենախիստ վերահսկողութեամբ: Անգլիան նախապէս ստանձնեց պաշտպանել Հայերը, սակայն մինչև ցարդ, բոլորովին թերացաւ անիկա իր պարտականութիւնը կատարելու մէջ: Ընդհանրապէս, հանրային կարծիքը նպաստաւոր է այն գաղափարին, որ մինչև հիմա պէտք է իրագործուած ըլլար այդ պաշտպանութիւնը. . . : Թուրքիան որքան շուտ ըմբռնէ թէ՛ իրօք ինքը կա՛մ պէտք է Եւրոպայի վերահսկողութեան տակ Հայաստանը կառավարելու համակերպի, և կա՛մ հրաժարի զայն կառավարելէ, ա՛յնքան շուտ վախճան կը գտնէ ներկայ ձգձգուած վիճակը:»

Նոյն թերթի 5 հոկտեմբերի առաջնորդողէն. —

«Թուրքիոյ համար մէկ հնարաւորութիւն կայ խուսափելու իր կատարեալ քայքայումէն, և ատիկա կը կայանայ իր կառավարութեան ձեւը փոխելուն մէջ: Թուրքիան ա՛յնչափ արագօրէն կը գահավիժէ դէպի իր կործանումը, որ անգլիական մինիստրը, պէտք է ակամայ դիմէ բիրտ միջոցներու, որպէս զի գէթ ո՛ր և է կերպով կանխազգուշացնէ ազէտը: Լորտ Սօլզպրիի կրտսերուկ կերպով և ուղղակի կ'աշտայայտէր իր միտքը, և

իր հայրենակիցները բացարձակապէս կը գնահատեն իր գործելակերպը... : Թուրքիան երկու ելք ունի, կա՛մ Բարենորոգում, կա՛մ սեփական Ոչնչացում : Պետութիւնները Թուրքիոյ համար պատերազմ չեն ըներ, թէև իրենք վերջին ծայրը հասնելէ յետոյ հարկադրուին, երբ ա՛լ յոյս մը չընայ Թանճնաժողով գումարելու, որպէս զի լուծեն այն Խնդիրը թէ՛ ի՛նչ պէտք է ընել այն գաւառները, որոնք ա՛լ թոյլ չեն տար որ Թուրքիան կառավարէ : Մենք դարձեալ կը կողմնենք, մենք հակառակ ենք այդ միջոցին : Բայց Թուրք կառավարութիւնէ՛ն կախուած է խուսափիլ խնդիրին այդ կերպ լուծումէն, որ կրնայ օրհասարեւր դառնալ նոյն իսկ իրեն, Թուրքիոյ համար :»

Նոյն թերթին քաշուած 7 հոկտեմբեր Նոսագրէն :

«Արթին բաշան պատրիարքարան գնաց և ջանաց համոզել ապաստանեալները, որ վերադառնան իրենց տուները : Անոնք պատասխանեցին. — «Մենք կը հաւատանք ձեզի, բայց ձեր տէրը ստախօս է և մենք չենք հաւատար իր խոստումներուն, հետեւաբար, մենք մեր տեղէն շարժելու մտադիր չենք :»

«Ամէնքն ալ անհամբերութեամբ կ'ըսպասէին թէ հիմա, պետութիւնները, մանաւանդ Անգլիան, ի՛նչ միջոցներ ձեռք կ'առնեն : Գրեթէ ամէնքը համաձայն են այն կարծիքին վրայ թէ՛ չինական վերջնագիրի նման քայլ մը միայն կրնայ ստիպել Թուրքիան որ իրական երաշխաւորութիւններ տայ :»

Դարձեալ նոյն թերթի սեփական թղթակցին 8 հոկտեմբերի հեռագրէն .

«Ցոցցին ղեկավարները՝ իրենց վրայ սպացոյցը տուին խորունկ հմտութեան, զոր ունին կացութեան ու ժողովուրդի տրամադրութեան նկատմամբ... : Այդ խումբը կը գործէր իր գաղտնի առաջնորդներուն, այսինքն,

Հնչակի կամ Լոնտոնի Գոմիթէին հրահանգովը... : Պատրիարքը, որ մինչեւ ցարդ ներկայացուցիչ ու պաշտօնական էր Հայոց իրաւունքներուն, ՚իմա մէկդի քաշուած է, և յեղափոխականները ստանձնած են շարժման զեկավարութիւնը :

Սովորական պայմաններու մէջ Հնչակեաններուն ամենալաւ բարեկամները կարծուած մարդիկ՝ անոնց վրայ կը յարձակէին գործելու այս կերպին համար... :

Սակայն, լաւ կրթութիւն ստացած Հայերու շեռունեցած խօսակցութիւններէս կարելի չեղաւ ինծի համար հանել եզրակացութիւն մը, որով կարենային մեզադրել յեղափոխականները : Ասոնք կ'ըսեն թէ՛ տարուէ տարի, թուղթերու վրայ, կ'երեւան ամէն տեսակ առանձնաչնորձումներ, որոնք երբէք չեն գործադրուիր : Մայրենան նախագիծը, որ, եթէ ընդունուէր, գէթ սուժաժապէս պիտի գոնացնէր զիրենք, Բ. Դրան ձեռքով բուրովին ոչնչացած է : Պետութիւնները կը դանդաղեցընեն և նոյնիսկ զիջումներ կ'ընեն թուրքիոյ և Հայերը կը սուժեն և ամէն շարժ տեղի կ'ունենան նորանոր կոտորածներ : Մենք ինչդրեցինք, ալաչեցինք, բողոքեցինք խաղաղ կերպով ա՛յնքան անգամներ, կ'ըսեն Հայերը, որ ի վերջոյ մեզ հասցուցին յուսահատութեան. ուստի, մենք որոչեցինք զէնքը ձեռքերնիս՝ ձեռք բերել ինչ որ չէինք կրնար ձեռք բերել խաղաղ միջոցներով : Մեր դրութիւնը՝ ա՛յն աստիճանին հասած է որ՝ ա՛յսակէ աւելի յոռի չը կրնար ըլլալ : Մենք կը նախընտրենք մա՛ր, քան թէ այսպիսի կեանք մը. եթէ մեզի ոչնչացում կը սպառնայ, այն ատեն լաւագոյն է գէթ կուռիլ : »

Լոնտոնեան մեծագոյն օսկանին Timesի 3 հոկտեմբերի խմբագրականին մէջէն կը քաղենք հետեւեալ կարեւոր հատուածը .

«Իէպօքին վրայ դեռ անկարելի է ստանալ ստոյգ մանրամասնութիւններ, բայց կ'երեւայ թէ՛ խռովութիւնները ծագած են քանի մը Հայերու՝ Կ. Պոլսոյ փողոցներուն մէջ ցոյց ընելու որոշումէն : Կ'ըսեն թէ՛ տէրութիւններու ներկայացուցիչներուն ու թուրք իշխանութիւններուն նախապէս ծանօթ էր ինչ որ կը նախաձեռնուէր : Շարժման նախաձեռնողները, ինչպէս կ'երեւայ, օգտուած են Հայոց Մայր եկեղեցիին մէջ տեղի ունեցող պատարագէն և պատրիարքին դիմած են, խնդրելով խորհուրդ մը տալ իր հօտին, իր պէտքերուն մասին յիշատակագիր մը մատուցանելու . . . : Համախրմբուածներէն ոմանք, պարզ է որ փորձեցին դուռնի հանել ցոյցը փողոցին մէջ ընելու իրենց դիտաւորութիւնը, և մէկ քանի հարիւր հոգի դիմեցին դէպի Բ. Գուռը : Կ'ըսեն թէ Հայերը, զինուած էին և ցոյցի սկիզբէն իսկ օստիկանութեան նախարարի թիկնապա՝ Սէրվէթ պէյը սպաննուեցաւ : Յետագայ ընդհարումներուն մէջ օստիկանութեան հետ ջարդուեցան մօտաւորապէս վաքսուրն հոգի : Երեքշաբթի օրը, պատրիարքարանը շղթայի մէջ աննուած էր զօրքերէ, բայց խռովութիւններ կը կըրկնուէին, որովհետեւ ութսուն զո՛նք ալ աւելցան : Յայտնի է թէ ձերբակալումներ կատարուեցան ընդարձակ չափով և մէկ քանի հարիւր Հայեր, այս պահուս, բանտը կը գտնուին : Այսպիսի դէպքեր, ի հարկէ, իսլամ ազգաբնակչութեան որոշ խաւերու մոլեռանդութիւնը գրգռեցին և փողոցներուն մէջ Հայերը ջարդելու սպառնալիքներ լսուեցան : Ակներեւ է թէ՛ կացութիւնը խիստ լուրջ է, չը նայելով թուրքիոյ կողմէն եղած պաշտօնաստիւնէն ԵՏՔԸ

նական բացատրութիւններու մեղմացուցիչ բնաւորութեանը : Պարզ է թէ՛ Սուլթանը վրդովուած է իր խորհրդականներուն հետ և գուցէ կայսրութեան ներկայ շրջանին մէջ առաջին անգամ պատահած ապստամբութիւնը՝ գրեթէ պալատի դիմացը՝ Ապտիւլ Համիտի տարօրինակ նկարագրին վրայ կ'ազդէ վերջապէս աւելի ուժգին կերպով, քան թէ դիւանագիտական դիմումները և կ'ապացուցանէ ասոր դանդաղկոտ քաղաքականութեան վտանգը :

Սուլթանը պէտք է յայտնապէս գիտնայ թէ՛ մեծ պետութիւններու խորհուրդին անսալով է միայն որինքը պիտի կրնայ յոյս ունենալ խուսափելու ծանրակշիռ և մինչեւ անգամ թէ՛ իրեն և թէ՛ իր կայսրութեան համար աղետաբեր դէպքերէն : »

Նոյն թերթի 4 հոկտեմբերի առաջնորդողէն. —

«Երէկ, 4. Պոլսոյ անկարգութիւններէն մենք արդէն կը նախատեսէինք թէ՛ ընկուկէրի պայթումը կայսերական պալատի մօտերը՝ աւելի շուտով կ'ազդէ Ապտիւլ Համիտի վրայ, քան խաղաղիկ դիւանագիտութեան բոլոր դիմումները : Չանցաւ քսանըօրս ժամ, մեր նախատեսութիւնը կատարուեցաւ : Սայիտ բաշան ինկաւ և կառավարութեան գլուխը անցաւ Քեամիլ բաշան, որուն անցեալը գոնէ կ'արդարացնէ այն յոյսերը թէ՛ Սուլթանի Սէրային մէջ մուտ պիտի գտնէ աւելի լուսամիտ ու խաղաղաւէտ քաղաքականութիւն մը : Վերջին ինը ամսուան ընթացքին մէջ, Սուլթանը շարունակ անընկճելի հանդիսացաւ Եւրոպայի խորհուրդներուն ու ինգրանքներուն առջեւ : Երեք տէրութիւններու միաբանութիւնը, որոնց քաղաքական շահերը նոյնանման չեն Արեւելքի մէջ, կրնար կերպով մը համոզել Սուլթանը թէ՛ իրենց խորհուրդը թելադրուած էր անկեղծ փափագէ մը, մէջտեղէն վերցնելու վտանգը :

գը, որ իր կայսրութեան ամբողջութեանն ու Արեւելքի խաղաղութեանը կը սպառնայ: Հայերուն գործերը ցոյց տուին թէ՛ գործնական փաստեր կան, որոնք կըրնան ազդել նաև Ապտիւլ Համիտի վրայ: Թերեւս ոմանք մեղադրեն Հայերը, բայց ամէն պարագայի մէջ անհրաժեշտ է որ անոնք յաջողութիւն ունեցան: Մինչև իսկ խաղաղ ցոյց մը կատարելը փողոցներուն մէջ՝ բոլորովին անվտանգ գործ մը չէ քրիստոնեաներուն համար, ուստի պէտք չէ զարմանալ որ Հայերը հարկաւոր զատեցին զինուորի դաշոյններով ու ըէվոլվէրներով: Ասկից զատ, պոլսական դրաքնութեան բովէն անցած հեռագիրներէ՛ն իսկ մատնանշուած է թէ՛ խառնակութիւններուն մասնակցող մահմէտականնե՛րն ալ զինուած էին, և թէ՛ հետեւաբար, երկու կողմէն ալ կուռելու պարաստութիւններ տեսնուած էին: Եթէ Հայե՛րը յարուցին առաջին ազնամ արիւնահեղութիւնները, ա՛յն ատեն համիտական ոստիկանութիւնը իրաւունք ունէր դիմելու զէնքի գործածութեան, և ի հարկէ, օսմանեան կառավարութիւնը պարտաւոր էր վերահաստատել կարգն ու հանդարտութիւնը: Բայց ո՛չ մէկ բան կրնայ արդարացնել վայրագ հալածանքները, որ կը գործուին իսլամներու մոլեռանդ ամբոխին կողմէն...

Համոզել, խորհուրդներ տալ և խնդրանքներ ընել, այս ամենը ոչինչի յանգեցաւ, և ժամանակ է որ՝ պետութիւնները գործի դիմեն: Մեր կառավարութեան խօսքերէն կը յայտնուի թէ՛ ինքը մտադիր է առանձին կամ միւս տէրութիւններու հետ միասին ճնշում ի գործ դնել Սուլթանին վրայ, ճանչնալու իր յանձնառութիւնները: Միջերկրականի մէջ բաւականաչափ տեղ կայ երեք տէրութեանց միասուագ գործողութեան համար, եթէ դիւանագիտական ճնշումները ձախողանքի հանդիպին: Այդ տէրութիւնները կը համաձայնին ձեռնամուխ

ըլլալ ուրիշ միջոցներու : Իսկ եթէ հանգամանքները բարդուին այնպիսի դժբախտ կերպով մը, որ մենք հարկադրուած կ'ըլլանք մինակը գործելու այդ պարագային ալ կրնանք առանց դժուարութեան գրաւել կէտեր կարմիր Ծովին ու Պարսից Ծոցին մէջ, ու վախ մը չունենալով ո՛ր և է միջազգային ընդիմութեանէ : Անգլիոյ ծովային գորութիւնը կրնայ մեծ ազդեցութիւն գործել Սուլթանին վրայ, մանաւանդ այնպիսի Սուլթանի մը, որպիսին է Ապաիւլ Համիտ, որ իր հեղինակութեան ու ինքնասիրութեան կ'ընծայէ իսլամ խալիֆայութեան ներկայացուցիչի յատուկ նշանակութիւն մը : »

Դարձեալ նոյն օւկանը, խօսելով Հայկական բարենորոգումներու Նախագծին վրայ, 16 հոկտեմբերի առաջնորդողին մէջ, հետեւեալ եզրակացութիւնը կ'ընէ :

«Եթէ բարենորոգումները շուտով չ'ընդունուին, ամէն բոպէ, դէպքերը կըստանան այնպիսի ընթացք մը, որ աւելի մեծ ծաւալով պահանջումներ կը ներկայանան Թուրքիոյ : Ժամանակը միշտ մեծ դեր մը խաղցեր է Սուլթանի գործելու եղանակին նկատմամբ : Այն միջոցները, որոնք իրեն խաղաղութիւն ու բարօրութիւն կ'երաշխաւորէին, այսօր վաղը կրնան անբաւարար երեւալ . . . :

Եթէ այդ քայլը դեռ ուշանայ, Սուլթանը ի՛նք յանցապարտ կ'ըլլայ հետեւանքներուն համար, որոնք առաջ կուգան : Ան այնքան տգէտ չէ՛ իր սեփական կայսրութեան անցեալի պատմութեանը, և նոյնպէս, բաւական լաւ կը ճանչնայ եւրոպական տէրութեանց ինքնասիրութեան ոյժը, որպէս զի չը հասկնայ որ, եթէ անգամ մը նորէն բացուի Արեւելեան Խնդիրը, այն ատեն, թէ և չըլլայ անոր վերջնական վճիռը, դարձեալ ի վնաս Թուրքիոյ կ'ըլլայ անիկա . . . : »

*
*
*

Անգլիոյ գլխաւոր ազատական օրկաններէն «Տէյլի Նիւզ» մեծ օրաթերթին 3 հոկտեմբերի խմբագրականէն քաղուած է հետեւեալը.

«Պարզ է թէ՛ համիտեան իշխանութիւնները բի՛րաւ ընթացքով մը վարուեցան ամբոխին հետ, որ հաւաքուած էր Հայկական Բարենորոգումներու մասին յիշատակագիր մը յանձնելու Դրան: Այդ յիշատակագիրը գլխաւոր յանցանքի պատճառ համարուեցաւ և Դուռը վճռականօրէն մերժեց ընդունել զայն. Հայերը նոյնպէս վճռականօրէն մտադրած էին ներկայել զայն, և երբ ուղեցին գործադրել իրենց այդ դիտաւորութիւնը, յանկարծ ոստիկանութիւնը, թագստոցէն դուրս խոյացաւ ու գազանի մը պէս յարձակեցաւ անոնց՝ վրայ:

Նոյնպէս եղաւ ցոյցին ելքը, որ հայկական շարժում մը վարողներուն կողմէն ի հարկէ կ'ենթադրուէր խաղաղ ըլլալ...: Այն պարագան որ անոնցմէ ոմանք զինուած էին, դեռ չկրնար ծառայել իբրեւ ապացոյց թէ՛ անոնք աչքի առջեւ ունէին ապստամբութիւնը: Պէտք չէ մոռնալ թէ՛ մենք գործ ունինք Արեւելքին հետ, ուր զէնքը յաճախ կը կազմէ հագուստի սովորական մէկ մասը, ինչպէս հովանոցը՝ մեր տեղերը: Կասկած չը կայ որ, եթէ ընդունուէր յիշատակագիրը, ամբոխը խաղաղօրէն պիտի ցրուէր: Այդ կերպով, ի հարկէ, ո՛ր և է բաշա մը պիտի օգտուէր այն յիշատակագրէն, լոկ իր ծխափողը վառելով անով, բայց գոնէ մարդկաշին բազմաթիւ կեանքեր պիտի փրկուած ըլլային: Այսպիսի դէպքեր կ'. Պոլսոյ մէջ՝ պայծառ լոյս մը կը սրփուեն Սասունի դէպքերուն վրայ: Եթէ պատճառներն ու հետեւանքները՝ տեղ մը կրնային ա՛յնքան այլանդակօ-

րէն անհամեմատ ըլլալ, ինչո՞ւ միեւնսյն բանը չըլլար ուրեմն ուրիշ տեղ մը : Ազմկալից ու արդար զայրոյթով մը լեցուած մարդիկ կը համախմբուին յիշատակագիրը ներկայելու նպատակով : Եւ անոնք տասնեակներով կը սպաննուին ու հարիւրներով կը ձերբակալուին, և այն ալ՝ տէրութեանց ներկայացուցիչներու ճիշդ աչքին տակ : Դիւրին է երեւակայել թէ վիրաւորուածներուն ու սպաննուածներուն թիւը ի՞նչպէս կրնար հազարներու հասնիլ, ո՛չ աւելի ծանր պատրուակով մը, այնպիսի տեղ մը, ուր չը կային եւրոպական տէրութեանց ներկայացուցիչներ և ուր Զարդարարները՝ իրենց կամքին տակ ունին զո՛հերնին և իրենց գլխուն վերելունին ո՛չ մէկ հսկողութիւն : Անհաւանական է թէ՛ մայրաքաղաքին Հայերը—որոնք փոքրիկ խումբ մըն են անագին բազմութեան մէջ—մտադրած հլլային ընել լուրջ ապստամբութիւն մը : Ատիկա յիմարութիւն մը պիտի եղած ըլլար անոնց կողմէն : Լոնտոնի ոստիկաններու խումբ մը կրնար մէկ ժամուան մէջ ցրուել այն ցուցարարները : Օսմանեան իշխանութիւններուն համար այդ առիթը գերազանցօրէն լաւագոյնն էր, որպէս զի չօգտըւէին արիւնահեղութիւն ընելու համար, չը նայելով որ առիթներ կային որ անոնք աւելի չափաւորութեան ապացոյց մը տային : Խիստ պարզ է թէ՛ կարելի չէ՛ թուրքերուն ձեռքը յանձնել քրիստոնեայ ժողովուրդները, մանաւանդ հայ ժողովուրդը կառավարելու զեկը : Այդ մասին ա՛յնքան համոզիչ է Կ. Պոլիսը, ո՛րքան Սասունը :

*
* *

Նոյն թերթի 16 հոկտեմբերի առաջնորդողէն .

«Հասկնալի է թէ՛ երբ սարսափներ կը գործուին

եւրոպական վայրի մը մէջ և երբ ամէնքը կը տեսնեն թէ քրիստոնեաները կը սպաննեն և անոնց կեանքը կը գտնուի սպաննուելու անընդհատ երկիւղին տակ, այն ատեն, այդ կեանքի ու մահուան խնդիրին մէջ, շուտով վերջ մը կը դրուի դիւանագիտական ձգձգումներուն: Յուսահատած Հայերը կը զգան որ Աստուծոյ ջրաղացքները շատ դանդաղ կ'աղան, եթէ աւելի իրական օգնութիւն մը չը հասնի կարելի եղածին չափ...:

«Եթէ այսպէս շարունակուի, այն ատեն, քրիստոնեաներուն բնաջնջումը շուտով կը լուծէ վէճի խնդիրը՝ եւրոպական տէրութեանց ու Բ. Գրան մէջ: Յաւանական ամօթը կ'իյնայ տէրութիւններուն վրայ, եթէ դիւանագիտական խնդրի մը այդ կերպ լուծումը աւելի շուտով հասնի, փոխանակ ուրիշ միջոցով մը գլուխ հանած ըլլալու զայն...»

Դարձեալ նոյն թերթի սեփական թղթակցին՝ Կ. Պոլսէն քաջած Ա7 հոկտեմբերի հեռագրէն.

«Սպասուածին հակառակ, Հայոց խանութներուն մեծ մասը դեռ գոց է: Կ'ըսուի թէ՛ այդ բանը կը կատարուի «Հնչակ» անունով գաղտնի ընկերութեան մը հրամանովը:

Կ'ենթադրուի թէ այդ ընկերութիւնը սաստիկ զօրացեր է այս վերջին երկու շաբաթներու մէջ...: Եւ իրօք նոյն իսկ այն Հայերը, որոնք ո՛չ մէկ կապ չունին այդ գաղտնի ընկերութեան հետ, կը հաւաստեն թէ՛ այդ գաղտնի ընկերութեան ոյժն ու նշանակութիւնը շատ մեծցեր է վերջին օրերու դէպքերու միջոցին:»

*
*
*

Պերլինի Վոսիե Զայրուցի լրագրին 3 հոկտեմբերի առաջնորդողէն.

«Հայերուն յիշատակագիրը չը չափազանցներ այն պատճառովուհետեւ, որոնք առաջադրուած են մեծ տէրութիւններու կողմէն: Եթէ մեծ եպարքոսը ընդունէր յիշատակագիրը, ախուր դէպքերը չէին տեղի ունենար, որովհետեւ Հայերուն միաքէն չէր անցնէր ապստամբութիւն առաջ բերել Կ. Պոլսոյ մէջ, ո՛րքան ալ ատոր ձգտէր Լոնտոնի Հայկական Գօմիթէն: Հայերը լաւ մարդիկ են, առեւտուրի մարդիկ են, բայց անոնք պատերազմիկ ժողովուրդ մը չեն, այլապէս, կրնային Քիւրտին յարգանք ներշնչել իրենց հանդէպ...: Կ. Պոլիս փողոցային ցոյցներ կազմակերպելը՝ բաւական վտանգաւոր գործ մըն է Թուրքիոյ մէջ, բայց Հայերը կրնան մասնանիշ ընել մահմետական օրինակներ: Քանի՛ քանի անգամներ, Սօֆիաները Բ. Գրան, և մինչև իսկ մահմետական կրներ, որոնք ժամանակին չէին ստանար իրենց թոշակները, ասկէ մէկ քանի տարի առաջ Կ. Պոլսոյ փողոցներուն մէջ խիստ մեծ անանգստութիւն կը պատճառէին պատերազմական ու ելեւմտական նախարարներուն: Հայաստանի մէջ բարենորոգումներ մտցնելու մասին Բ. Գրան անընդհատ յետաձգումը բնականաբար գրգռում առաջ բերաւ Հայերու բոլոր խաւերու մէջ, Փոքր Ասիոյ մէջ մշտական ձերբակալումները, և Քէմալի ու Երզնկայի գաւառներուն մէջ նորանոր վայրագութիւնները, բազմապատկեցին այդ գրգռումը: Այդպիսի պայմաններու մէջ, յիշատակագրի մատուցումը՝ չափաւոր ու խելացի գործ մըն էր: Ոստիկանութեան ու զօրքերու միջամտութիւնը պատճառ եղաւ արիւնահեղութեան, և այս բանը կը ստիպէ տէրութիւնները, մասնաւանդ Անգլիան, նոր քայլեր պահելու: Միջերկրականի անգլիական նաւատորմիդը Լեմնոս կը գտնուի. սպառնալիք մը, որ սկսած էր

Հայկական Խնդրին աւելի սկզբնական շրջաններուն, այսօր դիւրութեամբ կարելի է գործադրել այդ սպառնալիքը, եթէ Բ. Դուռը զիջողութիւն մը ցոյց չի տայ: Հարիւրաւորներու ձերբակալութիւնը չէ՛ որ պիտի լուծուի Հայկական Խնդիրը, և Մեծ Տէրութեանց ինքնավրութիւնն ու շահերը կը պահանջեն որ իրենք թող չըտան ոչինչով վերջանալու դիւանագիտական սկսուած բանակցութիւնները: Ատկէ զատ, Արեւելքի խաղաղութեան խնդիրը բացուած է, որովհետեւ, եթէ Թուրքիան իր ուզած եղանակովը վարուի, անտարակոյս յեղափոխական նոր պայթուած մը պիտի պատահի Մակեդոնիոյ մէջ: Մեծ Եպարքոսը շատ խելացի մարդ է, և յաջողութեան համար Սուլթանը, որ անգառնալի կերպով անցած են խաբէրայութեանց ժամանակները:»

*
* *

Անգլիական խիստ կարեւոր ընկերութիւն մը, Գոնկոնկէյթիքնէլ Երնիրն օվ Էնկլիքնէ Էնն Ուոլս, իր տարեկան Ընդհանուր Ժողովին մէջ կայացուց հետեւեալ վճիռը.

«Ներկայ Ժողովը կը նորոգէ իր չորեքշաբթիի բողոքը՝ համրտական կառավարութեան խաբէրայութեանն ու նենգութեանը դէմ, Հայաստանի քրիստոնեայ սոցալականութեան վրայ գործադրած դադանային անգլութուութեանց և իր այնքան ստէպ յայտարարած յանձնառութեանց նկատմամբ իր շարունակած անամօթ խորտոմնազանցութեանը համար:

Ժողովը, Ն. Վ. Թագուհիի նախարարներուն, մասնաւորապէս Արտաքին Գործերու նախարարութեան կը յիշեցնէ թէ՛ Կիպրոսի 1878 Յունիս 4ի Դաշնագիրը՝

Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ ներկայ գործողութեանց ընդհանուր Բարենորոգումներու Մրագրին հետ՝ յոյսեր տուաւ Հայերուն, իրենց վիճակի բարելաման մասին և հիմա, այդ մասին եղած հիասթափումը չը կրնար միեւնոյն ժամանակ անպատուութիւն չը պատճառել եւրոպական տէրութեանց, ինչպէս նաև Բ. Դրան համար ալ: Ներկայ ժողովը կը յայտնէ իր կարծիքը թէ՛ այդ աղաղակող գայթակղութիւնը մէջտեղէն վերցնելու յապաղումը՝ շատերու մէջ սրտմտութեան զգացում առաջ կը բերէ և թէ՛ այդ զգացման ազատ ընթացք մը տալու հետեւանքը սա՛ կ'ըլլայ որ արիւնսով ողողուած այդ բռնապետութիւնը՝ դուրս կը վռնտուի քաղաքակիրթ ազգերու շրջանակներէն: Ժողովը կը պահանջէ անյապաղ նշանակել վերահսկող Յանձնախումբը Հայաստանի համար — ոչ թէ Համրտի կառավարութեան մէկ պաշտօնեային, ո՛չ ալ նոյնիսկ թուրք հպատակի մը — , որ պարտաւոր ըլլար պահպանելու քրիստոնեայ ազգաբնակչութիւնը և պատասխանատու ըլլար միայն եւրոպական տէրութեանց հանդէպ:»

*
* *

Անգլիոյ կարեւոր թերթերէն Տեյլի Բրոքիֆի Մոսկուայէն քաջուած 10 հոկտեմբերի հեռագրէ մը կը քաղենք հետեւեալը.

«Ռուսական Մամուլը գերագոգուած է կ. Պոլսոյ վերջին դէպքերէն և գրեթէ մրաձայն են այն կարծիքին մէջ թէ՛ այդ քաղաքի արիւնահեղութիւնն ու խռովութիւնները կը վերաբերին Լոնտոնի հայկական Պօմիթէ ի գործունէութեան: Մեծ վրդովում մը կը տիրէ

նաև պաշտօնական շրջանակներուն մէջ, որովհետեւ այս պահուս կը վախնան թէ՛ Հայաստանի մէջ տիրող գրգռուածը կրնայ սահմանազուլիսէն անդին անցնիլ Ռուսական Հայաստանը, ուր արդէն, այդ երկրի մէջ կառավարութեան ռուսացումի քաղաքականութեան հետեւանքը ըլլալով, դժգոհ ժողովուրդներու անագին բազմութիւնն ժը կայ: Եւ ինչ որ վատթարագոյն է, դժգոհութիւնը կրնայ ծաւալ գտնել Կովկասցիներուն մէջ, որոնցմէ շատերը խիստ դժգոհ են: Այս հանգամանքներու տակ, բոլորովին բնական է թէ՛ Ռուսիան սատակ զայրացած է Անգլիոյ դէմ, երեւակայելով որ այս վերջինը յանցաւոր է, ռուսական սահմանազուլիսը գրեւոր պիտակներու այս փեթակը գրգռելուն համար: Ռուսական կառավարութիւնը հիմա իրապէս այնքան կը փափագի նեցուկ ըլլալ Սուլթանի խախուտ կառավարութեան, որքան եղաւ Անգլիան 1877ին: Հիմակ Անգլիան ի՛նք ստանձնած է նկեռած քրիստոնեաներուն ազատագրութեան դերը: Անգլիական կառավարութիւնը կծու սպառնալիքներ կ'ընդունի և տեսլի կը դառնայ, հետեւելով այն բարի օրինակին, որ իրեն առջեւ գրբւած էր Ռուսիայէն:»

*
* *

Ահաւասիկ Բարիզի Էնգրամսիժան թերթին 10 հոկտեմբերի առաջնօրըդէն հատուած մը, Հանրի Ռօշֆօրէ ստորագրուած. —

«Մեծ Տէրութիւնները—որ պէտք է անուանուէին Մեծ Անդօրութիւնները, որովհետեւ կը թոյլատրեն որ իրենց աչքին տակ կատարուին ամէն տեսակ ոճիրներ—, որոնք պարաւոր են նախազգուշացնել, հիմակ,

առանց խղճահարութեան, կ'աջակցին ամբողջ ժողովուրդի մը—հայ ժողովուրդին— կոտորման:

«Թուրքիոյ մէկ մասը՝ կը սպաննէ հիմա միւս մասը: Անա դարերէ ի վե՛ր է որ, Կ. Պոլսոյ Սուլթանները, Հայաստանի հանդէպ կը վարուին ս'չ թէ իբրեւ Բռնապետը՝ հպատակին, ո'չ թէ իբրեւ տէրը՝ ճորտին հանդէպ, զոր ինքը գնած է, այլ իբրեւ դահիճը՝ Չարչարւողին հանդէպ, զոր կը խոչտանգէ հրաչէկ երկաթով, ամէն օր հնարելով աւելի և աւելի սոսկալի տանջանքներ...:

«Այս առթիւ, հակառակ լռութեան մամուլի մը, որուն Սուլթանը կը զրկէ դրամաթուղթերու մէջ փաթթըւած մէկիսիցիի շքանշաններ, ամենազգուշաւոր հեռագիրներէ երեւան կը հանուի թէ՛ գարչելի Ապտիւլ Համիտի հրամանով Հայաստանի քրիստոնեաներուն արտաքսուած՝ Իսլամի Ֆանատիկոսներու ձեռքով ստացած է արագին համեմատութիւն մը, և մինչեւ ցարդ նմանը չը անսնուած ծաւալով մը կը տարածուի...:

«Հոս, մենք երեւան կը հաննք իբր զաւաճանութիւն մեր նախարարներուն անտարբերութիւնը, որոնք Պերլինի Դաշնագրով պարտաւոր են արգելք դնել մարդասպան Թուրքերուն և սպաննուող Հայերուն միջեւ, բայց որոնք իրենց գլուխը դարձուցին անոնցմէ, որոնք իրենց կ'ալքերսէին...:

*
* *

Դարձեալ նոյն թերթի ԱՅ հոկտեմբերի առաջնագրողէն, նոյնպէս Հանրի Ռօշֆօրի ստորագրութեամբ.—

«Ծշմարտութիւնն այն է թէ Ապտիւլ Համիտ վատհամբաւ գազան մըն է, որ իր կայսրութեան մէջէն կ'արտաքսէ բոլոր քրիստոնեաները, եթէ քրիստոնեայ

ազգերը զանի անմիջապէս անդօրութեան չենթարկին : Յետաբարկոյս , մզկիթի կամ եկեղեցիի խնդիր գոյութիւն չունի և երբէք չէ՛ ունեցեր մեղի համար : Մենք Ալճէրիոյ իսլամները կը պաշտպանենք ընդդէմ մեր պատեհապատեհներու կառավարութեան , որոնք կը կողոպտեն զանոնք , բայց մենք կը պաշտպանենք նաև Արեւելքի քրիստոնեաները ընդդէմ իսլամներու , որոնք կը տանջեն զանոնք :

Եւ հակառակ այն այցելութիւններուն զոր անոր գործակալները կ'ընեն ազգեցիկ լրագիրներու գրասենեակներուն մէջ , մենք վստահ ենք թէ՛ մօտերս վերջ մը պիտի դրուի համիտական կառավարութեան վայրագութեանը . . . :

Իր կառավարութիւնը հոգեւարքի մէջ է , և սուրբրու , սուլիմներու ու հրացաններու հարուածներով չէ՛ , որ ինքը զայն պիտի վերակենդանացնէ : »

Եւրոպական մամուլի զանազան ներկայացուցիչներուն տեսութիւնները կը վերջացնենք հոս , արտագրելով նաև Սթանբուլի 16 հոկտեմբերի խմբագրականին հետեւեալ նշանակալից տողերը .—

«Սուլթանին համար տակաւին ուշ չէ փրկել զինքը , խելացի ու խաղաղ կերպով վերաբերուելով դէպի անխուսափելին և այդ կերպով խուսափելով այն նուաստացումէն , որուն կ'ենթարկուի , ուղիմադօսը ստանալով . այդ վերջնագիրի յայտարարութիւնը կուգայ բովանդակ աշխարհի առջեւ պարզել իրերու ներկայ դրութիւնը : Այդ միջոցը կրնայ սպասուիլ օրէ օր . . . :

«Սուլթանը արդարացնելու համար առաջ կը բերուի հետեւեալ խորհրդածութիւնը .— Ան չուզեր հիմա զիջում ընել , որովհետև այդպիսի վարմունք մը իր կողմէն ցոյց կուտայ բովանդակ աշխարհին , մանաւանդ իսլամներուն թէ՛ ան այդ կերպ կ'ընէ երկիւղ կրելով

Հայերէն, կամ, առնուազն, Կ. Պոլսոյ խառնակ ու չը-
փոթ գործողութիւններու շնորհիւ: Ատիկա հասկնալի է
զգացման ու վերացական դատողութիւններու տեսա-
կէտով, բայց Սուլթանին համար դրական արժէք մը
չպիտի ունենայ:

«Տուէ՛ք Սուլթանին բաւական ժամանակ և ան
պիտի կրնայ հաստատել թէ՛ ա՛լ գոյութիւն չունի Հայ-
կական Խնդիր մը: Նոյնի՛սկ այն պատճառով որ, Հա-
յերուն հետ ա՛յն աստիճան անգլթօրէն կը վարուին որ՝
զանոնք կը մղեն գրեթէ ապստամբութեան, և թէ՛ Եւ-
րոպան ի՛նք ստանձնեց անոնց ճակատագրին լուծումը,
նոյնիսկ ա՛յդ պատճառով, այդ լուծումը կը դառնայ
այլ եւս անյետաճգելի: Եթէ Սուլթանը զիջանէր Անգ-
լիոյ, Ռուսիոյ և Ֆրանսայի պահանջումներուն, որոնք
առաջին անգամ ներկայացուեցան, մայրաքաղաքին
մէջ խառնակութիւններ տեղի չէին ունենար, ո՛չ ոք չէր
կրնար պնդել թէ՛ զիջողութիւններ կ'ըլլան սեփական
զայրացած հպատակներուն:

«Մենք համաձայն ենք որ Թուրքիոյ կը մնայ ընտ-
րել երկու չարիքէն մէկը: Բայց մենք բոլոր մը չենք
կասկածիր թէ ո՛րն է այդ չարեաց փոքրագոյնը...:

«Սուլթանը, պնդելով իր ըսածներուն վրայ, ինք-
զինք դէ՛մ առ դէ՛մ կը դնէ վտանգներուն, որոնք եր-
կարօրէն բացատրուելու պէտք չունին և իրեն քաջա-
յայտ են: Եւ այն ատեն, ինք ստիպուած 'ըլլայ մի-
նակը զիմագրուել անոնց:»

Ամփոփելով այս ամէնը, կը տեսնենք թէ Եւրո-
պան, առանց բացառութեան, կը դատապարտէր Համի-
տի կառավարութեան գործած վայրագութիւնները, մի-
եւնոյն ժամանակ արդարացնելով Հնչակեաններու կազ-
մակերպած Յոյքը, որուն, ինչպէս վերեւ տեսնուեցաւ,
անմիջական հետեւանքը պիտի ըլլար Հայկական Բա-

րենտորոգումներու Մայիսեան Ծրագրին ընդունելութիւնը, կայսերական նոր իրատէով մը . . . :

Բայց ի՞նչ իրատէ . . . :

Դեպի երկար ընթերցողները պիտի ծանօթանան այդ չարաշուք իրատէի հրաշքներուն (°) յաջորդական էջերուն մէջ :

ԺԵ .

Բ. Դրան Յոյցին յաջորդող օրերը, հայ ժամանակակից պատմութեան մէջ կարելի է յորջորջել Արիւնի Օրեր : Մայրաքաղաքին փողոցները կարմիր ներկուած, շատ մը խաներու դռները խորտակուած, քրիստոնեայ թաղերու բնակարաններէն շատերը խորունկ, ցուրտ, ահաւոր լուծեան մը մէջ թաղուած . խանութները դեռ փակ մնացած, եկեղեցիները փախստական պատսպարեալներով լեցուն, բանտերը, մանաւանդ Կեդրոնական Բանտը, վիրաւոր կամ կիսամեռ Հայերով խճողուած, վերջապէս, ամբողջ մայրաքաղաքը՝ Մահուան Տուն մը, ահաւասիկ այն օրերու Կ. Պոլիսը :

Ասդին, Պէշիկթաշի և Միջագիւղի բարձունքներուն վրայ, Երլարզի պալատը, խորհրդաւոր, եղբերական, դժոխային տուամի մը թատրը կը ներկայանար :

Հոն, Կարմիր Մարդակերպի Որջին մէջ, կեղեքուած ու ջարդուած ժողովուրդներուն աւարովը յզփացած ու արիւնովը յափրացած սողուններ, պալատականի ոսկեճամուկ համազգեստներուն տակ իրենց անխոստովանելի ոճիրները պատսպարած, հազար անգամ կ'ելլէին կ'իջնէին Երլարզի սանդուխներէն, իրենց Տիրոջ հրամանները տանել բերելու պատկանեալ տեղերը :

Ապտիււ Համիտ գերագոյն ըրողէի մը մէջ, հարկադրուած էր վերջապէս արձակել իրատէն, որով, ձրագրուած մայիսեան բարենորոգումներուն գործադրութիւնը կը հրամայուէր հայկական ծանօթ վեց նահանգներուն մէջ :

Եւ իրատէն հազիւ հրատարակուած, նոյն օրը հեռագրական գործակալութիւնները փութացած էին զայն հազորդել երկրագնտիս բոլոր կեդրոններուն :

Հնչակեաններուն ցնծութիւնը զենիթը հասած էր :

Գումագաբուի պատրիարքարանը դարձեալ սկսան երթեւեկները դեպքանական թարգմաններուն, քատուղարներուն և նոյն իսկ մեծ դեպքաններուն, որոնք կուգային Իզմիրլեան պատրիարքին աւետելու Մեծ Լուրը :

Պատրիարքը սակայն տրտում էր ու թախծոտ : Սև Մովի եզերքներէն դեռ նոր հասած էին նոր ջարդերու արձագանգները : Տրապիզոնի ջարդը կուգար յաջորդել Ադ Հիսարի ջարդին :

Եւ Ջարդերը կը կրկնուէին, կը բազմապատկուէին օրէ օր :

Մէկ շաբաթուան մէջ, զարհուրելի համեմատութիւններ կը ստանային անոնք, ջարդերը, որոնք բարձրէն, Ելլարդէն հրամայուած, խալիֆային ֆէրմանովը, պէտք է կէտ առ կէտ գործադրուէին, շարունակուէին, և չպիտի վերջանային, մինչեւ որ Հայկական Խնդիրը լուծուած չլլար, խեղդուելով Թուրքիոյ Հայերուն աբիւնի ճապաղիքներուն մէջ, ինչպէս կանխաւ հրահանգուած էր Հիւսիսէն, Լոպանօֆի բերնով. — Հայաստան մը կ'ուզեմ, առանց հայերու... :

Թահսին բաշան, Ապտիււ Համիտի առաջին քատուղարը, Իզդէթի հեռ գլուխ գլխի տուած, կը թրդթատէին եւրոպական վերջին թղթաբերով հասած կա-

րեւոր թերթերը, որոնցմէ հատուածներ պիտի թարգմանուէին, մատուցանելու համար իրենց Տիրոջ :

Իրիկուան դէմ էր, և երկու քարտուղարները կ'աշխատէին եռանդով, աւարտելու համար կարեւոր թարգմանութիւնները և կարգի դնելու թարմ ժուռնալները, որոնք նոյն գիշերը պէտք է յանձնուէին Նորին Վեհափառութեան :

Նոյն պահուն Երլտըզէն ներս կը մտնէր կառք մը :

Քիչ յետոյ, կառքէն դուրս նետուեցաւ համազգեստին մէջ շողշողուն, պետական քարձրաստիճան անձնաւորութիւն մը :

Ոստիկանութեան նախարար Նազըմ քաշան էր, աճապարանքով վեր կ'ելէր սանդուխներէն :

Պալատակ...ն մը փութացած էր արդէն առաջնորդելու նախարարը կայսերական քարտուղարութեան դիւանը :

Թահսին քաշան դուռը կը սպասէր, մեծարանքով ընդունեց նախարարը :

Նազըմ մտածկոտ էր, և շատ կ'արտորար :

— Ի՞նչ կայ, քաշա՛, բարի՞ է, հարցուց Համիտի առաջին քարտուղարը .

— Բարի՛ է, բարի՛, յարեց Նազըմ, միշտ պահելով իր ներքին վրդովը, կը փափաղիմ, մէկ քանի բռն պէր համար, Նորին կայսերական Վեհափառութեան ունկնդրութեան արժանանալ :

Թահսին ա՛լ չը խօսեցաւ :

Դուրս ելաւ ու քիչ յետոյ վերադարձաւ :

— Բաշա՛, ըսաւ Ոստիկանութեան նախարարին, Արիֆ պէյը գնաց ունկնդրութիւն ինդրելու :

Ասկէ անկէ, գրեթէ անկապ խօսքեր կը փոխանա-

կուէին առաջին քարտուղարին ու ոստիկանութեան նախարարին միջեւ, երբ Արիֆ պէյ ներս մտաւ, և դառնալով Նազըմի,

— Բաշա՛, ըսաւ, Հիւնքեարը կը հաճի ձեզ ընդունիլ իր բարձր ներկայութեանը, հրամայեցէ՛ք:

Նազըմ, Արիֆ պէյէն առաջնորդուած, ուղղուեցաւ դէպի կայսերական դահլիճը:

Ապտիւլ Համիտ ման կուգար, երբ Նազըմ ներս մտաւ, և մօտենալով գետնամած դիրքով մը, պագաւ Սալիֆային քղանցքը:

— Խօսէ՛ նայինք, ի՞նչ կայ, Նազը՛մ, ի՞նչ բարի լուր բերիր.

— Վեհափա՛ռ տէր, յարեց Նազըմ սրտագոզով մը, պիտի ներէք որ ուշ ատեն կը համարձակիմ արքունիքը գալ:

— Հոգ չէ՛, հոգ չէ՛, կրկնեց Համիտ ընտանի շնչտով մը, խօսէ՛ նայինք ի՞նչ լուր ունիս:

— Վեհափա՛ռ տէր, շարունակեց Նազըմ, հեպոզեւտէ ինքզինք ամփոփելով ու վարժուելով իր Տիրոջ ահարկու ներկայութեանը. Բ. Գոան Դէպքէն ի վեր ձերբակալուած ու կեդրոնական Բանտը նետուած Հայերը խուզարկութեան ենթարկել տուած էի. ահաւասիկ ապիկա՛ գտնուեցաւ քովերնին:

Ու փոքրիկ ծրար մը հանելով գրպանէն, երկնցուց Հիւնքեարին:

— Ի՞նչ է, ի՞նչ է, հարցուց Համիտ, իր կասկածոտ նայուածքները պտտցնելով ծրարին վրայ:

— Վեհափա՛ռ տէր «Հչնակ» թե՛րթը, Լոնտոնի Հնչակ թե՛րթը... յարեց Նազըմ,

— Ի՞նչ կայ մէջը, ի՞նչ կայ.

— Վեհափա՛ռ տէր, յարեց Նազըմ, անմիջապէս թարգմանել տուի.

Ապտիւլ Համիտ, առաւ ձեռքը, և սկսաւ աչքէ
անցընել :

Քանի մը տող քաղելէ յետոյ, վերադարձուց Նա-
զըմին .

— Նազը՛մ, ըսաւ, դուն կարդա՛ նայինք, ի՛նչ է
գրեր :

Հիւնքեարը բազմեցաւ գա՛նին վրայ, մինչդեռ նա-
խարարը, ոտքի վրայ, կը կարդար թուղթը :

1893 Նոյեմբերի թ. 19 Հնչակին մէջ հրատարակ-
ւած պոլսական թղթակցութեան մը բառական թարգ-
մանութիւնն էր, որ ա՛նաւասիկ .

4. Պոլիս; 18 հոկտ. 95

Սեպտեմբեր 18ի Յոյցին իրիկու՛նն իսկ ակներեւ էր
թէ՛ հոսած արիւնէն ետքը՝ ա՛լ յաղթանակը մերն էր :
Երբ քիչ մը հանդարտութիւն տիրեց, մէկ քանի օր
ետքը դեսպանները Բ. Գրան յայտարարեցին թէ՛ Մա-
յիսեան Ծրագրին ընդունելութիւնը՝ անխուսափելի
հարկ մըն էր, որուն պէտք էր ինք հպատակէր : Եւ
ա՛նա՛ Սուլթանին ներկայացուցիչ—արքանեակները, գի-
շերը ցերեկին խառնելով, ամէն օր Թարապիտ կ'երթա-
յին բանակցութիւնները վերջացնելու : Հինգշաբթի առ-
տու, 3/17 հոկտեմբերին, թուրք թերթերը կը հրատա-
րակեն պաշտօնական շրջանակէն ներշնչուած յօդուած-
ներ, որոնք, իրենց արտաքին ձեւին տակ, տեսակ մը
հերքումներ էին այն զրոյցներուն թէ՛ հայկական իւ-
խանապետութիւն մը պիտի կոչուի, ևն. : Այս ոճով,
թուրք ժողովուրդին գահացում տրուելէ ետքը, կ'ըսուէր
թէ՛ ինչ ինչ բարենորոգումներ պիտի գործադրուին և
անոնք պիտի տարածուին Թուրքիոյ ամէն կողմերը,
բայց, իբր փորձ, պիտի սկսին Անատոլուի քանի մը
գաւառներէն : Այս պաշտօնական հրատարակութիւննե-
րէն կը յայտնուէր թէ՛ ա՛լ վերջացած էր գործը . . . :

Նախարարներու Խորհուրդը վերջապէս ընդունած էր ծրագիրը և զայն մատուցած էր Սուլթանին :

Այսօր իմացանք թէ՛ Սուլթանը տուած է իր վաւերացումը :

Ընդունուածը՝ Մայիսեան Ծրագիրն է, յաւելումներ ալ հետը . ի՛նչ ըլլալը դեռ չիմացանք, շատ գաղտնի կը պահուի : Այսօր վաղը կ'իմացուի, կ'ըսուի թէ՛ Կ. Պոլիս կազմուելիք Յանձնաժողովին վրայ դեռսպանները պիտի հսկեն . ա՛յս է գօնքօրը :

Ի՛նչ որ ալ ըլլայ, մեզի համար հին թուական մը կը փակուի և նոր մը կը բացուի : Ջանա՛նք իմաստութեամբ և արիութեամբ պատրաստել լաւագոյն ապագայ մը :

Այսուհետեւ Հնչակեան Կուսակցութեան վրայ կը ծանրանայ մեծ պարտականութիւն մը . ի՛նք է որ առաջ բերաւ այս կացութիւնը, և ի՛նք պէտք է ըլլայ որ պիտի ըլլայ ապագային ղեկավարը :

*
* *

Սակայն, Ծրագրին ընդունելութեան լուրը չկրնար փարատել անսահման վիշտը, որով անխտիր բոլոր սիրտերը կը լեցուին, Տրապիզոնէն հեռզհեռէ հասած լուրերէն :

Ջարդուեցա՛ւ Տրապիզոնի հայ բնակչութիւնը, մէկ քանի ժամուան մէջ . . . :

(Հոս, Ապտիւլ Համիտի կնճռոտ դիմագծերուն վրայ ներքին գոհունակութեան արտայայտութիւն մը չողաց մինչ նազըմ կը շարունակէր ընթերցումը .)

«Կուսակալ Գատրիի հովանաւորութեան տակ, ուսիկանութիւնը, ժանտարման, զինուորները, խաժամուժը, ձեռք ձեռքի տուած, կը շարդեն բոլոր Հայերը,

որոնք անուն մը, դեր մը, համբաւ մը, հարստութիւն մը ունէին Տրապիզոնի մէջ :

Սեպտեմբեր 26ի երեքշաբթի կէսօրէն մէկ ժամ առաջ կը սկսի կոտորածը :

Նոյն օրը կանուխ, առտուան դէմ, աւստրիական շոգենաւը ինն կը հասնէր Կ. Պոլիսէն. Պոլսէն մեկնող ամենակարեւոր թղթատարը կը համարուի ասիկա. բոլոր հայ վաճառականները շուկան են, իրենց վաճառատունները, նամակատան կողմերը :

Մէկ քանի բոպէի մէջ, լազերը, թուրքերը, ոստիկանները, ժանտարմաները կը հաւաքուին հրապարակը և կը սկսին զէնքերով յարձակում գործել Հայերուն վրայ. հանդիպածը կը զարնեն, կը սպաննեն տեղնի տեղը. կը յարձակին վաճառատունները, և կը սկսին ջարդել անզէն ժողովուրդը : Մաս մը կը պաշարէ թաղերը, որպէս զի հայերը դուրս չ'ելլեն. ինչ ալ կը յարձակին տուններուն վրայ :

(Ապտիւլ Համիտի բերնին ջուրերը կը վազէին) :

«Քանի մը ժամ, անխնայ, կոտորածը կը շարունակուէր :

Կուսակալը, հեռագրին գլուխը անցած, ամէն մէկ սպաննութիւնը կ'աւետէ Սուլթանին...

(Հոս ցնծումէն ու խանդավառութենէն, չը կրցաւ զսպել ինքզինք ու գոչեց Համիտ.

— Եւսա՛ Գատրի, Եւսա՛, պէ'...

.

Իսկ Նազըմ բաշա, ստրուկի յատուկ քծնումներով ու ծառայական կերպերով կը շարունակէր ընթերցումը :

«Այդ պահուն, Կ. Պոլիս, Սատրազամը կ'իմանայ թէ Տրապիզոնի մէջ կոտորածը կը կատարուի Սուլթա-

նին հրամանով. անմիջապէս ինք ալ մարդ կը վազցնէ հեռագրատունը և կը հրամայէ կուսակալին դադրեցնել տալ ջարդը, ապա թէ ոչ, պատասխանատու պիտի ըլլայ :

Այս հրամանին վրայ կոտորածը կը դադրի :

Սատրազամ Քեամիլ բաշան Երլտըզի պալատը կը վազէ և իր տիրոջը հետ կը կռուի, որքան որ ներելի է սատրազամի մը կռուիլ :

Մինք Պոլիս ո՛չ թղթակցութիւն, ո՛չ ալ եկող ունեցանք, մեր բոլոր իմացածը՝ յունական ու եւրոպական ազբիւրներէն է :

Ահաւասիկ մօտաւորապէս մեր գիտցածը՝ Տրապիզոնի Ջարդին վրայ :

Երբ Պահրի բաշան սպաննելու անյաջող փորձը կ'ըլլայ, կատաղութիւնը կը տիրէ թէ՛ Տրապիզոնի կուսակալութեան պաշտօնատուներ և թէ՛ Պոլիս Երլտըզի պալատը : Կուսակալ Գատրի կը կանչէ իր մօտ տեղին երեւելի հայ վաճառականները, և ասոնցմէ կը պահանջէ որ սպաննութեան ոճրափորձը կատարողները յանձնուին իրեն անմիջապէս :

Հայերը կը պատասխանեն թէ՛ նախ յայտնի չէ թէ Պահրի բաշայի վրայ զէնք պարպողները Հայեր ըլլան, թուրքեր ալ կրնան եղած ըլլալ, լազե՛ր ալ, քուտե՛ր ալ. երկրորդ, եթէ հայե՛ր իսկ եղած ըլլան, իրենք սոսկական վաճառական են, ո՛չ թէ ոստիկանութիւն, ոճրագործ փնտուկը, հետապնդելը ոստիկաններու գործ է, ո՛չ թէ վաճառականի :

— Դո՛ւք գիտէք, կը սպառնայ կուսակալը, վախճաննիդ գէշ պիտի ըլլայ :

Այս միջադէպին վե՛րջն է որ Յակոբ անուն Հայ մը կը ձերբակալուի, իբր թէ ի՛նք ըրած ըլլար մահափորձը :

Այս միջոցին կը նշմարուի թէ՛ ոստիկանութիւնը գաղտնի պատրաստութիւններ կը տեսնէ խուժանին հետ : Օտարազգիներէն ոմանք՝ գիշեր մը կը դիտեն ընդհանուր իրարանցում մը, Թուրքերուն, Լազերուն և ոստիկաններուն միջև :

Նոյն օրերը, Տրապիզոնի հրապարակին վրայ կը սպաննուի Թավաճի օլլու մեծահարուստ սրիկայ մը : Սպաննողները Թուրքեր են, բայց ահա՛ լուր կը տարածուի ամբոխին մէջ թէ՛ Հայերը սպաննեցին Թավաճի օլլուն, որովհետև Պահրի բաշան զարնողները փնտուելու պաշտօնը յանձնուած էր անոր : Այս զրպարտութիւնը պատրուակ մը կ'ըլլայ աւելի գրգռելու ամբոխը :

Այս ընդհանուր շարժումը տեսնելով, հիւպատոսները կուսակալին կը դիմեն և ապահովութիւն կը պահանջեն : Կուսակալը կը պատասխանէ անոնց թէ՛ ինք ունի իր ծրագիրը, թո՛ղ ապահով ըլլան :

Հիւպատոսները, կուսակալին այս յայտարարութեան վրայ, իրենց դեսպաններուն կը հաղորդեն իրենց վախերը : Կուսակալը զգալով թէ՛ դեսպանները կրնան միջամտել, ուղղակի Սուլթանին կը դիմէ և հրահանգ կը խնդրէ :

Սուլթանը կը հրամայէ, առանց երկար ատեն սպասելու, ընել կոտորածը :

Հրահանգը կը մտնէ անմիջական գործադրութեան :

Ջարդուածներուն թիւը 700 է 800 կը հաշուեն, ամէնքն ալ հայ : Մնացեալ Հայերը բանտերուն մէջ լեցուցած են : Իսկ երկու հարիւր հայեր ապաստանած են ամերիկեան դրօշակին տակ : Ռուսական, հելլենական, ֆրանսական և աւստրիական շոգենաւները գացին, միայն իրենց ազգայինները փրկելու համար :

Կոտորածը կառավարութեան հսկողութեան տակ կատարուած է. ասոր հօր ապացոյցը սա է թէ՛ օտա-

րահպատակ Հայերը, միւս քրիստոնեայ բնակչութիւնները, նոյնիսկ կաթողիկ Հայերը գրեթէ անմնաս մնացած են: Արդ, կոյր խուժան մը ինչպէս կրնար զանազանել Հելլէնը՝ Հայէն, Լուսաւորչականը՝ կաթողիկէն:

Այս ամէնը ստոյգ են, բայց կը սպասենք նորանոր մանրամասնութեանց, աւելի որոշ և ընդարձակ տեղեկութիւններու:»

Ապտիւլ Համիտ, լայն շունչ մը քաշելով

— Օ՛խ, ըսաւ, Տրապիզոնի հաշիւը մաքրուեցաւ, բայց Նազը՛մ, այդ անիծածը ինչպէս կրցած է քաղել բոլոր այս տեղեկութիւնները, մանաւանդ պալատիս մէջ անցած դարձած գաղանփները...:

— Վեհափա՛ռ տէր, ըսաւ Նազըմ, այս մարդերը սովորական մարդեր չեն, ամէն ծակուծուկ կրնան մըտնել առանց ինքզինքնին յայտնի ընելու:

— Է՛, յարեց Համիտ, տակաւին ինչ գրուած է նայինք, շարունակէ՛, Նազը՛մ:

Ու Նազըմ բաշան վերսկսաւ ընթերցումը.—

«Տրապիզոնի ջարդին քով, գրեթէ մոռցուեցաւ Ագ Հիսարի ջարդը: Կ. Պոլսէն քանի մը քայլ անդին, Նիկոմիդիոյ նահանգին մէջ,

— Նայէ՛, նայէ՛, նայէ՛, ընդմիջեց Համիտ, մենէ՛ աղէկ սերտեր են իմ երկրիս աշխարհագրութիւնը, սա ֆեռաքաներո՛ւն նայէ...:

— Այո՛, Վեհափա՛ռ տէր, հաստատեց Նազըմ, գիտէ՞ք, այս Հնչակեանները հասարակ մարդիկ չեն, ամէնքն ալ, գրեթէ առանց բացառութեան, դպրոցակա՛ն են, դպրոցակա՛ն...:

— Ծի՛շդ է, ճի՛շդ է, կրկնեց Համիտ, ասոնք գետնին երեսը պարտով սատանաներէ՛ն են...:

Նազըմի շրթունքին եղերքը կեղծաւոր ժպիտ մը

գծուեցաւ, Հիւնքեարին տկնարկութեան վրայ, շարունակեց ընթերցումը .

«Նիկոմիդիոյ նահանգին մէջ, այդ հայաբնակ գիւղը վատօրէն կը կոտորուի, երբ անդին կը ջարդուէին Տըրազիզոնի Հայերը: Սեպտեմբեր 27 իշտրեքլարթիւն է որ այդ ջարդը տեղի կ'ունենար: Նոյն օրը, զանազան վայրերէ Հայեր կը համախմբուին այդ համայնքին շուկան. պազարին օրն է: Միւտիրը հո'ն է, ամէնուն վըրայ կը նայի, զէնքերնին կ'առնէ, դանակ, ևն. քիչ ետքը, խուժանը, ոտտիկաններէն առաջնորդուած, յարձակումը կը սկսի. կը ջարդեն անմեղ Հայերը, որոնց ապրանքները կը թալլեն: Միւտիրը մարդ մը կը զրկէ գայմագամին, օգնութիւն խնդրելու. բայց փոխանակ շողեկառքով զրկելու մարդը, ստքով կը զրկէ, որպէս զի ուշ հասնի և կոտորածն ու թալանը կարելի ըլլայ աւելի շարունակել: Գայմագամը սակայն շուտով կը հասնի գիշերանց և ջարդին առաջքը կ'առնէ: Զարդուածներուն թիւը 150ը կ'անցնի: Շատ մը դիակներ հանուեցան հորերէն:

Նազրմ կանգ առաւ:

— Ա՛լ չը մնա՞ց, դիտեց Համիտ, այսչա՞փ է.

— Ո՛չ, Վեհափա՛ն տէր, յարեց Նազրմ, շատ երկար է, դեռ չը վերջացաւ:

— Շարունակէ, ուրեմն, հրամայեց Հիւնքեարը:

Եւ Նազրմ բաշան շարունակեց.

«Երեք մեծ դեսպաններու թարգմանները պատրիարքարան եկան այսօր:

— Անունները չէ՞ յիշած, ընդմիջեց Համիտ.

— Ո՛չ, Վեհափա՛ն տէր, յայտնի է, չէ՞. անգլիական, ռուսական և ֆրանսական դեսպաններուն կ'ակնարկէ.

— Լա՛ւ, շարունակէ՛, հրամայեց Համիտ, կարդա՛ լմնցո՛ւր :

Նազըմ վերսկսաւ ընթերցումը .

« Պատրիարքը տունը կը գտնուէր, անհանգստութեան պատճառաւ . թարգմանները տունը գացին : Աւետեցին թէ ընդունուած է ծրագիրը . . . :

Համիտ քրքիջ մը փրցուց .

— Թո՛ղ աւետեն, թո՛ղ աւետեն, ըսաւ քանքահով մը, ապուշները՛, թո՛ղ անանկ գիտնան . շարունակէ՛ նայինք, ի՛նչ է ըսեր պատրիարքը . . . :

Նազըմ վերստին ձեռք առաւ ընթերցումին թելը :

« Եւ խնդրեցին պատրիարքէն որ յայտարարութիւն մը հրատարակելով, հանդարտութեան յորդորէ ժողովուրդը : Պատրիարքը դիտել տուաւ թէ՛ ժողովուրդը հանդարտ է, խանութները բացուեցան արդէն, ուստի յորդորի պէտք չը կայ . բայց, ըսաւ, Ագ Հիսարի կոտորածը կայ, Տրապիզոնի կոտորածը կայ, այդ սեւ լուրերը կը հասնին, ի՛նչպէս կ'ուղէք որ ժողովուրդս հանդարտ կենայ : Թարգմանները յայտարարեցին թէ՛ այս իրողութիւններն ալ պիտի հաղորդեն իրենց դեսպաններուն : Թարգմանները խօսեցան նաև Ծրագրին աստիճանաբար գործադրուելուն վրայ : — Այդ գործադրութեամբ, հանդարտութիւնը բնականաբար աւելի պիտի տիրէ, ըսաւ պատրիարքը :

Ապտիւլ Համիտ ոտքի ելաւ և սկսաւ ման գալ դահլիճին մէջ, քթին տակէն բառեր մը գլտորելով : Իսկ Ռատիկանութեան նախարարը, ուրիշ ծրար մը կը քրքրէր ու կը պատրաստուէր կարդալու :

— Ի՛նչ է այդ ծրարը, հարցուց Հիւնքեարը, դառնալով իր սիրելի նախարարին :

— Վեհափա՛ռ տէր, ըսաւ Նազըմ, ուրիշ թղթակ-

ցութիւն մըն է, դարձեալ Պոլիսէն ուղղուած Հնչակ թերթին.

— Կարգա՛ նայինք, հրամայեց Համիա, ա՛տ ալ լսենք :

Եւ դարձեալ նստաւ գահին վրայ :

Նազըմ՝ բաշա սկսաւ կարդալ.

«Կ. Պոլիս 22 հոկտեմբեր 95»

Հիմակ որ Կ. Պոլիս առերեւոյթ հանդարտութիւն մը գտած է, տխուր ու նուիրական պարտականութիւն մը ունինք կատարելիք, այն է, ակնարկ մը դարձընել դէպի ետ, դէպի արիւնոտ օրերը, մեր կորուստները, մեր զոհերը յամբել արցունքոտ աչքերով, և սրտաբուլիս յարգանքի ու համակրանքի արտայայտութեամբ մը յաւերժացնել անոնց յիշատակը . . . :

Մեր մարտիրոսնն՝ ըն են անոնք : Իրենց սուրբ յիշատակը պէտք է անկորուստ պահուի այս թերթին մէջ : Այսօրուան ընթերցողները, այդ դարձուրելի, արիւնալի դէպքերուն ու ջարդերուն մէջէն պիտի քաղեն անշէջ, ատելալաւ դգացում մը, վրէժի շանթեր այն բարբարոս բռնապետութեան դէմ, որ գործադրել տուաւ այդ քստմնելի, դարավերջիկ ոճիրները . . . : Իսկ մենէ ետքը եկող սերունդները պիտի տեսնեն անոնց մէջ թէ՛ ի՛նչ գնով կը գնուի Ազատութիւնը, և ասիկա այժ մը պիտի ներարկէ իրենց արիւնին մէջ, երբէք ձեռքէ չը հանելու այն թանկագին աւանդը, Ազատութիւնը :

Հնչակ պարբերաբար պիտի հրատարակէ մանրամասն տեղեկագիրներ Կ. Պոլսոյ ջարդերուն վրայ : Բայց այդ դէպքերուն իրարու հետ ունեցած կապակցութիւնը պէտք է մէջտեղ դնել ընդհանուր տեսութեամբ մը :

Պէտք է գիտնալ թէ՛ կառավարութիւնը կազմակերպեց ջարդերու տուամը, և ասոնց հրամանը մեկնե-

ցաւ ուղղակի երլտըզի Պալատէն :

— Աղէկ գուշակեր է, ընդհատեց Համիտ, դիւա-
յին քմծիծաղով մը, ի՛նչ կը կարծէին. չէի՞ն գիտեր թէ
որքան վտանգաւոր է գրգռել ինծի պէս Խալիֆայի մը
բարկութիւնը : Այդ խելագարները, այդ սրիկաները
չէի՞ն գիտեր թէ Իսլամի մայրաքաղաքին մէջ դիւրին
բան չէ ապստամբութեան փորձ մը... , ապերախտներ,
ֆեւաքաներ... :

Նազըմ բաշան, մէկ մատը թղթակցութեան ընդ-
հատուած պարբերութեան վրայ դրած, կը սպասէր իր
տիրոջ արտօնութեան, ընթերցումը շարունակելու :

— Կարդա՛, կարդա՛ նայինք, շեշտեց Հիւնքեարը :
Ու Նազըմ դարձեալ սկսաւ .

«Սեպտեմբեր 18ի երկուշաբթի օրը, Հնչակեաններու
քաջարի խումբ մը, ամէն ընդդիմութեան յաղթելով,
վերջապէս մօտեցաւ Բ. Դրան : Կայսրը վայկեանէ
վայրկեան կը տեղեկանար Յոյցին մասնակցողներուն
առաջխաղացքին : Ծիշդ այդ պահուն—ականատես մըն
է պատմուրը—, կայսերական թիկնապահ մը, երլտըզէն
մեկնած, ձին ճաթեցնելու աստիճան վազցնելով կը
հասնի, ձեռքը նամակ մը բռնած, ներս կը մտնէ Բ.
Դուռնէն, և մէկ երկու վայրկեան ետքը, Մեծ Եպար-
քոսին քովէն ելլելով, ժանտարմաներու հրամանատար
Սէրվէթ պէյին կը հրամայէ բարձրագոյ.— Զարկէ՛ք : Ու
Սէրվէթ պէյը կուտայ հրամանը : Յուցարարներէն մէկ
քանինքր գետին կը փռուին անկենդան. բայց վրիժա-
ռու գնտակ մը կը ջախջախէ Սէրվէթ պէյի գանկը : Մը-
նացեալը յայտնի է :

Կայսրը, ինչպէս ըսինք, հրամանը տուած էր սպան-
նելու այդ մարդիկը, որոնք իրենց իրաւունքը կը պա-
հանջէին : Կայսրը նոյնպէս հրամայեց ջարդել անկիւն-
ներու մէջ գտնուած Հայերը : Իսկ մօլեգին խուժանը

կրցածին չափ նետեւեցաւ իր արիւնհարբու տիրոջ նրա-
մանին :

Ամենէն աւելի Հայերուն դէմ կատաղութիւն ցոյց
տուողներն ու վայրագութիւններ գործողները՝ սօֆիստ-
ները եղան, որոնց մոլեռանդութիւնը գրգռած էր Բռու-
նակալին կառավարութիւնը :

Գարակէօմրիւքի մէջ, գրգռիչ քարոզներ խօսուե-
ցան մզկիթը :

Պայագրիտի նրապարակին վրայ, ոստիկաններու
խսւմբ մը, վեց Հայեր բռնած կը տանէին : Սօֆիստ մը
նստած տեղէն ցատկելով գոռաց. «Ի սէր Ասուծոյ,
ձգեցէ՛ք որ այդ կեալուրներուն ե՛ս իջեցնեմ մէկ մէկ
հաս :» Ու ձեռքի ոստոտ բիրը կիջեցնէ երկու հայու
գլխուն, որոնք հոն կը մնան կիսամեռ, արիւնլուայ :
— Տեսա՞ր սօֆիստներս, բացաքանչեց Համիտ, իմ օրի-
նեա՛լ զաւակներս, ինծի նայէ՛, Նազը՛մ, չը մոռնաս
վերջը յիշեցնելու ինծի. կայսերական գրպանէս կարե-
ւոր գումար մը պիտի նուիրեմ իրենց... Շարունակէ՛,
չարունակէ՛ . . :

«Ուրիշ սօֆիստ մը, շարունակեց Նազը՛մ, փողոցին
մէջ, խուժանին ստիպումին վրայ, կը փորձէր խմել
մեռած հայու մը արիւնը . . . (Տե՛ս քիւ 50 տեղեկա-
գիր) :

«Ոստիկանութեան դերը ա՛լ աւելի զարհուրելի
եղաւ : Երկուշաբթի մինչև իրիկուն ձերբակալուած Հա-
յերը Ոստիկանութեան Բանախին մուտ նկուղներուն մէջ,
Հիւսնի պէյի նրամանովը, ծեծի տակ սպաննուեցան :
Ֆրանսական դեսպանատան առաջին թարգմանը Պ.
Ռուէ՛ աչքովը տեսած է ոստիկանութեան բանախին մէջ
վեց հայ ձերբակալեալներու սպաննուելը ծեծի տակ :
Մեռած կարծուելով մէկգլխի նետուած մէկ քանի Հայեր,
որոնք նրաչքով ազատած են, կը պատմեն թէ՛ մէկ

քանի սեփականներ լեցուեցան ձեռքի տակ մեռած Հայե-
րու դիակներով :

Ոստիկանութիւնը թոյլ կուտար որ ճամբան տար-
ուած Հայերը գանակոծուին հասարակ ամբօխէն :

Չնւորներու պահակախումբերուն դիրքը նոյնը ե-
ղած է : Առերեսս, իբր թէ դէպքերը արգելիլու համար
կը պարտէին ասոնք, բայց իրենց վարմունքով կը քա-
ջալերէին խուժանը :

Սեպտեմբեր 19ի երեքշաբթի գիշերը, երբ որ
խուժանը Գասըմ բաշայի հայաբնակ Հասան Բաշա խա-
նին վրայ յարձակոււմ գործած էր, այդ տեղէն անցնող
պահակախումբին պետը, շնականօրէն կ'ընէ ջարդարար-
ներուն, «Հոս շեմքը մը՝ կենաք, ներս մտէ՛ք, հո՛ն
գացէք տեսէք գործերնիդ :»

Ստորին խաւերու վարմունքն ալ ցոյց կուտայ ջար-
դարարներուն գազանային բնազդները : Ուր որ մու-
թին մէջ, մինակ ու անպաշտպան հայ մը կը գտնէին,
անխնայ կը սպաննէին :

Սուլթանէն սկսեալ մինչև ամենայետին մանրավա-
ճառը, միեւնոյն գազափարով տողօրուած էին ու գոր-
ծեցին որոշ ծրագրով մը : Ուր որ ջարդ մը տեղի կ'ու-
նենար, թաղապետական մթերանոցներէն եկած սալլեր
կազմ ու պատրաստ կեցած էին, դիակները փոխադրե-
լու համար դէպի ծովեզերք, ուսկից պատրաստի գտ-
նուած մալլուցաններով կը տանէին դիակները թափելու
ծովին բացերը : Նաւարանէն ալ, հին երկաթեղէններու
խեշերանքներու կոյտեր պատրաստի էին մալուցանե-
րուն մէջ, դիակները կապելու անոնց և ծովին յատակը
իջեցնելու համար :

Չեմ մոռնար յիշելու համխտական խժդժութեան
ուրիշ նշանակելի պարագայ մը : Ոստիկանութեան Բան-
տի հիւանդարանին մէջ, ձերբակալուած հայ վիրաւոր-

եալները, օրերով առանց խնամքի ձգեցին և այդ մարդերու կիսամեռ վիճակին չը խղճալով՝ կը ծեծէին զանոնք, գաղտնիքներ կորզելու համար :

*
* *

Խմբովին ջարդերը կատարուեցան երեք կէտերու վրայ :

Յոյցի միջոցին, զէնքը ձեռքերնին կռուելով, արիաբար նահատակուած երիտասարդներուն, և հետզհետէ ձերբակալուելով, բանտին մէջ սպաննուածներուն թիւը՝ կարեւորագոյն մասը կը կազմէ մեր զոհերուն :

Յետոյ, յաջորդ գիշերը, գլխաւոր ջարդերը տեղի ունեցան Գասըմ Բաշա, ուր մեծ թիւով պանդուխտ գաւառացիներ կը բնակէին. մէն Գարան, Չուգուր Չէչմէ խանը, ուր Բալուցի հայ արհեստաւորներ կը բնակէին, սպաննուած են երեսուն և վիքաւորուած՝ քառասուն, նոյնչափ ալ Գարակէօմրիւք : Այս Գարակէօմրիւք թաղին մէջ էր միայն որ խուժանը յարձակեցաւ տուներուն վրայ և ջարդեց ընտանիքներ, կին, տղայ, ծեր :

Ասոնցմէ դուրս, սպաննութիւններ եղան մասնակի, զատ զատ : Յերեկները, մանաւանդ գիշերները, թուրք թաղերու մէջ կամ քովերը գտնուող Հայերէն շատերը զոհուեցան :

Անդէն Հայերու վրայ խմբովին յարձակիլ, և անպատիժ մնալու, նոյնիսկ վարձատրուելու վստահութեամբ, սպաննել զանոնք, ահա՛ Համիտի խուժանին քաջութիւնը : Ա՛խ, վատն՛րը, վատն՛րը : Անգութներ ու սինլքորներ, իրենց Սուլթանին պէս, ահա՛ այդ մարդերու նկարագիրը . . . :

Այդ վայրենիներու վո՛նձակները, Հայերուն մէջ կ'ուզէին խեղդել մեծ ու նուիրական ձգտումը, իրենց գլուխը բարձրացնելու և իրենց իրաւունքները պահանջելու :

Ի՞նչ եղաւ արդիւնքը . . . :

— Կեցի՛ր հոտ, կեցի՛ր, Նազըմ, ընդմիջեց Համիտ, ի՞նչ ըսել կ'ուզէ, անգամ մըն ալ կարդա՛, լաւ չը հասկցայ. կրկնէ՛, կրկնէ՛ :

Ու Նազըմ դարձեալ կարդաց վերջին պարբերութիւնները :

— Հասկցա՛յ, հասկցա՛յ, մրթմրթաց Համիտ, շարունակէ՛ դուն :

Եւ Նազըմ շարունակեց.

«Հնչակեան կազդուրիչ ու բարձրացնող գաղափարներով սնած Հայ մը չը կա՛յ այսօր, որ նորէն կազմ ու պատրաստ չըլլայ վտանգին առջեւ նետուելու, եթէ հարկը պահանջէ : Ամէնքս, ուրախ սրտով, դարձեալ պիտի կատարենք մեր պարտականութիւնը, աւելի՛ հաւատքով, և աւելի սիրով ու խանդով :

Մեր արիւնին մէջ ուզեցին մեզ խեղդել :

Ու հիմակ, այդ արիւնին վրայ, աւելի մեծ արութիւններ, աւելի մեծ անձնազոհութիւններ կը բուսնին . . . :

— Վերջացաւ, այնպէս չէ՞, ըսաւ Հիւնքեարը, Նազըմ, կը լսե՞ս, այդ մարդիկը դեռ չեն յոգնած, ընդհակառակը, ա՛լ աւելի ուժով կը դգան իրենք զիրենք և կ'երեւայ թէ՛ ուխտած են շարունակել իրենց ապստամբական խռովութիւնները, տակնուվրայ ընել կայսրութեանս խաղաղ կեանքը, և չը պիտի դադրին ատոնք, մինչեւ որ մէ՛կ Հայ մը չը մնայ իմ երկրիս երեսը . . . :

— Վեհափա՛ռ տէր, ըսաւ Նազըմ, Հիւնքեարին հոգեկան արամադրութենէն օգտուիլ ուզելով, ատոնցմէ մէկ քանիները ձերբակալել տուի, շնորհիւ Ձերդ Վեհափառութեան՝ հիմակ կղպանքի ներքեւ կը գըտնըւին ամէ՛նքն ալ, բայց տակաւին ազատ կը պտըտին շատերը, դժբաղդաբար, մեծ արգելքներու կը հանդիպիմ, անոնց վրայ ձեռք դնել կարենալու համար:

— Ուրկէ՞ է այդ արգելքը, հարցուց Համիտ, ո՞վ կրնայ արհամարհել իմ կայսերական կամքս, չէ՞ որ ես քեզի բացարձակ իշխանութիւն շնորհած եմ կապելու և արձակելու . . . :

— Ձեր Վեհափառութեան շնորհիւ, յարեց Նազըմ, ոստիկանութեան նախարար ծառանիդ երբէ՛ք չընկրկիր ո՛չ մէկ խոչընդոտի առջեւ. սակայն արգելքը դրսէ՛ն է, դրսէ՛ն, դեսպանատուններո՛ւն կողմէն:

— Ո՞ր դեսպանատան կողմէն է, չըսե՛ս, ընդմիջեց Համիտ:

— Վեհափա՛ռ տէր, կմկմաց Նազըմ գողգողալով, չեմ համարձակիր անունը տալ, կը վախնամ:

— Ի՛նչպէս, ի՛նչպէս, կրկնեց Հիւնքեարը, Նազը՛մ, այդ ո՞ր դեսպանն է որ քեզի ա՛յդքան վախ է ազդեր:

— Անգլիական մեծ դեսպանը, Վեհափա՛ռ տէր, յարեց ոստիկանութեան նախարարը, գիտէ՞ք, գաղտնի յարաբերութիւններ կը մշակէ Գոմիթէին գլխաւորներուն հետ. ամէն օր Գում գաբուի Պատրիարքարանը կ'այցելէ իր թարգմանը, Իզմիրլեան Պատրիարքին հետ ամէն օր տեսակցութիւններ կ'ընէ:

— Ախ, մուտաց Հիւնքեարը, այդ Իզմիրլեանը չէ՞ արդէն ամէն չարիքներու աղբիւրը, ինքը չէ՞ որ ձեռքի

տակէ կը գրգռէ Հայերը, որոնք դարեր է ի վեր հաւատարիմ մնացած էին օսմանեան գահին. այն անիծեալ մարդը չէ՞, որ, պատրիարքական գահին վրայ բարձրացած օրէն ի վեր, անպատկառօրէն կ'արհամարհէ կայսերական հեղինակութիւնս, եւրոպական մեծ դեսպաններուն հետ գաղտնի տեսակցութիւններով, ամէն օր նոր նոր բարդութիւններ կը ստեղծէ. ինքը չէ՞ արդէն բուն պատասխանատուն ա՛յսքան խառնակութեանց ու արիւնհեղութեան . . . :

— Այո՛, Վեհափա՛ռ, ըսաւ Նազըմ, բայց, ի՛նչ օգուտ, պաշտպանուած է, պաշտպանուած . . . :

— Աս ի՛նչ ըսել է, գոռաց Հիւնքեարը, յօնքերը պռոտելով, ո՞վ է այն որ պիտի պաշտպանէր այդ մարդը :

— Սըր Ֆիլիբ Քրրրի՛ն, Վեհափա՛ռ Տէր, պատասխանեց ոստիկանութեան նախարարը :

Ապտիւլ Համիտ մտմտալ սկսաւ : Լորտ Սօլլըրրիի հետ չպիտի ուզէր ու չէ՛ր ալ կրնար աւրուիլ, մանաւանդ իրերու ներկայ դրութեան մէջ :

Գարձեալ ոտքի ելաւ ու Նազըմի դռնալով .

— Նա՛զըմ, զաւա՛կս, ըսաւ հայրական գուրգուրանքի ընտանի շեշտ մը դնելով իր ձայնին մէջ, դուն հիմա գնա՛, հոգ տա՛ր բազմապատկելու ձերբակալուածներուն թիւը, հոգ չէ՛ թէ յանցապարտ չըլլան, բաւական է որ Հայ են, հասկցա՛ր. դուն ինձի նայէ՛, չպիտի թոյլ տաս որ վայրկեան մը բանան աչքերնին. ծեծը, խոշտանգումները կրկնապատել տո՛ւր, ամէն ջանք թող չը ինայուի բանտերը լեցնելու այդ ապերախս խռովարարներով. տեսնե՛նք, ի՛նչ պիտի ընէ պատրիարքը . . . :

Նազըմ բաշան կը պատրաստուէր մեկնիլ, երբ Ապ-

տիւլ Համիտ, մօտենալով ոստիկանութեան նախարարին :

— Գուզո՛ւմ Նազըմ, ըսաւ, դուն ինձի նայէ՛, շատ ահանջ մի՛ կախեր Քեամիլ բաշային, գիտես, անգլիամո՛ւլ մըն է :

Նազըմ բաշան դուրս ելաւ, իսկ Հիւնքեարը դարձեալ մնաց առանձին իր եղեռնական խորհուրդներուն հետ :

Նազըմ բաշա, երբ որ դուրս կ'ելլէր Եըլտըզի դահլիճէն, հանդիպեցաւ պալատականներէն մէկուն, որ հոն իրեն կը սպասէր :

— Բաշա՛, ըսաւ նախարարին, Առաջին քարտուղարը կը խնդրէ որ Դիւանը հանդիպիք :

Նազըմ ուղղակի դիմեց կայսերական քարտուղարութեան Դիւանը, ուր կային միայն Թահսին ու Իզզէթ :

Պօսակցութիւնը դարձաւ օրուան Դէպքին վրայ, այն է, Հայկական Ջարդերուն վրայ, որոնք օրէ օր ընդարձակ համեմատութիւններ կ'առնէին Հայաստանի կարեւոր կեդրոններուն մէջ :

Թահսին կ'ուզէր հետազննել Ոստիկանութեան նախարարին ներքին մտածումը, օրուան քաղաքականութեան նկատմամբ. սակայն, այս վերջինը, Համիտի առաջին քարտուղարէն աւելի խորամանկ ու փորձառու, միշտ կը զգուշանար արտայայտուելէ :

— Ի՞նչ կը խորհիք, բաշա՛, կը հարցնէր Թահսին, Նազըմի ուղղելով խօսքը, ի՞նչ կը մտածէք այս բաներուն նկատմամբ.

— Ո՞ր բաներուն, հարցուց Նազըմ, իբր թէ չըմբռնելով Թահսինի միտքը.

— Անատուրի դէպքերուն համար կ'ուզէի լսել ձեր կարծիքը, յարեց Թահսին.

— Բաշա՛, ըսաւ Նազըմ, այդ խնդիրը լուրջ խընդիր մըն է, այնքա՛ն փափուկ որ վտանգաւոր է առարկայ ընել՝ զայն մեր խօսակցութեան, այնպէս չէ՞ .

— Բայց ինչո՞ւ վտանգաւոր ըլլայ, բաշա՛, պնդեց Թա՛սին, հաստատապէս մտադրած ըլլալով գաղտնիք մը քաղել Ոստիկանութեան նախարարի բերնէն, մէկ քանի բողբոջ առաջ, միեւնոյն խնդիրը չէ՞ր որ զձեզ հանեց Վեհափառին ներկայութեանը. ինչե՛ր խօսեցաք արեօք .

— Ո՛չ, ո՛չ, կը սխալիք, Թա՛սին բաշա, առարկեց Նազըմ ժպտելով, ես բոլորովին տարբեր խնդիրի մը համար եկած էի կայսերական ուղատառ, և

— Անկարելի՛ է, ընդմիջեց անդիէն Արաբ Իզզէթ, Հիւնքեարը կրնա՞յ լռութեամբ անցնիլ օրուան Դէպքին վրայէն, երբ մանաւանդ գլուխ գլխի ունկնդրութիւն մը կը շնորհէ իր օստիկանութեան նախարարին .

— Հաւատացե՛ք, կրկնեց Նազըմ, օրուան Դէպքը բնաւ առարկայ չեղաւ մեր խօսակցութեան. ձերբակալումներու վրայ դարձաւ ամբողջ ունկնդրութիւնը :

Թա՛սին նշմարելով Նազըմի յամառութիւնը, ո՛ր և է յայտնութիւն մը չընելու կայսերական ունկնդրութեան նկատմամբ, ա՛լ չը պնդեց :

Ինչ յետոյ, Նազըմ բաշա հրաժեշտ առաւ քարտուղարներէն և իրիկուան ստուերներուն մէջէն անցաւ նետուեցաւ իր կառքը, որ կը սպասէր Երլաբզի չըջափակի արտաքին մասին մէջ :

Կառքին շառաչիւնը կը վրդովէր փողոցներուն լռութիւնը :

Մայրաքաղաքին մէջ, Յոյցէն ի վեր դադրած էր գրեթէ նախկին եռուղեւը, հրապարակը արտում ամալութիւն մը, բնակարաններուն լոյսերը վառուած, ամէն

փողոցի գլուխ պահակներ կեցած, հեծելազորքի խումբակներ կը թափառէին թաղերուն մէջ :

Ոստիկանութեան նախարարը ելլալովէն վերադարձին, գնաց ուղղակի իր ապարանքը, ուր նոյն գիշերը պիտի ընդունէր խորհրդաւոր հիւր մը :

ԹԶ .

Հայկական Բարենորոգումներու կայսերական իրատէն հրատարակուելէ ետքը, Հայաստանի Ընդհանուր Զարդերը սկսած էին երեւան գալ զանազան կէտերու վրայ, գրեթէ միեւնոյն ժամանակ :

Ապտիւլ Համիա իր ուխտը կը կատարէր, Հայ Արիւնին մէջ խեղդելու Հայ Դատը :

Մեծ դեսպաններուն միջամտութիւնը, լոկ դիւանագիտական ցուրտ ու կեղծաւոր բնաւորութեամբը, չէր կրնար բնականաբար երկիւղ ազդել Կարմիր Սուլթանին, որ Եզեռնի Ծովուն մէջ ինքզինք անգամ մը նետած, կը լողար ու կը թաւալէր, անմեղներու արիւնը խմելով կը գինովնար, կը մոլեգնէր :

Այդ միջամտութիւն ըսուածը՝ մէկ օգուտ միայն ունեցած էր, եթէ կարելի է այսպէս ըսել, եկեղեցիներուն մէջ ազատանած քանի մը հարիւր Հայեր կրցած էին դուրս ելլել ձեռքերնին մէկ մէկ դեսպանական քառթունենալով : Ահա՛ բոլորը :

Բայց այդ քառթերը, որոնք քանի մը կեանքեր կրցած էին փրկել, յետոյ շատ ազետարեւ պիտի ըլլային եկեղեցիներէն նոր դուրս ելած ազատանեալներուն համար, պատրուակ ծառայելով չարաչա՛ր ոստիկանութեան ձեռքը :

Դեպքաններուն քառթերը՝ վաւերական վկայագիրներ համարուեցան, յեզափոխականներուն ձեռքը: Նազըմ բաշայի կանխորոշ կարգադրութեան և հրահանգներուն համաձայն, ոստիկանները միաքերնին կը պահէին բոլոր այն ապաստանեալները, որոնց ձեռքը դեպքանական քառթ մը կը գտնէին, որպէս զի յետոյ մէկիկ մէկիկ ձերբակալէին զանոնք և առաջնորդէին կեդրոնական Բանտը, որ արդէն լեցուած էր Հայերով:

Մայրաքաղաքին մէջ, ձերբակալումները կը յաջորդէին իրարու, իսկ անդին, Հայաստանի խորերը, գանազան կէտերու վրայ, Ընդհանուր Ջարդերը կը տարւէին առաջ:

Հեռագիրները կը գուժէին աշխարհի ամէն կողմերը, Հայկական Կարմիր Ջրնեղեղը:

Երլտըզի մէջ ոգեւորութիւնը մեծ էր, հեռագրատունը կը բանէր գիշեր ցերեկ:

Ապտիւլ Համիտ հոն էր, ոտքի վրայ, հեռագրի գլուխը:

Պատէն կախուած Քիւրերզի աշխարհացոյց քարտէս մը կար, Ասիական Թուրքիոյ քարտէսը՝ որուն վրայ, կախուած, Հիւնքեարը կարմիր կէտ մը կը գնէր գիւղին, քաղաքին վրայ, որ դատապարտուած էր, և ուր անհրաժեշտօրէն պիտի գործադրուէր կայսերական... Ջարդերու Իրատէն:

Հեռագիրը կը փոխադրէր իրատէն վայրկենապէս:

Ու քիչ յետոյ, Ջարդերու կարմիր շրջանակին մէջ առնուած կեդրոններէն կը հասնէր հեռագիրը. — Սայիի՛ շահանէսէ Ասայիւ պիտի քեմալ սըր. որ Համիտի լեզուով կը նշանակէր. Ծնործիւ կայսերական վեհափառութեան ջարդը կատարուեցաւ...:

Այսպէս, շարունակ երեք ամիս, Հայաստանի հոծ

աւ կարեւոր կեդրոնները, ու մայիսեան համբաւաւոր բարենորոգումները պիտի գործադրուէին, անսխալն թաց ոճիրներու արիւնոտ թատրը ներկայացան :

Երեք ամիս անընդհատօրէն, ջարդուեցան Հայերը, բռնաբարուեցան Հայուհիները, թալլուեցան շուկաները, հրդեհուեցան տունները, պղծուեցան վանքերն ու եկեղեցիները, և սակայն կարմիր Սուլթանը չը կըշտացաւ . . . :

Գահճապետը, վստահ էր, կանխաւ ապահովու թիւններ առած էր, գիտէր թէ պիտի կրնար անպատիժ գործադրել տալ իրատէն, ժամ առաջ լուծելու, խեղդելու համար իր կեանքը թունաւորող դատր, որ կը կոչուէր Հայկական Խնդիր . . . : Մէկ կողմէ, Ռուսիոյ Արտաքին գործերու նախարար Լոպանօֆի բացարձակ յայտարարութիւնը կար. — Հայաստան առանց Հայու :

Միւս կողմէ, իր Օգոստափառ Եղբայրը, Տեւտոնի Երկաթի Թագին Տէրը կար, որ յետոյ, Ս. Երկիրի Ուխտաւոր, պիտի երթար, Սալահէտօլինի դերեզմանին վրայ պիտի կատարէր իր հանդիսաւոր Ուխտը, Իսլամին ու Գերմանին եղբայրակցութիւնը . . . :

Եւ Հայաստանը պիտի ամայանար, պիտի պարպուէր իր բնիկներէն, ու պէս զի հոն խուժէին Գերմանիոյ յարածուն գաղթականութեան սովալուկ վորմակները, և տեղաւորուէին . . . աւերակներուն վրայ :

Արդեօք ապագայի պատմիչ մը, որ անտարակոյս զերծ պիտի ըլլայ կանխակալ կարծիքներէ, ի՞նչպէս պիտի մեկնաբանէ Հայկական մարտիրոսութիւնը, արդեօք իր գաւակներուն աշիւնով իր պապերուն հողը ներկող այս դժբաղդ, այս հալածուած, այս չարչարուած, այս յօշոտուած Յեզին բնաջնջումին մէջ չպիտի գտնէ Պաղտատի երկաթուղիին նախագիծը . . . :

Ապտիւլ Համիտ, իր երկրին արտաքին քաղաքականութեան ղեկավարը, կամ այսպէս ըսենք, իր կայսրութեան արտաքին գործերու նախարարը, լրախաղացի մը ճարպիկութեամբ գիտէր դիւանագիտութեան ամէն խաղերուն մէջէն ելլել առանց վտանգի, լո՛կ բռնով, զոր խոստումով մը, գործադրութիւնը թողլով անորոշ ժամանակներու: Խարեքայութեան, նենգութեան ու կեղծիքի դպրոցէն, մասնագէտ ընթացաւարտ, մերթ Անգլիոյ կողմը կը հակէր, մերթ Ռուսիոյ, միշտ պանկով սակայն իր հաւասարակշռութիւնը, շնորհիւ անխախտ, անջնջելի բարեկամութեան, զոր կնքած էր իր Վեհափառ Եղբօր, Վիլհէլմ Բ. ի հետ: Եւրոպական միւս մեծ տէրութիւնները բան մը չէին արժեր իր աչքին, ասոնք իրենց ներքին յոգերը, ներքին վէրքերը ունէին, և իրենց առանին պառակտումներուն մէջ կը թապլտկէին. էականը, կենսականը, անհրաժեշտը՝ միշտ օգտուիլ էր Եւրոպական Համաձայնութիւն ըստած ընդդիմադարձ շահերու բազադրութենէն: Ուստի, իր բոլոր ոյժը, բոլոր տաղանդը կը կեդրոնացնէր երկպառակութեան որոմներ ցանկու տէրութիւններուն մէջ, զանոնք իրարու դէմ հանելու, որպէս զի մտանային զինքը, աչք գոցէին ի... ոճիրներուն:

Եւրոպան, շնական անգթութեամբ մը, լո՛կ իր շահերուն վրայ հիմնուած Դիւանագիտութեան շէնքին բարձունքէն, կը դիտէր Արեւելքի Հրդէնը, որ Արիւնի Զրնգեղով մը միայն պիտի կարելի ըլլար մարել:

Արեւելքը բռնկած էր: Արեւելեան Խնդիրը, Հայկական Յեղափոխութեան գործունէութեան ուժովը, հրատապ հանգամանք մը կըստանար, և կըսպառնար Արեւմուտքին: Այդ Հրդէնը կրնար ծաւալիլ ու խօլ արշաւանքով մը, շուտով անցնիլ Ասիայէն Եւրոպա:

Աւատօլուն չէ՛ր միայն, Ռումէլի՛ն ալ կրակի մէջ էր, անդին Հայաստանը, ասդին Մակեդոնիան, անդին Եւմէնը, ասդին Ալպանիան, անդին Տիւրքիները, ասդին Կրեաէն. Բովանգակ կայսրութիւնը կը տատանէր... :

Յնցումը խորունկ խաւերէն կուգար, ժողովուրդները, բռնապետութեան երկաթի մականին ներքեւ ա՛լ ապրելու անկարող, կը խլրտէին: Ընդվզումը ծայր տուած էր ամէն կողմէն:

Թուրքիան Դժոխք մըն էր... :

Ապստամբութիւնը՝ սրբազան պարտականութիւն մը կը զաւանուէր հարստահարուող վիլիսնաւոր ժողովուրդներէն:

Սակայն Բոնաւորը, Ազգերուն Դա՛իճը, Երլտրզի հարէմին մէջ խննէչացած Հրէչը, կը խնդար, կը ծիծաղէր ամէնո՛ւն ալ վրայ, որովհետեւ Եւրոպայի Մեծ Տէրութիւնները Մեծ Անզօրութիւններ էին, ինչպէս ըսած էր Ռօշֆօրի Էնքրանսիժանը... :

Հայկական Սպանդին մանրամասնութիւնները կը հասնէին Եւրոպական Մամուլին, և արեւմուտքի ժողովուրդներուն զայրոյթը կը ծառանար Արեւելքի միակ քաղաքակիրթ ժողովուրդի Կոտորիչ, նոր գարերու ներոնին դէմ:

Եւրոպայի մէջ, հրապարակներու վրայ, հանրային հաւաքօյթներ, զբօսարաններու մէջ՝ ցուցադրուած Զարդի Պատկերներ, օրաթերթերու մէջ՝ բուռն յօդուածներ, պատ՛կերազարդ պարբերականներու մէջ՝ արիւնոտ տըռամներու, խմբովին ջարդերու, հրդէններու, թալաններու, բռնաբարումներու և աներեւակայելի խժգժանքներու ցնցող նկարներ... :

Տիեզերական Խիղճը կ'արթննար, ժողովուրդները կ'ազազակէին. — «Մարդասպանը, Թագակիր Մարդաս-

պահը, պէտք է պատժել. Անարգ Սիւնին պէտք է
գամուի այդ Մեծ Ոճրագործը... » :

Եւ սակայն մեծ ու փոքր տէրութիւնները, որոնք
յախորտանքով մը չուշակած էին իրենք զիրենք Քաղա-
քակրթութեան Ներկայացուցիչ, Քրիստոնէութեան բը-
նական պաշտպան, Արդարութեան ախոյեան և հարս-
տահարուած ժողովուրդներու իրաւարար, հիմա, Հայ-
կական Սպանդէն ետքը, մէկիկ մէկիկ կը քաշուէին,
կը հրաժարէին իրենց նախկին պնդումներէն և իւրա-
քանչիւրը կը ջանար, գաղտագողի, ձեռքի տակէ, նոր
մենաշնորհ մը, նոր արտօնութիւն մը կորզել արիւնկը-
զակ Սուլթանին ձեռքէն, իր մէկ հպատակին համար,
որ Արեւելքը կողոպտելու համար Արեւմուտքէն մեկ-
նած էր.

Ճիշդ այդ Արիւնոտ Թուականէն է որ կը սկսի
գերմանական գաղթային հոսանք մը, Փոքր Ասիոյ, Կի-
լիկիոյ և Հայաստանի կողմերը. ճիշդ այդ սեւ տարիէն
ի վեր է որ գերմանական ազդանքներով կը սկսի ողո-
զուիլ Թուրքիոյ հրապարակը... :

Ու այդ Սեւ Թուականէն կը սկսի Թուրքիոյ գոր-
ծերուն վրայ նուազամը բրիտանական ազդեցութեան,
տեղի տալով գերմանականին, որ ա՛յլ կը շեշտուէր ու
իւր գերակշիւ գիրքը կ'ամբապնդէր օրէ օր :

Ռուսիան, թէեւ զժգո՛՛ իրերու այս յեղաշրջու-
մէն, բայց, ըլլալով Անգլիոյ անհաշտելի հակառակոր-
դը, Ծայրագոյն, Կեդրոնական ու Մերձաւոր Արեւելք-
ներու գրեթէ բոլոր կէտերուն վրայ, բնականաբար ո՛չ
նուազ գո՛հ պիտի ըլլար Անգլիոյ կր...ծ պարտութենէն,
Հայկական Խնդիրին մէջ : Արդէն Սասունի Արձաւիրքին
սկիզբէն մինչեւ վերջը, ջանացած էր քար դնել բրի-
տանական ղիւանագիտութեան անիւին տակ : Ռուսիան

չէր ուզէր երբէք որ առողջանար Հիւանդ Մարդը, բընական ժառանգորդի մը շարատենչ աչքերովը, գրեթէ մէկուկէս դարէ ի վեր կը հսկէր անոր սնարին վրայ, ժամէ ժամ սպասելով ձեռք դնել թանկագին կողուպուռին վրայ:

Հիւանդ Մարդը, 1774ին, Խրիմի առումէն ի վեր անկողին ինկած, տարուէ տարի առաջացում ըրած էր հիւանդութեան մէջ, գահավիժելով դէպի քայքայում: Խրիմէն ետքը, մէկիկ մէկիկ կորսնցուցած էր իր պանծալի պապերուն յազթական սուրովը գրաւուած անհուն կալուածները. — Եգիպտոսը, Յունաստանը, Կըղզինները, Ալճէրիան, Թունուզը, Մոլտավիան ու Վալաքիան, Սև Լեռը, Սերպիան, Լիբանանը, Պուլկարիան, Արեւելեան Ռումէլին, Կիպրոսը, Սև Ծովի արեւելեան եզերքները, Լն, Լն, Լն...:

Ու հիմա, կը խոր՛էր Ռուսիան, դեռ կը տեւէր հիւանդութիւնը: Մասունի Արճախիքը, Հայկական Ղնդճանուր Զարդերը, մահազանգը պիտի հնջեցնէին Հիւանդ Մարդուն, որ ա՛լ շարժելու անկարող, հոգեվարքի գալարումներուն մէջ կը տապալկէր:

Սակայն, միւս կողմէ, կը զգար Ռուսիան թէ՛ Անգլիան չպիտի հանդուրժէր որ Հիւսիսային Արջը՝ թաթերը մխէր Արեւելքի այս լայնածաւալ պետութեան կողին մէջ, և արբանար անոր ժառանգութեան հարուստ մնացորդներուն: Անգլիոյ մտասեւեռումը՝ Հիւանդ Մարդուն մահը եթէ ո՛չ արգելիլ—որովհետեւ անխուսափելի էր այն—, գոնէ ուշացնել էր, և ասոր միակ միջոցը կը դաւանէր Բարենորոգումները, որո՛նք միայն պիտի կրնային գոնէ ատեն մըն ալ ապրեցնել Հիւանդը: Անգլիան, շատ հեռուները կը տեսնէր, Մերձաւոր Արեւելքին ապագան կը շահագրգռէր զինք: Բրիտանական

կառավարութիւնը, Պահպանողական թէ Ազատական Դահլիճները, Թուրքիան բարենորոգումներով զօրացնելու քաղաքականութիւնը կը մշակէին, և այդ չուկէ-տէ՛ն մեկնելով է որ վերջին արեւելեան ուսսեթուրք պատերազմին վերջին վարագոյրը դեռ վար չիջած, բըրիտանական մարտանւերը Մարմարա հասան, Բիւզանդիոնի դուռը, խիտ անտառ մը ձեւացուցած, սկսան սպառնալ Ալեքսանդր Բ. ի վիթխարի բանակին, որ Սան Սթէֆանոյի հոգին վրայ վրանները անկած ու թընդանօթներուն բերանները Վոսփորի վրայ ուղղած, կը պատրաստուէր իր յաղթական մուտքը գործելու Սուլթաններուն մայրաքաղաքին ծոցը, այսպէս, իրագոս-ծած ըլլալու համար Մեծն Պետոսի Երազը... :

Հոկա՛յ երազ, որ շնդեցաւ ու խորասուզուեցաւ Մարմարայի ալիքներուն մէջ...

Ասիկա պարտութիւն մըն էր, ամօթալի՛ պարտութիւն մը Ռուսիոյ համար, որ իր ընտիր զաւակներէն բիւրաւոր ու բիրաւոր զո՛ներ ձգելէ յետոյ Պալքաններուն ստորոտները, գիւզեր քաղաքներ արիւնով ոլողելէ յետոյ, երբ ա՛լ հասած կը կարծէր ա՛յնքան յաղթանակներու քաղցր պտուղը քաղելու բոպէն, ա՛յսպէս կընդունէր բրիտանական Ասիւծին ապտակը... :

Սուրբ Ռուսիան չէր կրնար մարսել այս... ապտակը, կը յուսար փոխարինել ուշ կամ կանուխ, և կը սպասէր պատե՛ն բոպէին :

Բոպէն ներկայացաւ վերջապէս :

1878էն մինչև 1895, տասնութը տարիներու անջրպետ մը կար :

Հիւանդ Մարդը, բրիտանական դեղահատներով — Պերլինի Ճարդ յօդուածը — փոխանակ առողջանալու, աւելի մեծ առաջդիմութիւններ ըրած էր դէպի ճակա-

տագրային... վախճանը: Ելեւմուտքը խանգարուած, պատերազմական տուգանգի անազին գումարի մը բեռին ներքեւ, վարչական մեքենան աւրուած, Բ. Գուռը՝ Երլարզ փոխադրուած, Բ. Գրան նախարարները, Մեծ Եպարքոսէն սկսեալ, բարապանի մը, դռնապանի մը ստորին աստիճանները իջած, երկրին բոլոր արգաւանդը, ընդարձակ հողերը, հասութեաբ կալուածները, Ապտիւլ Համիրտի վրայ դարձած եմլաք սեմիյէ, Ձիֆլիքէ՛արը Հիւմայուն անուններուն տակ, ժողովուրդներու քրտինքներուն արդար արդիւնքը՝ մեծ ու պզտիկ կառավարողներուն կողորդը լեցուած, և այս վերջիններուն աւարի մեծագոյն բաժինը Կոյսերական Գանձատունը (Խազի-ճե՛յի խասսա) փոխադրուած. եկեղեցիները, վանքերը կողոպտուած, հրդեհուած, եկեղեցականները, վանականները բանտերու, նկուղներու, աքսովայրերու մէջ նետուած, ըռնաբարուած կոյսերով և առեւանգուած կիներով պէկերու, բաշաներու հարէմները ճոխացած. Արդարութեան, Իրաւունքին ու Կարգին պահպանութեան նուիրական պաշտօնները յափշտակող դատաւորները, կառավարիչները, օստիկանները՝ կարաւաններու վրայ յարձակող հուզկահարներուն, աւազակներուն ու մարդասպաններուն ըաղկից ու կաղաղ դարձած, ամբողջ ցեղ մը բնաջնջումի դատապարտուած, և դարաւոր, փառաւոր կայսրութիւն մը՝ Կորուստի Անդունդին եզերքէն վար կախուած...:

Անա՛ թէ ի՛նչ կ'ուզէր Ռուսիան, որ, դարանակալ արջու մը պէս, կը սպասէր պատե՛ր բոպէին, փոխարինելու համար 1878ին Անգլիայէն ընդունած... ապտակը:

Ու այս ամէնուն մէ՛ջ պէտք է փնտուռի Ապտիւլ Համիրտի Ոյժը, ինչպէս նաեւ Հայկական Մարտիրոսութեան հանդէպ՝ Եւրոպայի չնական անտարբերութեան դաղտնիքը...:

Թ. Է .

Նազըմ բաշան, Երլտըզէն վերադարձին իրիկունը, իր բնակարանին մէջ գտաւ խորհրդաւոր հիւրը, որուն կը սպասէր :

Այս հիւրը չ'էր այն սովորական հիւրերէն, որոնք ընդհանրապէս կը բաղխէին ոտաիկանութեան նախարարին դուռը, իրենց պարագաներէն կամ բարեկամներէն բանտարկիկալի մը արձակուածը խնդրելու համար :

Հիւրը դժբաղդաբար հայ անունը կը կրէր և Երլտըզի աշխարհէն էր, որ յաճախ կը ժանէր կ'ելլէր ու կը յարգուէր մանաւանդ Արաք Իզզէթէն :

Ոտաիկանութեան նախարարի առանձնասենեակին մէջ, գլուխ գլխի, ամբողջ գիշերը տեւեց այս տեսակցութիւնը, բացարձակապէս գաղտնի, հիւրին ու նախարարին միջեւ :

— ... պէ՛յ, կ'ըսէր Նազըմ իր հիւրին, որ ծպտեալ էր ու գլխարկ կը կրէր, ուստական նաւապետի գլխարկ մը, շնորհակալ եմ ձեր հաղորդած կարեւոր տեղեկութիւններէն և կը խոտտանամ յիշել այս թանկագին ծառայութիւնը՛վեհ՛ : Սուլթանին առջեւ :

— Ոչի՛նչ է, բաշա՛, ոչի՛նչ, կը յարէր հիւրը, նախարարին հիւրը, պարտականութիւնս կատարեցի միայն և կը յուսամ թէ՛ ապագային աւելի օգտակար ծառայութիւններով պիտի կրնամ արդարացնել ձեր բարձր համակրանքը, որուն շնորհիւ կ'ապրիմ այսօր :

Նազըմ ներքին գոհունակութիւն մը կը զգար հայ լրտեսի մը կեղծաւոր շողովութիւններէն : Դարձաւ ըսաւ անոր :

— ... Պէ՛յ, շնորհակալ եմ, Իզմիրլեան պատրիարքի գաղտնի դաւերու մատին ձեր քաղած տեղեկու-

Թիւնները կը հաւատամ թէ ստոյգ ազբիւրէ կը բզխին , բայց , եթէ վազը , բրիտանական դեսպանատան կողմէն գիտողութիւններ ըլլան , եթէ հերքուի այդ լուրը , և եթէ մենք ստիպուինք այդ մասին քննութիւն մը բանալու , պիտի կրնա՞ք այն ատեն մասնանիշ ընել ձեր տեղեկութեան ազբիւրը , պիտի համարձակի՞ք անունը տալ մարդուն , որ այդ կարեւոր լուրը հաղորդած է ձեզի , Իզմիրլեանի նկատմամբ :

— Անշո՛ւշտ , բաշա՛ , ըսաւ հիւրը քմծիծաղով մը , ի՛նչ ըսել է , ես պատրաստ եմ այդ մարդուն ականջէն ըռնելու և , եթէ հարկ ըլլայ , Ձեր ներկայութեանը բերելու զինքը , բայց , չե՛մ կարծեր թէ մեծ դեսպանին կողմէն ո՛ր և է գիտողութիւն ըլլայ , որովհետև ստոյգ է լուրը :

— Աղէ՛կ , աղէ՛կ , յարեց Նազըմ , ըսել է թէ՛ Հայոց պատրիարքը գործակա՛լ մըն է , բրիտանական կառավարութեան գործակա՛լը . . . : — Տեսա՞ք , գիտել տուաւ հիւրը , ես չէ՛ր ըսեր թէ՛ այս ամէն խտանակութիւնները , այս ամէն ասպտամբական շարժումները , Իզմիրլեանի գործ են ⁼⁼ : Ձէ՛ք գիտեր բաշա՛ , սոսկալի՛ մարդ է , գիշերները գիտէ՞ք ո՛ւր կ'անցընէ :

— Ո՛ւր , պէ՛յ , ո՛ւր կ'անցնէ գիշերները ,

— Ո՛ւր պիտի անցընէ , շարունակեց հիւրը , ընքուինները վե՛ր վեր ընելով , յեղափոխականներուն հետ , տեսնողներ կան զինքը , կէս գիշերէ ետքը , Բերայի մութ փողոցի մը մէկ անկիւնը , փայտաշէն տան մը մէջ . . . :

Նազըմի մէջ հետզհետէ աւելի կ'արմատանար Իզմիրլեանի մասին արդէն կազմուած աննպաստ կարծիքը : Իսկ գլխարկաւոր պէյը , կ'ըսէր .

— Բաշա՛ , բաշա՛ , վազը կ'իմանաք , երբ որ անգ-

լիական նաւատորմիլը Տարտանելէն բռնի ներս մտնել փորձէ՝ այդ նաւատորմիլը բերել տուողը Սըր Ֆիլիբ Քըրրլին կը կարծէք. չէ՛, չէ՛, Իզմիրլեանի զրդումով է որ անոնք ճամբայ հանուեցան գէպի Միջերկրականի ջուրերը.

— Ի՛նչ կը կարծէք, պէ՛յ, ըսաւ Նազըմ, ի՛նչ կը հասկնայ, նաւատորմիլ զրկելով մեր ջուրերը. պիտի կրնա՞յ նեղուցին անցքը բռնադատել. ասպին Ռուսիան մոռցա՞ր... :

Ու երկուքը միասին քրքջալիր խնդացին :

Առաւօտը մօտ էր, գլխարկաւոր պէյը, Նազըմ բաշայէն հրաժեշտ առաւ ու բնակարանէն մեկնեցաւ, առանց խանդարելու բնակիչներուն քունը :

Հեռուեալ օրը, Նազըմ բաշա սովորականէն շատ ուշ արթնցաւ, և առանց նախաճաշ ընելու, մեկնեցաւ Ոստիկանութեան Գուռը :

Տնօրէն Հիւսնի պէյը կանուխ եկած էր պաշտօնաւտունը :

Նախարարը հարցուց իրեն թէ՛ նոյն գիշերը քանի՛ բանաարկեալ խոստովանցուցած էին, հասկնալու համար թէ՛ քանի՛ Հայեր ծեծի ու խոշտանգումներու տակ մեռած էին... :

— Այս գիշեր միայն հինգը խոստովանցուցինք, պատասխանեց Հիւսնի պէյը,

— Յետո՞յ, յարեց նախարարը, ուրիշ ի՞նչ լուր կայ.

— Ազու՞ր լուր մը, բաշա՛, ըսաւ Հիւսնի շնական-ժպիտով մը, նոր որս մըն ալ բերին, կախազանցո՛ւ մը :

— Ո՞րը, ո՞րը, հարցուց Նազըմ անհամբեր շարժուձեւով մը :

— Իւսկիւտարցի՛ն, ըսաւ Հիւսնի, Թորգոմ է, ի՛նչ

է, Հնչակեան յեղափոխականը, Սէրվէթ պէյին սպաննի՛ չը,
— Հասկցա՛յ, սա՛ սա՛, կրկնեց Նազըմ, պեխերը
խառնելով,

— Բաշա՛, շարունակեց Հիւսնի, ի՛նչ օգուտ մէկ
երկուքով, բոլոր այդ կախուողները պարզ գործիքնե՛ր
են, խեղճ պատանիներ, որոնք իրենց պետին հրամա-
նովը շարժած են, այնպէս չէ՞, բաշա՛,

— Թո՛ղ պատժուին որ մնացած միամիտ պատա-
նիներուն դաս ըլլայ, ըսաւ Նազըմ, գարշելիները, ե-
լեր իշխանապետութի՛ւն կ'երազեն, Սշխարհի Սալիֆա-
յին դէ՛մ ելեր կը հաչեն, ապերախանե՛ր...

— Բաշա՛, ներեցէ՛ք, ես այդ տգէտ սղաքներուն
վրայ կը խղճամ. ա՛խ, ատոնց խրատուները, դրդիչ-
ները ձեռք անցընելու էր որ հասկնային թէ՛ ի՛նչպէս
կ'ըլլայ Տոյցը...: Իզմիրլեան պատրիա՛րքը կախելու էր
կամուրջին վրայ... , այն ատե՛ն սիրտս կը պաղչկէր... :

Նոյն պահուն բարապանի մը հասակը գծուեցաւ
նախարարի սենեակի դուռին առջեւ:

Հիւսնի պէյը բարապանին մօտենալով.

— Ի՞նչ կ'ուզես, հարցուց.

— Պէ՛յ էֆէնտի, պատասխանեց բարապանը, վարը
սեւեր հագած աղջիկ մը կը սպասէ, նախարար բաշա՛ն
կ'ուզէ տեսնել.

— Ի՞նչ կ'ուզէ, հարցուց Հիւսնի, չըսա՞ւ քեզի,

— Ո՛չ, յարեց բարապանը, նախարար բաշա՛ն
տեսնել կ'ուզեմ ըսաւ:

Նախարարը հրամայեց որ իր քովը բերուի սեւեր
հագած աղջիկը:

Բարապանը վար իջաւ, մէկ վայրկեան ետքը Հիւս-
նի պէյը դուրս ելաւ նախարարի սենեակէն:

Նազըմ սենեակին մէջ ման կուգար, երբ բարապանը, ետին ձգած՝ սեւեր հագած անձանօթ աղջիկը, եկաւ դուռին առջեւ կեցաւ :

— Ներս թո՛ղ մտնէ, հրամայեց նախարարը :
Բարապանը հեռացաւ, և աղջիկը ներս մտաւ :

Թ. Է .

Յոյցին առաջին օրը, Սեպտեմբեր 18ի երկուշաբթին, Ոստիկանութեան նախարարի թիկնապահ Սերվէթ պէյի սպանութեան վրայ, ցուցարարներու խուռն բազմութեան մէջէն անմիջական ձերբակալումներ կատարուած էին : Ձերբակալուածներուն մէջ կը գտնուէր նաև Պ. Թորգոմ, ան որ Ապտիւլ Համիտի դահակալութեան տարեդարձին գիշերը, Գում Գաբուի մայր տաճարին մէջ, Ներսէս վարժապետեան պատրիարքի գերեզմանին վրայ ուխտ ըրած էր իր նշանածին՝ Օր. Է. Փ. ի հետ, չամուսնանալ, մինչեւ որ Հայրենիքը չազատագրուէր Բռնակալի անարգ լուծէն :

Եւ այս ուխտեալ յեղափոխականը, Պ. Թորգոմ, մահուան դատապարտուած, հետեւեալ օրը պիտի կատարան հանուէր Գարաքէօյի կամուրջին վրայ :

Ո՞վ էր սակայն սեւեր հագած աղջիկը որ Նազըմ բաշայի սենեակէն ներս մտաւ. ինչո՞ւ եկած էր հոն, և ի՞նչ նպատակով :

Սեւեր հագած աղջիկը՝ նոյնինքն Օր. Էօթէնի՛ն էր, Պ. Թորգոմի նշանածը, ան որ իր սիրականի զէնքերուն վրայ երգում ըրած էր մինչեւ ցմահ հաւատարիմ մնալ անոր, և չամուսնանալ մինչեւ որ Հայրենիքը չազատագրուէր :

Ան հիմա, իմացած ըլլալով իր սրտի հատորին մահ-
ւան դատապարտութեան բռնութիւնը, ամէն վտանգի, մինչև
իսկ մահուան դէմ մաքառելու վճռական որոշումով
կուգար Ոստիկանութեան նախարարին քով, գերագոյն
ձիգով մը, փրկելու իր սիրականը, որ հետեւեալ օրը
պիտի կախուէր...

— Ի՞նչ կ'ուզէք, օրիորդ, հարցուց Նազըմ, սե-
ւեր հագած աղջկան, որ ոտքի վրայ կեցած, արցուն-
քոտ աչքերով, կը հեծկլտար,

— Կ'աղաչեմ, բաշա՛, կը պաղատէր օրիորդը, մէ՛կ
վայրկեան շնորհեցէք ինձի, երթա՛մ բանտը, գոնէ մէ՛կ
անգամ, վերջի՛ն անգամ, երե՛սը տեսնեմ... :

— Եկէ՛ք նայիմ, մօտեցէ՛ք, ըսաւ նախարարը,
առաջ եկէ՛ք, անգամ մըն ալ ըսէ՛ք, որո՞ւ երեսը կ'ու-
զէք տեսնել. եկէ՛ք, եկէ՛ք, մի՛ քաշուիք, քովս եկէ՛ք
նստեցէ՛ք, օրիորդ...

Էօթէնի կուլար ու աչքերը կը խեղդուէին արցունք-
ներու մէջ, որոնք հեղեղօրէն կը հոսէին ու կ'այրէին
իր թարմ այտերը :

— Օրիորդ, կը կրկնէր Նազըմ, ինձի նայեցէ՛ք,
խօսեցէ՛ք, համարձակ խօսեցէ՛ք, ըսէ՛ք ինձի, որո՞ւ
երեսը կ'ուզէք տեսնել. մի՛ քաշուիք, յայտնեցէ՛ք.

Սակայն Էօթէնի կուլար միշտ ու իր երկու փա-
փուկ ձեռքերով կը ծածկէր իր դէմքը, որ, այն պա-
հուն, դալկահար, աշնանային վերջալոյսի մը մեկա-
մազձոտ անուշութիւնը կը բուրէր :

— Բաշա՛, ըսաւ Էօթէնի, իր արտասուանիղձ աչ-
քերը սրբելով սեւ գիծով մը շրջանակուած մետաքսի
թաշկիինակովը, ի՞նչ կ'ըլլայ, գոնէ մէ՛կ բոպէ տեսնեմ
երեսը...

— Շա՛տ լաւ, օրիորդ, ահունը տուէ՛ք, որո՞ւ երե-
սը տեսնել կ'ուզէք, մի՛ լաք, ըսէ՛ք որ արտօնեմ :

Վշտակոծ Հայունին վայրկենապէս յոյսի նոր նշոյլի մը շողալը զգաց իր վէրքոտ սրտի արիւնոտ ծալքերուն մէջ: Մօտեցաւ նախարարին.

— Բաշա՛, ըսաւ, երեսը տեսնել կ'ուզեմ այն դըժբազդ երիտասարդին որ վաղը, մի՞նչաղին, կամուրջին գլուխը պիտի...

Վերջին վանկը բերնին մէջ, էօժէնի նուաղած ինկաւ նախարարին ոտքը:

Նազըմ, համիտեան ոճիրներու դպրոցին մէջ սնած թէեւ ու վարժուած՝ այդպիսի տեսարաններու, սակայն, նոյն պահուն, յուսահատ Հայունիին մը վիշտին առջեւ զինաթափ, իր կուրծքին տակ բաբախիլը կը զգար միսէ քսակին, որ իր ոստիկանութեան նախարարի սիրտը պիտի ըլլար:

Ոտքի ելաւ, մօտեցաւ նուաղած ազջկան, որ անթարթ յառած աչքերո՛վը կը խօսէր միայն, բռնեց ձեռքէն, որ սառած էր, և ջանաց սթափեցնել զէնի, ահանջին մրմնջելով.

— Օրիո՛րդ, օրիո՛րդ, ոտքի ելէ՛ք, ոտքի՛, ե՛ս եմ, ե՛ս:

Քանի մը վայրկեան նուաղումէ ետքը, էօժէնի սթափեցաւ, ոտքի ելաւ, ինքզինք դարձեալ նախարարին հետ առանձին գտնելով, սկսաւ կամաց կամաց վերջիչել նախընթաց պարագաները:

— Օրիո՛րդ, կը կրկնէր Նազըմ, այս անգամ աւելի խանդաղատանքի հետ խառնուած արգահատանքի շեշտ մը դնելով ձայնին մէջ, օրիո՛րդ, կ'արտօնեմ, հողչէ՛, կրնաք երթալ տեսակցիլ այդ բանտարկեալին հետ, բայց կրնա՞ք ինձի ըսել, դուք անոր ի՞նչը կ'ըլլաք...:

— Քո՛յրը, քո՛յրը, բաշա՛, մրմնջեց ազջիկը, հեծկըլ տանքներու մէջ խեղդուող մօրմօքիչ ձայնով մը:

Նախարարը յուզուեցաւ, չուզեց աւելի առաջ տանիլ իր հետաքրքրութիւնը :

Դարձաւ ըսաւ անոր .

— Օրի՜որդ, հիմա ցերեկ է, բանտին դուռը խռնուած է այցելուներու բազմութիւնը . գացէ՛ք հիմակ, իրիկուան դէմ, երբ ամէն մարդ քաշուի, վերադարձէ՛ք, չըլլար . . . :

Էօժէնի գլուխը ծռեց, դժկամակ համակերպութեան շարժուձեւով մը :

Յետոյ, նախարարը, գուշակելով Հայուհիին կրած ներքին խռովքը, դիմագծերուն առած տրտում արտա-յայտութենէն, ուզեց վստահութիւն ներշնչել, ուստի կանչեց բարապանը, որ դուրսը կը կենար .

— Բէշի՛տ աղա, ըսաւ հրամայական շեշտով մը, ինձի նայէ՛, այս օրիորդը հիմա պիտի մեկնի, իրիկուան դէմ պիտի վերադառնայ . հետդ ա՛ռ զինքը, գնա՛ բանտի տնօրէնին իմ կողմէս պատուիրէ՛ որ արտօնութիւն տայ իրեն, տեսակցելու բանտարկեալներէն Սկիւտարցի . . .

— Ի՞նչ էր անունը, օրի՜որդ, հարցուց Նազըմ .

— Թորգո՛մ, Թորգո՛մ, բաշա՛, յարեց օրիորդը .

— Հա՛, Թորգո՛մ, շարունակեց նախարարը, միշտ բարապան Բէշիտ աղային նայելով, այո՛, Թորգոմին հետ պիտի տեսակցի, հասկցո՞ր, հիմա կ'երթաս կը պատուիրես տնօրէնին, չըլլա՛յ թէ արգելք ըլլան :

Յետոյ, դառնալով Էօժէնիի ,

— Օրի՜որդ, ըսաւ Նազըմ ժպտելով, կրնաք կէս ժամէն աւելի տեսակցիլ . հերիք չէ՞ ,

— Ծնորձակա՛լ եմ, բաշա՛, շնորձակա՛լ եմ կրկնեց Էօժէնի, կը խնդրեմ որ դժուարութիւններ չը յարուցուին ,

— Ո՛չ, ոչ, կրկնեց Նազըմ, կեղծաւոր ու փաղաքշոտ ձեւերով, օրի՜որդ, վստահ կրնաք ըլլալ, ո՛ր և է

խոչընդոտի չէ՞ք հանգիպիր, իրիկուան դէմ, մուժը չը կոխած, ուղղակի Մեհսերխանէն պիտի երթաք, դատապարտուածներուն զնտանը, հո՛ն է հիմա ձեր եղբայրը՝ մէկ քանի օրէ ի վեր հո՛ն է փոխադրուեր :

Ու իր այցաքարըը տուաւ անոր, որպէս զի ներկայացնէ զայն անօրէնին :

Էօփէնի գլուխը հակելով ի նշան յարգանքի, ոստիկանութեան նախարարի սենեակէն դուրս ելաւ, արագ արագ վար իջաւ սանդուխներէն, տրտում, գողունի նայուածք մը նետեց բանտին կողմը, յետոյ, առանց այլ եւս բոլորափքը նայելու, հեռացաւ :

Իսկ Թորգոմ, մէկ քանի օր առաջ Մէհտէրխանէն փոխադրուած, կը սպասէր իր վճիռին գործադրութիւնը, թէեւ տեղեկութիւն չունէր թէ հետեւեալ օրը կախաղան պիտի առաջնորդուէր ինք :

Սովորականէն շատ աւելի զուարթ, տեսակ տեսակ կատակներ կ'ընէր իր բազդակից ընկերներուն հետ, որոնք նոյնպէս չէին գիտեր թէ վաղը պիտի կախաղան հանուէր ան :

ԹԷ.

Մէհտէրխանէին հրապարակը հետզհետէ կը պարպուէր օրուան այցելուներէն, որոնք առտուընէ մինչեւ իրիկուն, գրեթէ անընդհատաբար, իրարու յաջորդած էին, կարգով տեսակցելով իրենց բանտարկեալներուն հետ :

Ոստիկանութեան պաշտօնեաներն ալ հետզհետէ կը քաշուէին և միայն պահապան ոստիկան զինւորներն ու բանտապահները կը մնային հոն :

Մութը կամաց կամաց կը աւարածուէր և փողոցներուն մէջ անցուղարձը կը դժուարանար իրիկուան վերադարձողներէն, որոնք խուժը խուժը կը վազէին կամ մուրջին կողմը, Վասիտրի կամ Ոսկեղջիւրի շոգինաւները չը փախցնելու համար:

Անցորդներու խուռն ամբօխը ձեւքելով, իրիկուան այս ուշացած պահուն, սեւերու մէջ փաթթուած աղջիկ մը, հապճեպ քայլերով կ'առաջանար դէպի Մէհտէրխանէն:

Էօփէնին էր, սեւ շալ մը գլուխը, թափանցիկ շրջարշով մը դէմքը ծածկած, ներս ուղղուեցաւ:

Տնօրէնը հոն էր, իր սենեակը:

Սրտոտ աղջիկը, իր հպարտ դիրքը պահելով միշտ, ձեռքի փոքր պայուսակին մէջէն դուրս հանեց նախաբարին տուած այցաքարտը, զոր երկնցուց տնօրէնին ու ինքը կեցաւ ոտքի վրայ, սպասելով որ արտօնուէր տեսնելու իր... Թորգոմը:

Սիւտը կը բարախէր:

Տնօրէնը, ջլուտ ծերուկ մը, կանչեց բանտապահ մը և, էօփէնին ցոյց տալով

— Այի՛ ազա, ըսաւ, ա՛ն այս օրիորդը, մասնաւոր սենեակը տա՛ր, նորեկ Սկիւտարցի պատանին ալ դուրս հանէ՛, թո՛ղ տեսակցին, բայց, կէս ժամէն աւելի չը տեւէ, տեսակցութիւնը, հասկցա՛ր:

Այի ազան մասնաւոր սենեակը տարաւ էօփէնին, և ինքը, երեսը բանտարկեալներուն կողմը դարձուցած, կանչեց բարձր ձայնով.

— Սկիւտարցի նորն կը...:

Քիչ յետոյ երեւցաւ Պ. Թորգոմ, դժգոյն, նիհար, թախժոտ դէմքով մը, գլուխը գերծուած:

Այի ազան թեւէն բռնեց բանտարկեալին ու մատու վը նոյն սենեակը ցոյց տալով.

— Տե՛ս, ըսաւ չարածնի ժպիտով մը, ս՞իվ է ներսինը :

Ալի աղան, փորձ ու հոտառու մարդ, առանձին ձգել ուղեց երկուքը : Ուստի ինքը սենեակին բոլորաթիւքը սկսաւ չըջան ընել, վայրկեանները համբել :

Երջանիկ վայրկեան, յուզիչ տեսարան, գրկախառնումը Թորգոմին ու Էօփէնիին :

Յուզման առաջին թափը վերջանալէ յետոյ,

— Շո՛ւտ, շուտ ըրէ՛, Թորգո՛մս, կը փսփսար Էօփէնի Թորգոմին վիզին պլլուած. հանուէ՛ շուտով, իմ հագուստներս հագի՛ր, ժամանակը կա՛րձ է. շա՛տ կարճ է :

— Ինչո՞ւ, Էօփէնի, ինչո՞ւ փախուստի այս գծուձ միջո՛ցը... Ը՛նչ կայ որ... :

— Ոչինչ, ոչինչ, կը կրկնէր Էօփէնի, բայց կը պաղատիմ, ժամավաճառ մի՛ ըլլար, շուտով ըրէ՛ ինչ որ կ'ըսեմ քեզի. շո՛ւտ, շո՛ւտ, հանուէ՛... քու հագուստներդ ե՛ս պիտի հագնիմ, և իմ հագուստներս՝ դուն. ես բա՛նտը պիտի մանեմ, իսկ դուն պիտի մեկնիս, հեռանաս ողջերու այս գերեզմանէն... :

Ու կուլար, կը պաղատէր, իր փափուկ ձեռքերով կը հանուեցնէր Թորգոմը, մինչդեռ այս վերջինը շա՛տ կ'աշխատէր թափանցելու գաղտնիքը, իր նշանածի այս վարմունքին շարժառիթը :

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, կը կրկնէր Թորգոմ յամառօրէն, ինչո՞ւ.

— Վերջը կ'իմանաս անշո՛ւշտ, հոգի՛ս, վա՛ղը կ'իմանաս, կըսէր Էօփէնի, թախանձանքներով կը պաղատէր ու տաք տաք համբոյրներովը կ'այլէր Թորգոմին ճակատն ու երեսները, աչքերը :

Վերջապէս տեղի տուաւ Թորգոմ, Էօփէնիի արցունքներուն ու աղաչանքներուն չը կրցաւ դիմանալ.

չուտով հանուեցաւ ինք և իր նշանածին սեւ հագուստները քաշեց վրան, մինչդեռ միւս կողմէ, Էօփէնի, իր պաշտեցեալ բանտարկեալին ցնցոտիները կը հագնէր :

— Նայէ՛, Թորգո՛մ, ըսաւ Էօփէնի, իմ հագուստներուս տակ ա՛լ չը պիտի ճանչցուիս հիմակ, միայն գըլուխդ կայ, գերծուած գլուխդ, առո՛ր ալ ճարը դիւրին է :

— Ի՛նչպէս, Էօփէնի՛, ի՛նչպէս, առարկեց Թորգո՛մ վարանոտ դէմքով մը :

— Այս՛ պէս, յարեց Էօփէնի :

Ու քովէն մկրատ մը հանելով, արմատէն կտրեց իր գեղեցիկ վարսքը, որով ծածկեց վայրկենապէս Թորգոմի գերծուած գլուխը :

Կէս ժամը կը լրանար, հրաժեշտի վայրկեանը մօտեցած էր :

Ամեն պատրաստութիւն վերջացած, երկու սիրահար հոգիները բաժնուեցան իրարմէ :

Մու՛թը թանճրացած էր արդէն, հազիւ կարելի էր որոշել դէմքերը :

Թորգոմ, Էօփէնիի տարազին տակ ու գերծ գլուխը՝ խիտ մազերու խուրձի մը մէջ կորսուած, սեւ շալ մը վրան, թափանցիկ շղարշով մըն ալ երեսին, մանտիրտիկ տիտիկներու յատուկ քայլերով կը հեռանար բանտէն, մինչդեռ Էօփէնի, Թորգոմի ցնցոտիներուն մէջ բռնորսովին այլափոխուած մերկ՝ ու լերկ գլուխը վար կախուած, բանտապահ Ալի աղային աշալուրջ(°) հակողութեան տակ, կ'առաջնորդուէր բանտ :

Բանտարկեալները ներս քշուած էին ու դռները կղպուած :

Էօփէնի, տարիներէ ի վեր բանտի կեանքին մէջ թրծուած թշուառի մը պէս, առանց ինքզինք մատնե-

լու, կը պատրաստուէր իբր թէ ուղղուելու իր,՝ այսինքն թորգոմին խուցը, երբ հերթապահ բանտապան մը, երկաթէ խոշոր բանալի մը ձեռքը, կ'աճապարէր բանալու դուռ մը, ուրկէ այլանգակ աղմուկներ կը լսուէին:

— Թորգոմին խուցը՝ կ'ըսէր ինքնիրեն էօժէնի ու կը հետեւէր Դժոխքի Դռնապանին:

Մէնտէրխանէին մէջ մեծ թիւով հայ բանտարկեալներ կային, ամենքն ալ դատապարտուած, սկսեալ երեք տարուան բանտարկութենէն, մշտնջենաւոր բերդարգելութեան կամ թիարանի, կամ մահուան, ամենքն ալ Բ. Դրան Յոյցին առիթովը ձերբակալուած ըլլալով:

Թորգոմէն զատ, որ այն պահուն արդէն հասած պիտի ըլլար Կամուրջի Սկիւտարի նաւամատոյցը, Մէնտէրխանէի մէջ էին մահուան դատապարտուած տասնեակներով Հայեր, ինչպէս.— Վարդերես՝ Մարգուանի Հրոսախումբէն, Թադեոս, Սեպիան Արմէնեան Խասգեղցի՝ Մաքսուտ Սիմօն պէյի սպաննիչներէն, Արմենակ Կարինեան՝ փաստաբան Խաչիկ էֆէնտիի սպաննիչը, Յարութիւն՝ հաղարապետին սպաննիչը, Գանսիլլիցի Համբար՝ Գարակէօզեանի սպաննիչը, Ուղուրլեան Սենեքերիմ էֆ. ի սպաննիչը՝ Չենկիլերցի Գարեգին և Համբարձում էֆէնտիի սպաննիչը՝ Թեֆրսաղցի Գալուս: Նոյնպէս հօն էին Խրիսթօ և իր ընկերը, պուկար յեղափոխականներէն, Տր. Վուլքօզիի սպաննիչները: Ու ասոնցմէ զատ, կային նաև բազմաթիւ յոյն ու թուրք ոճրագործներ, որոնք, ամենքն ալ մահուան դատապարտուած, ա՛լ վարժուած՝ իրենց սեւ ճակատագրին, մահուան կը սպասէին:

Կարծեցեալ Թորգոմը, նոյնինքն օրիորդ էօժէնի, բանտապանին առաջնորդութեամբ ներս մտաւ, Թորգոմի խուցը, ուր իրմէ զատ ո՛չ մէկ հայ չէր գտնուէր՝

ամէնքն ալ ոճրագործներ, նոյնպէս մա՛նուան դատապարտուած :

Բանտապահը դուռը պինդ մը կղպեց ու հեռացաւ :
 Էօփէնի, նոյն գիշերը, իր կուսութեան անարատ պատիւին միակ պահապանը դարձած, մէկ կողմէ, Թորգոմի ազատութեան համար իր կրած ներքին ցնձութեան յուզումէն, միւս կողմէն, իր հոգիին, իր Թորգոմին, կամ աւելի ճիշդը, իրեն համար կամուրջին գլուխը ցցուած վաղուան կախաղանի մղձաւանջէն կը յաճախուէր : Իր ալջիկի գանկին տակ փոթորիկ մը կը ծրարուէր :

Ու Էօփէնիի աչքերէն խոյս կուտար քունը :

Ամբողջ գիշերը հակեց հոն, ոճրագործներու այն թունաւոր ճախճախուտքին մէջ :

ԺԹ.

Կէս գիշերուան խաղաղաւէտ պահուն, Գարաքէօյի կամուրջին գլուխը, երեք սեւ ձեռքեր, երեք ծառեր տնկած էին, մա՛նուան ծառեր :

Ու գիշերը, մայիսի աստղաւէտ գիշեր մը, կը նըլաղէր տակաւ ու տեղի կուտար արշալոյսին, որ Չամլըճայի լանջքը 'արիւննոտէր :

Վոսփորը կը սարսուար :

Նոյն գիշերուան մէջ խեղդուած ու իր ծոցը նետուած տասնեակներով երիտասարդ թուրքերու գեռաջեր գիակներովը գալարուող, սեւ ու մաղձոտ ալիքները կը սրսփային :

Մա՛նուան երեք ծառերը, գիշերային տունկեր, արշալոյսին ծաղկած, պիտի պտուղ բերէին նոյն օրը :

Մահուան դատապարտուածներէն երեք Հայեր, Մէհաէրիանէէն ուղղակի Գարաքէօյի Կամուրջը բերուած էին կախաղան հանուելու համար :

Ասոնց մէջ էր նաև Էօփէնին, ծպտեալ Թորգոմբ, որ մինչև այն բողբէն յաջողած էր պահել իր ինքնութիւնը :

Կախաղանները կանգուն, զոհին սպասող հրէշի մը պէս, իրենց մահասարսուռ ներկայութեան սառոյցը կը սփռէին շուրջանակի :

Արդարութեան կողմէն, Համիտի երդուեալ... Դահիճները հոն էին, իրենց նուիրական պաշտօնին գլուխը :

Պարանները կը ճօճէին օդին մէջ, սիւներուն բարձունքէն, կարծես թէ կանխաւ վարժեցնելու անցորդին աչքերը զարհուրելի տատանումներուն այն թարմ ու գեղեցիկ մարմիններուն, որոնք, մէկ վայրկեան ետքը, դիակնացած, պիտի մնային հոն, կախուած, պարապին մէջ ու ժամերով ի տես պիտի դրուէին Երկու Մովերուն ու Յամաքներուն իշխող, Առատագութ(՞) Սուլթանին հաւատարիմ հպատակներուն... :

Մայիսեան արեւ մը կը ժպէր Սկիւտարէն, մինչ նոյն Սկիւտարի շոգեհաւին մէջ, կամուրջին նաւամատոյցը կը ցատկէ, աշխոյժ պատանի մը, խօլ վաղքով մը կ'առաջանար դէպի Ղալաթիոյ կողմը, կախաղաններուն ոտքը, ուր Սեւ Չեռքերը կըսկսէին զատ զատ վեր, առնարգ սիւնին վրայ բարձրացնել երեք երիտասարդ մահապարտները :

Արիւնքրտինքի մէջ թաթխուած, վերջապէս, ճիշտ ժամանակին, հոն կը հասնէր Սկիւտարի առաջին շոգեհաւէն դուրս խոյացող պատանին, նոյն ինքն Պ. Թորգոմ, Էօմէնիի նշանածը :

Թորգոմ, իր նշանածի սեւ հագուստներով զինուած, երբ, ճամբան, առանց վտանգի մը հանդիպելու, նոյն

իրիկուն յաջողած էր վերադառնալ իր մօրը ընակարանը, նոյն գիշերը լսած էր թէ՛ հետեւեալ օրը, առտուն կանուխ, ինքը պիտի կախուէր կամուրջին գլուխը :

Վայրկենապէս ըմբռնած էր այնուր իրականութիւնը... : Էօթէնի, Գումգաբուի մայր տաճարին մէջ, Վարժապետեան Ներսէս պատրիարքի մանարձանին առջեւ, իր միւս ետի գէնքերուն վրայ ըրած երգումը յիշելով, իր սեռին յատուկ, գերմարդկային, և թերեւս աստուածային անձնագոյնութեան մը սուրբ ներշնչումովը յղացած էր ծանօթ փախուստի ծրագիրը, որուն շնորհիւ ազատած էր ինքը, Թորգոմ :

Թորգոմի համար վատութիւն մը, դաւաճանութիւն մը պիտի ըլլար, իրեն տեղ գոյնուած տեսնել իր նշանածը, Էօթէնին, իր երկրային հրեշտակը, որուն մէկ նայուածքին հետ չպիտի փոխարինէր տրեզներքը... : Ուստի, առանց վարանելու, վճռած էր կրել իր ճակատագիրը :

Եւ, այդ վճիռը գործադրելու համար է որ հիմա կը ծառանար, կը ցցուէր հոն, կախազանին գիմացը :

Դահլճները դողացին :

Պահ մը կեցան Սեւ Ձեռքերը, մահապարտները շունչ առին վայրկեան մը :

Ասդին, Էօթէնի կը թուլնար, կը նուաղէր Թորգոմի գիրկին մէջ, մինչ Դահլճները, սարսափած, կը դիտէին տեսարանը :

Էօթէնի սակայն անդդուելի կը մնար իր ուխտին մէջ, մահուան ուխտը, որուն առջեւ գետնամած կ'ազերսէր, կը պաղատէր, կը տեհչար մահը, որ սակայն, վերջին պահուն, կ'ուզէր երես դարձնել իրմէ : Իսկ Թորգոմ, առանց Էօթէնիի կեանքի մը չպիտի կրնար համակերպիլ, այդ կեանքը պիտի նմանէր անասող, անլուսին, անարեւ երկինքի մը, խաւարամած անդուն-

դի մը, որ պիտի սահմանուած ըլլար կլլելու իր բոլոր վարդ յոյսերը, ցուրտ գերեզմանի մը, ուր պիտի թաղուէին իր բոլոր ոսկի երազները :

Հետեւաբար, մարանչումը ուժգին եղաւ, մահուան սիրահար երկու հզօր հողիներու միջեւ :

Վերջապէս Թորգոմ, զգալով թէ՛ ինք չպիտի կըրնար նուաճել Էօփէնիի կամքը, և տեսնելով Սեւ Ձեռքերը, որոնք գերագոյն բոպէի տխուր պատրաստութիւնները կը լրացնէին, խոյացաւ յանկարծ դահիճին վրայ, որ Էօփէնիի փափուկ թեւերը կապած, կը փորձէր զէնի վեր հանել սանդուխէն :

Դահիճը սոսկաց :

Ձեռքը թուլցաւ ու թողուց զս'ը :

— Դահիճ, դահիճ, կը մոնչէր Թորգոմ, լսէ՛, կեցի՛ր, վար ա՛ն ձեռքդ, ետ քաշուէ՛, թո՛ղ տուր, զո՛դ աղջիկ մըն է, աղջիկ մը... :

Եւ Թորգոմ երկու բռռով պատմեց իրականութիւնը, իր բոլոր սրտաչարժ մանրամասնութիւններով :

Սակայն Էօփէնի, կախաղանի սիւնին կառած, չէր բաժնուէր :

Եւ մարանչումը կը շարունակուէր ուժգին, ա՛լ աւելի մոլեգին :

Եւ յաղթութիւնը կը մնար անորոշ :

Կամուրջին վրայ պահ մը դադրեցաւ անցուղարձը :

Հազարաւոր մարդկային գլուխներ կը վէտվէտէին հասկերու սլէս :

Ամբոխ ամբոխի վրայ, կուգար կանգ կ'առնէր կախաղաններու ոտքերուն տակ :

Բոլոր աչքերը յառած էին մենամարտին, որ կը մըղուէր տակաւին երկու պարմանիներու միջեւ :

Յանկարծ , խուլ մռնչիւններ սկսան լսուիլ ամբօխին-
մէջէն :

Ղալաթիոյ կողմէն ձիերու ոտքի ձայներ կը լսուէին :
Ամբօխը ճեղքուեցաւ և կայս երական բարձրաստիճան
սպաներ , ամենքն ալ հեծեալ , կը հասնէին հոն , կա-
մուրջին գլուխը , ուր տնկուած էին մահուան սիւները :

Գահիճները ետ ետ քաշուեցան :

Սպաներէն մէկը բարձր ձայնով կարգաց իրատէ մը ,
որ նոյն բոպէին արձակուած էր :

Ապտիւլ Համիտ , մեծ դեսպաններու ազդու միջա-
մտութեան վրայ , կը դադրեցնէր . . . կախազանները :

Վ Ե Ր Ջ Ա Յ Ա Ի







24292
24293

